ՆԻԿՈԼԱՅ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ԱԳԱՖՈՆՈՎ

ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԲ

ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

ՄՇԵՑ ԱՌՈՂ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԲԱՍԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8Ա
Հ-17
4395

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԲ

ՆԻԿՈԼԱՅ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ԱԳԱՖՈՆՈՎ

ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

4394

ՄԱՑՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՀՏԴ 882-3 Նիկոլայ ավագ քահանա Ագաֆոնով
ԳՄԴ 84 Ռ-4
Ն 701

Թարգմանություն ռուսերենից՝
Վալերի Պարանյանի

ՆԻԿՈԼԱՅ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱԳԱՖՈՆՈՎ

Ն701 Յուղաբեր կանայք: Պատմավեպ / Նիկոլայ ավագ քահանա Ագաֆոնով; թարգմ. ռուսերենից՝ Վ. Պարանյանի. – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010.– 324 էջ+ 48 էջ կավճապատ ներդիր:

Նիկոլայ ավագ քահանա Ագաֆոնովի այս պատմական վեպը պատմում է հեզ ու համեստ կանանց սխրանքի մասին, ովքեր գնում էին Քրիստոսի հետևից: Հեղինակն ընթերցողի առջև բացում է սուրբ կանանց այն խորին ձգտումներն ու ապրումները, որոնք արտացոլվել են եկեղեցական Ավանդության ժլատ տողերում:

ՀՏԴ 882-3 Նիկոլայ ավագ քահանա Ագաֆոնով
ԳՄԴ 84 Ռ-4

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-064-6
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010 թ.

Հրապարակչության կողմից

Այն գիրքը հոգեշահ է հայ հավատավոր ընթերցողի համար, քանզի յուրօրինակ մի փորձ է մեկ կուռ ամբողջականությամբ ներկայացնելու այն սուրբ կանանց կյանքն ու սխրանքը, ովքեր սրտի կանչով և հոգու թելադրանքով ընդունեցին Քրիստոսի լույսը, աշակերտեցին նրան և հոգատարությամբ ծառայեցին Նրան: Հետևեցին մինչև Գողգոթա՝ չընկրկելով կատաղի ամբոխի մեջ, որը գոռում էր. «Խա՛չը հանիր դրան»:

Հեղինակը՝ Ռուս Ուղղափառ եկեղեցու ավագերեց Ն. Վ. Ագաֆոնովը (ծն. 1955) ճանաչված ուղղափառ գրող է, Համառուսաստանյան գրական մրցանակների դափնեկիր: Հենվելով չորս Ավետարաններում այդ կանանց մասին բովանդակվող սուղ տեղեկությունների վրա՝ հեղինակը դրանք լրացրել և վերարտադրել է մեկ ամբողջական հենքի վրա, ժամանակի պատմական հանգամանքների մեջ:

Քրիստոսի խաչելությունից հետո կանանց դերը մեծ եղավ Նրա խոսքը քարոզելու, Տիրոջ եկեղեցու հիմնադրման և բարեգարդման գործում: Իրենց

բնական կոչմամբ լինելով ընտանեկան օջախի կրակը պահպանողներ՝ կանայք եղան նաև Քրիստոսի լույսը մարդկանց սրտերի մեջ պահպանողները: Եվ այդ ճանապարհին բազում կանայք նահատակվեցին հանուն այդ լույսի և սրբացան: Այդպես սրբացան Գայանյան և Հռիփսիմյան կույսերը, ովքեր եղան Հայաստանում Քրիստոսի լույսի առաջին կին քարոզիչները՝ փաստորեն դառնալով յուղաբեր կանանց գործի շարունակողները:

ՏԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Արդկային ցեղն իր բարձրագույն հոգևոր զարգացմանը հասավ ի դեմս Կույս Մարիամի: Բարձրանալով չտեսնված հրեշտակային բարձունքների, Նա գերազանցեց նրանց, դառնալով «ազնվագույն Քերովբե և անհամեմատելի փառավորագույն Սերովբե»: Հանդիսանալով այն Երկնային Դարպասը, որով միջով աշխարհ եկավ Փրկիչը, Ամենասուրբ Կույսը բոլոր ժամանակների համար դարձավ կնոջ բնության խորհրդանիշը՝ օծված Աստվածային վսեմությամբ: Եվ եթե Աստվածամորը կոչում են «մեր փրկության գլխավորը», ապա Նրան պետք է ճանաչել նաև Քրիստոսի ու Նրա Եկեղեցու առջև կանանց ծառայության գլխավորը:

Ավետարանի էջերում Տերը հաճախ է դիմում կանանց: Եվ ոչ միայն մեղքերը ներելով, բուժելով, այլ նաև Աստծո Արքայության մասին նրանց հետ զրուցելով: Ուշադրության արժանի է այն, որ Տերն առաջին անգամ, ուղիղ ու բաց,

Իրեն որպես Մեսիայի, այսինքն՝ Քրիստոսի, բացահայտեց կնոջ մոտ (Հովհ. Դ, 25–26): Ինչպես և առաքյալները, կանայք, որ հետևում էին Քրիստոսին, Նրան կոչում էին իրենց Ուսուցիչը (Հովհ. Ի, 16): Ճիշտ է, ի տարբերություն առաքյալների, որոնց Տերն Ինքն էր ընտրել ու կոչել ծառայության, կանայք հետևել էին Նրան բացառապես սրտի կանչով: Բայց մի՞թե սրտի կանչը Աստծուց չէ: Դա միայն խոսում է այն մասին, որ կանանց սրտերն ընդունակ են լսելու Աստծո կանչը՝ չունենալով այն խոսքով հաստատման անհրաժեշտությունը:

Երբ եկան փրկության օրերը, Փրկիչն ասաց առաքյալներին. «Թող ձեր սրտերը չխռովվեն, հավատացե՛ք Աստծուն, հավատացե՛ք և Ինձ» (Հովհ. ԺԴ, 1): Բայց նույնիսկ նրանք, Քրիստոսին սիրողները, վախեցան ու փախան: Տիրոջ հետ մնացին միայն նրանք, ում մասին Ավետարանում, մինչև Գողգոթայի դեպքերը, ոչինչ չի պատմվում: Դրանք եղել են ամենուրեք Քրիստոսին հետևող ու իրենց ունեցվածքով Նրան ծառայող (Ղուկ. Ը, 1–3) հեզ, համեստ կանայք: Այն ժամանակ, երբ ստորացված ու կոտանքներից տանջահար Քրիստոսին իբրև հանցագործ տանում էին խաչելու, կանայք նրա կողքին էին: «Խաչե՛լ, խաչե՛լ Դրան» աղաղակող մոլեգնած

ամբոխի մեջ նրանք չերերացին: Երբ կարդում ես Ավետարանը, մտքիդ դեմ հառնում է Քրիստոսի հետևից Գողգոթա բարձրացող կանանց հուզիչ տեսարանը: Շփոթված ու վախեցած, հազիվ զսպելով հեկեկանքը, նրանք գնում են լուռ սգալով: Արցունքներից միջից ճանապարհը համարյա չտեսնելով, մեկմեկու օգնելով, նրանք գնում են իրենց անարգված ու ծաղրված Ուսուցչի հետևից: Այդ կանայք միայն սիրուց են քաղում իրենց ուժերն ու գնում մինչև վերջ:

Երբ եկավ ժամանակն ու փառաբանվեց Մարդու Որդին, Իր հարության բարի լուրը Նա առաջինը չնորհեց կանանց. «Ուրախացե՛ք»,– ասաց նրանց, հանձնարարելով գնալ ու պատմել առաքյալներին մահվան հանդեպ տարած Իր հաղթանակի մասին: Իսկ երբ առաքյալները չհավատացին, Քրիստոսը հայտնվեց ու «հանդիմանեց նրանց իրենց անհավատության և խստասրտության համար, որովհետև չէին հավատացել նրանց, որոնց ինքը երևացել էր՝ մեռելներից հարություն առած» (Մարկ. ԺԶ, 14):

Յուղաբեր կանանց սխրանքի մեջ բացահայտվեց Աստծուն և աշխարհին կանանց մատուցած ծառայության ողջ վեհությունը: Նրանց կյանքը, ըստ սուրբ նահատակ Սերաֆի-

մի (Զիչագով)[1], «այժմ էլ ուսանելի է ժամանակակից քրիստոնեուհիների համար»: Անձնազոհ սիրո մեջ ու մեսիոներական ասպարեզում յուղաբեր կանանց կյանքի ընդօրինակումն իր տեղն է գտել քրիստոնեական Եկեղեցու երկուհազարամյա պատմության ողջ ընթացքում: Դժվար է գերագնահատել կնոջ դերը նաև մեր Հայրենիքում ուղղափառ հավատի պահպանման գործում: Ես նույնիսկ կհամարձակվեի ասել, որ անաստվածության խառնակ ժամանակներում հատկապես կանայք պահպանեցին այդ հավատը: Այդ մասին լավ է ասված իմ սիրելի բանաստեղծ Ալեքսանդր Սոլոդովնիկովի[2] հիանալի բանաստեղծության մեջ.

Տղամարդիկ ավելի շատ փիլիսոփայում
Ու կասկածում են Թովմասի հետ,
Արցունքով Քրիստոսի ոտքերը ողողում՝
Լռում են կանայք յուղաբեր,
Տղամարդիկ գինվորներից վախեցած՝
Թաքնվում են կատաղի քենից,
Իսկ կանայք խունկը պատրաստած՝
Գերեզման են շտապում առավոտ ծեգից,

[1] Միտրոպոլիտ Սերաֆիմը (23.02.1928-14.10.1933) սրբադասվել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից 1997 թվականին (*ծնթ. խմբ.*):

[2] А. Солодовников. Я не устану славить Бога... Избранные стихи / Паломник. М.: 2006.

Մարդկության իմաստունները մեծ
Ատոմային դժոխք են տանում ժողովուրդներին,
Սակայն սպիտակ գլխաշորերն են
Կապում կամարներն եկեղեցիների:

Շատ ժամեր, օրեր ու ամիսներ եմ ես անցկացրել յուղաբեր կանանց մասին խորհելով: Խորամուխ եղա ավետարանական այն տողերի ու ժլատ տեղեկություններ մեջ, որ թողել է մեզ Եկեղեցական Ավանդությունը: Փորձում էի պատկերացնել, թե ինչպես են նրանք ապրել, մտածել ու գործել կյանքի տարբեր հանգամանքներում: Ու թեև ես իմ գիրքը գրեցի խորապես համոզված, որ ամեն ինչ գրածիս պես էլ եղել է, բայց ընթերցողից խնդրում եմ հիշել, որ նրա առջև նախ և առաջ գեղարվեստական արձակ է, որտեղ պատմական փաստերը միահյուսված են հեղինակի հորինվածքների ու ենթադրությունների հետ:

Միակ տեղը, որտեղ ես ինձ թույլ չեմ տվել ինչ որ բան հորինել, դա ավետարանական դեպքերի նկարագրությունն է: Դրանում իմ պատումը անշեղորեն հետևում է Սուրբ Գրքի ոգուն ու տառին, ինչպես նաև սուրբ հայրերի Ավետարանի մեկնություններին:

ԳԼՈՒԽ 1

Այրամուտի վերջին շողերը տակավին դալուկ բոսորագույնով էին գարդարում Գալիլիայի ծովի[1]: Ջրային հարթության վրա քնկոտորեն անշարժացած փետրաթև ամպերը: Ձկնորսներն իրար ուրախ ձեռք առնելով և ուռկանները վարժ շարժումներով նավակներում տեղավորելով՝ գիշերային որսի էին պատրաստվում:

— Զեբեդեոսն ինչ որ չի երևում,— ասաց ձկնորսներից մեկը՝ գլխով նշանացի ցույց տալով ափի մոտ հանգույցից ճոճվող անտերացած երեք նավակներ:

— Այսօր նա ուրիշ որս ունի,— ծիծաղեց երկրորդ ձկնորսը,— նրա ցանցը Նազարեթցի մի գեղեցկուհի կույս է ընկել:

— Այո, այսօր նա որսի գլուխ չունի,— ավելացրեց երրորդը,— նա ամուսնանում է:

Թիակների համաչափ թափահարումով նա-

[1] Գենեսարեթի լիճը երբեմն Գալիլիայի ծով էին անվանում (Մատթ. ԺԵ, 29): (Այստեղ և այսուհետև ծանոթագրությունները հեղինակինն են)

վակներն արագորեն հեռացան ափից: Ձկնորս-ները մայրամուտի վերջալույսերի մեջ ինչ որ ժամանակ դեռ տեսնում էին իրենց հայրենի քաղաք Կափառնայումի ուրվապատկերը, բայց շուտով այդ ուրվագծերն էլ կորան՝ սուզվելով գիշերային խավարում:

Կափառնայումը քնած էր, երբ անսպասելիորեն նրա փողոցները ողողվեցին թմբուկի ուրախ զարկերով ու ֆլեյտայի մեղեդային ձայներով: Բնակիչներից ոչ ոք չնեղսրտեց այդ կարծես անժամանակ աղմուկից: Սկսվում է չորեքշաբթին՝ նշանակում է՝ հարսանիքի օրը[1]:

Ընդհակառակը, մարդիկ սկսեցին դուրս գալ տներից դիտելու հարսանեկան թափորը, որ տասնյակ ջահերով լուսավորվելով՝ դանդաղ ընթանում էր փողոցով: Հարսնացուն, ոտքից գլուխ փաթաթված ծածանվող լայն քողի մեջ, գնում էր՝ շրջապատված իր ընկերուհիներով: Նվագով, երգ ու պարով նրան տանում էին փեսացուի մոտ նշանդրեքի: Հարսնացուի գլուխը զարդարում էր սպիտակ ծաղկեպսակը, ծաղիկներով էր ծածկված նաև քողը: Ընկերու-

[1] Հրեաների մոտ կույսերի հարսանիքի օրը սովորաբար չորեքշաբթին էր, այրիներինը՝ ուրբաթը: Ընդհանրապես, շաբաթ օրը երբեք հարսանիք չէին նշանակում: Հարսանեկան թափորը, որպես կարգ, ընթանում էր ոչ երեկոյան կամ գիշերը՝ լուսավորված ջահերով:

հիները, թևանցուկ, կենդանի շրջան բռնած, երգում էին հարսնացուի շուրջը. «Գիշերն անկողնուս մեջ փնտրեցի իմ հոգու սիրածին, փնտրեցի նրան, բայց չգտա, կանչեցի, բայց ինձ ձայն չտվեց: Վեր կենամ, շրջեմ քաղաքում, անցնեմ փողոցներ ու հրապարակներ և փնտրեմ նրան՝ իմ հոգու սիրածին: Փնտրեցի նրան, բայց չգտա, կանչեցի նրան, բայց ինձ ձայն չտվեց»[1]:

Նշանդրեքի էին տանում նազարեթցի հյուսն Հովսեփի դստերը՝ Սաղոմեին: Բարձրահասակ, ձիգ, աշխույժ և ուրախ բնավորությամբ աչքի ընկնող աղջիկը գնում էր գլուխը կախ, սսկված ու խեղճացած: Այդ բոպեներին Սաղոմեն նույնիսկ փոքր ինչ նախանձում էր անբռնազբոս երգող ընկերուհիների ուրախությանը.

«Երդվեցեք, ո՛վ Երուսաղեմի դուստրեր, հողի ու հանդի զորության վրա, եթե դուք գտնեք իմ սիրեցյալին, կպատմեք նրան, որ ես այրվում եմ նրա սիրուց.

— Ինչո՞վ է առավել քո սիրելին մյուս տղաներից, ո՛վ գեղեցիկդ կանանց մեջ, ինչո՞վ է նա առավել, որ այդպես երդվեցնում ես մեզ.

— Իմ սիրեցյալը սպիտակ է և կարմիր, ընտրյալ է՝ տաս հազարից: Նրա գլուխը ոսկի է ազ-

[1] Երգ երգոց, Գ 1-2:

նիվ, նրա մազերը գանգուր են, սև, ինչպես ագռավ: Նրա աչքերը նման են աղավնիների՝ հակված առատ ջրերի վրա: Նրա ծնոտները նման են խնկի անոթների, որոնք, ինչպես օծման յուղեր, անուշահոտություն են բուրում, նրա շուրթերը շուշաններ են, որոնցից առատ զմուռս է բխում»[1]:

Սաղոմեն ակամա ունկնդրում էր: Նա անգիր գիտեր այդ խոսքերն ու մի անգամ չէ, որ երգել էր հարսանիքներում: Բայց հիմա, երբ դա իրեն էր առնչվում, երգը հանկարծ ուրիշ նշանակություն ստացավ: Սաղոմեն դեռ չէր տեսել իր փեսացուին և երգի խոսքերը նորից հարցեր առաջացրին. «Ինչպիսի՞ն է նա, իմ ապագա ամուսինը»:

Նշանդրեքի ու հարսանիքի մասին պայմանավորվելու համար հոր հետ Կափառնայում էր գնացել Հակոբոսը՝ Սաղոմեի եղբայրը: Բայց մի՞թե նրանից, այդ լռակյաց ու լուրջ պատանուց, հնարավոր էր որևէ մի հասկանալի պատասխան կորզել:

Փեսացուի մասին քրոջ հարցերին նա կարճ պատասխանեց. «Սովորական մարդ է, ինչպես բոլորը», իսկ երբ փորձեց, այնուամենայնիվ, Հակոբոսից իմանալ, թե գեղեցի՞կ է արդյոք իր

[1] Երգ երգոց Ե, 8-13:

43394

փեսացուն, եղբայրը զարմացած բարձրացրեց աչքերը. «Մի՞թե ես աղջիկ եմ, որ տղամարդու գեղեցկությունը տեսնեմ»:

Ո՞ր աղջկան չի հետաքրքրում իր ամուսնական ճակատագիրը: Բայց իր հոր ընտրությունը Սաղոմեն ընդունեց իբրև Աստծո կամք: Այժմ, ծնողական օրհնանքին հնազանդ, նա սրտի թրթռուն նվաղումով էր ընդառաջ գնում իր ճակատագրին:

Հարսին հետևում էին նրա եղբայրները, հայրն ու ազգականները: Հովսեփին, իր բարեպաշտությամբ ու հոգու բարությամբ հայտնի այդ այրին գիտեին քաղաքի սահմաններից հեռու: Հիմա նա խոր մտորումների մեջ էր: Նրա կին Սաղոմեն մահացավ, երբ լրացել էր մոր պատվին այդ անունն ստացած դստեր ինը տարին: Հովսեփն արդեն վեցերորդ տասնամյակն էր բոլորում և սիրելի կնոջ մահից հետո ամուսնության մասին չէր մտածում: Տան ողջ աշխատանքը, փոքր եղբայրների հոգսի հետ միասին, Սաղոմեի ուսերին էր: Տան գործերը նա վատ չէր գլուխ բերում: Բայց երբ լրացավ տասներեք տարին, Հովսեփն սկսեց նրա համար փեսացու փնտրել: Որքան էլ տխուր էր իր եղբայրների մորը փոխարինած դուստրից բաժանվելը, բայց լավ չէր հարսնացուի տարիքին հասած

աղջկան տանը պահելը[1]: Առավել ևս Սաղոմեի նման գեղեցկուհուն, որ փեսացուների պակաս չուներ: Բացի այդ, նրա երկրորդ աղջիկը՝ Մարիամն էլ արդեն տասնմեկ տարեկան էր և տնտեսության մեջ քրոջից վատ չէր գլուխ հանում: Կանցնի երկու–երեք տարի, և նրան էլ հարկ կլինի ամուսնացնել: Որդիների հետ միասին Հովսեփի տանը դաստիարակվում էր նաև նրա կրտսեր եղբայր Կղեոփասը, ծնված հոր երկրորդ կնոջից, որի հետ նա ամուսնացել էր առաջացած տարիքում, երբ արդեն այրիացել էր: Կղեոփասը Հովսեփի ավագ որդու՝ տասնհինգամյա Հակոբոսի հասակակիցն էր: Երկու տղաներին էլ իր արհեստը սովորեցնելով՝ ծերացող Հովսեփը ոչ վատ չինարարական պատվերներ էր վերցնում ու լիուլի ապահովում ընտանիքի ապրուստը[2]: Հովսեփը չէր կարող

[1] Հրեաների մոտ այն ժամանակներում փասներեք փարեկան դարձած կղան արդեն հասուն էր համարվում, նա կարող էր կրոնական դատարանում վկայություն տալ, իրավաբանորեն իրավասու էր գնել ու վաճառել, նաև ամուսնանալ: Աղջիկը չափահաս էր դառնում փասներկու փարեկանում, այդ ժամանակից սկսած, կրոնական ծեսերը կատարելով, նա նույնպես կարող էր դատարանում վկայություն տալ, ամուսնանալու որոշում ընդունել: Սովորաբար աղջիկներին ամուսնացնում էին 12-14 փարեկանում:

[2] Այն ժամանակ Ավետարանում հիշատակված Հովսեփի արհեստն իր մեջ ներառում էր ոչ միայն նեղ ատաղձագործությունը, այլ նաև շինարարական բոլոր տեսակի աշխատանքները:

չնկատել, որ Կղեոփասի ու իր աղջիկ Մարիամի միջև հատուկ մտերմիկ զգացմունքներ էին առաջացել ու մտածում էր. «Մի երկու տարուց չամուսնացնե՞մ այս ջահելներին[1]: Շատ դժվարություններ կհարթվեն, և տունը տնտեսուհի կունենա, և չինարարական գործերում անփոխարինելի Կղեոփասը հետս կլինի»:

Զեբեդեոսի տանն արդեն լսել էին, որ հարսանեկան թափորը մոտենում է, ու դուրս էին եկել հարսին դիմավորելու: Զեբեդեոսն զգեստավորված լավագույն տոնական հագուստով՝ գնում էր իր երիտասարդ ընկերներով շրջապատված: Տան մոտ հարսանեկան վրան էր կառուցված, որ ծաղիկներով զարդարված կտորե կամար էր հիշեցնում: Փեսացուին վրանի մոտով ընդառաջ տարան հարսնացուին: «Ես պատկանում եմ իմ սիրեցյալին, և նա ինձ է ցանկանում»,– երգում էին աղջիկները՝ Սաղոմեին մոտեցնելով նրան: Զեբեդեոսն առաջին անգամն էր տեսնում իր հարսնացուին և այժմ, նայելով Սաղոմեի չիկնած, գեղեցիկ երեսին, այնպես հուզվեց,

[1] Հրեաների մոտ հնում միայն անմիջական ազգականների ամուսնությունն էր անթույլատրելի, օրինակ՝ եղբոր ու քրոջ միջև: Որեղբոր և զարմուհու ամուսնությունը ոչ միայն թույլատրվում էր, այլև եզակի երևույթ չէր:

որ մի պահ մոռացավ ծեսի խոսքերը, որոնցով մինչև նշանդրեքի արարողությունը պիտի դիմեր Հարսնացուին: Վերջապես իրեն տիրապետելով՝ նա բացեց բռունցքն ու ափի մեջ երեք արծաթե դրամ մեկնեց: Հուզմունքից խզված ձայնով արտաբերեց.

— Սաղոմե՛, Մովսեսի և Իսրայելի ժողովրդի օրենքով իմ կինը դարձիր:

Սաղոմեն ավելի շիկնելով և հայացքը դեպի փեսացուն չբարձրացնելով, նրա քրտնած ափից լուռ վերցրեց խոնավացած դրամները, որ ամուսնությանը համաձայն լինելն էր նշանակում[1]: Փեսացուն թեթևացած շունչ քաշեց, կարծես ծանր աշխատանք էր կատարել: Փեսացուի հոգոցին Սաղոմեն ակամա թեթևակի ժպտաց ու աչքի տակով նայեց նրան: Զեբեդեոսը խոժոռվեց:

Ընկերները փեսացուին տարան հարսանքատուն: Երբ նրան կանգնեցրին խորհրդանշական վրանի տակ, ասացին.

— Ամեն այստեղ եկողը թող օրհնյալ լինի:

Նույն մաղթանքներով՝ ընկերուհիները նրանց հետևից Սաղոմեին տարան վրանն ու փեսացուի շուրջ պտտեցնելով, սկսեցին երգել. «Ե՛կ, իմ սիրեցյալ, ելնենք ագարակները, դիշերենք շեների ու պարտեզների մեջ, վաղ առավոտյան այգիները գնանք: Տեսնենք, թե արդյոք ծաղկե՞լ է որթատունկը, ծաղկե՞լ է արդյոք նռճին, ծաղկե՞լ է արդյոք նոնենին: Այնտեղ քեզ կտամ իմ ստինքները» (Երգ. Է. 11–12): Հարսնացուին երրորդ անգամ Զեբեդեոսի շուրջը պտտեցնելուց հետո աղջիկները Սաղոմեին կանգնեցրին նրա աջ կողմն ու Հարսնացուի հաստ քողը գցեցին գլխին: Բոլորը դեմքով շրջվեցին արևելք: Նրանց մոտեցավ ժողովարանի առաջնորդը՝ ալեհեր Սամվելը: Զեբեդեոսն, ինչպես և ընդունված էր, բռնեց իր նշանած օրիորդի ձեռքերն ու թեթևակի սեղմեց՝ իր կոշտ ու մեծ ափերի մեջ զգալով նրանց դողը: Սաղոմեն երախտապարտ հայացքով նայեց նրան:

Գինով լի գավաթը տվեցին ալեհեր Սամվելի ձեռքը: Նա թավ հոնքերի տակից խեթ հայացքով չափեց փեսացուին ու Հարսնացուին և փոքր ինչ դողացող ձայնով հանդիսավորապես արտաբերեց.

— Այժմ և հավիտյան թող օրհնյալ լինի Աստծո անունը: Թող մեզ տանի ճշմարտության

[1] Ըստ հրեաների հինավուրց ավանդության փեսացուն փղամարդ վկաների (ոչ ազգական ու երկուսից ոչ պակաս) ներկայությամբ հարսնացուին հարցնում էր, թե համաձա՞յն է ամուսնության ու փող էր նվիրում, որպես կարգ՝ արծաթե դրամներ: Եթե նա ընդուներ նվերը՝ ամուսնությունը կկայանար:

ուղիներով ու լսի օրհնությունը Մովսեսի որդիների, Ահարոնի որդիների: Օրհնյալ է Իսրայելի Աստվածը՝ խաղողի որթի պտուղն ստեղծողը:

Այս խոսքերն ասելով Սամվելը գավաթը տվեց նորապսակներին գինի խմելու:

Սկսեցին ամուսնական պայմանագիրն ընթերցել: Նրանում թվարկվում էր Զեբեդեոսի ունեցվածքը: Տուն Կափառնայումում և մի տուն էլ Երուսաղեմում, երեք նավակ, մի քանի ձկնորսական ցանց: Նույն պայմանագրում էլ թվարկվում էր հարսնացուի օժիտը: Այնուհետև օրհնանքներով ու մաղթանքներով ևս յոթ գավաթ բարձրացրին: Սաղոմեն արդեն չէր ըմբռնում արտասանվող խոսքերի իմաստն ու հետագա բոլոր արարողությունները նրա համար ասես երազում էին կատարվում: Նա մի պահ նույնիսկ չըմբռնեց, որ ինքն ու Զեբեդեոսը սենյակում արդեն բոլորովին մենակ են նստած: Նրանց այդ սենյակն էին տարել հին ավանդույթի համաձայն, մի քանի րոպեով, որ վկայեն նրանց առանձնացումը որպես օրինական ամուսինների: Նրանք նստել էին լուռ, առանց աչքերը բարձրացնելու: Լռությունը խախտեց Զեբեդեոսը.

— Երբ դու ինձ համար որդիներ կծնես,— ասաց նա,— ես նրանց ձուկ որսալ կսովորեցնեմ,— փոքր ինչ լռեց ու շարունակեց,— նրանք լավ ձկնորսներ կդառնան ու մեր տանը միշտ լիություն կլինի:

Սաղոմեն նույնպես ցանկացավ ինչ որ բան ասել, բայց այդ ժամանակ ջահելները խմբով սենյակ խուժեցին և նորապսակներին տարան տոնական սեղանի մոտ: Աղմկոտ հարսանեկան խրախճանքը, ինչպես ընդունված էր լավագույն տներում, շարունակվեց յոթ օր[1]: Ութերորդ օրը Զեբեդեոսի նավակներն արդեն հեռու էին Գեննեսարեթի լճի ափերից: Երիտասարդ տնտեսուհին մնաց տանն՝ սպասելու ամուսնուն:

[1] Հրեաների հարսանեկան խրախճանքը սովորաբար շարունակվում էր յոթ օր, ի հիշատակ այն բանի, որ Լաբանը Հակոբին սրիպեց յոթ տարի աշխատել իր տանը Լիայի, և յոթ տարի՝ Ռաքելի համար:

ԳԼՈՒԽ 2

Կիսաքուն և կիսարթուն երանելի վիճակը, որ լինում է քնից առաջ, դանդաղեցնում էր Հերովդեսի անհանգիստ մտքերի ընթացքը, դրանք դարձնում կպչուն, թանձր, պատրաստ՝ ուր որ է սառելու մնալու արդեն անորոշ ու անհուզիչ, անտարբեր ու անձև ինչ որ մի զանգված:

Թագավորը թեթևացած հոգոց հանեց ու փակեց աչքերը: Բայց հաջորդ պահին անորոշ տագնապը ասեղի պես ծակեց սիրտն ու քունը վախեցած թռչնի պես թռավ փախավ: Հերովդեսի կրծքից մի հառաչ պոկվեց, ավելի շուտ նման վիրավոր գազանի մռնչյունի, որի մեջ միաժամանակ հուսահատության ու ափսոսանքի զգացում էր արտահայտվում: Որոշ ժամանակ թագավորը շուռ ու մուռ էր գալիս իր անկողնում, ասես մարմնի դիրքի փոփոխությունից հոգին կարող էր հանգիստ գտնել: Բայց գիտակցելով այդ փորձերի անպտուղ լինելը, պառկեց մեջքի

վրա ու անշարժացավ՝ ազատություն տալով իր ծանր մտքերին:

Իմաստուն կառավարիչ ու հաշվենկատ քաղաքական գործիչ Օգոստոս կայսեր օրոք Հերովդեսը Հրեաստանում վերջապես հասավ փառքի ու իշխանության գագաթնակետին: Այդ ամենը նրան հեշտությամբ չտրվեց. պատերազմեց, ամրոցներ կանգնեցրեց ու նավահանգիստներ կառուցեց, ճնշեց անհնազանդների ելույթները, ի նպաստ հրեաների կրոնական ձգտումների վերակառուցեց Երուսաղեմի տաճարը, բայց մեկ է, չարժանացավ նրանց սիրուն: Սակայն փոխարենը կարողացավ հաճոյանալ Հռոմին. ձիարշավարաններ ու թատրոններ կառուցեց, դիվանագիտություն ու առատաձեռնություն դրսևորեց Հռոմեական կայսրության քաղաքների նկատմամբ: Եվ թեկուզ Հռոմում նրան ամբողջովին չէին վստահում, բայց հարգում և գնահատում էին որպես հավատարիմ կամակատարի: «Իսկ ինչ մնում է հրեաների սիրուն,— սրտնեղած մտածում էր Հերովդեսը,— անգամ Աստված չէր կարող նրանց գոհացնել: Թեկուզ չեն սիրում, բայց հո վախենում են»: Մնում է օր ծերության ապրել և ուրախանալ այս կյանքով: Բայց ասես դանակի հարված թիկունքին՝ դավադրություն սե-

փական ընտանիքում: Եվ ումի՞ց: Որդիներից: Սիրելի որդիներից՝ ծնված Հասմոնյան հարստության[1] տոհմից սերված Մարիամնայից: Հարազատ հոր դեմ ապստամբում են նրանք, ում ինքը ցանկանում էր թողնել իր թագավորությունը: Հերովդեսը նորից խոր հոգոց քաշեց ու կրճտացրեց ատամները: «Օ, եթե հաստատվի, որ դավադրության մասին այդ նամակը կեղծիք չէ, երդվում եմ Եահվեյի գահով, նրանք չեն ապրի: Կոչնչացնեմ ինչպես վայրի գազանների ու մոխիրը կտամ քամուն»:

Բորբոքված այդպիսի մտքերից՝ թագավորը ելավ ու նստեց գահին: Ինչ որ ժամանակ նա դեռ չէր կարողանում հանդարտվել, ասես ինչ որ մեկի հետ խոսելով՝ թափահարում էր ձեռքերը: Վերջապես սկսեց հանդստացանալ, բայց այդ պահին մի միտք ծագեց, որից սառը քրտինք տվեց վրան. «Իսկ եթե նրանք իրենց մտքին դրածը իրականացնեն հիմա՞»: Հերովդեսը տագնապով նայեց իր ննջարանը թիկնապահների ջոկատի կացարանից բաժանող ծանր վարագույրին. «Ոչ,— այնտեղ հրեաներին ատող իդումեացի հավատարիմ Բաշարն է: Իրեւ ատելի թշնամու՝ դավադիրներն առաջինը նրան կկախեն: Ոչ, Բաշարը չի դավաճանի»: Հերովդեսն զգաց, որ ապրումներից կոկորդը չորացել է: Ձեռքը մեկնեց կողքը դրված հունական գինով լի սափորին: Անոթի պռունկը հպելով շրթունքներին՝ գլուխը հետ գցեց ու սկսեց խմել՝ երանությամբ զգալով խաղողի որթի տտիպ համն ու բուրմունքի թարմությունը: Գինին թափվում էր Հերովդեսի մորուքին, կաթկթում պատմուճանի վրա, որից էլ կրծքին մի մեծ, կարմիր բիծ առաջացավ: Հազենալով՝ Հերովդեսը սափորը մի կողմ դրեց ու սկսեց ականջալուր լինել իր ներքին զգացողություններին: Գինին հաճելիորեն տաքացնում էր ներսն ու հանգստություն բերում: Թագավորը հոգոց քաշեց, մտավ մահիճն ու նինջը նորից պատեց նրան:

Հազիվ լսելի շրշյունն Հերովդեսին ստիպեց վեր թռչել: Նա նայեց շուրջն ու տեսավ, թե ինչպես իր ննջարանն անձնական թիկազորի սենյակից բաժանող ծանր վարագույրն սկզբում տարուբերվեց, իսկ հետո սկսեց դանդաղորեն հետ քաշվել: Սարսափը պատեց թագավորին: Զգիտես ինչու նա արդեն գիտեր, որ մեկը հիմա կմտնի ննջարան: Զգացողությունը նրան չխաբեց: Ննջարան մտավ նրա որդի Ալեք-

[1] Հասմոնյան հարստություն - Համոնյանները գլխավորեցին հրեաների ապստամբությունը հռոմա-սիրիական կիրապետության դեմ և այնուհետև հինգ սերունդ, ՔԱ 165-ից մինչև ՔՀ 37 թթ. կառավարեցին Հրեաստանը:

սանդրը: «Օ՜, խորամանկ,– մտածեց Հերովդեսը,– և ո՞ւմ է ուզում նա խաբել: Ախր ես գիտեմ, որ նրա Թիկնոցի տակ սուր է պահված»: Թագավորն աճող հուզմունքով նայում էր մոտեցող որդուն ու տենդագին երևակայում, թե ինչ ձեռնարկի: Նա արդեն ուզում էր աննկատ ելնել անկողնուց ու թաքնվել, բայց վիճակը ծանր էր, մարմինն ասես կապարով էր լցվել: Եվ այդժամ Թագավորը մտածեց, որ Ալեքսանդրը չգիտի, որ ինքը նրան տեսնում է: Իսկ եթե իմանար, որ հայրը քնած չէ, ապա չէր համարձակվի ձեռք բարձրացնել նրա վրա: Հերովդեսը ճիգ գործադրեց խոսելու, բայց վախից սառեց ու հասկացավ, որ ոչ մի բառ չի կարող արտաբերել: Այդժամ վարագույրն սկսեց նորից հետ քաշվել, և Հերովդեսի մեջ հույս արթնացավ. միգուցե դա իրեն օգնելու եկող հավատարիմ Բաչա՞ն է: Բայց Թիկնապահի փոխարեն գողեգող ներս մտավ իր երկրորդ որդին՝ Արիստոբուլոսը: «Ոչ,– հուսահատ մտածեց Հերովդեսը,– նրանից օգնություն սպասել չի լինի, նա էլ եղբոր հետ դավադիր է»: Այդ միջոցին Ալեքսանդրը մոտեցավ մահճին, շուրջը նայեց, Թիկնոցի տակից հանեց կարճ սուրն ու խրեց հոր կուրծքը: Հերովդեսին այնպիսի անասելի սարսափ պատեց, որ նա հստակ, ֆիզիկական ցավի պես զգաց, թե ինչպես է սրի սայրը խրվում իր կրծքավանդակն ու կտրատում այն: Թագավորը վայրենի ճիչ արձակեց: Նա այն ժամանակ էլ չդադարեց ճչալ, երբ հասկացավ, որ այդ ամենը միայն երազ էր: Ճչում էր, տեսնելով, թե ինչպես է ննջարանում վախեցած վազվզում ներքինի Պանկրատիոսը: Ճչում էր և այն ժամանակ, երբ բոցավառվող ջահերով ննջարան ներխուժեց պալատական պահակախումբը: Ճչում էր ու չէր կարողանում լռել:

ԳԼՈՒԽ 3

Երբ վայրի, անմարդկային ճիչը թնդյունով տարածվեց թագավորական պալատի սենյակաշարքով մեկ ու հասավ կանանց հարկաբաժին, Հերովդիան ցնցվեց ու բացեց աչքերը:

— Լույս վառեք,— Հերովդիան ջանում էր իր ձայնին տիրականություն հաղորդել, բայց ձայնը դողում էր ու հազիվ դեռատի պարմանուհու խղճալի ծղրտոց էր ստացվում: Աղախինն անկողնուց վեր թռչելով՝ անմիջապես սկսեց կայծքարերն իրար խփել: Բոցավառված ջահով նա վազելով մտավ Հերովդիայի ննջարանը:

— Տիրուհի՛, մի՛ վախեցեք, ես այստեղ եմ: Ձեզ ոչինչ չի սպառնում, դա պալատի մյուս կեսում է:

— Ես չեմ էլ վախենում,— սրտնեղվելով իր թուլության համար՝ գրգռված պատասխանեց աղջիկը,— ես ինքս էլ ամեն ինչ հիանալի լսում եմ: Ես ուզղակի ուզում եմ, որ լույս լինի:

— Լավ, տիրուհի, թող լույս լինի,— անմիջապես պատրաստակամորեն պատասխանեց աղախինն ու վառեց Հերովդիայի մահճի կողքին, պատին ամրացրած պղնձե ճյուղավոր աշտանակի երկրորդ մոմը:

Թրթռացող բոցի լույսի ցոլքերն ընկնում էին Հերովդիայի տաղնապահար դեմքին: Չնայած հավաստիացումներին՝ նա այնուամենայնիվ վախենում էր: Եվ վախենում էր տանջալիորեն: Հերովդիան գիտեր. այդ իր պապն էր ճչում: Վերջին ժամանակներն այդ բանը ավելի ու ավելի հաճախ էր կրկնվում: Մայրը պատմում էր Հերովդիային, որ գիշերով հանկարծ կատաղություն է իջնում պապի վրա, երբ նրա խանդարված երևակայությանը տեսիլքներ են երևում ու սկսում ծվատել թագավորի հոգին: Այդ ժամանակ նա գոռում է, կանչում իր սիրելի կնոջը՝ Մարիամնային, ում շատ տարիներ առաջ ինքն էր մահապատժի ենթարկել, աղերսում է, անիծում, խոստանում պատժել գրպարտիչներին: Թագավորն արդեն մահապատժի էր ենթարկել բոլորին, ովքեր իր իսկ հրամանով դատել էին Մարիամնային: Հերովդիան այդ ամենը գիտեր ու հենց գիտենալու համար էլ վախենում էր: Իր հարազատ տատին այնքան նման աղջկան թվում էր, որ իրեն կբռնեն ու կտանեն մահապատժի: Մահապատժի կենթար-

կեն, քանի որ նման է տատին: Քանի որ ինքը Մարիամնայից ու Հերովդեսից ծնված Արիստոբուլոսի աղջիկն է և իր երակներում նույնպես հոսում է Հասմոնյան թագավորական տան ազնվական արյունը: Հասմոնյան հարստության ներկայացուցիչը լինելու զգացմունքը, որ նրան ամբարտավան գոռոզություն էր ներշնչում, միաժամանակ և մեծ սարսափ էր ծնում:

Երնելով անկողնուց՝ պարմանուհին զգոն ականջ էր դնում ծառաների ճիչերին ու վազվզոցին: Բայց ահա վերջապես պալատում լռություն տիրեց, և աղջիկը թեթևացած շունչ քաշեց: Նրան թվաց, որ ննջարանում անտանելի շոգ է՝ մխացող ջահի՞ց, թե անցած շոգ օրից: Հերովդիան ելավ անկողնուց: Ու հենց այդպես, քաթանե երկար գիշերային պատմուճանով, մոտեցավ պալատի կանանց հարկաբաժնի մի քանի ննջարաններ սրահով միմյանց միացնող բաց ճաղաշարքին: Դուրս եկավ ու քարացավ իրեն պատած հիացմունքից: Ուղիղ նրա առջև տարածվում էր հատուկենտ կրակներով լուսավորվող ու գիշերային մթության մեջ շենքերի ու աշտարակների պղտոր ուրվապատկերներով ուրվագծվող Երուսաղեմը: Բայց աղջիկը քաղաքին չէ, որ նայում էր: Գլուխը հետ գցած՝

դյութված նայում էր երկնքին: Գլխավերևում հսկայական, պայծառ աստղերով պատած երկնագույն երանգով սև վրան էր տարածվում: Հերովդիային հանկարծ թվաց, թե այդ գիշեր ամեն ինչ միայն իրեն է պատկանում, և՛ այդ երկինքը, և՛ մթության մեջ խորհրդավոր մարմրող այդ աստղերը, և՛ իր առջև տարածվող ողջ քաղաքը: Նա նայում էր աստղերին ու երազում, որ նրանք կարող են խոսել ու բացել իր համար շատ կարևոր գաղտնիք. գաղտնիք, որն իրեն կօգնի տիրելու ողջ աշխարհը: Հատկապես մյուսներից պայծառ ու պապի թագավորական ադամանդե թագի խոշոր թանկարժեք քարը հիշեցնող մի աստղ էր աչքի զարնում: Այդ աստղից ոչ հեռու նա նկատեց ուրիշ, դույնով տպազիոնի նման մի ոչ մեծ, դեղին աստղիկ. «Իսկ գուցե թանկարժեք ակնեղենն ա՞յս է, որ կա,— երազուն մտածում էր աղջիկը:— Ի՞նչ կլինի, եթե դրանք հիմա թափվեն այստեղ: Ես կդառնամ ամենահարուստն աշխարհում: Ավելի հարուստ, քան երբևիցէ եղել է եգիպտական թագուհի Կլեոպատրան, որի առջև խոնարհվում էին նույնիսկ թագավորները: Իսկ չէ՞ որ կգա ժամանակը և ես կթագավորեմ». Հերովդիայի կրծքում այս մտքից ամեն ինչ պաղեց մի քաղցր-նվաղուն հիացմունքի մեջ, և նա վա-

խեցած շուրջը նայեց, զգուշանալով, թե չլինի՞ հանկարծ մեկը կռահի իր մտքերը: Բայց շուրջը գիշերային պաղ լռություն էր տիրում՝ խզվելով միայն ծղրիդների ձայներից: Նա հանկարծ հիշեց պապի աղեկտուր ճիչը: «Այդ ճիչն ասես մոտեցող դժբախտություն է գուժում: Այդպես նա երբեք չէր ճչացել»,– մտածեց պարմանուհին ու նրա սիրտը կծկվեց տագնապալի կանխազգացումից: Հերովդիան մի անգամ էլ նայեց աստղալից երկնքին, բայց առանց նախկին հիացմունքի: Աղջկան շրջապատող աշխարհն արդեն թվաց օտար ու թշնամի, իսկ մարմրող աստղերը՝ սառն ու անտարբեր:

Իր ննջարանը վերադառնալիս մոր հարկաբաժնից Հերովդիան լաց ու դառը հառաչանքներ լսեց: Աղջիկն անմիջապես այնտեղ նետվեց ու ականատես եղավ իր ոչ ճշմարտանմանությամբ ապշեցնող տեսարանի: Հերովդիայի մայր Բերենիկան ու հորեղբայր Ալեքսանդրի կին Գլաֆիրան իրար գրկած կանգնել ու դառը հեկեկում էին:

Տեսածը չէր տեղավորվում աղջկա գլխում: Հերովդեսի երկու հարսների միջև թշնամանքն այնպես էր արմատացել շրջապատողների գիտակցության մեջ, որ նրանց այդ վիճակում տեսնելով՝ Հերովդիան շփոթահար կանգ առավ

շեմին: Նկատելով աղջկա ներկայությունը՝ մայրն արտասվալից հառաչեց.

– Լա՛ց, աղջիկս, լա՛ց: Եկել են մեր սև օրերը: Քո հայրն ու հորեղբայրը զնդանում են: Իբրև թագավորի դեմ մահափորձ կատարած դավադիրների՝ նրանց ուզում են մահապատժի ենթարկել:

Հերովդիան հոր հանդեպ խղճահարությունից ու իրեն համակած սարսափից լաց եղավ: Հերովդիայի փոքրիկ եղբայր Ագրիպպասը, որ մինչև այդ առանց հասկանալու մորն ու հորեղբոր կնոջն էր նայում, տեսնելով արտասվող քույրիկին՝ ինքն էլ սկսեց բարձրաձայն լաց լինել ու նետվեց դեպի նա, կարծես պաշտպանություն ու հանգստություն գտնելու: Հերովդիան դադարեց լաց լինելուց ու շոյիչ խոսքերով մխիթարելով՝ սկսեց շոյել եղբայրիկի գլուխը: Բայց փոքրիկն իր հանդեպ ուշադրություն զգալով՝ ձայնն ավելի բարձրացեց: Եվ այդտեղ Հերովդիայի գլխում մի սարսափելի միտք ծագեց. «Իսկ որ վերցնեն ու հորից հետո փոքրիկ ժառանգ Ագրիպպասին նույնպես մահապատժի ենթարկե՞ն»: Այս մտքերից Հերովդիայի տագնապն ավելի ու ավելի էր աճում: Տենդագին մտածելով՝ նա անհանգստությամբ շուրջը նայեց. ի՞նչ կարելի է ձեռնարկել: Վերջապես

վճիռ կայացնելով՝ կռացավ եղբայրիկի ականջին ու շշնջաց.

— Ագրիպպաս, արի պահմտոցի խաղանք: Կթաքնվենք, որպեսզի մեզ ոչ ոք չգտնի:

Երեխայի լացն անմիջապես դադարեց: Նա անհանգիստ նայեց քրոջն ու իբրև համաձայնության նշան՝ գլխով արեց:

— Գնանք ինձ հետ, ես գիտեմ՝ որտեղ կարող ենք թաքնվել,— այս ասելով Հերովդիան բռնեց Ագրիպպասի ձեռքից ու դուրս տարավ սենյակից:

Նրանք սկսեցին աստիճաններով զգուշորեն իջնել պալատի առաջին հարկը: Երբ արդեն անցնում էին թույլ լուսավորված միջանցքով՝ լսեցին զենքերի շաչյուն ու տեսան դեպի իրենց շարժվող պահազորին: Հերովդիան փոքրիկի հետ նեռվեց առաջին հանդիպած անցումն ու սլացավ ողջ ուժով: Ագրիպպասը, թեև քույրը քաշում էր ձեռքից, չէր հասցնում նրա հետևից ու ընկավ, ու խռովելով՝ անմիջապես ձայնը գլուխը գցեց: Հերովդիան ձեռքով փակեց նրա բերանը. «Սո՛ւս, Ագրիպպաս, խնդրում եմ քեզ, սո՛ւս: Մի՛ լացիր: Մեզ կլսեն»: Փոքրիկն աչքերը, որոնց մեջ սարսափը խառնված էր վիրավորանքին, չռեց նրա վրա ու փորձեց ճչալ ավելի բարձր: Այդ ժամանակ Հերովդիան, ուշադրություն չդարձնելով եղբոր գոռոցին՝ բռնեց նրա ձեռքն ու արագորեն հեռացավ նրա հետ: Նա արդեն ինքն էլ չէր գիտակցում, թե պալատի ո՞ր մասում էր գտնվում և որմնախորշով մի մութ անկյուն տեսնելով՝ մտավ այնտեղ ու եղբորը սեղմեց կրծքին: Ագրիպպասը սսկվեց ու քրոջ օրորից քնեց:

ԳԼՈՒԽ 4

Հարսանիքից մի տարի անց Սաղոմեն ծնեց Զեբեդեոսի առաջնեկին: Յոթերորդ օրը թլպատման ծեսը կատարելով՝ որդուն պապի պատվին կոչեցին Հակոբոս: Թլպատման ծեսից հետո փոքրիկ Հակոբոսն սկսեց ճչալ ու մինչև երեկո չէր կարողանում հանգստանալ:

Զեբեդեոսը գիշերային որսի էր պատրաստվում: Նա նայեց լացող որդուն, կնճռոտվեց, այնուհետև նրան վերցրեց Սաղոմեի ձեռքից ու տանից դուրս գալով, գնաց դեպի լճի ափը: Սաղոմեն շտապ հետևեց ամուսնուն: Զեբեդեոսը մոտեցավ իր նավակին ու երեխային դրեց ձկնորսական ցանցերի վրա: Մանչուկը շարունակում էր ճչալ:

— Նա մեր բոլոր ձկներին կվախեցնի,— կատակեց Զեբեդեոսի վարձու ձկնորսներից մեկը:

Սաղոմեն հարցական նայեց ամուսնուն և ուզում էր վերցնել երեխային, բայց Զեբեդեոսը հետ պահեց նրան.

— Ձեռք մի տուր: Թող ընտելանա մեր գործին: Կճչա ու կհանգստանա:

Քանի դեռ Զեբեդեոսը մյուս ուռկաններն էր պատրաստում, նավակում օրորվելով ու ղով զեփյուռից շոյվելով՝ երեխան հանգստացավ ու քնեց: Հայրը մոտեցավ ու որդուն նավակից դուրս բերելով՝ հանձնեց կնոջը: Երեխան արթնացավ ու նորից լաց եղավ:

— Տեսնո՞ւմ ես,— հպարտությամբ ասաց հայրը,— ձկնորսական ուռկանները նրան ձեր օրորոցներից ավելի հաճելի են: Մի քիչ կմեծանա ու հետս ձկնորսության կտանեմ:

Հակոբոսը դրկին տուն վերադառնալով՝ Սաղոմեն մտածում էր. «Լավ է, իհարկե, երբ որդին հետևում է հորը, բայց ավելի լավ է, երբ մարդն առաջին հերթին Տիրոջն է հետևում»: Նա հիշեց իր մանկական տարիները: Իրիկունները Հովսեփը հավաքում էր իր երեխաներին ու նրանց պատմում էր Աստծո, մարգարեների մասին, Իսրայելի ժողովրդի պատմությունը: Քանի անգամ նրանք լսել էին հորից, որ Դավթի տոհմից, որին պատկանում էին և իրենք, կծնվի Մեսիան[1], Իսրայելի ժողովրդի ապագա մեծ առաջնորդը: Հովսեփը պատմում էր, որ Մեսիան ոչ միայն կվերականգնի Դավթի տան անցյալ վեհությունը, այլև ժողովրդին կտանի

[1] Մեսիա - հունարեն Քրիստոս. նշանակում է Օծյալ՝ աշխարհի Փրկիչ թագավորը, ում գալուստն աշխարհ կանխատեսել էին Իսրայելի մարգարեները:

Աստծուն հաճո բարեպաշտության ճանապարհով: Մեսիայի օրոք Իսրայելի փառքն ավելի բարձր է լինելու Սողոմոնի թագավորության փառքից: Նա հիշեց Երուսաղեմից Կափառնաումի ժողովարան եկած մի դպիրի պատմությունը Մեսիայի մասին. «Մեսիան Աստծուց պիտի օժտվի անսովոր ուժով ու շնորհներով,– գուշակում էր երուսաղեմցի քարոզիչը,– Նա պիտի հրամայի աշխարհի տարերքներին: Նա ծով դուրս կգա ու կասի. «Ծով, տուր ինձ բոլոր գանձերը, որ պահում ես դարերով: Եվ ծովը թանկարժեք մարգարիտներ ու քարեր, ոսկի ու արծաթ ափ կնետի: Եվ բոլորն Իսրայելում պիտի հարուստ լինեն և ողջ աշխարհը պիտի հնազանդվի Մեսիային»:

Սաղոմեն, չգիտես ինչու, կասկածեց դպիրի խոսքերին: «Մի՞թե,– մտածեց նա,– Մեսիան երկրային հարստություններով է խաղաղություն ու բարօրություն գնելու ժողովուրդների համար: Չէ՞ որ երկրային թագավորներն ունեն հարստություն, բայց արյունն ու դժբախտություններն աշխարհում չեն դադարում: Ոչ, հավանաբար Մեսիան պիտի մարդկանց սրտին ու հոգուն ազդելու ուժ ունենա: Ինչպե՞ս ես կուզեի, որ դա այնպիսի Մեսիա, որ բոլոր բարի մարդկանց տանի իր հետևից ու նրանց համար աշխարհում կառուցի Իր Մեսիական թագավորությունը: Ինչպե՞ս ես կուզեի, որ իմ զավակները ծառայեին Մեսիային»: Խորասուզված այսպիսի բարեպաշտ մտքերի մեջ, Սաղոմեն այժմ երազում էր, որ զավակների հոգում դաստիարակի Իսրայելի մխիթարության մեսիական ակնկալիքները:

ԳԼՈՒԽ 5

Անցում էին օրեր, շաբաթներ, ամիսներ, և Ալեքսանդրի ու Արիստոբուլոսի բոլոր մտերիմներն անց էին կացնում մերթ հույսի, մերթ հուսահատության հասնող տագնապալից սպասումների մեջ: Սկզբում նրանց լուրեր հասան, որ թագավորը որդիներին երիքով է տարել ժողովրդի դատին հանձնելու, որտեղ քիչ է մնացել ամբոխը նրանց ծվատի, բայց վերջին պահին Հերովդեսը միտքը փոխել ու պաշտպանել է նրանց: Այնուհետև թագավորը որդիներին տարել է իր թագավորության սահմաններից դուրս՝ Բերիտ քաղաքը: Այնտեղ սիրիական նահանգի կարևոր մարդկանց հատուկ դատ է գումարվել: Դատից հետո, որտեղ մեծամասնությունը որդիներին մեղավոր է ճանաչել, նրանց տարել են Սամարիա: Եվ ահա եկավ սարսափելի լուրը. Սամարիայի Սեբաստիա քաղաքում Ալեքսանդրին ու Արիստոբուլոսին մահապատժի են ենթարկել:

Հոր մահը Հերովդային հուսահատության մեջ գցեց: Դատեր՝ սիրո, իր համար՝ վախի, պապի նկատմամբ ատելության զգացմունքները խառնվել էին նրա մեջ ու պարմանուհու հոգին ասես սառը ցրահով սառցապատել ամենքի նկատմամբ անտարբերությամբ: Նույնիսկ իր մոր նկատմամբ: Հերովդիայի արտասուքն սպառվել էր: Նա աննպատակ թափառում էր պալատում, բայց դեռ հեռվից տեսնելով որևէ մեկին՝ թաքնվում էր:

Ալեքսանդրի ու Արիստոբուլոսի մահապատժից մի տարի անց նրանց երեխաներին տարան պապի մոտ: Ինչի ասես սպասելով՝ Հերովդիան դողում էր կաղամախու տերևի պես: Նրա հետ քայլում էր իր հարազատ քույրը՝ սուսիկ աղջնակ Մարիամնան: Սրահում, ուր խնջույքի սեղանի շուրջ թիկն էին տվել թագավորն ու իր անվանի հյուրերը, ուրախ աշխուժություն էր տիրում: Հերովդեսի հյուրերից էր արաբական հողերի իշխան Արետասը: Արաբների հետ ռազմական բախումները շատ տհաճություններ էին պատճառում Հերովդեսին: Իսկ այժմ, երբ հաջողվել էր լավ հարաբերություններ հաստատել արաբական իշխանության հետ, երկու տիրակալները քննարկում էին, թե այդպիսի քաղաքական միությունն ինչպես ամրացնեն նաև ազգակցական կապերով: Թույլատրված

էր, որ սեղանին մասնակցեն նաև Հերովդեսի երկու որդիները՝ Արքեղայոսն ու Անտիպասը՝ ծնված նրա երրորդ կին Մալֆակից: Պատանիները հենց նոր էին վերադարձել Հռոմից, ուր ուսում էին առնում: Հյուրերն սկսեցին դիտել թագավորի թոռներին:

Բոլորովին չնեղվելով թոռների ներկայությունից՝ Հերովդեսն ինքնագոհ դատում էր.

— Սրանք Հասմոնյան տոհմի շառավիղներ են: Որբեր են,— այս ասելիս թագավորի աչքերը խոնավացան,— իմ պարտքն է կառուցել նրանց ապագան:

Թագավոր Արեստասը զմայլվում էր՝ նայելով քույրերի համեմատ առավել գեղեցիկ երևացող Հերովդիային: Աղջկա դլխի հպարտ տեսքով ավարտվող ուղիղ կեցվածքը, կուսական մարմնի նույնիսկ ծածկոցի տակից հազիվ ուրվագծվող նրբագեղ կլոր ձևերի հետ տպավորություն էին թողնում: Աղջկա մուգ կանաչ աչքերն, ինչպես հեռավոր Հնդկաստանի երկու խոշոր զմրուխտ, կայծկլտում էին թավ ու սև հոնքերի տակից: Ձվաձև, անթերի դեմքն ու հազիվ նկատելի կորությամբ հստակ գծագրված ուղիղ քիթը աղջկա ողջ կերպարանքին թագավորական վեհություն էին տալիս: Անտիպասը, որ մինչև Հռոմ մեկնելը տեսել էր միայն ցցուն ոսկորներով դեռահասի, աղջկան, այժմ անթաքույց հիացմունքով նայում էր ազգականուհուն:

— Ահա, սրան,— մատնացույց արեց Արեստասը Հերովդիային,— որդուս համար կխնամախոսեմ, նա ընդամենը երկու կին ունի, իսկ երրորդը, այսպիսի գեղեցկուհին, կլինի սիրելին:

Այս խոսքերից Հերովդիայի սիրտը տագնապահար բաբախեց: Նա բոլորովին չէր ուզում արաբական շեյխի երրորդ կինը լինել:

— Ցավոք սրտի, մեծարգո Արեստաս, այս աղջիկն արդեն նշանված է իմ որդիներից մեկի հետ:

Արքեղայոսն ու Անտիպասը տարակուսանքով իրար նայեցին, իսկ Հերովդիայի սիրտը քիչ էր մնում կանգ առներ: Նա կավճի պես սպիտակեց ու խոնարհեց հայացքը, տենդագին մտածելով, թե ինչ կարող էին նշանակել պապի խոսքերը, չէ որ ոչ մի նշանդրեք էլ չէր եղել:

— Բայց մխիթարության համար, բարեկամս,— դիմելով արաբական տիրակալին՝ անմիջապես ավելացրեց Հերովդեսը,— որպես փեսացու ես քեզ առաջարկում եմ իմ որդիներից ցանկացածին: Տե՛ս, ինչ տղերք են:

Այս ասելիս Հերովդեսը ձեռքը դցեց Արքեղայոսի ու Անտիպասի մեջքով, կարծես ոչ թե խնամախոսություն, այլ զամբիկների առևտ-

տուր էր: Հերովդեսի առաջին կնոջից՝ Դորիսից ծնված ավագ որդին՝ Անտիպատրոսը, տագնապած խեթ հայացք դցեց հոր վրա, բայց բոլորի մոտ չհամարձակվեց որևէ բան ասել:

— Ես սիրելի աղջիկ ունեմ, իսկական արաբական անապատի ծաղիկ, անունն Ալբինա[1],— երկու ձեռքով մորուքը շոյելով՝ ինքնագոհ տոնով ասաց արաբը:

— Դե, եթե քեզ համար սիրելի դուստր է,— ծիծաղեց Հերովդեսը,— ուրեմն մեզ համար էլ կլինի դուստր ու իմ որդի Անտիպասի կին,— այս խոսքերն ասելիս թագավորը գինու արծաթե մեծ գավաթն անձամբ տվեց իր անվանի հյուրին:

Անտիպասը ճնշված նստել էր, իսկ Արքեղայոսը՝ ձեռք էր առնում.

— Է՛հ, եղբայր, ես քեզ չեմ նախանձում: Եթե այդ վարդը նաև փշեր ունի, ապա նրա հետ քնելը շատ բարդ կլինի: Իսկ ինձ Հերովդիայի հետ էլ վատ չի լինի: Նա թագավորական տոհմից է ու նաև գեղեցկուհի:

Բայց երկու օր հետո պարզվեց, որ Արքեղայոսին ոչ թե Հերովդիայի, այլ Մարիամնայի հետ են ամուսնացնելու. դա խիստ հիասթափեցրեց ինքնասեր պատանուն: Պապը որոշել էր Հերովդիային տալ Բոետ Փիլիպպոսին, իր չորրորդ կնոջից՝ քահանայապետի դուստր Մարիամնայից ծնված որդուն: Գոռոզ Հերովդիան, իմանալով պապի որոշման մասին՝ այն աստիճան խոցվեց այդ ստորացումից, որ երեք օր պառկեց տենդի մեջ: Իրեն, ում երակներով թագավորական արյուն է հոսում, տալ ցածրատոհմիկ կնոջ որդուն, որի հայրը պատահականորեն է քահանայապետ դարձել: Ոչ, նա չէր կարող դրա հետ համաձայնվել: Իշխանավորի կամ արքայազնի հետ ամուսնանալու նրա բոլոր երազանքները խորտակվեցին: «Շատ ավելի լավ է լինել արաբական իշխանի երրորդ կինը»,— դառն ափսոսանքով բացականչեց Հերովդիան: Բայց ոչինչ անել չէր կարող, ահարկու պապը ոչ մեկի անհնազանդությունը չէր հանդուրժի:

Բոլոր զավակների ամուսնական արարողությունները կատարեցին միաժամանակ: Պարզվեց, որ Արաբական անապատի ծաղիկն, ինչպես իր աղջկան անվանեց իշխան Արետասը, մուգ դեմքով, սև-սև աչքերով մի տասներկու տարեկան նիհար պարմանուհի է: Նրա տագնապահար-քննախույզ հայացքն ասես հարցնում էր. որտե՞ղ եմ ես և ինչո՞ւ եմ այստեղ: Սկզբում իր փեսացու Անտիպասը դուր եկավ Ալբինային: Անտիպասին, ընդհակառակը,

[1] Ալբա - արաբերեն վարդ:

հարսնացուն տհաճ դարձավ ամուսնության օրից, և նա նախանձով էր նայում Բոեսին, ում գեղեցկուհի էր բաժին ընկել: Ինջույքի սեղանին Հերովդիան նկատեց Անտիպասի՝ իր կողմը նետված հայացքներն ու թեև նման ուշադրությունը նրան շոյում էր, բայց ձևացնում էր, թե ոչինչ չի նկատում: Իհարկե, ինքն իրեն խոստովանեց, որ իր ամուսինն ամեն ինչում զիջում է Անտիպասին: Նա սլացիկ է ու տղամարդկայնորեն գեղեցիկ, դրանում հորն է քաշել: Զափավոր պերճախոս է ու կայտառ: Իսկ իր ամուսինը, թեև մի քիչ ջահել էր Անտիպասից, բայց տեսքով խղճուկ էր: Կռացած է քայլում: Մռայլ նայում է հոնքերի տակից ու լռում: Ամուսնական առաջին ողջ գիշերը Հերովդիան արտասվեց, իսկ հարսանեկան ինջույքի հաջորդ վեց օրերը նրա համար ասես երկարատև տանջանք լինեին:

ԳԼՈՒԽ 6

Երբ Հովսեփը տուն բերեց դեռատի Կույս Մարիամին, նրա դուստր Մարիամը շատ ուրախացավ: Իր քույր Սաղոմեի տնից գնալուց հետո միայն իրենց տղայական զվարճություններն ունեցող ու քրոջ հետ գլուխ չդնող եղբայրների շրջապատում տանը մնալը նրան ձանձրալի էր թվում. պարմանուհուն բաժին ընկած պատասխանատվությունն էլ անմիջապես նրա և կրտսեր եղբայրների միջև սառնություն էր հաստատել: Իսկ հիմա տանը Կույս Մարիամի հայտնվելով՝ նա արդեն իրեն այնպես միայնակ չէր զգում: Կար մեկը՝ հետն աղջկական մտքերով կիսվելու, խորհրդակցելու: Աղջիկը գիտեր, որ տուն բերած Մարիամը որբ է: Որ Նրան մանկության տարիներին դաստիարակության են տվել Երուսաղեմի տաճարում: Այնտեղ աղջիկներին ոչ միայն Սուրբ Գիրքն էին ուսուցանում, այլև՝ մանել, ասեղնագործել մետաքսի վրա, գործել, տնային տնտեսություն վարել: Հովսեփի տանը բոլորը գիտեին, որ Մա-

րիամը բարեպաշտ ծնողների՝ Հովակիմի ու Դավիթ թագավորի ու քահանապետ Ահարոնի տոհմից է, Աննայի դուստրը: Այդ բարեպաշտ զույգը, մինչև ծերություն երեխա չունենալով, շարունակել էր հուսալ Աստծո ողորմածությանն ու աղոթել: Դստեր ծնունդը նրանց ջերմեռանդ աղոթքների պտուղն էր: Երեխայի ծնունդն ընդունելով իբրև Երկնային պարգև, նրանք խոստացան Մարիամին նվիրել Աստծուն ծառայելու: Երբ Մարիամը դարձավ չափահաս ու Նրան այլևս չէր կարելի մնալ տաճարում, հոգևորականները, որոնց մեջ էր նաև Հովսեփի ազգական Զաքարիան, որոշեցին Մարիամի համար մի բարեպաշտ ծերունի ընտրել, որպեսի հարազատ հոր նման հոգ տանի Նրա համար: Ընտրությունն ընկավ Հովսեփի վրա, և նա հնազանդորեն համաձայնվեց կատարել հոգևորականների խնդրանքն ու իր տուն տանել Կույս Մարիամին՝ մարդկանց առաջ Նրա՝ իր տանը գտնվելու օրինավորության համար հետը նշանվելով:

Հովսեփի քույրն անասելի հիացած էր Կույս Մարիամով և անմիջապես սկսեց Նրան քույր անվանել: Նրանք բարեկամացան, ասես իսկապես հարազատ քույրեր էին: Կույս Մարիամի հեզությունը, բարիությունն ու պարզ միտքը

միայն Հովսեփի աղջկա համար չէին դերող՝ տանը բոլորը սիրեցին Նրան:

Երբ Հովսեփն իր աղջկան հայտնեց, որ պատրաստվում է Նրան ամուսնացնել իր կրտսեր եղբայր Կղեոփասի հետ, նա կրկնակի ուրախացավ: Առաջինը՝ Կղեոփասը Նրան դուր էր գալիս: Երկրորդը՝ նա մնում էր տանն ու հետագայում էլ կարող էր շփվել իրեն սիրող Կույս Մարիամի հետ:

Շուտով հարսանիք արեցին: Դրանից հետո բոլորը Նրան սկսեցին ամուսնով կոչել Կղեոփաս:

ԳԼՈՒԽ 7

Հերովդիայի հարսանիքից հետո անցավ մի տարի: Կյանքը պալատում անցնում էր իր սովորական հունով: Կարճ ժամանակով հանգստություն հաստատվեց, որն անսպասելիորեն խախտվեց Արևելքից ինչ որ մոգերի Երուսաղեմ գալուստով: Նրանք սկսեցին մարդկանց հարցափորձ անել հրեաների Թագավորի ծննդյան մասին: Այդ ընթացքում Հերովդեսի ընտանիքում ոչ մի տղա չէր ծնվել, և այդ լուրերը կարելի էր օտարերկրացիների խենթություն համարել: Բայց Հերովդեսն անսպասելիորեն լուրջ վերաբերվեց այդ լուրերին: Հերովդիան տեսնում էր, որ պապը խիստ տագնապած է: Արևելյան հյուրերն անմիջապես պալատ բերվեցին: Երբ պարզվեց, որ նրանք Երուսաղեմ են եկել նոր աստղի հայտնվելու մասին հին մեկնությունների ցուցումով, որ Հրեաստանում մեծ թագավորի ծնունդ էր գուշակում, Հերովդեսն սկսեց հարցափորձ անել անսովոր աստղի հայտնվելու ժամանակի բոլոր մանրամասնությունների մասին: Հետո կանչեց դպիրներին ու հարցրեց նրանց, թե որտեղ պիտի ծնվի մարգարեների խոստացած Մեսիան՝ Դավիթ թագավորի ժառանգը: Նրանք խորհրդակցեցին ու վստահ հայտարարեցին, որ Մեսիան պիտի ծնվի Դավթի հայրենիքում: Թագավորը մի քիչ հանգստացավ ու աստղագուշակներին առաջարկեց գնալ ու ծնված Մանուկին փնտրել Դավիթ թագավորի քաղաք Բեթղեհեմում: Եվ խնդրեց վերադարձին անպայման այցելել իրեն ու պատմել ամեն ինչի մասին, որպեսզի և ինքը, Հերովդեսը, կարողանա խոնարհվել ապագա մեծ թագավորին: Բայց մի քանի օրից արևելյան իմաստունները չվերադարձան թագավորի մոտ, և Հերովդեսը հրամայեց փնտրել նրանց: Նրան զեկուցեցին, որ իմաստունները գաղտնի լքել են Հրեաստանը: Թագավորին մեծ կատաղություն պատեց: Իսկ երեկոյան Հերովդիան պալատի պատից նկատեց, թե ինչպես է մթան ծածկույթի տակ դարպասներից դուրս գալիս թագավորի անձնական թիկնազորը: Երկու օրից, երբ վերադարձան հեծյալները, թագավորն անմիջապես զվարթացավ: Շուտով Հերովդիան, շատ գաղտնի, թիկնապահներից մեկից իմացավ, որ թագավորը գաղտնի հրամայել էր կոտորել Բեթղեհեմի ու նրա շրջակայքի

բոլոր մանչուկներին: Աչքակապության համար լուրեր էին տարածել, թե Բեթղեհեմի վրա Արաբիայից ավազակախումբ է հարձակվել: Հերովդիային խորապես ցնցեց այդ դաժան արարքն ու նա հանդեց անմիջիթար եղրակացության, որ հանուն իշխանության հարկ է լինում արյուն թափել, հաճախ՝ նույնիսկ անմեղ:

ԳԼՈՒԽ 8

Շուտով Հերովդիան իմացավ, որ իր հոր հանդեպ խարդավանքների մեղավորը Հերովդեսի ավագ որդի Անտիպատրոսն է: Եվ որ թագավորի վրա նրա ունեցած ազդեցությունն էր եղել Բոեսի հետ իր ամուսնության պատճառը: Հերովդիան սկսեց ատել Անտիպատրոսին և երդվեց վրեժ լուծել նրանից: Բայց հորեղբոր հանդեպ իր զգացմունքները թաքցնում էր: Ընդհակառակը, ամեն կերպ ջանում էր հաճոյանալ և շուտով ձեռք բերեց նրա վստահությունը: Հերովդեսի ժառանգության շուրջ նրանք սկսեցին միասին խարդավանքներ հյուսել: Երբ Հերովդեսի ժառանգության կտակը Անտիպատրոսը տարավ Հռոմ՝ կեսարի հաստատմանը, այնտեղ որդիներից երկուսն էին հիշատակվում. ինքը՝ Անտիպատրոսը, և Հերովդես II Բոեսը: Հերովդիան երանության դագաթնակետին էր: Վերջապես կայացավ կյանքում իր առաջին հաջողությունը: Ինքը դեռ ինչերի կհասնի, եթե տակավին պատանեկության տա-

բիներին սովորեց այդպես ճարպկորեն խաբդավել: Բայց շուտով գործն այնպիսի ընթացք ստացավ, որ ոչ թե թագավորության մասին էր պետք երազել, այլ՝ սեփական կյանքը փրկելու: Քանի դեռ Անտիպատրոսը գտնվում էր Հռոմում, անսպասելիորեն Երուսաղեմում թագավորին թունավորելու դավադրություն բացահայտվեց: Հայտնի դարձավ Անտիպատրոսի մասնակցությունը դավադրությանը: Սկսվեցին քննությունն ու կտտանքները: Հռոմից վերադառնալուց հետո Անտիպատրոսը շղթայակապ գնդան նետվեց: Քննությունը շարունակվում էր: Ուժեղ կասկածանքներ ընկան նաև Բոեսի վրա, դրա համար էլ նա հաջորդ կտակում զրկվեց ժառանգությունից: Դա Հերովդիայի համար այնպիսի հարված էր, որից երկար չէր կարողանում ուշքի գալ:

Իսկ երբ Հերովդիան ուշքի եկավ, թագավորն արդեն մեռնում էր: Հերովդեսը երկար ու տանջվելով էր մեռնում: Պառկել էր իր մահճում ու ծանր հառաչում էր: Նրա անկողնու մոտ էր ազգականությամբ եղբայր Աքիաբը: Հերովդեսը դեպի նա շրջեց ցավից աղավաղված դեմքն ու հարցրեց.

— Աքիաբ, իմ եղբայր, ինձ խնձոր տուր, ուտել եմ ուզում:

— Հիմա, արքա, կմաքրեմ,— մրգամանից խնձորը վերցնելով ասաց Աքիաբը:

— Ոչ, Աքիաբ եղբայր, դանակը տուր ինձ, ես ինքս եմ ցանկանում մաքրել: Չէ որ ես դեռ չեմ մեռել և պետք է ինչ որ բան ինքս անեմ:

— Լավ,— դանակը նրան տալով ու մտածելով, որ հիվանդի վիճակը թեթևացել է, եղբայրն ուրախությամբ համաձայնվեց:

Հերովդեսը վերցրեց դանակն ու թաքուն նայելով եղբորը, հանկարծ ուզեց թափով կուրծքը խրել: Բայց Աքիաբը կայծակնային արագությամբ նետվեց դեպի թագավորն ու ձեռքից բռնելով՝ վայրենի գոռաց: Այդ ժամանակ էլ պալատով մեկ ճիչեր ու ծանր հեծեծանքներ թնդացին: Բոլորը մտածեցին, որ թագավորը մեռել է: Զնդանում նստած Անտիպատրոսը լսեց այդ ճիչերն ու վեր թռավ: Որոշ ժամանակ նա դեռ լսում էր, հետո, շղթաները զրնգացնելով՝ վեր կացավ ու սկսեց կանչել ժամապահին.

— Հե՛յ, դու, ի՞նչ է քո անունը: Մո՛տ արի ու բա՛ց թող ինձ: Թագավորը մեռավ: Հիմա ես եմ թագավորը: Անմիջապես ազատի՛ր ինձ:

Պահնորդը տատանվեց:

— Ի՞նչ ես դանդաղում: Թե՞ չգիտես, որ ես շուայլորեն վարձատրում եմ ինձ ծառայողներին

և խստորեն պատժում նրանց, ովքեր չեն կատարում իմ կամքը:

Պահնորդը վախեցած շուրջը նայեց՝ չհամարձակվելով ինչ-որ բան ձեռնարկել: Մի քիչ էլ տատանվելով՝ նա արդեն ուզում էր դուռկատեղից բանալիներն արձակելով դեպի բանտարկյալը քայլ անել, բայց այդ ժամանակ նրա թիկունքից հայտնվեց Հերովդիան ու հաղթականորեն նայելով Անտիպատրոսին, հանգիստ ձայնով ասաց.

— Թագավորը կենդանի է: Գնա՛, ղեկուցի՛ր այս գարշելի դավաճանի առաջարկների մասին: Այնտեղ դու շուտով պարգև կստանաս:

— Ախ, դու, գարշելի կին,— բղավեց Անտիպատրոսը,— թունավոր օձ:

Հերովդիան համարյա կիպ մոտեցավ վանդակին ու մի այնպիսի զզվելի, կմաց ձայնով ծիծաղեց, որ միստիկական սարսափով համակված Անտիպատրոսը թափով հետ թռավ նրանից:

— Խելագար, ինչո՞ւ ես ինձ կործանում:

— Իսկ ինչո՞ւ դու կործանեցիր հորս,— նա Անտիպատրոսի վրա չարությամբ փայլեցրեց աչքերը,— այժմ դու այստեղ կսատկես:

Այս ասելով՝ Հերովդիան շրջվեց ու լուռ հեռացավ դեպի ելքը:

Երբ Հերովդեսին ղեկուցեցին բանտապանի

հաղորդածի մասին, նա ուժգին ճչած ու սկսեց գլխով խփել պատին.

— Անմիջապես սպանե՛լ Անտիպատրոսին:

— Լսու՛մ եմ, տե՛ր իմ,— չարությամբ աչքերը փայլեցնելով ու գիշատիչ ժպիտով գոչեց Բաշարն ու գլուխ տալով թագավորին՝ արագ դուրս եկավ ննջարանից:

ԳԼՈՒԽ 9

Հերովդեսի հանդիսավոր թաղումից հետո, համաձայն կայսեր հաստատած նրա կտակի, Արքեղայոսը դարձավ Հրեաստանի էթնարքը[1], Անտիպասը չորրորդապետի[2] տիտղոսով դարձավ Գալիլիայի ու Բերեայի կառավարիչը, Փիլիպպոսը, Հերովդեսի կրտսեր որդին, ծնված նրա հինգերորդ կնոջից՝ Կլեոպատրայից, դարձավ Գալիլիայի հյուսիսում գտնվող Պանադիա ու Բատանե մարզերի չորրորդապետը: Ժառանգությունից իսպառ զրկված Հերովդիան իր ամուսնու հետ ստիպված եղավ Հրեաստանից մեկնել Հռոմ: Մեկնումի նախօրեին նա, կատաղության մեջ ընկած՝ բոլորին անիծում էր, սկսած իր պապից՝ վերջացրած նրա որդիներով: Բայց բոլորից շատ մեղադրում էր իր ամուսնուն, իր իսկ խոսքերով ասած՝ ոչ մի բանի ընդունակ, բոլորովին անպետք մարդուն:

[1] Էթնարք - ժողովրդապետ: Կառավարչի տիտղոս, թագավորականից ցածր, նման՝ իշխանի:

[2] Չորրորդապետ - երկրի չորրորդ մասի կառավարիչ:

Իբրև մասնավոր քաղաքացի՝ Բոետը կնոջ հետ սկսեց ապրել Հռոմում:

Ինը տարի անց, երբ ժողովրդին դաժանորեն ճնշելու կայսերն ուղղված դանգատների պատճառով գահից հեռացվեց Հրեաստանի ազգապետ Արքեղայոսը, Հերովդիայի հոդում նորից, իբրև թագուհի, հայրենիք վերադառնալու հույսեր արթնացան: Բանսարկությունների ու կաշառքների միջոցով նա հասավ Օգոստոս կայսեր ընդունելությանը, բայց այստեղ նրան հիասթափություն էր սպասում: Լսելով Հերովդիայի բոլոր փաստարկները՝ Օգոստոսը ժպիտով պատասխանեց.

— Եթե դու տղամարդ լիներիր, ես առանց տատանվելու ողջ թագավորությունը քեզ կհանձնեի: Բայց ես վստահ չեմ, որ քո ամուսինը կարող է արժանապատվորեն գլուխ հանել այդ խնդրից:

— Ուրեմն գահն ինձ հանձնեք, ոչ թե ամուսնուս, քաջությունը հավաքելով՝ բացականչեց Հերովդիան:

Օգոստոսն, այս անգամ արդեն առանց ժպիտի, նրա խիզախ ինքնավստահության համար, որոշակի հարգալից հիացմունքով նայեց Հերովդային.

— Ցավոք, իսկ միգուցե բարեբախտաբար,

ո՛չ Հրեաստանում, ո՛չ հռոմեացիներիս մոտ, պետության ղեկավարումը կանանց վստահելու սովորույթ չկա:

Հերովդիան շողոքորթեց Օգոստոսին, ասելով, որ հիանում է իր երկրի սովորույթների նրա իմացությամբ, և պատմեց, թե ինչպես էր հին ժամանակներում Հրեաստանը կին կառավարել՝ Դեբորա անունով: Կայսրը հետաքրքրությամբ լսեց նրա պատմությունը և նորից ժպտալով պատասխանեց.

— Դու հին ժամանակների մասին ես խոսում, բայց մեր հիշողության մեջ բոլորովին մոտիկ ժամանակների դեպքերն են. մենք չէինք ցանկանա գործ ունենալ մի նոր Կլեոպատրայի հետ:

Բերելով Հերովդիայի համար նման շոյիչ համեմատություն՝ Օգոստոսը միաժամանակ հասկացնել տվեց, որ հետագա խոսակցությունն անիմաստ է: Բայց այս զրույցից հետո կայսրը հանձնարարել էր պետական գանձարանից տարեկան ոչ մեծ թոշակ հատկացնել Հերովդեսի ժառանգությունից զրկված որդու ապրուստի համար:

ԳԼՈՒԽ 10

Հրեաստանի ազատված գահը ոչ միայն վտարանդության մեջ գտնվող Հերովդիայի համար էր նպատակ դարձել, այլ նաև Գալիլիայի կառավարիչ Անտիպասի համար: Տածելով երբևէ հոր գահին նստելու փառասիրական հույսեր, նա գործի դրեց շողոքորթության ու կաշառքի հնարավոր բոլոր միջոցները: Բայց նրան, ինչպես և Հերովդիային, չհաջողվեց համոզել Օգոստոսին՝ Հրեաստանի ու Սամարիայի կառավարումն իրեն հանձնել: Առավել ևս, որ նրա սեփական մարզում, Գալիլիայում, Հուդա Գավղոնիտիսի գլխավորությամբ ապստամբություն բռնկվեց: Ապստամբության պատճառ էր հանդիսացել կուսակալ Կյուրենիոսի ձեռնարկած մարդահամարը: Կայսրը նրան ուղարկել էր ստուգում անցկացնելու ու բռնագրավելու տապալված էթնարքի ունեցվածքը: Կյուրենիոսն էլ որոշել էր հրեաների ունեցվածքի համընդհանուր հաշվառում անցկացնել: Եթե Հերովդես Մեծի մահվանից ոչ

շատ առաջ անցկացված մարդահամարը խաղաղ էր անցել, ապա այժմ հանդստության խռովարար էր ի հայտ եկել: Գամաղա քաղաքում ծնված գալիլիացի Հուդան, փարիսեցի Սադովկի հետ միասին, սկսեց համոզել ժողովրդին դիմադրություն ցույց տալ, ասելով, որ հաշվառումը թույլ տալը միայն ստրկության կտանի: Հուդա Գավղոնիտիսը կոչ էր անում ժողովրդին բացի Աստծուց ոչ մի իշխանություն չճանաչել: Ժողովուրդն այս ճառերին հիացմունքով էր ունկ դնում, և շուտով խռովությունը վերաճեց ժողովրդական ապստամբության, որը ծավալվեց ողջ Գալիլիայով մեկ: «Հանուն Աստծո և օրենքի» նշանաբանով նրան հաջողվեց հանդուգն քաջերի մի ամբողջ բանակ հավաքել: Նրանք գրոհով գրավեցին Անտիպասի մայրաքաղաք Սեփփարիումն ու թալանեցին այն: Հռոմեական զորքերը դաժանորեն ճնշեցին ապստամբությունը: Բայց Հրեաստանի ժողովրդական աշխարհազորի բաժան-բաժան եղած զինյալ խմբերը դեռ երկար թափառում էին երկրում՝ զբաղվելով միայն թալանով ու ավազակությամբ:

ԳԼՈՒԽ 11

Արշալույսը դեռ չէր հասցրել լիովին մտնել իր իրավունքների մեջ: Միայն արևի առաջին երկչոտ շողերն էին ընկել Գալիլիայի ծովի ծփացող ջրերին: Դրանք ուրախ թռչկոտում էին ալիքների վրայով և բազմաթիվ ձկնորսական նավակների միջով դեպի արևմուտք թեքվելով՝ Մագդալիայի շինություններին մոտ վերջապես հասան ափերին: Քաղաքի ու նրա արվարձանների վրա փռվել էր առավոտյան մառախուղի կաթնագույն, թեթև մշուշաքողը: Պարթևական թագավորության սահմաններից ծագող լուսատուն իր տաք շողերով սկսում էր քաղաքի շրջակայքից կամաց-կամաց քշել սառը խոնավությունը: Տներն ավելի ու ավելի էին հստակեցնում իրենց ուրվագծերը՝ պատրաստվելով վերջնականապես դեն նետելու գիշերային քողը: Օդում հնչում էին թռչունների ձայները, իսկ ինչ որ տեղ հեռվում հովվի եղջերափողն էր նվագում՝ կանչելով

ցրված հոտը: Մրգատու ու խաղողի այգիների վրա դայլայլում էին արտույտներն ու բարձր երկնքից գեղգեղանքով լցնում շրջակայքը: Արթնացման առավոտյան ձայները գալիս էին փոխարինելու ծղրիդների գիշերային կպչուն ճռճռոցներին: Ջրին հարվածող թիակների ու թիակալների ձայներն ազդարարում էին գիշերային որսից վերադարձող նավակների մոտենալը կառանատեղին:

Այդ վաղ առավոտին բրդե գործվածքների հարուստ վաճառական Սիրի տանը գործնական իրարանցում էր նկատվում: Պատրաստվում էին ճանապարհվելու տանտիրոջը: Տարածաշրջանում Սիրին լավ էին ճանաչում, նա նաև իր ներկարարական արտադրությունն ուներ և կտոր էր մատակարարում ոչ միայն Երուսաղեմի, այլ նաև Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի շուկաներին: Նրա կինը, Հելլենուհի Եվխարիստիան, գործիմացորեն հրահանգներ էր տալիս ծառաներին: Հարկավոր էր ոչինչ չմոռանալ: Տերն այժմ ուղևորվում էր հեռու՝ Պարթևական թագավորություն: Պայմանավորվելով կափառնայումցի ու դաղմանութցի[1] ուրիշ վաճառականների հետ, Սիրը որոշել էր հեռավոր ու խորհրդավոր Խինայից Պարթիա[1] եկող մետաքսի առևտուր կազմակերպելու փորձ անել, քանի որ Հռոմում մետաքսի մեծ պահանջարկ կար: Մոր շուրջը թռվռում էր նրանց յոթնամյա դուստր Մարիամը: Աղջկա մեծ ու սև-սև աչքերը հպարտ փայլով կայծկլտում էին թավ ու սև հոնքերի տակից: Հոր հավաքվելուն մասնակցելուց պարմանուհին ակնհայտորեն հաճույք էր ստանում: Հայրն իր մոտ կանչեց դստրիկին ու գլուխը փաղաքշանքով շոյելով՝ ասաց.

— Ասա, ի՞նչ բերե մ քեզ համար, Մարիամ:

Հրճվանքը չարաճճի աչքերում աղջնակը նայեց հորն ու սեղմեց վտիտ ուսերը.

— Ես չգիտեմ ինչ կա այնտեղ, մի գեղեցիկ բան բեր:

Հայրը ծիծաղեց.

— Լավ, քո ապագա հարսանիքի համար ոսկե մանյակ կբերեմ:

— Ես փեսացու եմ ունենալո՞ւ,— ձեռքերն ուրախությամբ իրար զարկեց Մարիամը:

— Երբ մեծանաս, դստրիկս, ես քեզ համար ամենագեղեցիկ փեսացուին եմ ընտրելու:

Մարիամը մտածեց, հետո հարցրեց.

[1] Դաղմանութա (հին եբրայերեն. «Նրա (այսինքն՝ Աստծո) նստավայր» - բնակավայր Մագդաղիայի մոտ, Գենեսարեթի լճի ափին:

[1] Պարթիա - Պարթևական թագավորություն այժմյան Իրաքի տարածքում: Խինա - Չինաստան:

— Հայրիկ, իսկ մեր Հարևան Սամսոնը գեղեցի՞կ է:

— Ինչպե՞ս քեզ ասեմ, բոլորը նրան գեղեցիկ են համարում: Իսկ ի՞նչ կա:

Մարիամը հոգոց քաշեց ու խոնարհեց գլուխը.

— Այդ դեպքում ինձ գեղեցիկը հարկավոր չէ:

— Բայց ինչո՞ւ,— զարմացավ Հայրը:

— Նա իր կնոջը ծեծում է, ես ինքս եմ տեսել:

— Դե...— Հայրը տարակուսած տարածեց ձեռքերը:

— Հայրիկ, դու ինձ համար ոչ թե գեղեցիկ, այլ բարի փեսացու ընտրիր:

Հայրն այնպես բարձր ծիծաղեց, որ աչքերն արցունքոտվեցին:

— Ա՛խ, դստրիկս, դստրիկս: Գեղեցիկին կարելի է գտնել, բայց թե բարի՞ է նա՝ միանգամից չես տեսնի: Բարի փեսացուի համար պիտի Աստծուն դիմել: Աղոթի՛ր Աստծուն և բարի փեսացու կունենաս:

Եվխարիստիան նավամատույց գնաց ամուսնուն ճանապարհելու: Սիրը մտադիր էր Մագդաղիայից մինչև Կափառնայում անցնել բեռնավորված նավակներով, իսկ այնտեղից Պարթիայի թագավորությունն՝ գնալ դրաստների քարավանով: Մարիամը ոչ մի կերպ չհամաձայնվեց մնալ տանը, նա նույնպես, հոր ձեռքը բռնած ու հպարտորեն նայելով սակավաթիվ անցորդներին՝ գնաց նրան ճանապարհելու: Երբ նավակները հեռացան ափից՝ աղջիկը շրջվեց դեպի մայրն ու թախանձագին ինչ-որ բան շշնջաց:

— Չէ մի,— ասած մայրը,— ցերեկը կլողանաս: Հիմա ջուրը դեռ սառն է:

— Մայրիկ, սիրելիս,— աղերսեց աղջիկը:

— Ա՛խ, ինչպես վարվեմ քեզ հետ, գնա,— ձեռքը թափ տվեց մայրն ու անմիջապես ավելացրեց,— միայն մտնում ու անմիջապես դուրս ես գալիս:

Աղջիկը հանելով վերևի շորն ու մնալով միայն մինչև ծնկները հասնող կարճ գիշերազգեստով՝ անմիջապես նետվեց ջուրը: Նա լավ էր լողում՝ ինչպես Գենեսարեթի լճի ափի բոլոր երեխաները: Մարիամն անմիջապես սուզվեց՝ թաքնվելով ջրի տակ: Մայրը չէր անհանգստանում, նա գիտեր, որ դուստրը լճում իրեն զգում է ինչպես ձուկը ջրում: Հենց նոր հեռացած նավակների մոտ դուրս լողալով ջրից, փնչացնելով, Մարիամը լողաց նրանց կողմը: Դստերը նկատելով՝ Հայրը միտումնավոր զայրացած գոչեց.

— Հե՛յ, Մարիամ, ինչո՞ւ ես այս կողմ գալիս: Շուտ հետ լողա:

Մարիամը ծիծաղեց, հորը ձեռքով արեց, վճռականորեն հետ դարձավ ու լողաց դեպի անհանգստացած մայրը:

Զկնորսները նավակից հիացմունքով նայում էին աղջկան:

– Համարձակ աղջիկ է մեծանում:

– Ու դեղեցիկ,– անմիջապես լրացրեց մեկ ուրիշը:

– Նա նաև խելացի է,– ասաց աղջկա գովեստներից շոյված հայրը:

Եվխարիստիան տուն վերադարձավ՝ հոգալու տնտեսությունը, իսկ Մարիամը դեռ երկար կանգնեց ափին: Հորիզոնն անցած հոր նավակներն արդեն չէին երևում, իսկ աղջիկը դեռ կանգնած էր ու երազկոտ նայում էր առավոտյան արևի շողերից փայլփլող մեծ լճի ջրերին: Հետո նա ափից մի հարթ խճաքար վերցրեց ու ճարպկորեն նետեց լիճը: Արևի շողերից պաշտպանվելու համար ձեռքի ափը ճակատին հպելով՝ Մարիամը աչքերը կկոցած՝ նայում էր, թե ինչպես է թռչկոտելով ու արծաթավուն հարթության վրա օղակներ թողնելով՝ թռչում խճաքարը: Ուրախ ծիծաղելով՝ աղջնակը վազեց ափեզրով՝ ոտքերով ցրցողելով արևի շողերից հախճապակու պես փայլփլող ջրի կաթիլները:

ԳԼՈՒԽ 12

Օգոստոսի մահն ու Տիբերիոսի թագավորելն Անտիպասին հոր գահին տիրանալու նոր հույսեր տվեցին: Զորբորդապետը որոշեց ամեն կերպ հաճոյանալ նոր կայսրին: Նա թողնում է Գալիլայի բլուրներին տեղավորված Սեփփարիում հին մայրաքաղաքը և Էմմավուսի տաք աղբյուրների մոտ, Գենեսարեթի լճի ափին, անմիջապես սկսում նորի կառուցումը: Քաղաքի շինարարության համար ընտրվել էր ափի հարավային ոլորանի ամենագեղեցիկ տեղերից մեկը: Քաղաքը հատակագծվեց հռոմեական ոճով և կայսեր պատվին կոչվեց Տիբերիա: Տիբերիոսը հայտնեց իր երախտագիտությունն ու բարեհաճությունն Անտիպասին, բայց չէր շտապում Հրեաստանի գահը հանձնել նրան:

Անտիպասը քաղաքի մոտ պալատ կառուցեց՝ զարդարելով այն մարմարե սյուներով: Պալատի ներքին հարդարանքը համարյա կայսերական փայլով էր կատարվել: Կորնթոսյան բրոնզից՝ ոսկեզոծ առաստաղ ու ջահեր, թան-

կարժեք մետաղներից՝ ճյուղավոր աշտանակներ և ոսկեզրած կահույք՝ փայտի թանկարժեք տեսակներից, դրոշմազարդ արծաթե ամանեղենով սպասքավորված և վարդագույն մարմարով ու ծիրանաքարով զարդարված հիանալի սեղաններ: Այդ ողջ ճոխությունը կուրացնում ու հիացնում էր հյուրերին: Բայց պալատի բազմաթիվ հեթանոսական զարդերն ու այդում տեղադրված տարբեր կենդանիների քանդակները ծանր տպավորություն էին թողնում բաբբիններին վրա: Անտիպասը, պալատի կողքին, ի սարսափ սրբապաշտ հրեաների, մեծ ամֆիթատրոն կառուցեց: Բայց հրեաների մեջ քաղաքն ավելի վատ համբավ վաստակեց այն բանից հետո, երբ հողային աշխատանքներ կատարելիս գտնվեցին հին գերեզմանատան հետքեր: Օրենսգետների աչքին այդ տեղը դարձավ պղծված ու անիծված: Բայց, չնայած բաբբիններին առարկություններին, չորրորդապետն իր նստավայրը Սեփֆարիումից տեղափոխեց Տիբերիա և տարվա մեծ մասն անց էր կացնում այնտեղ: Նա քաղաքը դժվարությամբ բնակեցրեց, հիմնականում ամեն տեսակ եկվորներով, քանի որ ոչ մի ուղղափառ հրեա կամովին չէր ցանկանում բնակվել սրբապղծված վայրում:

Շինարարական աշխատանքների ժամանակ

իրեն լավագույնս դրսևորեց Քուսի անունով մի երիտասարդ գալիլիացի, որով շուտ աչքի ընկավ տասնապետերի մեջ ու սկսեց տնօրինել շինանյութերի բոլոր մատակարարումները: Նա լավ գործարար ուշիմություն ու կազմակերպչական ընդունակություններ ուներ, որով և արժանացավ չորրորդապետի գլխավոր վերակացուի՝ Սամուելի ուշադրությանը: Վերակացուն, որ ժամանակին սկսել էր Հերովդես Մեծի սեղանապետի պաշտոնից, արդեն տարիքն առած մարդ էր և իր առաջացած տարիքում նրա համար ավելի ու ավելի դժվար էր դառնում վերակացուի լայն պարտականություններից գլուխ հանելը և նա Քուսիին իրեն օգնական վերցրեց: Սամուելին դուր էր գալիս, որ Քուսիի համեստությունը համատեղվում էր բոլոր գործերում մանրակրկիտ վարչարարի գործնականության հետ: Մի անգամ խոսակցության մեջ սկսեց հետաքրքրվել, թե ինչու նա մինչև այժմ չի ամուսնացել: Քուսին կարմրելով խոստովանեց, որ որբ է և խնամախոս չունի, իսկ ինքն այդ հարցերում ամաչում է դրսևորել իրեն:

— Ահա թե ինչ, Քուսի,— ասաց նրան ծերունին,— համարիր՝ հորդ փոխարեն ես եմ: Կարող ես ինձ վրա հույս դնել: Քեզ համար իմ լավ

ազգականուհուն կխնամախոսեմ: Արդեն լրացել է նրա տասնչորս տարին, ամուսնացնելու իսկական տարիքն է: Տարիքս այն չէ, շուտով կգնամ հանգստի, և իբրև վերակացու մեր տիրոջն իմ փոխարեն քեզ կներկայացնեմ:

Սամուելը տեր եղավ իր խոսքին ու իր ազգականուհի Հովհաննային ուզեց Քուսիի համար: Աղջիկն իր գեղեցկությամբ, համեստությամբ, խելքով շատ դուր եկավ նրան: Շուտով Սամուելն, ինչպես և խոստացել էր, չորրորդապետին բարեխոսեց բոլոր կալվածքների գլխավոր վերակացու Քուսիին նշանակելու: Տիբերիայի կառուցման ժամանակ Անտիպասն առիթ ունեցավ գործ ունենալու Քուսիի հետ և արդեն ինքը կարողացավ այդ երիտասարդ մարդու մեջ գործնական որակներ տեսնել, դրա համար էլ նրան հաստատեց այդ բարձր պաշտոնին:

Հովհաննայի հեզ ու հանգիստ բնավորությունը շատ դուր եկավ չորրորդապետի կնոջը՝ Ալբինային: Նա, որ սովոր էր արաբական ասկետական կենցաղին, պալատի ճոխության մեջ, զրկված ամուսնու սիրուց՝ իրեն միայնակ ու նեղված էր զգում: Հովհաննան Ալբինայի համար դարձավ հարճ ու մտերիմ ընկերուհի:

ԳԼՈՒԽ 13

Եվխարիստիայի հիվանդությունը չերկարեց: Կարողության զգալի մասը, որ ծախսեց Սիրը բժիշկների վրա, տառապյալին թեթևություն չբերեց: Նա հալվում էր ամուսնու և դստեր աչքի առջև: Մեռավ խաղաղ, ինչպես ապրել էր: Դա նրա դստեր համար առաջին մեծ ցնցումն էր կյանքում: Նոր էր լրացել Մարիամի տասներեք տարին, բայց նրա անզուսպ կենսուրախությունը փոխվեց մելմ թախիծի:

Կնոջ մահից հետո մեկ տարի էր անցել, իսկ դուստրն այդպես էլ մնում էր թախծոտ մտորումների մեջ, ու Սիրն սկսեց անհանգստանալ: Նրա գործերը լավ էին գնում: Մետաքսի առևտուրը լավ շահույթ էր բերում, որի մեծ մասը նա մի կողմ էր դնում սիրելի դստեր օժիտի համար, բայց երբ ամուսնության մասին խոսեց Մարիամի հետ, գորովանքով հորը նայելով՝ աղջիկը ինդրեց հարսանիք անելու համար չշտապի:

— Հայրիկ, ես երջանիկ կլինեմ, եթե դու հեռավոր ճամփորդություններով տնից շատ չբացակայես: Ինձ համար քո կողքին ապրելն է լավ, իսկ շատ փող մեզ պետք չէ:

— Լավ,— համաձայնվեց Սիրը,— վերջին անգամ մետաքսի համար պարթևների մոտ կգնամ ու դրանից հետո միշտ կմնամ տանը: Բայց, միևնույնն է, քեզ ամուսին է պետք, իսկ ինձ՝ ունենալ թոռներ ու ապահովել ծերությունս:

Վերջին ուղևորությանը մետաքսի մեծ խմբաքանակ գնվեց: Սիրի վերադառնալու երկրորդ օրը նրանց տուն եկավ հռոմեացի մշտական վերավաճառողը: Նրա գրաստապանների մեջ կար մի սիրիացի արաբ, որը, չգիտես ինչու, միանգամից դուր չեկավ Մարիամին: Ինչպես միշտ՝ գրաստապանները տեղավորվեցին բակի շինություններում, որ միաժամանակ իրրև պահեստներ էին օգտագործվում:

Երբ եկավ ճաշի ժամը՝ Մարիամն աղախնի հետ բակ իջավ, որպեսզի օգնի կերակուրը բաժանելուն ու նկատեց, թե ինչպես է այդ անծանոթը թաքնվում տան մոտի մրգատու այգու ծառերի արանքում: Մոտենալով պատուհանին, նա սկսեց լսել Սիրի ու վերավաճառողի զրույցը: Գրաստապանի նման արաբքից՝ զայրացած Մարիամը համարձակ մտավ այգի, որ ամոթանք տա նրան: Գրաստապանը նկատեց մոտեցող Մարիամին ու շփոթահար հետ ցատկեց, ձևացնելով, թե ուղղակի զբոսնում է այդում: Մարիամն այդ մասին պատմեց հորը: Հայրը ծիծաղեց աղջկա կասկածների վրա.

— Այդ թշվառը երևի ցանկացել է մի քանի խակ թուզ պոկել, դրանից, դստրիկս, մենք մեծ վնաս չենք կրի:

Գիշերը շոգ էր ու ինչպես միշտ, Մարիամն ու աղախինը քնել էին տանիքին, բաց երկնքի տակ: Գիշերվա կեսին տնից եկող անորոշ աղմուկից աղջիկը քնից վեր կացավ: Նա արթնացրեց աղախնին ու նետվեց տան ներքևի հարկը: Անծանոթ մարդիկ, ձեթի ոչ մեծ ճրագների լույսի տակ, մերկացրած թրեր ու երկար դանակներ էին բանեցնում: Երկուսով բռնել էին հոր ձեռքերը, իսկ մյուսը, ինչպես Մարիամը անմիջապես ճանաչեց, կասկածելի գրաստապանը, դանակը դրել էր հոր բկին: Մարիամը սարսափից ճչաց, ու ավազակները շրջվեցին դեպի նա:

— Փախի՛ր, դստրիկս, — խռպոտ ձայնով ասաց հայրը:

Գողերից մեկն անմիջապես փակեց տան դուռը.

— Ահա և մեր գեղեցկուհին: Զվարճանալու համար հիմա կա մեկը,— ծիծաղելով ասաց ավազակը:

— Իսկ հայրիկն էլ մեզ կպատմի, թե որտեղ է պահում արծաթը,— դանակը հոր բկին դնողը չարությամբ ցույց տվեց ատամները:

— Ամեն ինչ կասեմ, ամեն ինչ: Միայն ձեռք մի տվեք նրան:

— Խոսի՛ր, նա աղջկան չի դիպչի,— տիրաբար պահանջեց նախկին գրաստապանը, որը, դատելով տեսքից՝ ավազակախմբի պարագլուխն էր:

— Երդվի՛ր Աստծով,— աղերսանքով բացականչեց Սիրը:

— Երդվու՛մ եմ,— տեղն ու տեղն արձագանքեց ավազակը:

— Ամեն ինչ այն պատի մեջ է թաղված,— Սիրը ձեռքով ցույց տվեց դիմացի պատը:

Ավազակախմբից մեկն անմիջապես վերցրեց բրիչն ու գնաց փորելու հողը: Մի քանի րոպե անց նա ուրախությամբ կանչեց.

— Այստեղ արծաթով լիքը կարասներ են:

— Լավ, կապկպե՛ք դրան,— գլխով ցույց տալով Սիրին՝ ասաց ավազակախմբի պարագլուխը,— իսկ ես առայժմ կզբաղվեմ նրա աղջկանով:

— Սրիկա, բայց դու Աստծով երդվեցիր,— տաքացավ Սիրն ու փորձեց դուրս պրծնել մարդասպանների ձեռքերից:

— Հա, ես երդվեցի, որ նա աղջկան ձեռք չի տա,— պարագլուխը ցույց տվեց իր հանցակցին,— և ես կպահեմ երդումս, իսկապես նա աղջկան ձեռք չի տա: Քո աղջկանով կզբաղվեմ ես:

Այս ասելիս նա վայրենի ծիծաղեց: Սիրը կատաղիորեն հրեց ավազակին, որ ուզում էր իր ձեռքերը կապել, նետվեց դեպի պարագլուխն ու գոչեց աղջկան.

— Փախի՛ր, Մարիամ, Աստծո սիրուն:

Մարիամը նետվեց դեպի դուռը: Ավազակախմբից մեկը փորձեց բռնել նրա շորերից: Բայց աղջիկը, նրա ձեռքերում թողնելով վերնազգեստը, դուրս պրծավ, և միայն ներքնաշորով այգու միջով փախավ ներքև՝ դեպի լիճը: Պարագլուխը դանակը խրեց Սիրի կուրծքն ու մի կողմ հրելով նրան՝ մռնչոցով նետվեց դեպի փախչող աղջիկը: Նրա հետ երկու ավազակներ էլ էին վազում: Զարագործները լճի ափին չրջապատեցին նրան ու արագ վազքից շնչակտուր՝ քմծիծաղով նայում էին իրենց զոհին: Բայց ավազակների համար անսպասելի՝ Մարիամը նետվեց լիճն ու լողաց: Ավազակները զարմանքով տեսան, թե աղջիկն ինչպես անհետացավ ջրի տակ, և արդեն մտածում էին, որ նա խեղդվել է, բայց շուտով Մարիամը ջրի

երես դուրս եկավ և շուրջը չնայելով արագ լողաց՝ ավելի ու ավելի հեռանալով ափից: Ավազակներն ափսոսանքով թքեցին, ձեռքերը թափ տվեցին ու վերադարձան Սիրի տուն:

Մարիամը շատ հետո, ցրտից ու հուզմունքից դողալով ու զգուշորեն շուրջը նայելով, դուրս եկավ ջրից ու գնաց դեպի իրենց տուն: Տան շուրջը լռություն էր: Աղջիկը մտածեց շրջանցել տունն ու անմիջապես դիպավ այգում երեսի վրա փռված աղախնի մարմնին: Դժբախտը մեռած էր: Շրջանցելով տունը՝ Մարիամը դռնից ներս նայեց: Նա տնքոցներ լսեց ու ամեն կարգի վտանգ մոռացած՝ ներս վազեց վերնասենյակ: Արյունոտ վերքը կրծքին՝ Սիրն ընկած էր գետնին: Մարիամը ճչալով վազեց դեպի հայրն ու ծունկի եկավ նրա մոտ.

— Հայրիկ, հայրիկ, ի՞նչ է եղել քեզ հետ:

Նա ձեռքով բարձրացրեց նրա գլուխը: Հոր աչքերը բացվեցին: Պղտորված հայացքը թափառում էր, ասես չէր տեսնում աղջկան:

— Այս ի՞նչ են նրանք քեզ արել, հայրիկ: Այս ի՞նչ են արել:

Վերջապես Սիրի հայացքը պարզվեց: Նա տեսավ աղջկան ու աչքերում ուրախություն երևաց:

— Դոտրիկս, ես մեռնում եմ,— շշնջաց նա:

— Ոչ, հայրիկ, դու չես մեռնի,— հուսահատ

կանչեց աղջիկն ու արցունքներն առատորեն թափվեցին նրա աչքերից:

— Սպասիր, Մարիամ, ուժերս սպառվում են, ես պիտի հասցնեմ քեզ շատ կարևոր բան ասել:

— Հայրիկ, ինձ մենակ մի՛ թողնիր: Քո կյանքից առավել ի՞նչը կարող է ինձ համար կարևոր լինել:

— Լսիր, դոտրիկս: Զիթենու տակ, որտեղ դու սովորաբար խաղում էիր, հորել եմ քո օժիտը: Ոսկի ու արծաթ է: Հետ էի գցել քո հարսանիքի համար: Փառք Աստծո, ավազակները այդպես էլ չիմացան դրա մասին:

— Հայրիկ, ի՞նչ մի հարկ կա հիմա դրա մասին խոսելու: Ինձ ոչինչ պետք չէ, ես միայն ուզում եմ, որ դու կենդանի մնաս:

Սիրը ջանաց աղջկան էլի ինչ որ բան ասել, բայց չկարողացավ: Նա մեղավոր ժպտաց ու հառաչանքով փակեց աչքերը:

Մարիամը հուսահատ հեծկլտաց ու փարվեց հոր կրծքին՝ լսելու շնչառությունը: Նա այլևս չէր շնչում: Աղջիկը մի կողմ քաշվեց հորից: Նրա արյունոտված դեմքը հանկարծ տանջանքից ծռմռվեց ու այդպես էլ սառեց: Միայն արցունքներն էին հոսում ու հոսում դեմքից սրբելով արյունը:

Որոշ ժամանակ անց, երբ հարևաններն եկան Սիրի տուն, Մարիամին գտան հոր դիակի մոտ լուռ նստած: Աղջկա հայացքը, որ մինչ այդ անիմաստ սևեռված էր առաստաղին, նրանց ներս մտնելով կենդանացավ: Նրանում տագնապ հայտնվեց: Մարիամի բորբոքված ուղեղում առկայծեց. «Սրանք ավազակներն են, իսկ մոտս ոչինչ չկա, որ պաշտպանեմ հորս»:

Մարիամը չորեքթաթ կանգնեց ու ատամները ցցելով՝ մռնչաց ներս մտնողների վրա: Հարևանները շփոթված ու վախեցած կանգ առան:

— Մարիամ, մենք քեզ օգնելու ենք եկել:

Բայց Մարիամը նրանց չէր լսում: Երբ փորձեցին նրան ավելի մոտենալ, բարձր ճչալով հարձակվեց նրանց վրա: Երեք տղամարդ հազիվ զսպեցին: Նրան կապեցին, բայց անընդհատ մռնչում էր ու փորձում որևէ մեկին ատամներով բռնել:

— Մարիա՛մ, Մարիա՛մ, հանգստացի՛ր,— համոզում էին հարևանները,— հարկավոր է թաղել քո հորը:

Դժբախտի հայացքը նորից բթացավ ու դարձավ անտարբեր: Տեսնելով, որ աղջիկը հանգստացել է, նրա կապերն արձակեցին:

— Նրա մեջ դև է մտել,— միստիկ վախով շշնջում էին Մադդաղիայի բնակիչները:

— Չէ,— ասում էին ուրիշները,— նրա մեջ յո՛թ դև է մտել:

— Խեղճ Մարիամ,— վախեցած կրկնում էին ձկնորսների բարի կանայք,— նրա մեջ յոթ դև կա:

Հոր հուղարկավորությունից հետո Մարիամը դուրս չէր գալիս տանից: Արտացավ հարևանները նրա համար կերակուր էին բերում ու վախենալով մոտենալ չարքոտած աղջկան՝ դնում տան շեմին: Երբեմն տանից ճիչեր էին լսվում: Ժամանակ առ ժամանակ Մարիամն ուշքի էր գալիս ու սկսում արտասվել: Ասես ոչինչ ու ոչ ոքի չնկատելով՝ նա մեծ մասամբ թափառում էր այգում: Մի անգամ ուշ երեկոյան լճափին տեսան նրան:

— Տեսեք, Մարիամն է, Սիրի աղջիկը,— հեռվից նայելով՝ շշնջում էին նավաստիները,— նրա մեջ յոթ դև է մտել:

ԳԼՈՒԽ 14

Օրորվելով արևահարվելուց բրոնզագույն դարձած ստրուկների ուսերին՝ պատգարակն անշտապ սահում էր Հավերժական քաղաքի փողոցներով: Բազմած փափուկ բարձերին՝ Հերովդես Անտիպասը փոքր ինչ հետ քաշեց մետաքսե վարագույրն ու հետաքրքրությամբ նայեց փողոցի աղմկոտ ու խայտաբղետ ամբոխին: Ամբոխն, ասես թեք ափերի մեջ սեղմված ջրառատ գետ, հոսում էր առևտրական կրպակների, երեք-չորս հարկանի տների ներքին հարկերում տեղավորված արհեստանոցների ու պանդոկների շարքերի միջով: Ամենուր աշխուժություն էր տիրում, անկարգ հրմշտոց ու դժոխային աղմուկ: Վաղ առավոտից բաց պանդոկները լիքն էին պարապ ժողովրդով, որ դուրս էր եկել ոչխարի ու տավարի գլխով պատրաստվող սովորական ապուրով հագեցնելու քաղցը, և ամենակարևորը՝ մի երկու ասսի[1] էժանագին գինի, կամ, ցորենի թնդեցրած ավելի էժան խմիչք՝ ալիկա խմելու: Ահա, ծծումբով թաթախված լուցկու տուպրակները փոխանակելով կամ վաճառելով, անցնում են տրաստևերցի[1] հրեա չարչիները. պատգարակը դանդաղ անցնում է պանդոկապանի մոտով, որը տաք պղինձների մեջ քլթքլթացող մսե խորտիկներ էր ցուցադրում ու լարումից խռպոտված ձայնով հաճախորդներին գինետուն կանչում: Հենց այդտեղ, փողոցում, ինչ որ հերթական փողոցային իրադարձություն դիտելու համար պարապմունքից կտրվել ձգտող աշակերտների ոչ մեծ խմբի առաջ կոկորդն էր ճղում դպրոցական ուսուցիչը: Անտիպասը հայացքը շրջում է դեպի լումայափոխը, որը զնդացնում է Օգոստոսի պատկերով դրվագված ու անմաքուր սեղանին կույտով դրված մետաղադրամները: Զորրորդապետը ձանձրացած տեսքով շրջվում է նրանից. այդպիսի լումայափոխներ Հրեաստանում էլ շատ կան: Ձախից թխթխկոց է լսվում: Վարագույրը բացելով՝ Անտիպասը տեսնում է, թե ինչպես է ոսկերիչն աշխատում ոսկե ավազի

[1] Ասս - հռոմեական պղնձադրամ:

[1] Տրաստևերե - Հռոմի 14-րդ շրջանը (ընդամենը եղել է 14 շրջան), կենտրոնից բաժանված Տիբր գետով: Մինչև Օգոստոսի դարաշրջանն այդ շրջանում առավելապես ապրում էին էքզոտիկներն ու սովորաբար տեղավորվում էին նկվոր վաճառականները: Այդտեղ էին բնակվում նաև Երուսաղեմից դեռևս Պոմպեոսի կողմից տեղահանված շատ հրեաներ:

հետ, փայլուն թակի կրկնակի զարկերով թակում շատ բան տեսած քարը: Հենց այդտեղ, խաչմերուկում, իրենց հիացմունքը բացագանչություններով արտահայտող ավարաները շրջապատել են օձ վարժեցնողին: Անտիպասը փակում է վարագույրն ու հետ նստելով՝ փակում է աչքերը: Նրա ականջին են հասնում թիթեղագործների մուրճերի թխկոցներն ու մուրացկանների աղմկոտ ձայները, ովքեր փորձում են անցորդներին գթաշարժել ու Բելլոնա[1] աստվածուհու անունով կամ իրենց կյանքում պատահած փորձանքների մասին հիշելով: Բայց ողջ այդ աղմուկը չէր խանգարում չորրորդապետի մտորումներին:

Իսկ մտածելու բան նա ուներ: Նոր էր Հռոմ հետ կանչվել Հրեաստանի գործերի հավատարմատար Վալերի Գրատը, որ համարյա տասնմեկ տարի հաջողությամբ մնաց իր բավականին անհանդիստ պաշտոնում: Հռոմից Սիրիական նահանգում պատրաստվող վարչական փոփոխությունների մասին Անտիպասի ականջին աղոտ լուրեր հասան: Չորրորդապետը տեղն ու տեղը վճռեց ինքն անձամբ ներկայանա Հռոմ, այն հույսով, որ կհաջողվի իր հողերին միացնել գոնե Սամարիան, հնարավոր է՝ նաև Իդումեան: Եվ, ո՞վ գիտի, կամակոր ճակատագիրն այնպես չի շրջվի, որ Երուսաղեմում հոր գահին տիրի ինքը՝ Անտիպասը: Նման հեռանկարներից գլուխը պտտվում էր: Բացի այդ, բայրացակամները Հռոմից գրում էին, որ մայրաքաղաքում շատ նպաստավոր իրավիճակ է դասավորվում: Կայսր Տիբերիոսը մշտապես մնում է Կապրի կղզում, իսկ Հռոմում բոլոր գործերը կառավարում է պրետորիական գվարդիայի[1] պրեֆեկտ Էլիոս Սեյանը: Անտիպասը Սեյանին ծանոթ էր դեռ պատանեկության տարիներից, երբ սովորում էր Հռոմում: Սեյանը հասարակ հեծյալի՝ Սեյ Ստրաբոնի՝ պրետորիական գվարդիայի պետի որդի էր: Չորրորդապետը նրան հիշում էր որպես համարձակ, թեթևսոլիկ ու

[1] Բելլոնա - հռոմեական դիցարանության մեջ Մարսի շրջապատի ապրվածուհի (Բելլոնա անունը ծագում է bellum-պատերազմ բառից: Նաև համարվում էր պատերազմի ասպծո մայրը (երբեմն քույրը, սպնդուն) և անդրաշխարհի ապրվածուհին: ՔԱ I դարից Բելլոնան նույնացվել էր կապադովկիական Մա աստծու հետ, և նրա պաշտամունքը ընդունեց խրախճանքի բնույթ: Դրանց մասնակցելը Հռոմի քաղաքացիներին այդ ժամանակ արգելված էր:

[1] Պրետորիական գվարդիա - կայսրի անձնական թիկնապահները: Պրետորիականները ենթարկվում էին հատուկ պրեֆեկտի - praefectus praetorio: Հետագայում քաղաքային ոստիկանությունը, 14 կոհորտայի բաժանված մի կորպուսի մեջ, միացավ պրետորիականների հետ: Նրանք իրականացնում էին գործառույթներ՝ ինչպիսին մեր ժամանակներում ՆԳՆ զորքերը:

բոլոր երիտասարդական արկածների մասնակից: «Ինչպիսի՞ն է նա հիմա, երբ ինքն է զբաղեցնում այդպիսի բարձր պաշտոն և, ըստ շատերի հավատիացումների, անսահմանափակ ազդեցություն ունի անմիջապես կայսրի վրա»,– պրեֆեկտի տան ճանապարհին մտածում էր չորրորդապետը:

Անտիպասի պատգարակը շրջանցեց իր հաճախորդի հետ ուղիղ փողոցի մեջտեղը տեղավորված սափրիչին, որը բոլորովին չէր անհանգստանում, թե կարող է խանգարել երթևեկությանը: Համաձայն կայսերական խստագույն հրամանի, արևածագից հետո, ընդհուպ մինչև մութն ընկնելը, կառքերի տեղաշարժը քաղաքում արգելվում էր: Տեղաշարժվել թույլատրվում էր միայն հետիոտնին, հեծյալներին ու պատգարակներ կամ կրելի բազկաթոռ ունեցողներին: Բացառություններ արվում էին միայն հանդիսավոր արարողությունների ու հաղթահանդեսների օրերին:

Հռոմի ծուռումուռ ու խճճված փողոցներով պատգարակն իր ընթացքը շարունակեց դեպի Կապիտոլիում բլուրը, իսկ անցորդները հոսում ու հոսում էին Անտիպասի երկու կողմերից ու չորրորդապետի պատգարակը շրջանցելուց հետո միանում էին մի միասնական հոսանքի մեջ:

Երբ պատգարակը փափուկ կերպով տեղավորեցին ուղիղ Սեյանի առանձնատան առջև, Անտիպասն արագորեն հետ քաշեց վարագույրն ու իջավ ծածկասայլից: Պրեֆեկտի տան առջև հավաքված ամբոխից նա տհաճություն զգաց: Այնտեղ հավաքվել էին ոչ միայն հասարակ խնդրարկուներ, այլ նաև վերնախավի ներկայացուցիչներ: Հզորագույն պրեֆեկտի ընդունելությանն սպասում էին սենատորներ ու մագիստրոսներ: Եվ դա զարմանալի չէր: Որդու մահից հետո Տիբերիոսն սկսել էր անձամբ իրեն հասնող ավելի ու ավելի շատ պետական գործեր հանձնել Սեյանի հայեցողությանը: Խորամանկ ու հաշվենկատ էտրուսկը[1] տեղյակ էր ամեն ինչին ու իր իշխանությունն ամրապնդելու համար ճարպկորեն օգտվում էր իր դիրքից:

Անտիպասին դիմավորելու ելավ Սեյանի քարտուղարը, որ դեռ երեկ տեղեկություն էր ստացել չորրորդապետի՝ պրեֆեկտի հետ հանդիպելու ցանկության մասին: Այդ ուղերձի հետ եղել էին շռայլ նվերներ, բայց դա չէր դեր խաղացել, այլ այն, որ Սեյանն ինքն էր ցանկացել հանդիպել չորրորդապետին: Երբ Անտի-

[1] Էտրուսկներ - մինչև ՔԱ I դարը Ապենինյան թերակղզու հյուսիս արևմուտքում (հին Էտրուրիա մարզում) բնակված հին ցեղեր, որոնք հռոմեացիների նախորդներից էին ու նրանց վրա մեծ ազդեցություն էին թողել:

պասը քարտուղարի ուղեկցությամբ անցնում էր սենատորների մոտով պատրիկները զգվանքով կնճռոտվեցին, իսկ նրանցից մեկը նույնիսկ բարձրաձայն հարցրեց իր ընկերներին.

— Այս բարբարո՞սն ով է:

— Ինչ որ արքայիկ փոքրասիական պրովինցիայից:

— Չէ մի,— սենատորների խոսակցության մեջ մտավ մի տրիբուն[1],— տեսքից զգացվում է, որ կրևելի հրեա է:

Անտիպասը Սեյանի մոտից դուրս եկավ ճնշված ու ընկճված: Թեև պրեֆեկտը նրան ընդունեց շատ սիրալիր, բայց գոնե Իդումեայի կառավարումը տալու Անտիպասի բոլոր խնդրանքներին պատասխանեց խուսափողաբար: Ասում էր, թե Տիբերիոսը դեռ պատրաստ չէ պրովինցիաների սահմանները վերաձևելու, բայց ակնարկեց, որ ապագայում ամեն ինչ հնարավոր է. և դա կախված կլինի մշտապես անհանգիստ Հրեաստանի իրավիճակից: Հետո նա Անտիպասին ներկայացրեց Հրեաստանի կուսակալի նոր թեկնածուին՝ ոչ բարձրահասակ, ամուր կազմվածքով Պոնտացի Պիղատոսին , արգելն ճերմակել սկսող մուգ-խարտյաշ, համարյա սև մազերով հռոմեացուն: Տեսքից նա 40-45 տարեկան էր: Կուսակալի հանդերձի վրայի նեղ, կարմիր շերտերն ու ձեռքի ոսկե մատանին վկայում էին հեծյալների դասից[1] նրա ազնվական ծագումը: Այդ ողջ ընթացքում, քանի դեռ պրեֆեկտը խոսում էր Անտիպասի հետ, Պոնտացի Պիղատոսը չասաց ոչ մի խոսք: Նրա ներս ընկած, մոխրագույն աչքերն զգուշորեն զննում էին Անտիպասին: Անհեթեթ մտքեր էին անցնում չորրորդապետի գլխով, թե Պիղատոսն ուսումնասիրում ու չափում է իրեն, որ հնարավո՞ր է արդյոք մի ոստյունով Անտիպասին տապալել դեմնին, ինչպես դա անում են կրկեսում ըմբիշները: Պիղատոսը խոսեց. ու նրա մասին հոռետեսորեն մտածող ու խոսքերը բավականին զգուշորեն ընտրող մարդու տպավորություն էր ձևավորվում Անտիպասի մոտ: «Խորամանկ սատանա»,— իր համար մտածեց Անտիպասը:

Մայրաստիճան գրգռված դուրս գալով պրեֆեկտի տնից՝ չորրորդապետը հրահանգեց իրեն տանել հռոմեական մեծահարուստներից մեկի՝ պուբլիկան[2] Սիսել Արգոնիի մոտ, որի շքեղ ամառանոցում էլ, կայսրության մայրա-

[1] Տրիբուն - պաշտոնական անձ Հին Հռոմում:

[1] Հեծյալների դաս - սենատորներից հետո երկրորդ արտոնյալ դասը:

[2] Պուբլիկան - հռոմեական պետական հարկերի կապալառու:

քաղաքում գտնվելիս, ինքը կանգ էր առել: Պատգարակը նորից սահուն ճոճվեց ստրուկների ուսերին ու առջևում արդեն երևաց Կապիտոլիում բլուրը՝ տաճարների ճերմակին տվող այուներով: Ստրուկները թեքվեցին դեպի նեղ փողոցն ու սկսեցին իջնել Հռոմի արվարձանը՝ դեպի մայրաքաղաքային վերնախավի շքեղ ամառանոցները: Անտիպասը, մռայլ մտքերից ասես ուշքի գալով, հանկարծ հիշեց, որ խոստացել էր այդ երեկո այցելել իր եղբայր Բռետին: Նա այնքան էլ չէր ցանկանում շփվել իր անհաջողակ ազգականի հետ: Բայց իրեն ուղղված նամակում Հերովդիան այնպես լացակումած էր խնդրում այցելել իրենց, որ շատ դժվար էր նրան մերժել: Զորբորդապետը Հերովդիային որպես պարմանուհի էր հիշում, որն իր գեղեցկությամբ հարսանիքին գերեց իրեն: Հանկարծ նա ցանկացավ նորից տեսնել նրան և կին Հերովդիային համեմատել դեռահաս կույս Հերովդիայի հետ: Այս ամենը մտածելով՝ հրամայեց իրեն եղբոր տուն տանել:

ԳԼՈՒԽ 15

Տիբերիոս կայսեր նշանակած ամենամյա ռենտան թագավորական զավակի համար ապահովում էր թող որ ոչ շքեղ, համենայն դեպս տանելի կենցաղ կայսրության մայրաքաղաքում: Եվ թեև Հերովդես II Բռետը շարունակում էր քեն պահել իր հանգուցյալ հոր նկատմամբ, բայց համարյա հաշտվել էր իր վիճակի հետ, դրանում նույնիսկ գտնելով պետական կառավարման հոգսերով չծանրաբեռնված պարապ զվարճասերի որոշ հաճույքներ: Ժամանակի ընթացքում նա Հռոմում ընկերներ ձեռք բերեց, որոնց հետ բաղնիքներում ու խնջույքներում ուրախ ու անհոգ ժամանակ էր անցկացնում և ավելի ու ավելի էր կախվածության մեջ ընկնում իտալական քաղցր ու հարբեցնող գինուց:

Ի տարբերություն ամուսնու՝ Հերովդիան չէր կարող և չէր էլ պատրաստվում հաշտվել իր վիճակի հետ: Եթե Բռետը բավարարվում էր սենատորների անառակ որդիների ու ազա-

տություն ստացած ու հարստացած այլասերված զվարճասերների շրջապատով, ապա նա չէր ցանկանում ստորացնել իրեն կասկածելի համբավ ունեցող մարդկանց հետ շփվելով: Բայց Հերովդիային Հռոմի բարձր հասարակությունը չընդունեց, մատրոնաները խուսափում էին հրեական վտարանդի արքայադստեր հետ շփվելուց: Դա շատ էր խոցում Հերովդես Մեծի թոռան ինքնասիրությունը, և նա էլ իր հերթին հռոմեական մատրոնաների նկատմամբ արտահայտում էր իր անթաքույց արհամարանքը: Այնուհետև Հերովդիան առհասարակ սկսեց խուսափել բարձր հասարակության մեջ երևալուց: Իսկ վաշխառուական ու առևտրական գործերով հարստացած հրեական սփյուռքի կանանց հետ շփումը խոցում էր նրա հպարտությունը:

Անտիպասի՝ Հռոմ գալու լուրը սարսափելի հուզեց Հերովդիային: Երբեմն նրա հոգում կատաղության աստիճան սաստկանում էր իր ներկա վիճակի անարդարության գրգռիչ զգացումը: Այդ անարդարությունն ուղղելը դարձել էր Հերովդիայի գլխավոր խնդիրը: Նա սիրտ խառնելու աստիճան սարսուռով էր հիշում Հռոմի առաջին տարիները: Բոեսի հետ միասին նրանք հարկադրված էին ծվարել չորսհարկանի տան խղճուկ պայմաններում: Այդ տունը, ինչպես և Հռոմի հարյուրավոր տներ, բնակեցված էր խայտաբղետ խաժամուժով. մանրավաճառներով, արհեստավորներով և հայտնի չէ, թե էլի ումով: Թեև բնակարանն անմիջապես պանդոկի վերևում էր ու շենքում ամենալավն էր, բայց այդ պայմաններն էլ Հերովդիային անտանելի էին թվում: Նա տառապում էր: Տառապում էր առավոտից մինչև երեկո՝ պանդոկից եկող հարբածների բղավոցներից: Տառապում էր գիշերը՝ ծանր բեռնավորված սայլերի անիվների մշտական դղրդյունից, ճանապարհը զիջել չցանկացող գրաստապանների գոռգոռոցներից ու հայհոյանքներից: Առանձնապես տառապում էր աղբի հոտից, որը պատուհաններից ուղիղ փողոցն էին լցնում: Բայց ի՞նչ էր հնարավոր անել: Հռոմում առանձին բնակարան վարձելը աներևակայելի թանկ էր, իսկ ամուսնուն իրենց կյանքը լիովին բավարարում էր: Մինչև այդ էլ իր ամուսնուն արհամարհող Հերովդիան նրան ընդհանրապես ատեց: Երբ նրանք սկսեցին թոշակ ստանալ կայսրից, Հերովդիան առաջին հերթին Տիբրի մյուս ափին, 14-րդ շրջանում, մի ոչ մեծ առանձնատուն վարձեց: Առանձնատունը փոքրիկ այգի ուներ, ուր Հերովդիան հանգստանում էր հոգով ու մարմնով: Երկար

ժամանակ նրանք երեխաներ չէին ունենում: Վերջապես Հերովդիան հղիացավ ու աղջիկ ծնեց՝ Սաղոմեին: Եվ ահա, երբ լսեց չորրորդապետի ժամանելու մասին, նա պարզ գիտակցեց, որ իրեն Անտիպասն է պետք: Ամեն գնո՛վ... «Թեկուզև նա Հրեաստանի լիիրավ թագավորը չէ,– մտորում էր նա,– բայց, այնուամենայնիվ, կառավարում է երկրի քառորդ մասը: Իսկ ապագայում, ով գիտի, գուցե և ողջ իշխանությունն Անտիպասին անցնի»: Իմանալով, թե որտեղ է հանգրվանել Անտիպասը՝ Հերովդիան ծառային նամակով նրա մոտ ուղարկեց, հրավիրելով այցելելու իրենց տուն: Եվ այժմ, երևելի ազգականի գալու առիթով, պատրաստ էր տունը գլխիվայր շրջելու, միայն թե արժանիորեն ընդունի չորրորդապետին: Նա մի անգամ չէր լսել Անտիպասի Գալիլիայի, Երուսաղեմի Ջիթենյաց սարի, Մաքերուս ամրոցի ճոխ պալատների մասին, և իր առանձնատունն իրեն թվաց նեղ ու խղճուկ: Հերովդիան հասկանում էր, որ եթե թագավորական ազգականի ընդունելությանը ծախսի երեք տարվա թոշակը, այդ դեպքում էլ չի կարող զարմացնել մի մարդու, որն իր մոտ այնպիսի թագավորական ճոխության է սովոր, որոնց այստեղի պատրիկները նույնիսկ չեն երազել: Այդ պատճառով չհոգալով սեղանի թանկ կերակուրների մասին, նա զբաղվեց տրիկլինիումի[1] հարդարանքով: Հերովդիան հրահանգեց սրահը զարդարել ծաղկաշղթաներով, հատակը ցողել աղավնարոտի թուրմով ու վարդի ու շուշանի թերթեր շաղ տալ: Բայց գլխավոր ուշադրությունն իր արտաքինին դարձրեց: Հերովդիան երկար չէր կարողանում զգեստ ընտրել. փորձում էր մեկ այս, մեկ այն հանդերձը: Վերջապես կանգ առավ կապույտ, նուրբ մետաքսից կարված տունիկայի վրա, որի փեշերը բանված էին լայն եզրազարդով: Այն կապեց վարդագույն մարգարիտով կարած գոտիով: Շափյուղյա ճարմանդով ձախ ուսին ամրացրեց ասեղնագործ շուշաններով զարդարված թեթև ու նուրբ կտորից պալլան[2], բայց մինչև իրեն կհագցնեին՝ երկար ժամանակ զբաղվեց սանրվածքով: Մազերը հարդարող ու գանգրացնող ստրկուհին ոչ մի կերպ չէր կարողանում գոհացնել տիրուհուն: Ողորկած ոչ մեծ բրոնզե հայելում Հերովդիան բծախնդրորեն հետևում էր նրա աշխատանքին: Մի խոպոպ ճիշտ չէր դրված ու վատ ամրացրած հերակալը դուրս պրծավ:

[1] Տրիկլինիում - խնջույքի սրահ:

[2] Պալլա - (pallium) կուրացուցիչ ծաղկանախշով քառակուսի լայն թիկնոց:

Կատաղած տիրուհին ողջ թափով, այնպես, որ իր ձեռքը մրմռած, ապտակեց աղախնուն: Զախորդ ստրկուհու արցունքներն ակամա ցայտեցին ու դրանից Հերովդիայի տրամադրությունն անմիջապես բարձրացավ:

– Մի՛ ոռնա,– բարիացավ Հերովդիան,– ես քեզ երկու սեստերցիում[1] կնվիրեմ:

Եվ պետք է խոստովանել, որ Հերովդիան իզուր չէր աշխատել իր արտաքինի վրա: Հերովդեսը, որին ցնցել էր իրավիճակի ու եղբոր սեղանի աղքատությունը, ոչ պակա ցնցված էր նրա կնոջ գեղեցկությունից: Հերովդիային նա չէր տեսել այն ժամանակից, երբ նա, Բոետի տասներեքամյա կինը, հեռացավ Երուսաղեմից: Այժմ նրա դեմ նրբագեղ մի կին էր, որի գեղեցկությունն, ինչպես հնացած գինի, ավելի էր ծաղկել: Այդ գեղեցկությունը ձեռք էր բերել կանացի ներդաշնակության այն անորսալի ավարտունությունը, որը կարող է գնահատել միայն կանացի հմայքի ճշմարիտ գիտակը, նման այն բանի, որ նստվածք տված գինին կարող է գնահատել միայն գինեգործության իսկական գիտակը: Երբ ընթրիքին Հերովդիան ասես պատահականորեն դիպավ չորրորդապետի ձեռքին, նրա ողջ մարմնով տարփանքի սարսուռ անցավ: Հերովդիայից թաքուն չմնած Անտիպասի վրա թողած իր տպավորությունն ու ամեն կերպ ջանում էր իր կանացի հմայքի ողջ ուժով ամրապնդել այդ հաջողությունը: Նրա ամուսինը տանտիրոջ իրավունքով գլխավորելով սեղանը՝ այն կոնծաբանության տարավ: Հյուրի պատվին առաջին կենացն ասելիս նա արդեն գլուխը քաշեց գինու մի մեծ գավաթ: Այդ անելիս ստիպում էր, որ Անտիպասն էլ նույնքան խմի: Անտիպասը խմեց: Բայց արդեն երկրորդ ճաշատեսակները մատուցելիս հաճախակի կոնծաբանություններից թուլացած խնջույքի տիրոջ օրգանիզմը դավաճանեց նրան: Զրուցելիս լեզուն սկսեց փաթ ընկնել, իսկ շուտով հանգիստ խոմփացնում էր սեղանի մոտի իր մահճակալին: Հերովդիան ծառաներին հրամայեց չարթնացնել տիրոջն ու քնքշորեն բռնելով հյուրի ձեռքը՝ նրան իր հետ տարավ այդի:

Հաջորդ օրն Անտիպասն իրեն մի քանի տարով երիտասարդացած էր զգում: Նա սիրահարված էր: Լինելով զգացմունքային մարդ, չորրորդապետն իրեն թույլ էր տալիս հաճախ կապվել կանանց հետ, բայց այդ անգամ Անտիպասը բոլորովին այլ բան էր զգում: Դա

[1] Սեստերցիում - արծաթե դրամ (27 գրամ), համարժեք էր պղնձե 4 ասսի:

միայն տարփանք չէր, միայն կիրք չէր, այլ՝ զգացմունք, որ թևավորում էր նրա մտքերն ու ցանկությունները: Նա հանկարծ ցանկություն ունեցավ կյանքն սկսել նորից: Նրան առհասարակ թվում էր, թե մինչև այդ օրը չի ապրել ու գոյություն չի ունեցել: Իսկ ահա այժմ կյանքը կարող է սկսվել, և սկսվել միայն նրա՝ Հերովդիայի հետ: Բայց ինչպե՞ս է դա հնարավոր: Հարց, որ դեռ առավոտից տանջում էր Անտիպասին և որին նա այդպես էլ պատասխան չգտավ: Առաջինը, նրա ամուսինը կենդանի էր, և եթե նույնիսկ Հերովդիան նրանից նորից ամուսնանալու ազատություն ստանար, Անտիպասը, որպես նրա ամուսնու եղբայր, այն մարդկանցից էր, որոնց հետ Հերովդիայի ամուսնական միությունն ըստ հրեական օրենքների հնարավոր չէր: Մովսեսի օրենքն արգելում էր կնության առնել եղբոր կնոջը ոչ միայն նրա կենդանության ժամանակ, այլև երբ նա կմահանա ոչ անզավակ: Իսկ Բոէտն ու Հերովդիան աղջիկ ունեին: Մյուս կողմից ավանդույթը կնոջն արգելում էր ամուսնալուծության ձգտել: Ամուսինը կարող էր իրենից հեռացնել կնոջը, բայց եթե կինն ինքն էր հրաժարվում իր ամուսնուց, դա նրա համար խայտառակություն էր: Լինելով հունա-հռոմեական

հելլենիզմի ոգով դաստիարակված սադուկեցի[1] Անտիպասը շատ էլ չէր նեղվում Մովսեսի օրենքը խախտելուց: Նա գիտեր նաև, որ օրենքի հրեական պահապաններին նման իրավիճակներում իր հայրը սովորեցրել էր լռել, իսկ ժողովրդի ասեկոսեների հետ կարելի է հաշտվել: Կխոսեն ու կդադարեն: Առավել ևս, որ ինքը կարող է մի կին էլ ունենալ, օրենքը դա չի արգելում: Բայց ինչպե՞ս վարվել ավելի էական արգելքի հետ: Այն իրեն անհաղթահարելի էր թվում: Նա հասկանում էր, որ ոչ իր առաջին կինը՝ Արետաս թագավորի դուստր Ալբինան, ոչ ինքը՝ Հերովդիան, տիրակալական գահին մրցակիցներ հանդուրժելու պատրաստ կանանց թվից չէին:

Ինչպե՞ս վարվել Արետասի դստեր հետ: Եթե հեռացնի իրենից առանց մի որևէ մեղքի, ապա Արետասը խորը կվիրավորվի, նշանակում է՝ պատերազմ կլինի արաբների հետ: Այն ժամանակ մնաս բարով Հրեաստանի ու Սամարիայի մասին երազանք: Սեյանը ոչ երկիմաստ ակնարկ էր արել, որ թագավորելու հարցն ուղ-

[1] Սադուկեցիներ - կրոնական կուսակցություն՝ կազմված հոգևորական ու հրեական ազնվականության վերնախավից: Թերահավատորեն էին վերաբերվում ժողովրդական հավատալիքներին ու ավանդույթներին: Չէին հավատում մեռելների հարությանը:

ղակիորեն կախված է չորրորդապետի կառավարած երկրներում խաղաղություն պահպանելու ունակության հետ:

Հաջորդ օրն Անտիպասը նորից հանդիպեց Հերովդիայի հետ: Նրանք, ինչպես երկու ստրատեգ, քննարկեցին գործողության պլանը, բայց այդպես էլ ոչինչ չմտածեցին: Այդ ժամանակ որոշեցին սկզբում իրենց հաճույքի համար ապրել Հռոմում, հետո, երբ Անտիպասը կվերադառնա Գալիլիա, Հերովդիան, իբրև ազգականի, կայցելի նրան Տիբերյան պալատ, իսկ հետագա գործողությունները՝ կյանքն ու հանգամանքները կհուշեն:

ԳԼՈՒԽ 16

Գալիլիայի ծովի փաղաքուշ ալիքները մեղմ շոյում էին Ալբինայի նուրբ ոտնաթաթերը: Անմիջապես ափով, հովանոցով, Անտիպասի կինն զբոսնում էր Քուսիի կնոջ՝ Հովհաննայի հետ: Ալբինան քայլում էր ընկղմված իր մտքերի մեջ: Որոշել էր այստեղ, պալատից հեռու, իր տագնապները կիսել Հովհաննայի հետ: Նա կողքից էր գնում՝ չնկատելով իր տիրուհու տրամադրությունն ու իր ինչ-ինչ մտքերից ժպտում էր:

– Ինչո՞ւ ես ժպտում,– սրտնեղված հարցրեց Ալբինան:

– Հենց այնպես, տիրուհի, ուղղակի մտքովս մի բան անցավ,– պատասխանեց Հովհաննան՝ շարունակելով ժպտալ:

– Վերջն ի՞նչ անցավ մտքովդ,– հետաքրքրվեց չորրորդապետի կինը:

– Ես այն մասին էի մտածում, որ Աստված ջուրը ձկների ապրելու համար է ստեղծել, և մարդը սովորել է լողալ ինչպես ձուկը: Իսկ գուցե կգա ժամանակ, երբ մարդը կսովորի

թռչել ինչպես թռչուն: Ու հանկարծ ինձ պատկերացավ, որ ես թափ տվեցի թևերս ու թռա ինչպես թռչուն,– Հովհաննան ձեռքով ցույց տվեց ճային:

– Ինչպե՞ս կարող էին քո դլխում այդպիսի մտքեր ծագել,– զարմացավ Ալբինան,– մարդը չի կարող թռչել, նա թևեր չունի:

– Հըմ,– Հովհաննան մատը դրեց քթին ու, աչքերը դեպի երկինք բարձրացնելով, մտքերի մեջ ընկավ: Հետո ուրախ ժպիտով հանկարծ շրջվեց դեպի իր տիրուհին.

– Ալբինա, իսկ դու մի՞թե երբեք երազում չես թռել:

Ալբինան ավելի մեծ զարմանքով նայեց Հովհաննային.

– Իսկ դո՞ւ որտեղից գիտես, որ ես թռել եմ:

– Ուղղակի հարցրեցի:

– Ուրեմն լսիր. դեռ մանուկ էի ու երազ տեսա, որ նստեցի թևավոր ուղտին ու թռա: Նայում եմ ու տեսնում. ներքևում ողջ երկիրն է երևում՝ ինչպես բարձր սարից: Այնպես վախեցա, որ վախից արթնացա:

– Իսկ ես, տիրուհի, մինչև հիմա էլ երազում թռչում եմ: Ու այնպես թեթև է երկնքում, այնպես լավ, որ երկիր իջնել չես ցանկանում: Ես թռչում եմ, թռչում, մինչև որ ասես ինչ-որ

ուժ ձգում է ինձ դեպի գետին ու ես իջնում եմ ու անմիջապես արթնանում: Ու երկրում արթնացումից այնպես եմ դառնանում, որ արտասվում եմ:

Կանայք մարմարե աստիճաններով ափից բարձրացան այգի ու նոճիների ու մրգատու ծառերի միջով անցնող արահետով ուղղվեցին դեպի պալատ:

– Սիրտս շատ անհանգիստ է,– կանգ առնելով՝ հանկարծ խոստովանեց Ալբինան:

– Ինչո՞ւ, տիրուհի,– նրան թևանցուկ անելով ու կարեկցանքով աչքերի մեջ նայելով՝ հարցրեց Հովհաննան:

– Հավատարիմ մարդիկ լավ լուրեր չեն ուղարկում Հռոմից: Իմ ամուսնուն միշտ Բոետի կնոջ՝ Հերովդիայի հետ են տեսնում: Ինձ շատ է անհանգստացնում այդ կինը: Արդյո՞ք մտքին մի չար բան չի դրել:

– Ի՞նչ կարող է նա իր ազգականի դեմ մտածել:

– Իսկապես որ՝ ազգականի: Այդ ազգականությունից ես միայն փորձանքներ եմ սպասում:

Երբ ընկերուհիները պալատ հասան՝ Ալբինային արդեն Հռոմից եկած սուրհանդակ էր սպասում: Նա բաց թողեց Հովհաննային, որ

կարողանա առանձին խոսել սուրհանդակի հետ: Մի ժամից աղախնին ուղարկեց Հովհաննայի հետևից: Վերակացուի կինն անմիջապես գնաց իր տիրուհու մոտ: Մոտենալով ննջարանին՝ լսեց Ալբինայի դառը լացը: Անհանգստացած Հովհաննան համարյա վազելով մտավ չորրորդապետի կնոջ ննջարանը: Դեմքը վառ գույներով կարված ծածկոցի մեջ թաղած՝ Ալբինան պառկել էր իր թագավորական անկողնուն ու դառնագին հեկեկում էր: Հովհաննան չփոթահար կանգնեց սենյակի մեջտեղում: Նա տեսնում էր, թե ինչպես են տիրուհու նիհարիկ ուսերը մերթ ընդ մերթ խղճալի ցնցվում, ու նրա սիրտը խղճահարությունից այնպես սուր ծակեց, որ ինք էլ հեկեկալով նետվեց դեպի չորրորդապետի կինը.

— Տիրուհիս, ինչի՞ց ես այդպես վշտանում, չլինի՞ քո մոտիկներից մեկը մահացել է:

Ալբինան դադարեց հեկկլտալուց: Ուռած ու կարմրած աչքերով դեմքը շրջեց դեպի Հովհաննան:

— Լավ կլիներ նա մեռներ:

— Ո՞վ,— վախեցած հարցրեց Հովհաննան:

— Ամուսինս: Լավ կլիներ նա մեռներ, չարացած կրկնում էր նա,— իսկ հիմա պիտի մեռնեմ ե՛ս:

— Դու ինչո՞ւ պիտի մեռնես, տիրուհիս,— բոլորովին չփոթահար ձայնով, վախեցած, թոթովեց Հովհաննան:

Բայց ընկերուհու կրծքին փարվելով՝ Ալբինան պատասխանելու փոխարեն նորից հեկեկաց: Այդպես նրանք որոշ ժամանակ լաց եղան: Հետո, լվացվելով, Ալբինան պատմեց Հովհաննային, որ Հռոմից, հավատարիմ մարդուց, հենց նոր լուր է ստացել: Նա իրեն տեղեկացնում է, որ Հերովդիան թողել է իր ամուսնուն ու Հերովդեսի հետ գնացել Գալիլիա, որ այնտեղ դառնա նրա կինը:

— Ուրեմն դու վշտանում ես, որ քո ամուսինը երկրորդ կին է ունենալո՞ւ,— կարեկցանքով նայելով իր տիրուհուն՝ հարցրեց Հովհաննան:

— Ես չեմ պատրաստվում այդ օձի հետ նույն տանն ապրել: Անսպասելիորեն՝ կտրուկ ասաց Ալբինան:— Դե, ինձ չեն էլ թողնի ապրեմ,— անմիջապես ավելացրեց նա ու աչքերում վախ հայտնվեց,— ինձ կթունավորեն:— Սեղմելով Հովհաննայի ձեռքը և ուղիղ նրա աչքերին նայելով, ասես նրանց մեջ փնտրելով իր սարսափելի մտքի հաստատումը, վերջին բառերը կինն ասաց շշուկով:

Զգիմանալով այդ հայացքին, Հովհաննան շրջվեց ու ասաց.

— Ինչո՞ւ պիտի քեզ թունավորեն: Դա մեծ մեղք է Աստծո առաջ:

Ալբինան դառնորեն ծիծաղեց.

— Նշանակում է՝ քո ու նրանց Աստվածները տարբեր են: Նրանց Աստվածը կարող է սպանելը թույլատրել:

— Բոլորիս համար միայն մի Աստված կա. Իսրայելի Աստվածը,— բացականչեց Հովհաննան:

— Նայիր, Հովհաննա, պալատում ու այգում ինչքան Աստվածներ կան, որոնց մերժում են ձեր ավագները, բայց որոնց իմ ամուսինն, այնուամենայնիվ, թողեց իր տանը: Այդ Աստվածներն էլ նրան թույլ կտան սպանել ինձ: Օ՜, հավատարիմ Հովհաննա, եթե դու գիտենայիր, թե ինչքա՜ն դժբախտ եմ ես: Ես հավատում եմ, դու կօգնես ինձ:

— Ես, թույլ կինս, ինչո՞վ կարող եմ օգնել քեզ, տիրուհիս: Բայց հավատա, կջանամ անել ամեն ինչ, ինչն իմ ուժը կպատի:

— Հիշիր, Հովհաննա, ոչ ոք, ոչ մի շունչ չպիտի իմանա Հռոմից իմ տեղեկություններ ստանալու մասին: Թող մտածեն, որ ես ոչինչ չեմ կռահում: Քանի դեռ Անտիպասը չի եկել՝ օգնիր հավաքելու իմ բոլոր թանկարժեք իրերը, որպեսզի առաջին իսկ հարմար առիթով ճանապարհ ընկնելիս կարողանամ հետս վերցնել: Եվ երրորդը: Երբ նրանք կգան, ես հիվանդ կձևանամ և ամբողջ ժամանակն առանց դուրս գալու կանցկացնեմ իմ ննջարանում, Բայց ինձ համար բերված սնունդը չեմ ընդունելու, կարող է թունավորված լինել: Դու ինքդ ինձ համար գաղտնի հաց ու ջուր բեր:

Ալբինայի նամակ ստանալուց երեք ամիս անց Անտիպասը ժամանեց Տիբերյան պալատ: Կինը չորրորդապետին ցույց չտվեց, թե գիտի նրա ու Հերովդիայի դավադրության մասին: Մի ամսից հետո իր դստեր, տասնամյա պարմանուհի Սաղոմեի հետ, Տիբերիա ժամանեց ինքը՝ Հերովդիան: Ալբինան պատճառ բերելով իր տկարությունը՝ չդիմավորեց Հերովդիային: Իմանալով, որ Անտիպասի կինը հիվանդ է, Հերովդիան, ոչ առանց թաքուն ուրախության, ասաց իր սիրեցյալին.

— Քո արաբ կինը գուցե ի՞նքը մեր ձեռքերն արձակի:

Ժամանակն անցնում էր, իսկ Ալբինան դուրս չէր գալիս իր ննջարանից: Բայց նա իզուր ժամանակ չէր կորցնում ու հասցրել էր հորը՝ արաբական իշխան Արետասին, նամակ ուղարկել: Երբ հորից պատասխան ստացավ՝ Ալբինան տնեցիներին հայտնեց, որ վիճակը

թեթևացել է: Շուտով նա խնդրեց ամուսնուն, որ իրեն թողնի գնալ Բերեա՝ Մաքերուս ամրոցում ապրելու ու հանքային ջրերում բուժվելու: Անտիպասը, խորհրդակցելով Հերովդայի հետ՝ կնոջը հետ չպահեց: Ալբինային ուղեկցելու համար նա իր անձնական թիկնազորից հեծյալների մի ոչ մեծ ջոկատ տվեց: Բացի Հովհաննայից՝ Ալբինան վերնախավի կանանցից ոչ ոքի չէր վերցրել: Ոսկե զարդերի ու թանկարժեք քարերի զարդատուփը նա խնամքով թաքցրել էր զգեստների հակերի մեջ:

Ամուսնու հետ հրաժեշտին գունատ ու նիհարած, ասես հիվանդությունից, դեմքին ժպիտ էր երևում, այնինչ աչքերը, որոնցում վախը խառնվել էր ատելությանը, նա փորձում էր չորրորդապետից թաքցնել: Հերովդիայի սիրուց կուրացած Անտիպասն առանձապես չէր հետևում ոչ սիրելի կնոջը: «Թող գնա ու որքան կարելի է՝ շուտ»,– վճռեց նա:

Ոչ մեծ քարավանը շարժվեց դեպի հարավ՝ Երուսաղեմի կողմը: Հրեաստանի մայրաքաղաք ժամանելուն պես Ալբինան հանձնարարեց գիշերելու համար կանգ առնել Անտիպասի Ջիթենյաց լեռան կալվածքում գտնվող պալատում: Առավոտյան ջոկատը Երիքովի ճանապարհով շարժվեց դեպի հարավ– արևելք ու շուտով, Երիքով չմտած, շրջվեց դեպի Հորդանան: Հասնելով ծանծաղուտին՝ ջոկատը անցավ արևելյան ափն ու արդեն Մաքերուս ամրոցի մատույցների մոտ, Մովաբի սարերի մեջ հանդիպեց զինված արաբների մի մեծ ջոկատի: Անհանգստությամբ նայելով արաբներին՝ Ալբինային ուղեկցողները կանգ առան: Արաբական իշխանության հետ պատերազմ չկար, և թե ինչ մտադրություններով էր զինված հեծյալների ջոկատը գտնվում իրենց չպատկանող Բերեայի տարածքում՝ անհասկանալի էր, ու թիկնապահները, համենայն դեպս, նիզակները ցցեցին: Մոտեցող հեծյալների մեջ քիչ չէին ճանաչված արաբները:

– Ձեզ ի՞նչ է հարկավոր,– կանչեց հրեաների ջոկատի հրամանատարը:

– Մենք եկել ենք մեր գերապայծառ իշխան Արետասի հրամանով, որ նրա դուստր, տիրուհի Ալբինային, ուղեկցենք Հոր մոտ:

– Ալբինան այժմ ուրիշ տեր ունի՝ իր ամուսին Հերովդես Անտիպասը, և նա հրամայել է մեզ նրան ուղեկցել մինչև Մաքերուս ամրոցը:

Այդտեղ հրելով թիկնապահին՝ Ալբինան իր ձիով առաջ եկավ.

– Մի՛ փակիր ճանապարհս, քոսոտ շուն, ու եթե ուզում եք կենդանի վերադառնալ տուն, մի՛ խանգարեք Հորս տուն գնալուն:

Արեւասի դուստրը ճարպկորեն թռավ ձիուց ու իր մոտ կանչեց Հովհաննային.

– Ես ընդմիշտ եմ գնում հորս մոտ: Գնանք միասին, իմ հավատարիմ ու բարի Հովհաննա: Իմ հոր տանը դու ինձ քույր կլինես. կապրես լիության մեջ՝ չունենալով ոչ մի բանի կարիք:

– Բայց ես ինչպե՞ս կարող եմ թողնել ամուսնուս ու գալ քեզ հետ, տիրուհիս:

– Ես քեզ համար ամենահայտնի նուկերներից[1] ամուսին կգտնեմ: Իսկ ի՞նչն է քեզ ամուսնուդ հետ կապում: Դուք երեխաներ չունեք: Վաղը նա կարող է քեզ ասել, թե գնա՛, դու չբեր ես, ու իր համար ուրիշ կին բերել: Տես, թե ինչպես վարվեց իմ ամուսինը: Նա անպետք իրի պես դեն նետեց ինձ, կարծես թե ես նույնիսկ մարդ չեմ:

Հովհաննան արտասվեց: Ալբինան ակամա հիշեցրեց այն, ինչն ամենից շատ էր անհանգստացնում Հովհաննայի սիրտը. համարյա յոթ տարի է, որ նա ու Քուզան ամուսիններ են, բայց երեխաներ չունեն:

– Օ՜, ոչ, տիրուհիս, մի հարկադրեք ինձ խախտելու ամուսնուս հետ միությանս սրբությունը: Ինձ նրա հետ Աստված միացրեց, Թող Նա էլ, եթե Իրեն հաճո է, բաժանի, բայց ես

[1] Նուկեր - անձնական թիկնազորի ռազմիկ:

ինքս մինչև կյանքիս վերջին օրերը հավատարիմ կմնամ ու իմ կամքով երբեք չեմ լքի:

– Օ՜, Հովհաննա, քո խոսքերն ինձ թողնում են առանց հույսի,– Հովհաննային գրկելով վշտացած բացականչեց Ալբինան,– բայց ճշմարտությունը քո կողմն է: Դեհ, հավատարիմ ու բարի իմ քույր, գնա, քո կամքին հակառակ ես քեզ չեմ պահի:

Այս խոսքերին՝ Հովհաննան արտասվեց, իսկ Ալբինան ցատկեց իր ձիուն ու գնաց դեպի արաբների ջոկատը: Տիրուհու իրերի բեռները տանող ծառան հետևեց նրան:

– Այնուամենայնիվ իմացե՛ք,– դեպի հրեաների ջոկատը շրջվելով կանչեց Ալբինան,– ձեր Անտիպասն այլևս իմ տերը չէ, նա ստախոս ու խաբեբա է: Աստված կպատժի այդ սրբապիղծին: Թող առհավետ անիծյալ լինի նա: Եվ թող անիծյալ լինի Հերովդիան: Իր ստոր արարքների համար Աստված նրան էլ հատուցում կուղարկի: Լսո՞ւմ եք, դո՛ւք, իր դստեր անպատվության համար իմ հայրը վրեժ կլուծի: Զգուշացե՛ք, ձեզ բոլորիդ հատուցում է սպասում:

Երբ հրեաներն արդեն հեռացել էին բերդի կողմը՝ ջոկատի պետն ասաց:

– Մե՞նք այստեղ ինչ կապ ունենք: Արի ու հասկացիր այս կանանց. ամուսինը թողել է, ու

շուրջը բոլորը մեղավոր են: Դեպի բարին չէ այս ամենը: Հիշեցեք խոսքս. դեպի բարին չէ:

Գիշերելով Մաքերուս ամրոցում հաջորդ օրը ջոկատը հետ ուղևորվեց Գալիլիա: Լուրը, որ Ալբինան ինքն է սիրահարներին ազատել իրենց բաղձալի ծրագրերն իրագործելու, միաժամանակ և՛ ուրախացնում, և՛ անհանգստացնում էր Անտիպասին ու Հերովդիային: Անհանգստացնում էր Արետասի կողմից գործողության սպասումը: Հերովդեսը չէր կասկածում, որ իր անները շուտով պատերազմ կսկսի: Բայց չնայած այդ բոլոր հանգամանքներին՝ նա շուտով Հերովդիային իր կինը հռչակեց ու Տիբերյան պալատում ճոխ հարսանիք արեց: Հարսանիքից հետո չորրորդապետը զորքերի պետին հանձնարարեց ստուգել Մաքերուս ամրոցի վիճակը: Պետք էր հատկապես այնտեղ՝ Բերեայում, սպասել արաբների հարձակմանը: Զինվորական ջոկատի հետ Մաքերուս գնաց և Անտիպասի վերակացու Քուզան: Նա պիտի ստուգեր ամրոցի սննդի պաշարներն ու անհրաժեշտության դեպքում լրացնել դրանք: Իր կնոջը՝ Հովհաննային, նա վերցրեց հետը:

ԳԼՈՒԽ 17

Մաքերուս ամրոցը գտնվում էր Արաբիայի սահմանի մոտ, Մեռյալ ծովի հյուսիս-արևելյան ափին, Նաբավ լեռան մոտ: Այդ հզոր միջնաբերդն, ինչպես դժոխային ուրվական, վեր էր խոյացել Մեռյալ ծովի մոտ, հրաբխային քարափների ու ժայռերի գառիվայրին: Հրեա բաբբիններն այն անվանում էին Սև ամրոց կամ Վառարան, ասֆալտե սև բնահողի պատճառով (որից ծխարձակ ցայտում էին տաք, բուժիչ աղբյուրներ): Երուսաղեմից հետո դա ամենաանառիկացված տեղն էր: Առաջին ամրությունները դեռ Ալեքսանդր Հաննեոսն[1] էր կառուցել: Հերովդես Մեծ թագավորն այն վերակառուցել ու ամրացրել էր որպես իր զորքերի հավաքակայան ընդդեմ արաբների ու,

[1] Ալեքսանդր Հաննեոս - հրեական թագավոր ու քահանայապետ. ծնվել է ՔԱ 129 թ., Հովհաննես Հյուրկանոսի երկրորդ որդին, իր եղբայր Արիստոբուլոսի մահվանից հետո դարձել է գահակալ. Հրեաստանը կառավարել է 27 տարի (106-79 թթ.), հաջողությամբ պատերազմել ու ընդարձակել է պետությունը:

առհասարակ, ահ ու սարսափ՝ բոլոր հարևան քոչվոր ցեղերին: Բնությունն ինքն էր հոգացել այդ ամրոցի պաշտպանության մասին՝ այն շրջապատելով խորունկ կիրճերով: Ամրոցի բլրի ստորոտին ներքին քաղաքն էր տեղավորված, որի շուրջը բոլոր կողմերից բարձր քարափներ էին բարձրանում: Այդ քարափների արանքներում անմատչելի պատեր էին կառուցված: Ամրոցի անկյուններում բարձր աշտարակներ էին կանգնած: Անմիջապես ամրոցում հիասքանչ պալատ էր բարձրանում՝ չորրորդապետի նստավայրը: Ամրոցի մյուս շինություններից պալատն առանձնանում էր քարի ամբողջական բեկորներից սյուների կանոնավոր շարքերով, բազմերանգ մարմարե սրահներով, հոյակապ բաղնիքներով ու ամեն հնարավոր հռոմեական ճոխություններով: Այնտեղ էլ, երկարատև պաշարման դեպքերի համար, տեղավորված էին ջրի պաշարներով տարողունակ տակառներ, զենքի ու սննդամթերքի պահեստներ ու պահեստածածկեր: Ու, առհասարակ, ողջ ամրոցը կողքից նայելիս նմանվում էր քարափի դագաթին հագցրած թագավորական թագի, որի համար էլ ժողովրդի մեջ այն անվանում էին դիադեմա (աղամանդակուռ թագ): Համաձայն հին ավանդույթի, այդ տեղերից ոչ հեռու, ինչ որ

տեղ, գտնվում է Մովսես մարգարեի գերեզմանը: Շատերն են այն փնտրել, բայց չեն գտել: Երևի Աստված որոշել է ինչ որ ժամանակ չբացել Իսրայելի ժողովրդի առաջնորդի շիրմատեղին:

Ահա այստեղ էլ իր ամուսնու հետ ժամանեց Հովհաննան: Ամրոցը շրջապատող տեղանքը նրա վրա ճնշող տպավորություն թողեց: Սկզբում Հովհաննան կարոտում էր Գալիլիայի կենդանարար այգիներին ու Գենեսարեթի ծովի քաղցրահամ ջրերին: Ծովն այստեղ աղի էր: Անհնար էր լողանալ նրա յուղալի ջրերում, դրանք դուրս էին նետում մարմինը, կարծես չէին ցանկանում ոչինչ կենդանի իրենց մեջ ընդունել: Թիկնապահների ու աղախինների ուղեկցությամբ նա մի քանի անգամ գնացել էր ամրոցից հյուսիս, Կոյլիերոյի հովտում գտնվող բուժիչ աղբյուրները: Հռոմեացիներն այնտեղ տանող հարմար ճանապարհ էին կառուցել: Այդ ճանապարհը գնում էր հին արաբական Պետրա քաղաքից Սիրիայի մայրաքաղաք Դամասկոս: Կիրճի խորքում, հենց քարափից, տաք ջրերի աղբյուրներ էին բխում, որ հավաքվում էին հատուկ այդ նպատակով փորված քարե ավազաններում: Կողքը կային նույնպիսի ավազաններ՝ լցված աղբյուրի սառը ջրով: Կարելի էր պառկել տաք ավազանում, մինչև

որ մարմինը քրտնփչեր, հետո անցնել մյուսը՝ լցված սառույցի պես սառը ջրով: Աղբյուրները շրջապատված էին բլուրներով, համատարած փորված հանքերով, նրանցում ծծումբ ու ալյումին էին արդյունահանում:

Մաքերուսի մոտի քաղաքը, որում ոչ պակաս, քան տասը հազար մարդ էր ապրում, կար ոչ միայն ժողովարան, ուր ամեն շաբաթ հաճախում էր Հովհաննան, այլև Արև աստծո պաշտամունքի հեթանոսական տաճար, ուր զոհ մատուցելու էին գնում հույն ու հռոմեացի բազմաթիվ բնակիչներ: Բացի մի քանի անգամ հանքային ջրեր գնալն ու ժողովարան հաճախելը՝ Հովհաննան համարյա դուրս չէր գալիս պալատից: Քուզան հաճախ էր բացակայում ամրոցից՝ զբաղվելով Բերեայի բնակիչներից գնումներ անելով, իսկ Հովհաննան մնում էր մենակ ու երկար նստում պալատի լուսամուտի մոտ: Այդտեղից հոյակապ տեսարան էր բացվում դեպի Մեռյալ ծովը. Հորդանանի սահուն հոսանքը, հինավուրց նահապետական հիշողություններով պատկառելի Քեբրոնն, արևմուտքում՝ Ենգադիի քարափը: Հյուսիսում նրա դեմ բացվում էր Փիզգի բարձունքներից այն կողմ վեր խոյացող Գաղաադյան լեռների տեսարանը: Լավ եղանակին նույնիսկ Երուսաղեմն էր երևում:

Շուտով Քուսին վերադարձավ Բերեա կատարած ուղևորություններից: Նա անհանգստացած էր Արետասի ջոկատների կողմից Բերեայի մի քանի բնակավայրերի սասպատակվելու մասին: Մաքերուսի զինվորական ստորաբաժանումների պետը ոչ մեծ հեծելազորով դուրս եկավ արաբների դեմ: Առայժմ տեղի էին ունենում հեշտությամբ մանևրել կարեցող հեծյալ ջոկատների թեթև ընդհարումներ: Կողմերից ոչ մեկը չէր համարձակվում ռազմական լուրջ գործողությունների դիմել: Մինչ այդ նախատեսված բոլոր գործերն ավարտելով՝ Քուսին շտապում էր վերադառնալ Գալիլիա:

Երբ ուղղություն վերցնելով դեպի հարավ, ոչ մեծ ջոկատի ուղեկցությամբ նրանք գնում էին Հորդանան գետի երկայնքով, հեռվում, ափին, նրանք ժողովրդի մեծ կուտակում տեսան: Ջոկատի պետը ռազմիկներից մեկին հանձնարարեց գնալ ու իմանալ, թե ինչ է այնտեղ կատարվում: Ռազմիկը շուտով վերադարձավ ու հայտնեց, որ այնտեղ մի մարգարե է հայտնվել, Հովհաննես Մկրտիչ անվանվող և Հրեաստանի ու Հորդանանի բոլոր ծայրերից, ու նաև Երուսաղեմից, մարդիկ հավաքվում են այդ մարգարեի մոտ:

Ողջ ջոկատը ցանկացավ տեսնել ու լսել Աստծո կանխատեսողին ու գնաց դեպի ամբո-

խը: Ավելի մոտենալով՝ բոլորը ձիերից իջան ու մոտեցան ափին խոնվող մարդկանց: Ափին, ուսերից էլ ցած թափված մուգ խարտյաշ մազերով, մի բարձրահասակ մարդ էր կանգնած: Դժվար էր նրա տարիքը որոշել. այդ մարդու դեմքը հյուծվել էր պասից, բայց պահպանել էր առնականության ու վճռականության գծերը: Այնուամենայնիվ, Հովհաննայի վրա ամենամեծ տպավորությունն այն թողեց, որ Աստծո կանխատեսողի ողջ կերպարանքը անսովոր ոգևորություն էր արտացոլում: Նրա հագին ուղտի կոշտ մազից քուրձ էր՝ գոտևորած կաշվե լայն գոտիով: Ուժեղ, զրնգուն ձայնով, որում ոչ իր, այլ բարձր, Աստվածային կամքի իշխանություն էր զգացվում, հանդիսավոր լռության մեջ ազդարարում էր.

— Ապաշխարեցե՛ք, որովհետև մոտեցել է Երկնքի Արքայությունը: Ես անապատում կանչողի ձայնն եմ, պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք նրա շավիղները: Բոլոր ձորերը թող լցվեն, բոլոր լեռներն ու բլուրները խոնարհվեն, դժվարին ճանապարհները թող հեշտ դառնան, ապառները՝ հարթ ճանապարհներ, և ամեն մարդ կտեսնի Աստծո փրկությունը:

Մարգարեի ասած ամեն մի խոսքն արձագանքվում էր տան կառավարիչի կնոջ հոգում: Ոչ մի պահ նա չէր կասկածում, որ այդ մարդու շուրթերով Աստված Ինքն է խոսում: Շատ անգամ էր նա լսել հին մարգարեների մասին ու փորձել պատկերացնել նրանց, և հիմա հասկացավ, որ հենց այնպիսին է պատկերացրել Աստծո նախադուշակներին, ինչպիսին Հորդանանի այս սրբակյացն է: Այս մտքերից Հովհաննան ավելի հուզվեց, իսկ այդ միջոցին Մկրտիչը շարունակում էր խոսել.

— Ապաշխարության արժանի պտուղներ տվեք և մի՛ սկսեք ասել, թե Աբրահամին ունենք իբրև հայր. այս ասեմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից անդամ դուրս բերել Աբրահամի որդիներ: Բայց, ահավասիկ, կացինը ծառերի արմատների վրա է. ամեն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում:

Երբ Հովհաննեսը վերջացրեց իր խոսքը, ժողովրդի միջից ինչ-որ մեկը կանչեց.

— Ասա՛, Աստծո՛ մարդ, իսկ արդ ի՞նչ պիտի անենք:

— Ով որ երկու զգեստ ունի, մեկը թող տա նրան, որ չունի, և ով որ ուտելիք ունի, նույն ձևով թող անի:

— Վարդապետ, մենք, մաքսավորներս, ի՞նչ անենք:

— Ձեզ հրամայվածից ավելին մի՛ վերցրեք:

Անտիպասի զինվորներից մեկն անընդհատ հրում էր իր պետին.

— Հարցրո՛ւ, հարցրո՛ւ, մենք ի՞նչ անենք:

— Քեզ պետք է, դու էլ հարցրու,— ասաց պետն ու հեռացավ ամբոխից:

Այդ ժամանակ զինվորը համարձակվեց ու կանչեց.

— Իսկ մենք, զինվորներս, ի՞նչ անենք:

Մարգարեն բարձրացրեց իր հայացքը դեպի նա ու երկար նայեց, ասես ուզում էր հիշել, իսկ հետո, հոգոց քաշելով, պատասխանեց.

— Ոչ ոքի մի՛ նեղեք, ոչ ոքի մի՛ զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի:

Այստեղ ժողովրդի միջից մեկը կանչեց.

— Դո՞ւ ես արդյոք Աստծո մեզ խոստացած Մեսիան:

— Ոչ, ես Քրիստոսը չեմ,— վճռականորեն պատասխանեց Հովհաննեսը,— ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց գալիս է ինձանից ավելի զորավորը, որի կոշիկները հանելու արժանի չեմ ես. նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և հրով. նրա քամհարը իր ձեռքում է՝ մաքրելու իր կալը, հավաքելու ցորենը իր շտեմարանում, իսկ հարդը՝ կայրի անշեջ կրակով:

Մարգարեն ձեռքերը երկինք կարկառեց ու սկսեց աղոթել: Ողջ ժողովուրդը ծունկի իջավ ու նույնպես սկսեց աղոթել ու ապաշխարել: Այնուհետև տղամարդիկ սկսեցին ջուրը մտնել, որտեղ Հովհաննեսը նրանց մկրտում էր: Նա կանանց հանձնարարեց իրենք ընկղմվեն[1]: Կանանց մի խումբ գնաց դեպի դետը, Հովհաննան շտապեց նրանց հետևից: Նրանք բոլորը մտան Հորդանան ու աղոթքով սուզվեցին ջուրը: Երբ Հովհաննան դուրս եկավ ջրից ու իր իրերից վերցրեց մաքուր շոր ու հագնվեց՝ նա հանկարծ իրեն այնպես թեթևացած զգաց, որ թվաց, թե չի քայլում, այլ թռչում է երկրի վրայով ինչպես թռչուն:

Հովհաննային շատ ցանկալի էր մի քիչ էլ մնալ այդ Աստվածային մարգարեի մոտ, բայց ջոկատն արդեն շտապում էր ճանապարհ ընկնել: Այն զինվորը, որ Հովհաննեսին հարցրեց, թե ինչ անել, նույնպես խոստովանեց իր մեղքերն ու սուզվեց ջուրը: Ողջ ժամանակ նա գնում էր Հովհաննայի կողքով, ու նրանք իրար հետ կիսվում էին իրենց տոգորած տպավորություններով:

[1] Կանանց մկրտությունը կատարվում էր տղամարդկանցից առանձին, նույնպես մարգարեի աղոթքներով, բայց նա ինքը, հետևելով կուսակրոնության հնավանդ պատկերացումներին, կանանց չէր դիպչում:

ԳԼՈՒԽ 18

Տիբերիա գալով՝ ջոկատի պետը չորրորդապետին զեկուցեց բոլոր հանգամանքների ու արաբների հետ սկսված մարտական բախումների մասին: Նա չմոռացավ հիշել և Հորդանանում հայտնված մարգարեի մասին: Այդ լուրը հետաքրքրեց չորրորդապետին: Նա խնդրեց ավելի մանրամասն պատմել ժողովրդի նորահայտ հոգևոր առաջնորդի մասին: Լուրից միտքն անհանգստացնում էր այն, որ մարգարեն ժողովրդի մեծ զանգվածներ է հավաքում Անտիպասին ենթակա տարածքներում և որ այդ ամենը կարող է ժողովրդական անկարգությունների ձև ընդունել: Իսկ հետո, ո՞վ գիտի, չի՞ վերաճի այդ ամենն իսկական ապստամբության, նման նրան, որ Հուդա Գավղոնացին սարքեց: Եթե նման բան կատարվի, կարելի է ոչ միայն կայսրի աչքից ընկնել, այլ նույնիսկ զրկվել չորրորդապետությունից:

Հերովդիան ծիծաղեց նրա վախենալուց, որ ինչ որ թափառական կարող է ժողովրդին ապստամբության հանել: Բայց հետո, երբ նա իմացավ, թե ողջ Հրեաստանից ու Գալիլիայից որքան ժողովուրդ է հավաքվում մարգարեի մոտ, ակամա մտածմունքի մեջ ընկավ. «Իսկ դա չի՞ խանգարի իմ ծրագրերին»:

— Իսկ ինչո՞ւ դու չձերբակալես այդ խռովարարին,— հարցրեց նա Անտիպասին:

— Եթե նա մարդկանց սրտերի վրա այդպիսի իշխանություն ունի, արդյոք նրա ձերբակալությունը չի՞ հարուցի ավելի մեծ խռովություն,— կասկածանքով գլուխը տարուբերեց Անտիպասը:

Հերովդիան վայելում էր իր նոր դիրքը: Զգալ մի այնպիսի հրաշալի պալատի տիրուհի, որի նմանը Հռոմում չունեին նույնիսկ ամենահարուստ ու անվանի սենատորները, շոյում էր նրա ինքնասիրությունը: Երբ նրան լուրեր հասան, թեև դա խոցում էր նրա ինքնասեր սիրտը, որ Հովհաննես մարգարեն դատափետում է Անտիպասին նրա անօրինական ամուսնության համար, նա նորից ծիծաղեց մարգարեի վրա, որը կին չունենալով՝ դեռ համարձակվում է դատողություններ անել ուրիշ կանանց մասին: Իսկ որոշ ժամանակ անց նա լսեց, որ մարգարեն բացեիբաց պահանջում է, որ Անտիպասն իրենից հեռացնի Հերովդիային: Դա արդեն նրան

սկսեց լրջորեն անհանգստացնել: Անտիպասի խորհրդականներից մեկը, ալևոր Պտողոմեոսը, էլ ավելի ուժեղացրեց Հերովդիայի անհանգստությունը, ասելով, որ մարգարեի կոչերը կարող են ազդեցություն ունենալ Իսրայելի կրոնուսույցների վրա: Եվ այդտեղ Հերովդիան գիտակցեց իր վիճակի ողջ վտանգավորությունն ու անկայունությունը: Ամուսնու մեջ տեսնելով ոչ լիարժեք կամային մարդու, նա սկսեց զգուշանալ, որպեսզի ժողովրդի սիրած մարգարեի խոսքերն ազդեցություն չունենան Իսրայելի ավագանու վրա ու նրանք չորրորդապետից չպահանջեն Հերովդիային հեռացնել իրենից: Այնպիսի սարսափ պատեց նրան, որ չէր կարողանում այլ բանի մասին մտածել, բացի այն, թե ինչպես Հովհաննեսին ստիպի լռել: Հերովդիան պատրաստ էր սեփական ձեռքերով խեղդել մարգարեին, միայն թե նա չկարողանար դատափետել իրենց ամուսնությունը: Հովհաննեսին ձերբակալելու՝ Անտիպասին ուղղված նրա խնդրանքներն ուժեղանում էին: Նա բառացիորեն աղերսում էր ամուսնուն ինչ որ բան անել այդ անզսպելի ճշմարտասերի հետ: Թեև մարգարեի դատափետող ճառերը գրգռում էին Անտիպասին, բայց նրա վրա այնպես ուժեղ չէին ազդում, ինչպես՝ Հերովդիայի:

Այնուամենայնիվ, նա չէր վճռում ձերբակալել մի մարդու, որի նկատմամբ ինքն էլ վախի հետ մեկտեղ, ակամա, հարգանքի նման ինչ որ բան էր զգում: Բայց դա երկար չէր կարող շարունակվել: Չորրորդապետը տեսնում էր, թե ինչ տանջալից ազդեցություն է թողնում մարգարեն իր սիրած կնոջ վրա: Հերովդիան նիհարեց ու զրկվեց քնից:

— Դու իմ մահն ես ուզում,— հառաչում էր նա,— դու շուտով այն կստանաս:

Վերջապես Անտիպասը վճռեց: Նա հրամայեց իր զինվորներին ձերբակալել Հովհաննեսին ու տանել Մաքերուս ամրոցի զնդանը:

Հաջորդ օրը նա չճանաչեց կնոջը: Նա ասես կերպարանափոխվել էր ու իր հետ այնքան սիրալի էր, որ իր արարքի ճշտության մասին Անտիպասի վերջին կասկածները լիովին անհետացան:

ԳԼՈՒԽ 19

Աստծո մարգարեն, որին Հովհաննան հանդիպեց Հորդանանում, զբաղեցնում էր նրա բոլոր մտքերն ու զգացմունքները: Նա երազում էր նորից Հորդանան գնալ, որպեսզի նորից լսի այդ Աստծո մարդուն, որպեսզի լինի նրա կողքին: Նրա կյանքում ինչ որ հատուկ բան էր սկսվել: Կարծես մինչև մարգարեի հետ հանդիպելը մի կյանք էր, իսկ հիմա սկսվել էր մի ուրիշը, բայց՝ ամենագլխավորը. ա՛յն, հանուն որի ինքն աշխարհ էր եկել: Հովհաննան արդեն ուզում էր ամուսնուց Հորդանան գնալու թույլտվություն խնդրել, բայց այդտեղ նրան հասավ մարգարեին ձերբակալելու ու Մաքերուս ամրոցում բանտարկելու սարսափելի լուրը: Այդ լուրը բառացիորեն տապալեց Հովհաննային: Նա ջղային նոպա ունեցավ ու անկողին ընկավ: Շուտով նա լսեց, որ Անտիպասն իր արքունիքով պատրաստվում է Մաքերուս ամրոցի պալատ տեղափոխվել, որ ավելի մոտիկ գտնվի արաբների հետ ռազմական դոր-

ծողություններին: Քուզան ուզում էր կնոջը թողնել Գալիլիայում, բայց նա սկսեց արտասվագին աղերսել, որ իրեն էլ Բերեա տանեն՝ պատճառ բերելով Մաքերուսի բուժիչ աղբյուրները: Այդ վերջին փաստարկը համոզեց Քուզային ու նա Հովհաննային վերցրեց հետը:

Գալով Մաքերուս՝ Հովհաննան սկսեց աղբյուրները գնալ, ու իսկապես շուտով սկսեց լավանալ: Բայց կնոջ բոլոր մտքերն այն մասին էին, թե ինչպես տեսնի պալատի բանտային գետնահարկի տառապյալին: Շուտով նրա ցանկությունը կատարվեց: Զինվորները զբոսանքի համար Հովհաննեսին ներքին բակ դուրս բերեցին: Նա դանդաղ քայլում էր սալապատ բակում՝ զրնգացնելով կապանքների շղթաները: Մարգարեի կոճերը կալող օղերից շղթաները ձգվում էին մինչև ձեռքերն ու կալանավորի դաստակների շուրջը միանում մետաղական ձեռնակապերով: Կարծես չնկատելով այդ շղթաները՝ Հովհաննեսն ինչ որ մի խոր մտածմունքի մեջ ընկած քարշ էր տալիս ոտքերը: Նա հանկարծ հայացքը բարձրացրեց դեպի պալատի վերնասրահ, ուր կանգնած էր Հովհաննան: Անսպասելիությունից կինը քարացավ, վախենալով շարժվել, քանի դեռ մարգարեն նայում էր իրեն: Նույնիսկ արտասուքը քարացավ այ-

տի վրա: Մարգարեն հանկարծ ժպտաց Հովհաննային: Այդ ժամանակ նրա աչքերը բարիություն էին ճառագում: Իբրև ողջույնի նշան՝ նա նույնիսկ փորձեց ձեռքը բարձրացնել: Շղթան զրնգաց, ձեռքը քիչ բարձրացավ՝ ձգելով ծանր շղթաներն, ու անուժ ցած ընկավ: Հովհաննեսը թոթովեց ուսերն ու նորից գլուխը կախելով՝ խոր մտածմունքի մեջ շարունակեց քայլել: Զանցած մի քանի քայլ՝ մարգարեն նորից կանգ առավ ու հայացքը բարձրացրեց դեպի վերնասրահ: Այժմ նրա աչքերը փայլում էին զայրույթից: Հովհաննան կորցրեց իրեն: Նա ակամա հետ ընկրկեց ու տեսավ վերնասրահով հանդիսավոր ճեմող երկու փարիսեցու: Այդ պահին նրանց գլուխները խոնարհված էին դեպի գետին, աչքերը կիսախուփ էին, իսկ շուրթերը շարժվում էին, կարծես՝ աղոթում: Ճակատի գլխակապին ու հագուստի ձախ թևին, ուղիղ սրտի դիմաց, մի քանի գրապանակներ[1] էին ամրացրած: Նրանց ճոխ վերնազգեստի եզրերով վառ կարմիր[2] լայն ժապավեն էր անցնում:

[1] Գրապանակ. ֆիլակտերիա - զարդարված տուփիկներ, որոնց մեջ դնում էին Սուրբ Գրքից մեջբերումներով պապիրուսե կամ մագաղաթե ներդիրներ:

[2] Կարմիր ժապավենը հրեաների ազգային գարբերանշանն էր և հիշեցնում էր նրանց օրենքի մասին, իսկ փարիսեցիների մոտ՝ ամեն այլազգայինի հանդեպ անհաշտ թշնամության:

Նրանք կանգնեցին վերնասրահի բազրիքի մոտ ու նայեցին մարգարեին:

— Սա՞ է այն ինքնակոչ ուսուցիչը, որը պղտորեց Իսրայելի ուղղափառ մարդկանց մտքերը,— նրանցից մեկը հարցրեց մյուսին:

Բայց նա չէր հասցրել ավարտել իր խոսքը, երբ հնչեց մարգարեի ահեղ ձայնը.

— Իժերի ծնունդներ: Զազրելի ծնողների անպիտան զավակներ: Ձեր մեջ կուտակված է այն ողջ աղբը, որ դուք ժառանգել եք ձեր հայրերից, և ձեր գայթակղություններով մահվան եք ուղարկում ուրիշներին: Դո՛ւք, ինչպես թունավոր օձեր, խայթում ու սպանում եք նույնիսկ սրբերին՝ նրանց խոսքերն ու գործերը ծածկելով ձեր զրպարտության թույնով:

Փարիսեցիները մարգարեի խոսքերից կուչ եկան ու կորցրեցին իրենց ողջ ամբարտավան տեսքը:

— Գնանք այստեղից,— վախեցած ասաց երկրորդ փարիսեցին,— մի՞թե դու չես տեսնում, որ իզուր չեն ասում, թե նրա մեջ սատանա կա:

Փարիսեցիները, մոռանալով վայելչությունը՝ մանրաքայլ հեռացան: Մարգարեի զայրույթն անմիջապես մարեց, ու Հովհաննային նորից նայում էին արդարակյացի բարի ու գորովալից աչքերը:

Մի անգամ Հովհաննան ժողովից հետո դուրս եկավ ժողովարանից ու նրան երկու մարդ մոտեցան: Նրանք խոնարհվեցին նրան ու հարցրեցին.

– Դո՞ւ ես արդյոք Հերովդես Անտիպասի վերակացու Քուզայի կինը:

– Այո, ես Քուզայի կինն եմ:

– Մենք քեզ տեսել ենք գետի մոտ, երբ մեր ուսուցիչ, Աստծո մարգարե Հովհաննեսը քարոզում էր, դրա համար էլ համարձակվեցինք մոտենալ քեզ:

– Դուք նրա աշակերտնե՞րն եք,– ուրախացած բացականչեց Հովհաննան,– ի՞նչ կարող եմ ձեզ համար անել:

– Իմացի՛ր, բարի կին, մենք կարո՞ղ ենք տեսնել մեր ուսուցչին:

– Իսկ դուք չե՞ք վախենում, որ ձեզ էլ զնդան կնետեն:

– Ո՛չ, մենք պատրաստ ենք մեռնել նրա համար:

– Այդ դեպքում գնանք ինձ հետ, ես ձեզ համար կխնդրեմ պահնորդների պետին:

Պալատում Հովհաննան մոտեցավ զորանոցներին, ուր պահակախումբն էր տեղավորվել ու, խոսելով պետի հետ, ուրախացած նորից վազեց Հովհաննեսի աշակերտների մոտ:

– Գնանք ինձ հետ, ես կուղեկցեմ ձեզ:

Աշակերտներն շտապեցին կնոջ հետևից ու շուտով հասան պալատի նկուղի մուտքը հսկող պահնորդների կացարանին: Հենց այն զինվորն էր հսկում, որ Հովհաննեսից մկրտվել էր Հորդանանում: Նա պատրաստակամությամբ աշակերտներին ուղեկցեց զնդան՝ մարգարեի մոտ: Այս ամենից հետո աշակերտները տեղավորվեցին քաղաքում: Թեև ոչ հաճախ, բայց, այնուամենայնիվ, նրանց թույլատրում էին հանդիպել ուսուցչին: Սինագոգի ժողովներից մեկում նրանք շատ շնորհակալություն հայտնեցին Հովհաննային:

Շուտով նրանք հայտնեցին Հովհաննային, որ ուսուցիչն իրենց ուղարկել է Գալիլիայում նոր հայտնված մարգարե և ուսուցիչ Հիսուս Նազովրեցու մոտ Նրան հարցնելու. արդյո՞ք Ինքն է իսկական Մեսիան, թե սպասենք ուրիշին:

ԳԼՈՒԽ 20

Աշակերտների գնալուց հետո Մաքերուսում սկսվեցին Հերովդես Անտիպասի ծննդյան օրվա տոնակատարության նապատրաստության ճոճիմ օրերը: Խոսում էին, որ չորրորդապետը բազմաթիվ անվանի հյուրեր է հրավիրել ինչպես հրեական իշխաններից, այնպես էլ հռոմեական վերնախավից, և մեծ հանդիսություն էր սպասվում:

Քուզան առանց հանգստի, ամբողջ օրերով, դես ու դեն էր ընկնում, տնտեսության համար նախապատրաստելով ամեն անհրաժեշտը: Առավոտից մինչ երեկո նա ընդունում էր պարենի գնման կապալառուներին, հանձնարարություններ էր տալիս խոհարարներին ու բազմաթիվ սպասավորներին: Հոտերով գառներ ու հորթեր էին ամրոց քշում: Բերում էին եղջերվի ու եղնիկի մսեղիք, հնարավոր բոլոր թռչուններով՝ ճտերով, հավերով ու հնդկահավերով, սագերով ու բադերով, խայտահավերով, փասիաններով ու սիրամարգերով, աղավնիներով ու լորերով ծանրաբեռնված սայլեր. միրգն ու բանջարեղենն աշխարհի բոլոր կողմերից. թութը, սերկևիլն ու դեղձը՝ Պարսկաստանից, բալը՝ Փոքր Ասիայից, ձմերուկն ու սեխը՝ Եգիպտոսից, նուռը՝ Կարթագենից. պարկերով ընկույզ՝ պնդուկ, նուշ, պիստակ ու անտառային ընկույզ: Գետի, լճի, ծովի բազմազան ձկներն անհաշիվ լցնում էին ամրոցի պահեստները: Քուզան ինքն անձամբ էր ամեն ինչ ստուգում՝ գինու նկուղներից վաղելով խոհանոց, խոհանոցից՝ մթերքի պահեստները: Նա պալատի դահլիճներով տխուր շրջող իր կնոջը նույնիսկ չէր նկատում: Բոլորովին դադարեցրին մարգարեին զրոսանքի հանելն ու Հովհաննան զրկվեց թեկուզև այդ կարճատև բոպիներին մարգարեի երեսը տեսնելուց: Վերջապես նա գնաց համարձակ արարքի: Խոհանոցում տարբեր ուտելիքներ հավաքեց զամբյուղի մեջ, գինու փոքր սափոր դրեց ու ինքն իրեն վտանգելով՝ գնաց գետնահարկ: Պահնորդը նայեց ուտելիքին ու ծիծաղելով ասաց.

— Նա այս բաները չի ուտելու: Ո՛չ գինի, ո՛չ սիկեր[1] նա, առհասարակ, չի խմում: Ու շատ քիչ է ուտում: Պատմում են, որ երբ նա անա-

[1] Սիկեր - խմորված հատիկից պատրաստված գինեկան գարեջուր:

պատում է եղել, սնվել է միայն վայրի մեղրով ու ակրիդներով[1]:

Այնուհետև նա վառեց ջահն ու Հովհաննային ուղեկցեց պալատի նկուղը: Նրանք անցան մի քանի մութ անցումներով ու դուրս եկան բավականին ընդարձակ մի միջանցք, որի պատերի երկայնքով ձգվում էին մի քանի վանդակապատ տարածքներ: Պահնորդը ջահն ամրացրեց պատին ու նրա պայծառ բոցը լուսավորեց վանդակապատ խցերից մեկը: Հովհաննայի աչքերը վարժվեցին մթանն, ու նա տեսավ մարգարեին: Հովհաննեսը հանդիստ մոտեցավ վանդակաճաղին ու այդպես հանդիստ ու հարթ ձայնով հարցրեց.

— Եկել ես հրաժեշտ տալո՞ւ:

— Ես քեզ ուտելիք եմ բերել:

— Թող այնտեղ, վերևում ուտեն ու զվարճանան: Իսկ իմ կերակուրը՝ Աստծո շնչից է գալիս: Շուտով այս կապանքներն ինձ արդեն չեն պահի, ու ես կգնամ Նրա մոտ, Ով ուղարկեց ինձ հայտնելու ու վկայելու Աստծո ճշմարտությունը:

— Եվ Ո՞վ է նա, Ո՞ւմ մասին դու վկայում ես,— վախվխելով հարցրեց Հովհաննան:

— Դու ինքդ Նրան կտեսնես ու կհետևես Նրան: Ու պիտի տարածես Նրա փառքը:

Մարգարեի այդ խոսքերը խորապես հուզեցին Հովհաննային: Նա արդեն չէր հիշում, թե ինչպես դուրս եկավ պալատի նկուղից, ինչպես սթափվեց իր սենյակում ու միայն այնտեղ հանկարծ հիշեց մարգարեի խոսքերը, որ զնդանի կապանքները շուտով զորություն չեն ունենա իր վրա: «Նշանակում է՝ կաղատե՞ն Նրան»,— մտածեց Հովհաննան, բայց այդ պահին մի ուրիշ, ավելի խոր զգացմունք հուշեց նրան, որ այդ խոսքերն այլ բան էին ասում: Սարսափելի ու անուղղելի դեպքերի վշտալի սպասումը սեղմում էին Հովհաննայի սիրտը, ու նա դառնորեն լաց եղավ:

Այդ ժամանակ ինչպես պալատում էին պատրաստվում տոնակատարությանը, Հերովդիայի ննջարանում նույնպես պատրաստվում էին նշանավոր օրվան: Հերովդիայի դուստր Սաղոմեն կեցվածքով ու գեղեցկությամբ մորն էր քաշել: Տասներկու տարեկանում նա արդեն լրիվ հասուն օրիորդ էր, ու մայրը լրջորեն մտածում էր իր դստեր ապագայի մասին ու փեսացու էր ընտրում: Այդ օրը նա առանձնակի հույսեր էր կապել Սաղոմեի հետ. չէ որ, այսպես թե այն-

[1] Ակրիդ - չորացած մորեխ, որով Արևելքում սնվում էին աղքատները. մեկ այլ ենթադրությամբ՝ Հոդայի անապատում աճող պապիճավոր բույս:

պես, շատ անվանի հյուրեր էին գալու: Հերովդիայի գլուխը մի համարձակ միտք էր մտել՝ իր աղջկա պարով զարմացնել հյուրերին: Սաղոմեի դաստիարակչուհին եգիպտուհի էր՝ արհեստավարժ պարուհիներից: Այդ արվեստը նա սովորեցրել էր նաև Հերովդիայի աղջկան: Ճկուն ու նրբագեղ Սաղոմեն կատարելապես յուրացրել էր արևելյան պար-մնջախաղի բոլոր նրբությունները: Իհարկե, կնոջ, այն էլ ազնվական, պարելը տղամարդկանց հավաքին արևելքում համարվում էր ընդունված պատշաճության անթույլատրելի խախտում: Միայն ստրկուհիներին էր թույլատրվում իրենց տերերին հաճոյանալու համար խնջույքներին պարել թեթև հագնված: Բայց Սաղոմեն, որ դաստիարակված էր ինչպես իր ժամանակակից հելլենուհիներն ու հռոմեուհիները, իր ազգականուհիների նման ամոթխած չէր: Բացի այդ, հյուրերի մեծ մասը լինելու էր հենց այն խավից, որ քիչ էր գնահատում նահապետական սովորույթներն ու ավելի շատ փորձում էր դուր գալ հռոմեացիներին: Իսկ նրանց մոտ ամեն ինչ թույլատրելի էր: Առավել ևս՝ պար-մնջախաղը կատարվում էր հատուկ դիմակով ու կարելի էր դեմքը չբացել: Այսպես ուրեմն, Հերովդիան որոշեց ամուսնու համար անսովոր նվեր պատրաստել,

որ նա առաջիկայում էլ գնահատի այս կյանքում ամեն ինչ մեծ օգուտի ու բավականության համար կազմակերպելու իր հնարամտությունն ու ունակությունը:

Հյուրերը հավաքվել սկսեցին տոնակատարության նախորդ օրվանից: Հովհաննային հանձնարարված էր տեղավորել ժամանող հյուրերի կանանց: Հերովդիան պատրաստվում էր պալատի ճոխ սրահներից մեկում հրավիրվածների[1] կանացի կեսի համար տոնական ընթրիք տալու: Եկել էին ոչ միայն Հրեաստանի ու Գալիլիայի բոլոր անվանի իշխաններն ու բարձրաստիճան զինվորականները, այլև շատ անվանի հռոմեացիներ Սիրիայի նահանգից: Եկել էր նաև Լիբանանի ու Անտիլիբանանի լեռների մեջ գտնվող և հյուսիս-արևելքում Գալիլիային սահմանակից սիրիական Աբիլենե մարզի կառավարիչ Լյուսանիասը: Երևելի մարդկանց այդպիսի հավաք այդ պալատը դեռ չէր տեսել: Տոնակատարությանը ժամանող հյուրերին զվարճացնելու համար Մեռյալ ծովի անապատում եգիպտոսից վանդակների մեջ բերված երեք առյուծ բաց թողեցին ու որս սարքեցին:

[1] Արևելքի սովորույթները կանանց ոչ միայն արգելում էին տղամարդկանց հետ խնջույքի սեղան նստել, այլ նաև՝ երևալ այնտեղ, ուր նրանք խնջույքի էին:

Որսը, հիրավի, արքայական ստացվեց, եթե չհաշվենք այն, որ շուրջկալ ընկած մի ծառայի առյուծը մահացու պատառոտեց: Բայց դա հյուրերից ոչ մեկին վրդովմունք չպատճառեց, այլ միայն գրգռեց: Այնուհետև առյուծը դուրս պրծավ շուրջկալից ու սլացավ լճի ափով: Հետապնդմանը մասնակցեցին բոլորը, բայց ավարը բաժին հասավ սիրիական կայազորի հրամանատար, տրիբուն Պատիոս Ֆլորիին: Փոքրիկ ու հաստլիկ Պատիոսը հետո դրանով շատ հպարտացավ ու առյուծի մորթին նվիրեց չորրորդապետին:

Ահա և եկավ տոնի օրը: Բոլոր տղամարդ հյուրերը, հռոմեական սովորույթի համաձայն, ընթրիքից առաջ գնացին բաղնիք: Արդեն այնտեղ, ավազանների մոտ,գալիլիական գինով բավականին տաքանալով, խնջույքի դահլիճ մտան գինովցած: Պալատի ճոխ դահլիճում հյուրերը տեղավորվեցին մեծ ամֆիթատրոն կազմած: Դահլիճի պատուհաններն ու սյուները զարդարված էին հիասքանչ ծաղկաշղթաներով: Երաժիշտները ֆլեյտաներ ու լարային գործիքներ էին նվագում: Ծառաները մեկը մեկի հետևից դահլիճ էին մտնում ու լվացվելու գավաթներ ու սրբիչներ տանում հյուրերին: Այնուհետև ծառաներ հայտնվեցին ամեն տեսակի կերակուրներով ու խնջույքն սկսվեց: Հյուրերը հերթով ոտքի էին կանգնում ու գավաթը մինչև տակը դատարկելով խմում Անտիպասի կենացը: Հետո նորից նստում էին ու սկսում խժռել սեղանին շռայլորեն շարած խորտիկները: Երբ մատուցեցին տաք կերակուրների երկրորդ բաժինը, արդեն ոչ ոք ոչ ոքի չէր լսում: Ամեն մեկը գոռում էր ինչ ուզում էր: Քեֆի անողների առջև ելույթ ունեցող ձեռնածուներին ու մարմնամարզիկներին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Բոլորն անընդմեջ խոսում էին բոլորովին չմտահոգվելով, թե կլսե՞ն իրենց: Բայց այդ ժամանակ ռիթմիկ զարկեցին թմբուկները, մեղեդայնորեն զնգզնգացին զանգակներն ու մի աղջիկ վազեց դահլիճի կենտրոն: Թեթև, բաց կանաչ մետաքսը պատել էր նրա ձիգ մարմինը՝ իր թափանցիկությամբ չծածկելով աղջկա մարմնի նրբագեղ ձևերը: Գլխին փաթաթված ոսկեգույն ժապավենները, դանդուր մազերի փափուկ խոպոպների հետ, ծփծփում-ծածանվում էին գեղեցկուհու շարժումներից: Դեմքը կիսով չափ ծածկում էր ոսկերոսոր դիմակը: Աղջիկն ասես առանց հատակին դիպչելու՝ ճախրում էր դահլիճում: Երաժշտությանն ու թնդուն դափերին համաչափ մեկ կորանում էր, ասես առհասարակ ոսկոր չուներ, մեկ զսպա-

նակի պես ուղղվում ու պտտվում այնպես, որ նրա մարմինը ոլորվում ու դառնում էր արտասովոր պարույր: Մեկ սիգարշավում էր ինչպես կամակոր ձիուկ՝ բարձր նետելով ծնկները, մեկ սկսում պատկերել կուրտիզանուհու կիրքը՝ գայթակղելով անտեսանելի սիրեկանին: Երաժշտությունից ու պարուհու շարժումներից դյութված տղամարդիկ նստել ու մոռացել էին աշխարհում ամեն ինչ: Իսկ երբ պարը վերջացավ, նրանք, ասես քարացած, դեռ նստած էին: Հետո հանկարծ բոլորը մեկեն աղաղակեցին՝ հիացմունքով դոփաբանելով պարուհուն: Աղջիկը խոնարհվեց հանդիսականներին և ուզում էր հեռանալ, բայց ինքը՝ չորրորդապետը, կանչեց նրան:

— Ես հրամայում եմ քեզ, գեղեցկուհի, հանի՛ր դիմակդ:

Աղջիկն սկզբում հապաղեց, բայց հետո վճռականորեն քաշելով հանեց դիմակն ու Անտիպասի դիմաց հայտնվեց իր խորթ աղջիկը: Հյուրերը նորից սկսեցին բարձրաձայն արտահայտել իրենց հիացմունքը: Անտիպասը զարմանքից ախ քաշեց, իսկ հետո, դիմելով հյուրերին, հպարտությամբ հայտարարեց.

— Սա իմ աղջիկ Սաղոմեն է:

Ու նորից լսվեցին զարմանքի ու հիացմունքի

բացականչությունները: Հերովդեսը հիացմունքից յոթերորդ երկնքում էր: Ցնծուն հայացքը նա հպարտությամբ պտտեցրեց ամֆիթատրոնի շարքերով. — հիացեք, թե ինչպես ամեն ինչ ինձ մոտ լավ է:

— Լսի՛ր, Սաղոմե՛,— դիմեց նա աղջկան,— դու ուրախացրիր իմ սիրտը, և ես պատրաստ եմ քեզ տալ այն ամենն, ինչ դու կցանկանաս: Թեկուզ թագավորությանս կեսը: Խնդրի՛ր:

Գեղեցկուհին շփոթված թարթեց երկար թարթիչները, իսկ հյուրերի մեջ քմծիծաղ լսվեց: Դա խոցեց չորրորդապետի ինքնասիրությունը և տհաճ արձագանք գտավ նրա սրտում:

— Լսեցե՛ք, դուք բոլորդ, ես, Հերովդես Անտիպասս, Գալիլիայի ու Բերեայի չորրորդապետը, երդվում եմ իմ բոլոր գանձերով, որ կկատարեմ այս աղջկա ցանկացած խնդրանք:

Սաղոմեն հանկարծ շրջվեց ու արագ փախավ, որով շատ զվարճացրեց հյուրերին: Խնջույքը նորից ընթացավ իր կարգով: Բայց երբ հևացող պարուհին նորից վազելով դահլիճ մտավ, բոլորը լռեցին ու հյուրերի հետաքրքրասեր հայացքներն ուղղվեցին դեպի Սաղոմեն.

— Ուզում եմ, որ սկուտեղի վրա ինձ տաս ժողովրդի մեջ Մկրտիչ անվանվող Հովհաննեսի գլուխը:

Եթե պարզ երկնքում ամպրոպ որոտար, նույնիսկ դա հյուրերին ավելի քիչ կզարմացներ քան այն տարօրինակ ցանկությունը, որը հայտնեց նա: Բոլորն սկսեցին խոսել իրար հետ, իսկ աղջիկը կանգնել ու սպասում էր պատասխանի: Անտիպասը խոժոռվեց ու մտածմունքի մեջ ընկավ: Նրա կողքը նստած Աբիլենեի չորրորդապետ Լյուսանիասը խոցելով ասաց.

– Ամեն կառավարիչ չէ, որ ի զորու է կատարելու իր երդումը:

– Ո՛չ,– հարբած ձայնով հանկարծ բղավեց չորրորդապետը,– թող բոլորն իմանան, որ Մեծ արքա Հերովդեսի որդին արժանի է իր հորը: Թող այնպես լինի, ինչպես նա ուզեց: Հե՛յ, Հովսեփ,– կանչեց նա իր թիկնազորի պետին,– սկուտեղի վրա անմիջապես ինձ մոտ բերեք Հովհաննեսի գլուխը:

Բոլոր հյուրերը համերաշխորեն ոտքի կանգնեցին ու գինով լի գավաթները բարձրացնելով՝ ոտնկայս ողջույնեցին Հերովդես Անտիպասի վճռականությունը, ասելով, որ նա արժանի է թագավոր լինելու, ինչպես իր հայրն էր: Գինին նորից հոսեց գետի նման:

ԳԼՈՒԽ 21

Երեք զույգ զինվորական ոտքեր սանդալների ամուր ներբաններով դոփեցին նկուղի քարե աստիճաններին: Երբ գնդանի միջանցքը լուսավորվեց վառվող ջահերի ցոլքերով՝ Հովհաննեսն արդեն կանգնած էր վանդակաճաղի մոտ՝ այն ձեռքերով բռնած: Թիկնազորի պետը բացեց կողպեքն ու մտավ խուցը: Հովհաննեսն ուղիղ նայեց պահնորդի աչքերի մեջ: Նա փոքր ինչ շփոթվեց, բայց արդեն հաջորդ պահին իր սուրը լուռ հանեց պատյանից: Պատյանին զարնվող շեղբի չարագուշակ մեղեդին ստիպեց ցնցվել մարգարեին: Բայց հաջորդ ակնթարթին Հովհաննեսն ուղղվեց, առանց շփոթմունքի նշույլի նայեց ջահերի լույսից փայլող սուր մետաղին ու հայացքը շրջեց դեպի իր դահիճը: Այդ հայացքում կար հանգստություն մի մարդու, ով մի անգամ չէ, որ ապրել էր սեփական մահն ու հիմա այն ընդունում էր իբրև սպասման տառապանքներից ազատում: Բանտարկյալը ծունկի չոքեց ու կախեց գլու-

խը: Սուրն, ասես փայլատակող կայծակ, իջավ թափահարման բարձրությունից, և նրա իջնելու հետ միաժամանակ խուլ թխկոցով նկուղի քարե սալերին ընկավ կանանցից ծնված մարդկանցից մեծագույնի գլուխը:

Խնջույքի դահլիճից իջնելով պալատի խոհանոց՝ Քուզան հանկարծ օրորվեց ու պատից բռնելով՝ նստեց քարե սառը աստիճաններին: Նա այլևս ցանկություն չուներ շարժվելու: «Ահա, այսպես նստես ու ոչինչ չանես,— երանությամբ փակելով աչքերը՝ մտածեց Քուզան, բայց եթե ես էլի մի քիչ նստեմ, այլևս չեմ կանգնի: Կանգնել է պետք»: Այդ պահին նրա ճակատին մի ձեռք հպվեց: Նա անմիջապես զգաց, որ ամբողջ աշխարհում դա միայն մի ձեռք կարող է լինել՝ իր կնոջ ձեռքը:

— Քեզ վա՞տ ես զգում,— լսեց նա Հովհաննայի հոգատար ձայնը:

Աչքերը չբացելով՝ Քուզան երանությամբ ժպտաց.

— Հիմա ինձ լավ եմ զգում: Գիտես, ես հիմա հիշեցի, թե ինչպես, երբ դեռ երեխա էի, հիվանդացա: Այնքան վատ էի զգում ինձ, որ մահն արդեն այնպես սարսափելի չէր թվում, նույնիսկ՝ հակառակը: Բայց ահա մոտենում է մայրս ու իր ձեռքը դնում է գլխիս, ու անմիջապես թեթևանում եմ ու ցանկանում ապրել: Ի՜նչ վաղուց էր դա: Իսկ հիմա թվում է, թե վերջերս է եղել:

Հովհաննան քնքշորեն ձեռքը տարավ ամուսնու արդեն ճերմակել սկսող մազերի վրայով ու սիրով ու կարեկցանքով նայեց նրա նիհարած դեմքին:

— Քեզ հանգստանալ է պետք, իմ սիրեցյալ տեր:

— Ո՛չ, ի՞նչ ես ասում, ոչ,— Քուզան թափ տվեց իրեն ու վեր կացավ աստիճաններից,— առանց ինձ ինչ որ բան այն չի լինի: Ահա թե էլ ինչ. Սաղոմեն, մեր տիրուհու դուստրը, պարել է հյուրերի առաջ:

— Իսրայելի Աստվա՜ծ,— զարմանքով բացականչեց Հովհաննան,— ինչպիսի մե՛ղք:

— Օ՜, իմ սիրելի կին, եթե այդ ամենը վերջանար միայն այդ մեղքո՛վ: Բայց պարելով, իբրև պարգև, նա թագավորից պահանջեց մեր զնդանում նստած մարգարեի գլուխը, ու նա համաձայնվեց կատարելու այդ անմիտ խնդրանքը:

Հովհաննան գունատվեց, ճչաց ու վազեց: Երբ հասավ նկուղի մուտքին, նրան հանդիպեց պահնորդների պետը երկու զինվորի հետ, նրանք սրբիչի մեջ փաթաթած ինչ որ բան էին ձեռքով տանում: Հովհաննային թվաց, որ կտավի վրա

արյան հետքեր էին: Դեռ չհավատալով ամենասարսափելիին՝ նա աստիճաններով թափով ներքև նետվեց: Պատին ամրացրած ջահը լուսավորում էր բանտային տարածքը: Պահնորդն առաջ եկավ, հենց նա, որ կնքվել էր Հորդանանում: Գունատ էր ու շփոթված: Ճանաչելով Հովհաննային՝ փակեց նրա ճանապարհը:

— Տիրուհի, քեզ չի կարելի դա տեսնել:

Բայց Հովհաննան նրանից մի կողմ նետվեց, իսկ հաջորդ պահին տեսավ, թե ինչպես երկու պահնորդ կոպիտ կտավի մեջ ինչ որ բան են փաթաթում: Իսկ հենց որ նա հասկացավ, թե ինչ են նրանք փաթաթում, ջահը մարեց: Ամեն ինչ մարեց: Պահնորդը տեսավ, թե ինչպես Հովհաննան երերաց ու նետվեց դեպի նա, բայց, մեկ է, չհասցրեց բռնել նրա ընկնող մարմինը:

Իսկ մինչ այդ դահլիճում շարունակվում էր ուրախ երաժշտությունն ու հարբածության անսանձ ուրախությունը հասել էր այն սահմանին, երբ խնջույքավորների մեջ մարդկայինից շատ քիչ բան է մնում: Սպասավորները բոպեն մեկ բերում էին տեսակ–տեսակ կերակուրներ, և այդ պատճառով էլ չորրորդապետի թիկնազորի պետի ներս բերած արծաթե սկուտեղին հյուրերը ուշադրություն դարձրին ո՛չ անմիջապես: Հովսեփն սկուտեղը տարավ ուղիղ դեպի Անտիպասի սեղանն ու դրեց իր տիրոջ առջև: Հարբած մարդու բութ դեմքով Անտիպասը նայեց բերված սկուտեղին, անմիջապես չըմբռնելով, թե ինչ է վրան դրված: Բայց երբ ուշադիր նայեց, մի պահ սթափված նրա հայացքում սարսափ երևաց:

— Տար Սաղոմեին,— ճչաց նա, ու նրա ձայնի ոչ չինծու սարսափը փոխանցվեց հյուրերին:

Պահնորդն սկուտեղը տարավ հյուրերի լիակատար լռության մեջ: Մարդկային դաժանության այդպիսի անթաքույց ցուցադրումից հետո ուրախությունը լքեց խնջույքի դահլիճը:

ԳԼՈՒԽ 22

Հովհաննան ուշքի եկավ ննջարանում, իր մահճակալին, ու անմիջապես զղջաց, որ վերադարձել է այս դաժան աշխարհը: Որոշ ժամանակ նա պառկել էր առանց շարժվելու: Բայց այն միտքը, որ մարգարեի արժանապատիվ թաղման համար ինքը պիտի հոգա, նրան ստիպեց վեր կանգնել անկողնուց: Հովհաննեսի աշակերտներին նա տեսավ դեռ հեռվից: Նրանք որբի պես կուչ էին եկել ամրոցի դարպասների մոտ, փորձելով ինչ որ բան բացատրել պահնորդներին: Հովհաննային տեսնելով՝ նրանք ուրախացած ձեռքով արեցին: Հովհաննան մոտեցավ նրանց ու նրանք կնոջ վշտահար դեմքից հասկացան, որ ինչ-որ սարսափելի բան է կատարվել:

— Ի՞նչ է պատահել մեր ուսուցչին,— հուզմունքով հարցրին նրանք:

Հովհաննան ոչինչ չպատասխանեց, ավելի ճիշտ՝ ուզեց պատասխանել, բայց չկարողացավ, միայն լուռ արտասվեց: Աշակերտները գլուխները կախելով սպասեցին մինչև նա դադարեց արտասվել ու հետո ասացին.

— Մենք ուզում ենք թաղել մեր ուսուցչին:

— Այո, նրան հարկավոր է թաղել,— գլխով արեց Հովհաննան ու տղամարդկանց տարավ դեպի պահնորդների զորանոցները: Պահնորդների պետն անմիջապես հանձնարարեց մահապատժի ենթարկվածի մարմինը հանձնել թաղելու համար: Բայց երբ սկսեցին խնդրել մարգարեի գլուխը, նա վճռականորեն հրաժարվեց գնալ չորրորդապետի կնոջ մոտ:

— Ինձ համար ավելի հեշտ է դժոխք իջնել, քան այդ կնոջ մոտ գնալ,— վրդովմունքով ասաց նա:

Հերովդիայի մոտ գնաց ինքը՝ Հովհաննան:

Չորրորդապետի կինն, առանց հանվելու, իր ննջարանում ողջ գիշեր նստել էր մարգարեի գլխի առջև: Մշուշված հայացքով նա նայում էր իր թշնամու գլխին: Երբեմն նրա աչքերում կարդացվում էր անմխիթար թախիծ՝ մի ինչ-որ ընդմիշտ կորսված բանի համար: Հատկապես հիմա էր հասկանում, որ չի հաղթել նրան, ով կարող էր կործանել իր երազանքը, իր դժվարությամբ ձեռք բերված երջանկությունը: Ոչ, նա ինքն էր հաղթված:

Երբ հևացող դուստրն իր հաղթանակի մա-

սին պատմելով ու խորհուրդ տալու խնդրանքով, թե ինչ կարելի է ուզել չորրորդապետից, մոտ էր վազել իրեն, Հերովդիան միայն մի րոպե էր վարանել: Այդ մի րոպեում նրա գլխով ամեն տեսակ խնդրանքների հարյուրավոր տարբերակներ էին անցել, բայց արդեն հաջորդ ակնթարթին նա միանգամից ասել էր.

– Խնդրի՛ր Հովհաննես Մկրտիչի գլուխը:

Սկզբում նույնիսկ ինքը չհասկացավ, թե ինչ ուզեց աղջկանից: Այդ վայրի միտքն ասես դուրս թռավ՝ ինչպես իր գոհին դարանակալած գող: Աղջիկն իր վախեցած աչքերը չռել էր մոր վրա:

– Այո՛, այո՛, աղջիկս, խնդրի՛ր միայն Հովհաննեսի գլուխը,– ավելի ամրանալով այդ մտքին՝ ասել էր Հերովդիան, աղջկա գլուխը սեղմելով իր ափերի մեջ ու համբույրներով ծածկելով նրա քրտինքից թրջված դեմքը.– ես քեզ կտամ իմ թանկարժեք իրերը, իմ զգեստները: Ամենն, ինչ կուզես՝ վերցրու, միայն թե խնդրիր Հովհաննեսի գլուխը:

Այդպիսի շռայլ խոստումներից աղջիկն ուրախացել, մոր գրկից անմիջապես դուրս էր թռել ու վազել խնջույքի դահլիճ: Հերովդիան հանկարծ ցանկացել էր հետ կանչել աղջկան ու ասել, որ փոխում է իր խնդրանքը: Նա արդեն ձեռքն աղջկա կողմն էր երկարել, բայց հետո

իջեցրել էր, հասկանալով, որ ի զորու չէ փոխելու իր որոշումը:

Այժմ, նայելով մարգարեի գլխին, Հերովդիան իրեն հարց էր տալիս. «Իսկ ի՞նչ էր հարկավոր անել. Հռո՞մ վերադառնալ հարբեցող ամուսնու մոտ ու շարունակել քարշ տալ կայսեր հաշվին ապրող կնոջ ողորմելի գոյությո՞ւնը: Իսկ աղջի՞կը, որին հարկավոր էր տեղավորել: Ինչո՞ւ ինչ-որ մեկն իր փոխարեն հանկարծ պիտի որոշի, թե ինչպես պիտի ինքն ապրի ու ում հետ ապրի: Մի՞թե դա արդարացի է: Եվ, առհասարակ, ի՞նչն է այս կյանքում արդարացի: Շուրջը նախանձություն է, ստորություն, խաբեություն, դաժանություն: Ի՞նչ կարելի է այդ ամենին հակադրել, եթե ոչ նույն ստորությունն ու խաբեությունը»:

Հերովդիայի մտքերն ընդհատեց աղախինը, որը զեկուցեց, որ վերակացու Բուզայի կինը ուզում է իրեն տեսնել: Հերովդիան դուրս եկավ հարևան ննջարան, որ ընդունի Հովհաննային: Նա ներս մտավ դունատ ու հուզված ու երկար չէր կարողանում խոսքն սկսել: Երբ Հերովդիան արդեն կորցնում էր համբերությունը՝ Հովհաննան, գլուխը խոնարհելով՝ շշնջաց.

– Տիրուհի, հանուն ամենայն սրբության, թաղելու համար ինձ տուր Հովհաննեսի գլուխը:

Հերովդիան մտորեց:

— Մի՞թե դու չես հասկանում, որ դա անել չի կարելի:

— Չեմ հասկանում,— անկեղծորեն զարմացավ Հովհաննան:

Հերովդիայի աչքերում վախ փայլատակեց: Իջեցնելով ձայնը, ասես վախենում էր, որ կարող են իրենց լսել, ասաց.

— Եթե գլուխը միացնեն մարմնին, ապա նա հարություն կառնի. չէ՞ որ նա սուրբ է:

Հովհաննային ցնցեց ոչ այնքան մարգարեի հարություն առնելու գաղափարը, որքան այն, որ իր սպանած մարգարեին նա սուրբ է համարում: «Մի՞թե, իմանալով այս մարդու սուրբ լինելու մասին, նա համարձակվել էր սպանել նրան».— սարսափով մտածեց Հովհաննան:

Հերովդիան, ասես կռահելով նրա մտքերը, ասաց.

— Ես մտածում էի, որ սուրբն ինձ համար սարսափելի է, քանի դեռ նա ողջ է, բայց հիմա հասկացա, որ մեռած նա ավելի սարսափելի է:

Հովհաննան այլևս չկարողացավ լսել ու սարսափահար հեռու փախավ նրանից: Աշակերտներին նա ասաց, որ Հերովդիան հրաժարվում է տալ Հովհաննես Մկրտիչի գլուխը: Բայց երբ հնարավորություն ստեղծվի, նա խոստացավ,

որ կթաղի մարգարեի գլուխը: Աշակերտները, վշտից ընկճված, լուռ գլխով արեցին Հովհաննային ու մարգարեի մարմինը վերցնելով՝ ճանապարհ ընկան, որպեսզի իրենց ուսուցչին հողին հանձնեն Սեբաստիայում, ուր չորրորդապետի իշխանությունը չէր տարածվում:

Շուտով Անտիպասն իմացավ, որ արաբների հիմնական զորքերը դուրս են եկել Պետրայից[1] ու իրենց ուժերը քաշում են դեպի Գամաղիտիդայի սահմանները: Անտիպասը նույնպես հրամայեց իր զորքերին շարժվել դեպի Գամաղիտիդա, որպեսզի վճռական ճակատամարտում: Բացի Գալիլիայից ու Բերեայից հավաքված զորքերից, նրան էին միացել նաև չորրորդապետ Փիլիպպոսի վարձկանների ջոկատները: Անտիպասը հույս ուներ այս ուժերով ջախջախել արաբներին: Անտիպասի զորքերը մարտի մեջ էին մտել, երբ դեռ չորրորդապետի ոչ բոլոր ուժերն էին մոտեցել ճակատամարտի տեղին: Նրանց հեռացրել էր արաբների հիմնական ուժերի կեղծ նահանջը: Տարվելով հետապնդումով, Անտիպասի հեծելազորը թակարդն էր ընկել: Հենց որ ձիերի լավան լցվել էր կիրճը, մինչ այդ թաքնված արաբական նետաձիգներն ասես սպանդանոցում անասուն էին

[1] Պետրա - արաբական պետության մայրաքաղաք:

ջարդում, սկսել էին թաքստոցներից նետահարել կուտակվող հեծելազորին: Արետասի մյուս ուժերը շրջանցել էին գալիլիացի նիզակակիրների հետևակային գնդերին՝ շնորհիվ Փիլիպոսի չորրորդապետության վարձկան ջոկատների, որոնք իրենց կողմն էին անցել: Շրջանցելով գալիլիացիներին՝ արաբներն այնպես անսպասելի էին հարվածել թիկունքից, որ զորքը, կորցնելով իր ողջ ռազմական ավյունը, փախել էր: Ժողովրդի մեջ կարծիք էր տարածվում, որ Անտիպասի պարտությունն Աստծո պատիժն էր Հովհաննես Մկրտիչի մահապատժի համար: Որպեսզի խուսափի Հռոմի հանդիմանություններից, Անտիպասը Արետասի դեմ բողոք գրեց Տիբերիոսին ու դադարեցրեց մարտական գործողությունները:

Անտիպասի ողջ արքունիքն անմիջապես տեղափոխվեց Երուսաղեմ, Ձիթենյաց լեռան պալատ: Հենց այդ ժամանակ Երուսաղեմում էր գտնվում նրա եղբայր Փիլիպոսը, Պանաիդայի ու Բատանեի չորրորդապետը, ու Անտիպասը, Հերովդիայի համոզելով, խնամախոսեց նրան իր խորթ աղջիկ Սաղոմեի համար:

Գալով Ձիթենյաց լեռան պալատ՝ Հերովդիան որոշեց թաքցնել Հովհաննես Մկրտիչի գլուխը: Նա այն փաթաթեց սփռոցի մեջ ու երբ եկավ

գիշերը, չվստահելով ծառաներից ոչ մեկին, ինքն ախոռների մոտ փոս փորեց ու այնտեղ էլ, ախոռներից այն կողմ, թաղեց սուրբ մարգարեի գլուխը: Այդ օրը Քուզան ուշ երեկոյան վերադառնում էր Գալիլիայից ու պատահմամբ տեսավ, թե ինչպես իր տիրուհին բոլորովին մենակ գնում է ախոռներից այն կողմ: Նրան ուժեղ հետաքրքրություն պատեց: Նա այդտեղ թաքնվեց ու տեսավ, թե ինչպես է Հերովդիան փաթաթած մի բան թաղում: Նա կռահեց, թե հատկապե՛ս ինչ է թաքցնում չորրորդապետի կինն ու խռովահույզ փախավ տուն: Նա այնպես էր հուզված, որ Հովհաննան սկսեց համառորեն հարցուփորձ անել հուզմունքի պատճառի մասին: Քուզան փորձեց լռել, բայց հետո, չհամբերելով, ամեն ինչ պատմեց կնոջը: Հովհաննան սարսափեց այն բանից, որ մարգարեի գլուխն այդպիսի անհամապատասխան տեղում է թաղված: Նա ոչինչ չասաց ամուսնուն, բայց հաջորդ օրը նախապատրաստեց մաքուր սավան ու լայն կավե անոթ: Հետո անոթով մյուռոն ու հում կավի մի կտոր վերցնելով՝ Հովհաննան գիշերն անցավ ախոռներից այն կողմ: Փխրեցված հողի թարմ հետքերով նա շուտով գտավ գլխի թաղման տեղը: Վախեցած մի պահ շուրջը նայեց, փորելով հանեց կապոցը, արձա-

կեց այն ու չկարողացավ զսպել արցունքները: Ողբալով մարգարեին, նա հանեց մյուռոնով անոթն ու թանկարժեք հեղուկը լցրեց Հովհաննես Մկրտիչի գլխին: Հետո փաթաթեց այն մաքուր, սպիտակ սավանի մեջ ու երկյուղածությամբ դրեց կավե անոթի մեջ: Անոթը կափարիչով ծածկեց, ճեղքերը փակեց հում կավով, տեղափոխեց այգի ու որքան հնարավոր է՝ խորը թաղեց ձիթենու տակ: Ամեն ինչ այդպես անելով՝ Հովհաննան վերադարձավ տուն, բայց անցած օրվա ապրումներից մինչև առավոտ չկարողացավ քնել:

ԳԼՈՒԽ 23

Ի՞սկ առավոտյան Հովհաննան չկարողացավ տեղից բարձրանալ: Ոտքերը կնոջը չէին ենթարկվում:

– Քեզ ի՞նչ է պատահել,– անհանգստացած հարցրեց ամուսինը:

Նա ոչինչ չկարողացավ պատասխանել, պառկել էր անտարբեր ամեն ինչին ու նաև իր վիճակին:

Երեք օր անց պալատում իրարանցում սկսվեց: Անհանգստությունից իր տեղը չգտնող Հերովդիան, այն բանից հետո, ինչ թաղել էր Հովհաննես Մկրտիչի գլուխը, վերջապես որոշել էր հանել մարգարեի գլուխն ու վառել: Միստիկական սարսափ պատեց չորրորդապետի կնոջը, երբ նա չգտավ Հովհաննեսի գլուխը: Չիմանալով ինչպես դա բացատրել, նա անմիջապես հանձնարարեց հավաքվել Տիբերիա գնալու համար: Բայց այնտեղ էլ անհանգստությունն ու տագնապը չէին լքում նրան:

Քուզան Հովհաննային էլ ուղարկեց Տիբերիա, հուսալով, որ Գալիլիայի թարմ օդը նրան օգտակար կլինի: Ինքը հարկադրված էր Երուսաղեմում մնալ: Տիբերիայում Հովհաննան չլավացավ: Նա այդպես էլ պառկած էր՝ համարյա ուտելիք չընդունելով: Աչքի առաջ հալվում էր: Բժիշկները տարակուսանքով միայն ձեռքերն էին տարածում ու կարծում էին, որ պիտի պատրաստվել մահվան: Հերովդիայի աղախինը լսել էր Նազարեթից Կափառնայումում ու նրա շրջակայքում հայտնված Մարգարեի հրաշագործ բուժումների մասին: Նա իշուկը լծեց սայլակին, այնտեղ ծղոտ լցրեց ու ծառաներին խնդրեց, որ օգնեն իրեն տիրուհուն տեղափոխելու: Վերակացուի կնոջն զգուշորեն պառկեցրին ծղոտին ու տարան Կափառնայում: Հովհաննան պառկել էր սայլակին ու անտարբեր հայացքով նայում էր գալիլիական անհուն երկնքի թափանցիկ լազուրին: Նրա հոգում այնպես դատարկ էր, ինչպես այդ երկնքում: Անիվների բաղի յուղով առատ յուղած թիակալները չէին ճռռում, միայն երբեմն սայլակն էր սկսվում ցնցվել, երբ անիվների տակ խոշոր քարեր էին ընկնում: Սայլակի հետ ցնցվում էր նաև Հովհաննայի անկամ մարմինը: Նրանց հարկ եղավ Կափառնայումից գնալ

Գեննեսարեթի լճի ափի երկայնքով, մինչև վերջապես հասան գառիթափ մի բլրի: Այն ամբողջովին ծածկված էր ժողովրդով: Ո՛վ կանգնել, ո՛վ պառկել էր դեռևին, ու բոլոր հայացքներն ուղղված էին դեպի գագաթին կանգնած Մարդը: Ինչ-որ մեկը շշնջաց Հովհաննային, որ դա Ինքը՝ Հիսուս Նազովրեցին է: Հիսուսը խոսում էր ու նրա խոսքերը երկյուղած լռության մեջ անարգել հասնում էին յուրաքանչյուրի լսողությանը:

– Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի Արքայությունը: Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի միխիթարվեն:

Այդ Մարդու խոսքերն, ասես անձրևի կենարար շիթերի նման ոռոգում էին Հովհաննայի արդարության հանդեպ հավատը կորցնելուց չորացած հոգին: Ու խանդաղատանքի արցունքները, հիվանդության երկար օրերից հետո առաջին անգամ, դուրս ցայտեցին կնոջ աչքերից: Ասածո Արքայությունն հռչակող Շնորհալի Մունետիկը խոսում էր հեզերի, արդարության ծարավիների, ողորմածների, սրտով մաքուրների, հալածվածների մասին, ու Նրա ամեն մի խոսքը բուժիչ բալասան էր Հովհաննայի սրտին: Նրան թվում էր, որ ամեն ինչ հատկապես իր համար է ասված, որ այդ ամենը

միայն իր համար էր: Նա դա զգաց ամբողջ հոգով, չկասկածելով էլ, որ հենց այդպես էլ մտածում են Քրիստոսին մյուս լսողները:

Բայց ահա Հիսուսն ավարտեց խոսքն ու մարդկանց աղմուկից ու շարժումից Հովհաննան հասկացավ, որ Նա գալիս է: Ահա Նա անցնում է իր կողքով. «Մի՞թե նա ինձ չի նկատելու: Մի՞թե կողքովս կանցնի»,– անհանգստացավ Հովհաննան: Ոչ: Նա կանգ է առնում ու մեկնում է իր ձեռքը: Նա լուռ հպվում է կնոջ գլխին, ու նա նույնիսկ ծածկոցի տակից զգում է Նրա ձեռքերի անսովոր տաքությունը: Այդ տաքությունը թափանցում է նրա ողջ էությունը: Հովհաննան հանգստություն է զգում, թեթևություն ու անանց ուրախություն: Նա շարունակում է դնալ, բայց ինքը դեռ զգում է Նրա ձեռքերի բարեշնորհ տաքությունը: Հովհաննան փակում է աչքերն ու քնում: Հիվանդության վերջին օրերին առաջին անգամ նա քնում է այնպես թեթև, ինչպես քնել էր միայն մոր ձեռքերին, երբ դեռ մանուկ էր:

Երազում Հովհաննան ճախրում էր: Ճախրում էր ազատ ու թեթև այն նույն երկնային լազուրում, որին, դեռ ոչ շատ առաջ, հիվանդության մահիճից նայում էր անտարբեր: Նա ճախրում է ու բյուրին տեսնում Նրան՝ շրջապատված ժողովրդի բազմությամբ: Այդ պահին նա երկնքից գետին է նետվում ու արթնանում: Ճախրանքի այդ ընդհատումը թախիծ չի բերում, ինչպես մի ժամանակ, մանկության տարիներին: Հովհաննան հիմա հասկանում է, ուր Հիսուսն է, այնտեղ էլ երկինքն է: Արթնացումը թեթև էր, ինչպիսին ինքը՝ երազը: Իր գլխավերևում նա տեսավ մի շատ գեղեցիկ, երիտասարդ կնոջ հակված դեմքը: Կինն իրեն սիրալիորեն ժպտում էր ու այնպես պարզ ասաց, կարծես իրենք ամբողջ կյանքում ծանոթ էին.

– Ողջունում եմ քեզ, Հովնաննա: Ես Մարիամ Մագդաղենացին եմ:

Հովհաննան շուրջը նայեց ու տեսավ, որ ինչ-որ տան մեջ է: Կինը կրակի մոտ ապուր է պատրաստում:

– Որտե՞ղ է Նա, որպեսզի բուժվելու համար իմ շնորհակալությունը հայտնեմ,– փորձելով թաքցնել հուզմունքը՝ հարցրեց Հովհաննան:

– Դու դա չես հասցնի անել, Հովհաննա: Ուսուցիչը հիմա Հովնանի որդու՝ Սիմոնի տանն է: Հիսուս Նազովրեցին միայն քեզ չի բուժել: Ահա Շուշանը,– նա ցույց տվեց կրակի մոտ հոգացող կնոջը,– նրան նույնպես Ուսուցիչն է բուժել:

Հովհաննային ապուր տվեցին, ու նա սկսեց

ախորժակով ուտել: Իսկ այդ միջոցին Մարիամ Մագդաղենացին շարունակեց իր պատմությունը:

— Հորս զոհվելուց հետո ես տառապում էի սարսափելի հիվանդությամբ: Այնպես էի տառապում, որ չէի ցանկանում ապրել: Բայց Հիսուսը բուժեց ինձ, ու այժմ իմ կյանքը Նրան է պատկանում: Մենք, նրա բուժած կանայք, գնում ենք մեր Ուսուցչի հետևից ու ծառայում ենք Նրան ինչով որ կարողանում ենք: Հաղուստ ու կոշիկ ենք գնում Նրա աշակերտների համար, մթերք ենք ձեռք բերում ու կերակուր պատրաստում: Տասներկուսը մշտապես գնում են Հիսուսի հետ: Նրանցից ոմանք նախկինում եղել են սրբապիղծ Հերովդես Անտիպաս թագավորից մահապատժի ենթարկված Հովհաննես Մկրտիչի աշակերտները:

— Ես ճանաչում էի Հովհաննես մարգարեին,— չդիմանալով՝ բացականչեց Հովհաննան:

Կանայք սկսեցին հարցուփորձ անել Մկրտիչի մասին, ու Հովհաննան ամեն ինչ պատմեց: Իսկ հետո սրտի նվաղումով հարցրեց.

— Իսկ կարելի՞ է ես էլ գամ ձեզ հետ:

— Արի՛,— ուղղակի պատասխանեց Մարիամ Մագդաղենացին: Հովհաննան երախտագիտության պոռթկումով համբուրեց Մարիամի ձեռքը, իսկ նա քնքշորեն գրկելով՝ ասաց.

— Հիմա քեզ համար նոր կյանք կգա: Մեզ հետ նաև Ուսուցչի ազգականուհիներից են գալիս: Դու վաղը նրանց հետ կծանոթանաս: Դրանք հրաշալի կանայք են. Սաղոմեն՝ Զեբեդեոսի կինը, նրա երկու որդիները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, որ Հիսուսի աշակերտներն են, Մարիամը՝ Կղեովպասի կինը: Բայց մեր՝ կանանց մեջ, ամենահիանալին Հիսուսի Մայրն է, Նազարեթից Մարիամը:

— Այո, այո,— անմիջապես շարունակեց Շուշանը,— Նրանից սիրո ու հանգստության այնպիսի բարեշնորհ զգացողություն է ճառագում, որ երբեմն թվում է, թե այդ սերը ողջ աշխարհին կհերիքի:

Շուտով Հովհաննան իմացավ, որ Անտիպասն իր ամուսին Քուզային ինչ որ գործերով ուղարկել է Հռոմ: Դա նրան նույնիսկ ուրախացրեց: Այժմ նա ազատ կարող էր մնալ իր Ուսուցչի կողքին: Հովհաննան մի անգամ էլ եղավ Տիբերյան պալատում, որպեսզի վերցնի իր արծաթն ու, Մարիամի ու Շուշանի նման, իր ունեցվածքով ծառայի Հիսուս Նազովրեցուն:

ԳԼՈՒԽ 24

Ղազարոսի՝ ձիթենու ստվերոտ այգով շրջապատված տունը գտնվում էր Ձիթենյաց լեռան հարավ-արևելյան լանջին, Բեթանիա ոչ մեծ բնակավայրում: Տան կողքով անցնում էր Երուսաղեմից դեպի Երիքով գնացող ճանապարհը: Ծնողներից ժառանգածով ոչ վատ կարողություն ունեցող Ղազարոսը շատ էր օգնում աղքատ մարդկանց ու նրա տունն ամենահյուրընկալն էր ողջ շրջանում: Ղազարոսը սիրում էր իր մոտ հյուրընկալվող մարդկանց հետ խոսել Աստծո, մարդու համար Աստծո նախանշած ուղիների մասին: Իմանալով Ղազարոսի բարեպաշտությունը՝ հաճախ նրա տանը դպիրներ ու բաբբիներ էին կանգ առնում: Նա նրանց հարցեր էր տալիս, թե ինչպիսի գործերն են հաճո Աստծուն, ինչպես պիտի ապրել՝ պահպանելով Նրա օրենքները: Դպիրները դատողություններ էին անում, վիճում իրար հետ, բայց այդ գիտուն մարդկանց դատողություններում ինչ-որ բան միշտ պակասում էր: Նրանց

վեճերը հիմնականում պտտվում էին այն բանի շուրջ, թե ինչպես ճշգրիտ կատարել օրենքի բոլոր գրավոր կարգադրությունները: Մի անգամ նրանք լրջորեն դատողություններ էին անում, թե կարելի՞ է արդյոք ուտել շաբաթ օրը հավի ածած ձուն, ճանապարհի քանի՞ փուլ կարելի է անցնել շաբաթ օրով: Դրա համար, երբ Ղազարոսը գալիլիացի մի Ուսուցչից լսեց, որ «ոչ թե մարդն է շաբաթվա համար, այլ շաբաթը մարդու», նա զարմացել էլ իր հոգևոր պահանջմունքներին համապատասխանող այդ մտքի պարզությունից: Նա սկսեց Ուսուցչին խնդրել զրուցելու համար գալ իր տուն: Լավ էր. Երուսաղեմից մինչև Բեթանիա ճանապարհը շատ չէր: Հիսուսը, այդպես էին անվանում Ուսուցչին, եկավ իր մի քանի աշակերտներով: Սեղանին, որ Ղազարոսը գցել էր Նազովրեցի Հիսուսի պատվին, տան տերը ոչինչ չէր կարողանում ուտել, լսում էր ու լսում այդ ճիշտ որ ոչ սովորական Ուսուցչին: Հիսուսը խոսում էր ոչ դպիրների ու փարիսեցիների պես, այլ ինչպես Աստծո ճանապարհի գաղտնիքներից խոսելու իշխանություն ունեցող: Հիսուսին նա ուզում էր լսել անվերջ: Եվ ոչ միայն լսել, այլև անել այն, ինչ սովորեցնում էր Գալիլիացին: Ղազարոսի հետ ապրում էին նրա երկու հարազատ

քույրերը՝ Մարթան ու Մարիամը: Նրանք, որ հյուրերի այցերին սովորաբար դցում էին սեղանն ու հետո դպիրների վեճերին անտարբեր՝ անմիջապես հեռանում, այժմ չէին կարողանում հեռանալ սեղանից՝ ջանալով որսալ Ուսուցչի ամեն խոսքը: Ղազարոսին հարկ էր լինում նշաններով քույրերին հիշեցնել հյուրերին սպասարկելու իրենց պարտականությունների մասին:

Այդ առաջին հանդիպումից հետո Հիսուսն, ամեն անգամ, երբ լինում էր Երուսաղեմում, սկսեց այցելել Ղազարոսի տուն: Ղազարոսը նկատեց, որ գալիլիացի Ուսուցչին էլ է դուր գալիս իրենց մոտ լինելը: Այժմ, երբ Հիսուսը գալիս էր, Ղազարոսի տանը տոն էր լինում: Ուսուցիչը նրան իր ընկերն էր անվանում, որն անասելի ուրախացնում էր տան տիրոջը:

Աշուն եկավ: Մոտենում էր Տաղավարահարաց տոնը, հրեական ամենաուրախ տոներից մեկը: Բայց Ղազարոսի տանը ուրախություն չէր զգացվում: Ահա արդեն կես տարուց ավելի Ուսուցիչը չէր եղել Երուսաղեմում ու չէր այցելել Բեթանիա: Քույրերը շատ տխուր էին, իսկ Ղազարոսն իր տեղը չէր գտնում. «Բան պատահած չլինի՞ Հիսուսին»,– որերորդ անգամ տագնապած հարցնում էր ինքն իրեն Ղազարոսը:

Մի անգամ, երբ Ղազարոսն իր քույր Մարիամի հետ տանը նստած զրուցում էր Ուսուցչի մասին, բակից ներս վազեց Մարթան: Նրան ճանաչել չէր լինի: Դեմքն այնպիսի անկեղծ երջանկությամբ էր փայլում, որ բոլորին պարզ դարձավ պատճառը: Մարիամը հուզմունքից երկու ձեռքը կրծքին սեղմած՝ լուռ սպասում էր, թե քույրը երբ կհայտնի Ուսուցչի գալստյան մասին: Իսկ եղբայրը հուզմունքից միայն հոգոց էր հանում.

– Գալի՞ս է:

– Այո՛, այո՛,– աղջնակի պես թռչկոտեց Մարթան ու նեավեց գրկելու քրոջը, – հենց նոր Զեբեդեոսի որդի Հովհաննեսից լուրն առա: Նա առաջ է անցել Ուսուցչից ու հիմա իր տանն է, Երուսաղեմում, Իսկ Հիսուսը գալիս է ուղիղ մեզ մոտ: Լսո՞ւմ եք: Մեզ մո՛տ:

Բոլորը տնից դուրս վազեցին, որ դեռ ճանապարհին դիմավորեն սիրելի Ուսուցչին: Հիսուսը գալիս էր մի քիչ կորացած ու հոգնած քայլվածքով: Հագուստը ճանապարհին փոշոտվել էր: Նրան մի քանի աշակերտ էր ուղեկցում, մյուսները մնացել էին Երուսաղեմում: Երբ Հիսուսը տանտերերի ուրախ բացականչությունների տակ մտավ տուն, Մարթան անմիջապես

կավե մեծ թաս ու ջրով լիքը սափոր բերեց նրա ոտքերը լվանալու համար:

Ոտքերը լվանալուց հետո Ուսուցչին հանդստանալու համար տարան նրան հատկացված ննջարանը, իսկ Ղազարոսը գնաց ընկերներին հրավիրելու ընթրիքի: Նա շատ էր ուզում, որ ոչ միայն ինքը, այլ ինչքան հնարավոր է՝ շատ մարդ լսի Ուսուցչի խոսքերը: Քույրերն սկսեցին հոգալ տնտեսության մասին, նրանց գլխավոր հոգսն էր՝ որքան հնարավոր է լավ հյուրասիրել այդպիսի թանկագին հյուրին: Շուտով Ուսուցիչը, փոխված թարմ հագուստով, եկավ այգի ու նստեց նստարանին: Մարիամն անմիջապես նստեց նրա ոտքերի տակ: Նա Ուսուցչին ինչ որ հարց տվեց: Նա նրան պատասխանում էր, իսկ Մարիամը սրտի նվաղումով լսում էր Նրա խրատները: Մարթան, որ տնային գործերով էր զբաղված, միայն ընդհատումներով էր լսում, թե ինչպես էր Հիսուսն ասում.

— Երկնքում ավելի շատ ուրախություն կլինի մեկ ապաշխարող մեղավորի համար, քան իննսունինն արդարների, որոնց ապաշխարություն պետք չէ:

— Ինչպե՞ս թե,— տարակուսում էր Մարիամը,— ինչո՞ւ երկնքում իննսունինը արդարների համար ավելի քիչ կուրախանան, քան՝ մի ապաշխարող մեղավորի:

Հիսուսը շարունակում էր.

— Ո՞ր կինը, ունենալով տասը դրամ, եթե կորցնի մեկ դրամը, ճրագ չի վառի և չի ավլի սենյակը փութով և չի փնտրի, մինչև որ գտնի, իսկ գտնելիս չի կանչի իր բարեկամներին ու հարևաններին ու չի ասի «ուրախացեք ինձ հետ, ես գտա կորցրածս դրամը»:

«Ի՜նչ երջանիկ է Մարիամը, որ կարող է նստել ու լսել Ուսուցչին,— ակամա քրոջը նախանձելով՝ ինքն իրեն մտածեց Մարթան:— Բայց եթե ես էլ նստեմ, ո՞վ պիտի հյուրասիրությամբ զբաղվի»:

Մարթան շարունակում էր հոգալ տնային գործերն ու արդեն նեղանում էր քրոջից, որ նա իրեն չի օգնում: «Մի՞թե Ուսուցիչը չի նկատում, որ քույրս ինձ մենակ է թողել»,— վրդովված մտածում էր Մարթան ու, վերջապես չհամբերելով, հանդիմանանքով դիմեց Ուսուցչին.

— Տե՛ր, մի՞թե քեզ փույթ չէ, որ քույրս ինձ մենակ է թողել գործի մեջ, ասա՛ դրան, որ օգնի ինձ:

Հիսուսը նրան ասաց.

— Մարթա՛, Մարթա՛, դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված, բայց այստեղ մեկ

բան է պետք. Մարիամը ընտրել է լավ մասը, որը նրանից չպիտի վերցվի:

Այդտեղ Մարթան հասկացավ, որ Ուսուցչի համար կարևոր է ոչ թե այն, ինչ Նրան տալիս են, այլ այն, ինչ Նրանից ստանում են: Երկրային հաց է պետք մարդուն, բայց «միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»[1]:

Այդպես մտածելով ու ամաչելով՝ Մարթան որոշեց այլևս երբեք չտրտնջալ քրոջից: Երկու օր Ղազարոսի տանը մնալով՝ Հիսուսը գնաց Երուսաղեմ, Տաղավարահարաց տոնին, որից հետո նորից ճանապարհվեց դեպի Գալիլիա:

[1] Մատթ. Դ, 4:

ԳԼՈՒԽ 25

Զմեռ եկավ: Հիսուսը նորից Երուսաղեմ գնաց, այս անգամ արդեն՝ տաճարի նավակատիքի տոնին: Այդ օրը Իսրայելի ժողովուրդը հիշում է Հուդա Մակաբայեցու կողմից տաճարի վերաշինության իրադարձությունը, որը սարսափելիորեն պղծել էր Ասորիքի թագավոր Անտիոքոս Եպիփանեսը: Այդ տոնին Երուսաղեմում միշտ շատ ժողովուրդ է հավաքվում:

Հիսուսը նորից հյուր գնաց Ղազարոսին: Մարթան ու Մարիամը նորից վայելում էին սիրելի Ուսուցչի ներկայությունը: Մի քանի օր իր ընկերների մոտ հյուրընկալվելով՝ Հիսուսը գնաց Երուսաղեմ: Շուտով Ղազարոսին ու քույրերին անհանգստացնող լուրեր հասան, որ Նավակատիքի տոնին Ուսուցիչը ժողովրդի մեջ սկսել է խոսել Իր մասին իբրև Մեսիայի (Քրիստոսի), որի համար փարիսեցիներն ու օրենսգետները ցանկացել են Նրան քարկոծել: Նրանք Հիսուսին մեղադրել են Աստծուն անարգելու

համար և նույնիսկ փորձել են բռնել Ուսուցչին, բայց չեն կարողացել: Նրա տեսքից շփոթված՝ նրանք Հիսուսին ճանապարհ են տվել ու ատելությունից կարմրատակած դեմքերով նայել, թե ինչպես է հեռանում:

Ղազարոսն ու իր քույրերը շատ անհանգստացան Ուսուցչի համար, բայց շուտով թեթևություն զգալով իմացան, որ Հիսուսն անցել է Հորդանանից այն կողմ՝ Բերեա:

— Ուսուցիչն այժմ անվտանգ տեղ է,— ուրախությամբ ասում էր Մարթան,— ահա ամեն ինչ կհանգարտվի, ու մենք նորից կտեսնենք Նրան:

Գարնան գալու հետ Ղազարոսն անսպասելի հիվանդացավ: Քույրերը հոգատարությամբ խնամում էին նրան: Բայց Ղազարոսի վիճակը չէր լավանում: Ծանր տառապելով՝ Ղազարոսն այնուամենայնիվ փորձում էր քույրերին հանգստացնել, ասելով, որ մինչև Զատիկն անպայման կլավանա, չէ՞ որ Ուսուցիչը խոստացել է տոնին այցելել: Բայց օր—օրի եղբոր վիճակն ավելի ու ավելի էր վատանում: Քույրերը հալումաշ էին լինում ապրումներից՝ տեսնելով թե ինչպես է իրենց սիրելի եղբայրն աչքի առաջ բառացիորեն հալվում:

— Միայն Ուսուցիչը կարող է օգնել մեր եղբորը,— հուսահատ բացագանչեց Մարիամը:

— Դու ճիշտ ես, քույր,— արձագանքեց Մարթան,— ես էլ եմ հավատում, որ միայն Հիսուսը կարող է բուժում բերել մեր եղբորը:

Քույրերը որոշեցին Հիսուսին իմացնել իրենց եղբոր հիվանդության մասին: Ծառա ուղարկեցին Բերեա: Նա Հիսուսին գտավ Հուդայի սահմանի մոտ ու ասաց Նրան.

— Տե՛ր, ահավասիկ նա, ում Դու սիրում էիր, հիվանդացել է:

— Այդ հիվանդությունը՝ մահվան չէ, Աստծո փառքի համար է,— ասաց Հիսուսն ու փոքր ինչ լռելով՝ ավելացրեց,— որպեսզի դրանով Աստծո Որդին փառավորվի:

Բոլորը մտածում էին, որ Ուսուցիչն անմիջապես կմեկնի Բեթանիա, բայց Նա էլի երկու օր մնաց Բերեայում:

Այդ ընթացքում, երբ ծառան դեռ Բերեայի ճանապարհին էր, Ղազարոսն ավելի վատացավ: Նա զգաց, որ մեռնում է ու կանչեց քույրերին.

— Իմ սիրելի քույրե՛ր, Մարթա՛, Մարիա՛մ,— ասաց նա նրանց,— ես մեռնում եմ, այդպես էլ չտեսնելով իմ Ուսուցչին: Բայց մեռնում եմ այն Երկնքի Թագավորության հավատով, որի մասին Նա միշտ ասում էր մեզ: Միակ բանը, որ վշտացնում է իմ հոգին, այն է, որ դուք մենակ կմնաք ու ձեզ համար հոգացող չի լինի:

Այս խոսքերի վրա քույրերը դառն արտասվեցին: Երեկոյան կողմ Ղազարոսը խաղաղ վախճանվեց: Հաջորդ օրը թաղման սգո թափորը շարժվեց դեպի գերեզմանի քարայրը, որն իր համար նախօրոք պատրաստել էր Ղազարոսը: Ողջ Բեթանիան էր գնում հանգուցյալի աճյունի հետևից: Երուսաղեմից ու Երիքովից Ղազարոսին ճանաչող շատ հրեաներ էին եկել: Բոլորը սիրում էին ամեն մարդու հոգին ուշադիր այդ ուրախ ու հյուրասեր տանտիրոջը: Մարդիկ անկեղծորեն ողբում էին Ղազարոսի համար ու կարեկցում նրա վշտահար քույրերին:

Այդ ժամանակ Հիսուսը հայտնեց, որ պատրաստվում է Բեթանիա գնալ: Աշակերտները փորձեցին Ուսուցչին հետ պահել այդքան վտանգավոր ձեռնարկից.

— Ռաբբի, հրեաները բոլորովին վերջերս ուզում էին քարկոծել Քեզ, և հիմա Դու նորի՞ց ես գնում այնտեղ:

Բայց երբ առաքյալները Փրկիչի խոսքերից հասկացան, որ Ղազարոսը մեռել է, նրանք համարձակություն առան, իսկ Թովմաս առաքյալը բացականչեց.

— Եկեք մենք էլ գնանք ու նրա հետ մեռնենք:

Գենեսարեթի լիճը

Գալիլեա. տեսքը Կափառնաումից

Հերովդես Ա-ի մուտքը գրված Երուսաղեմ
(Ժան Ֆուկե, մանրանկար, XV դար)

Հերովդես Ա-ի ժամանակ գործածվող պրնձեդրամներ

Հռոմեական կայսրությունում գործածվող պրնձեդրամներ (I դար)

Կույս Մարիամի և Հովսեփի
Նշանադրությունը (Ռաֆայել, XVI դ.)

Երուսաղեմի մանրակերտը



Հերովդեսի պալատը

Քրիստոսի Ծնունդը և մոգերի երկրպագությունը

Երուսաղեմ (լուսանկար, 1898 թ.)

Երուսաղեմի տաճարը

Երուսաղեմի պարիսպներն այսօր

Դավիթ թագավորի աշտարակը

Մանուկների կոտորածը (Մատթեոս դի Ջիովանի, XV դ.)



Մանուկների կոտորածը (Ֆ. Ժ. Նավեզ, 1824 թ.)



Մարիամնան և Հերովդեսը
(Ռուտերիանաս Ջ. Ռև., 1887 թ.)

Տիբերիոս կայսր



Օկտավիանոս Օգոստոս կայսր



Հին Հռոմ

Հռոմի 1000-ամյակին նվիրված դրամ
Փիլիպպոս Արաբացու պատկերով

Հռոմն այսօր

Բեթղեհեմ (1898)

Բեթղեհեմ (Նկ. Պոլենով Վ. Դ., 1882)

Ծննդյան տոնին ուխտավորները մտնում էին Բեթղեհեմ (1890)

Բեթղեհեմ, Ծննդյան մսուրը

Բեթղեհեմ, ձախ կողմում երևում է Ծննդյան եկեղեցին



Քրիստոսի Ծնունդը

Երբ Հիսուսն Իր աշակերտների հետ մոտենում էր Բեթանիային, բնակավայրի մոտ, խոր ափսոսանքի խոսքերով, Մարթան դիմավորեց նրանց:

— Տե՛ր, եթե Դու այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի:

— Քո եղբայրը հարություն կառնի,— ասաց նրան Հիսուսը:

— Գիտեմ,— պատասխանեց Մարթան,— որ հարության ժամանակ՝ վերջին օրը հարություն կառնի:

— Ես իսկ եմ հարությունն ու կյանքը,— ասաց Ուսուցիչը,— ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի՛: Հավատո՞ւմ ես այս բանին:

— Այո, Տեր, հավատում եմ, որ Դու ես Քրիստոսը, Աստծո Որդին, որ աշխարհ էիր գալու:

Մարթան հիշեց, թե Ուսուցիչն ինչպես Երուսաղեմում, Տաղավարահարաց տոնին Իրեն Մեսիա հռչակեց ու հիմա, երբ ակամա խոստովանեց, որ Հիսուսն Աստծո որդի է, նրա մեջ հանկարծ աղոտ հույս ծագեց: Նա դեռ չգիտեր, թե մտքովն ինչ անցավ, բայց հոգով զգաց, որ Ուսուցիչը մահի վրա էլ իշխանություն ունի:

Այդ ժամանակ Մարիամը նստած էր տանը, իր վիշտը մխիթարող ազգականներով ու հարևաններով շրջապատված: Մարթան մոտեցավ

նրան ու մեմ չշնչաց.

— Ուսուցիչն այստեղ է ու կանչում է քեզ:

Մարիամը վեր կացավ ու շտապ դուրս եկավ տնից: Նրան հետևեցին մյուսները, մտածելով, որ նա գնաց գերեզմանի վրա լացելու: Նրանք նրան գտան Հիսուսի ոտքի տակ հեկեկալիս ու նույն խոսքերը, որ ասել էր Մարթան՝ կրկնելիս.

— Տե՛ր, եթե Դու այստեղ լինիր, իմ եղբայրը չէր մեռնի:

Այդ վիշտը խորապես ցնցեց Փրկիչին, Նրա աչքերը խոնավացան:

— Տեսեք, թե ինչպես էր սիրում նրան,— Հիսուսի աչքերում արցունք տեսնելով՝ ասում էին բոլորը:

— Ո՞ւր դրիք նրան:

— Տե՛ր, արի՛ ու տե՛ս,— պատասխանեցին արտասվող քույրերը:

Շուտով նրանք հասան գերեզման, որն, ըստ հրեական ավանդույթի, մուտքը քարով փակված մի ոչ մեծ քարայր էր: Չորս օր էր անցել, ինչ Ղազարոսի մարմինը դրել էին այնտեղ: Հիսուսը հանձնարարեց քարը վերցնել գերեզմանից:

Մարթան երկչոտությամբ տրտնջաց, ասելով, որ դիակը, հավանաբար, արդեն սկսել է քայքայվել: Դրան Հիսուսն ասաց.

— Քեզ չասացի՞, եթե հավատաս, կտեսնես Աստծո փառքը:

Երբ քարը վերցրին՝ Փրկիչն աչքերը դեպի երկինք բարձրացնելով սկսեց աղոթել.

— Հա՛յր, գոհություն եմ տալիս Քեզ, որ լսեցիր Ինձ: Ես գիտեի, որ Դու ամեն ժամ լսում ես Ինձ, բայց այս անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի համար, որպեսզի հավատան, որ Դո՛ւ Ինձ ուղարկեցիր:

Վերջացնելով աղոթքը՝ Տերն ուժգին բացականչեց.

— Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս արի:

Երբ քարայրի խորքում թաղման պատանքով փաթաթված հայտնվեց մեռածը՝ ամբոխին սարսափից սարսուռ պատեց:

— Արձակեցեք դրան և թողեք, որ գնա — հանձնարարեց Հիսուսը չտեսնված հրաշքի ցնցված ականատեսներին:

Հիսուսի նոր, մեծագույն հրաշքի լուրերը չափազանց շփոթեցրին ու հուզեցին ատյանի անդամներին: Խորհրդակցելով՝ նրանք որոշում ընդունեցին գալիլիացի Քարոզիչի ձերբակալության մասին: Բայց Հիսուսը չգնաց Երուսաղեմ, այլ աշակերտների հետ Հորդանանից անցավ Եփրայիմ քաղաքը:

Գ-ԼՈՒԽ 26

Ատենում էր Զատիկի տոնը, ու տարբեր տեղերից դեպի Երուսաղեմ ձգվեցին ուխտավորների խմբերը: Հիսուս Քրիստոսն իր աշակերտների հետ դուրս եկավ Եփրայիմից ու ուղևորվեց Երուսաղեմ: Այդ ողջ ընթացքում Քրիստոսի հետ եղած կանայք նույնպես ուրախությամբ հետևեցին Նրան դեպի մեծ տոնը: Թվում էր, թե միայն Սաղոմեն չի բաժանում համընդհանուր ուրախությունը: Ինչ-որ մշուշոտ կանխազգացում կնոջը հանգիստ չէր տալիս: Վերջին դեպքերը նրան մոտեցող դժբախտության նախանշանակն էին թվում: «Բայց ի՞նչ կարող է պատահել,– մտորում էր կինը,– չէ՞ որ Հիսուսն իսկական Մեսիա է: Ինչո՞ւ է նա խոսում այն մասին, որ Երուսաղեմում թշնամիներն իրեն պիտի բռնեն ու մահվան դատապարտեն: Կարո՞ղ է այդպիսի բան պատահել մարգարեների խոստացած Մեսիայի - Քրիստոսի հետ»: Նա հիշեց, թե ինչպես երեք տարի առաջ իր երկու որդիները տուն եկան ու հիացմունքով պատմեցին, որ հանդիպել են արտասովոր Ուսուցչի, որին ինքը՝ Հովհաննես Մկրտիչն է ցույց տվել իբրև Մեսիայի, և Սաղոմեն, չգիտես ինչու, անմիջապես հավատացել էր իր որդիներին: Նրա երկրորդ որդին՝ Հովհաննեսը, ծնվել էր, երբ Սաղոմեն ու Զեբեդեոսն արդեն ամեն հույսը կորցրել էին, թե նորից երեխա կունենան, քանի որ առաջնեկի՝ Հակոբոսի ծնվելուց հետո անցել էր տասնվեց տարի: Եվ ահա Տերը նրանց նկատմամբ նորից գթասիրտ եղավ: Հովհաննեսը գիտություններ ուսումնասիրելու առանձնահատուկ օժտվածություն ուներ, ու թեև վաղ մանկական տարիքից հոր ու ավագ եղբոր հետ ձկնորսության էր գնում, բայց մնացած ազատ ժամանակը գերադասում էր անցկացնել Օրենքն ու մարգարեներին կարդալով: Տասնհինգ տարեկանում նա Գիրքը գիտեր Կափառնայումի ժողովարանի պետից ոչ վատ: Սաղոմեն ամեն ինչ անում էր որդու համար ու արժանիորեն հպարտանում էր նրանով: Ամուսինը հոռետեսորեն ընդունեց որդիների բերած լուրն Ուսուցչի մասին, որին նրանք արժանացել էին:

– Կարո՞ղ է արդյոք Նազարեթից մարգարե լինել: Նա իմ աներոջ՝ հյուսն Հովսեփի որդին է,– Զեբեդեոսին զայրացնում էր, ինչպես իրեն

թվում էր, իր զավակների հիմարությունը: Երբ անհաջող գիշերային որսից վերադառնալով որդիները համոզում էին նորից գնալ լճի խորքը և ուռկանները գցել, քանի որ այդ մասին ասել էր Ուսուցիչը, նա հաճույքով համաձայնվեց կատարել նրանց խնդրանքը. «Լույսը բացվել է, էլ ի՞նչ որս,– միտք էր անում Զեբեդեոսը,– բայց թող երեխաները համոզվեն, որ այդ Հիսուսն առհասարակ մարգարե չէ»: Այնինչ, երբ չտեսնված որսից ծանրացած ուռկանները հազիվ բարձրացրին, Զեբեդեոսը շփոթվեց, բայց կամակորությունը նրան թույլ չէր տալիս Հիսուսին մարգարե համարել:

– Սա ուղղակի պատահականություն է,– ափ դուրս գալով ասում էր նա:

Հակոբոսն ու Հովհաննեսը հայտարարեցին, որ լքում են ընտանեկան օջախն ու գնում են Հիսուս Նազովրեցու, իրենց Ուսուցչի հետևից: Զեբեդեոսը դրանից ծայրաստիճան զայրացավ: Ամեն ինչում նա մեղադրում էր Սաղոմեին, որն, իր խոսքերով ասած, այն էր անում միայն, որ մշտապես Մեսիայի մասին ամենատարբեր պատմություններ էր լցնում զավակների գլուխները:

– Ես էլ եմ հավատում, որ Հիսուսին Աստված է ուղարկել,– ի պատասխան նրա հանդիմանանքին՝ պատասխանեց կինը:

– Այդ դեպքում գնա՛ նրանց հետևից,– զայրույթով գոռաց Զեբեդեոսը:

Նա կարծում էր, թե կինը խելքի կգա, կզղջա ու հենց ինքը կսկսի համոզել զավակներին, թողնել Հիսուսին, չէ՞ որ նրա խոսքը նրանց համար շատ էր ազդեցիկ: Բայց, ի զարմանս Զեբեդեոսի, Սաղոմեն հավաքվեց ու գնաց: Քանի որ նրա զավակները Քրիստոսին ընդունել էին որպես մարգարեներից խոստացված Մեսիա, ինքը նույնպես, առանց տատանվելու, հաստատապես հավատաց, որ Ուսուցիչը իսկական Մեսիան է: Ինչ որ տեղ, հոգու խորքում, Սաղոմեն դիտակցում էր, որ Հիսուսին հետևում է նաև նրա համար, որ իր երեխաների կողքին լինի, էլ չասած, որ երեխաներին դաստիարակելիս հեշտ չէր զսպել նրանց բուռն բնավորությունը, բայց, դրսևորելով իր մայրական սերն ու անդադրում հոգատարությունը, դրանով նրանց սրտերի կրակն ուղղում էր դեպի սերը: Այդ զգացումը Հակոբոսի ու Հովհաննեսի մեջ փոխվում էր և հաճախ Աստծո հանդեպ խանդավառ սերը դառնում էր չարի հանդեպ բոցավառ ատելություն:

Մայրական սերը միշտ էլ ինչ որ չափով տուժում է կուրությունից, և Սաղոմեն էլ բացառություն չէր: Այն, որ Հիսուսն իր զավակներին

հատուկ առանձնացնում էր մյուս աշակերտներից՝ շոյում էր նրա մայրական զգացմունքը: Նույնիսկ այն, որ Ուսուցիչը նրանց անվանում է Բաներեգես, այսինքն՝ «որոտման որդիներ», նրան դուր էր գալիս, թեև մի անգամ չէ, որ Հիսուսին հարկ էր լինում զսպել նրանց ավելորդ տաքարյունությունը:

Իսկ այժմ, երբ Երուսաղեմի ճանապարհին Հիսուսը բացեիբաց ասաց իր աշակերտներին, թե այնտեղ Իրեն մահվան դատավճիռ է սպասում, Սաղոմեն զգույշ ունկնդրում էր այդ մարգարեություններն ու չգիտակցված տագնապն ավելի ու ավելի էր թափանցում նրա հոգին: Բայց աշակերտների մտքերը՝ բռնված երկրային մեսիական ձգտումներով, Քրիստոսին յուրովի էին հասկանում: Ուսուցչի ճառերում նրանք ավելի ուշադրություն էին դարձնում Նրա հարության մարգարեություններին: Այդ մարգարեության մեջ նրանք տեսնում էին մեսիական թագավորության շուտափույթ հաստատման գուշակումը: Հուզմունքը, որ տիրել էր գալիք մեծ իրադարձությունների սպասող աշակերտներին, հարկադրում էր նրանց մտածել Քրիստոսի ապագա թագավորության մեջ իրենց ճակատագրի մասին: Զավակների այդ մտքերն ու հույսերն անցնում էին նաև Սաղոմեին: Նա

արդեն սկսել էր անհանգստանալ, որ չլինի թե, երբ Հիսուս Քրիստոսն Իր թագավորությունը հաստատի, մյուս աշակերտները չրջանցեն Հակոբոսին ու Հովհաննեսին: Սաղոմեի աչքին դա մեծ անարդարություն կլիներ:

Սաղոմեի բանականությունը չէր կարող ընկալել ավետարանական հայտնության ողջ խորությունը, չէ՞ որ նույնիսկ առաքյալներն էլ մինչև վերջ չէին հասկանում Քրիստոսի զոհաբերական ծառայության նշանակությունը: Սաղոմեն որոշեց գնալ ուղիղ Քրիստոսի մոտ ու հոգալ նոր Մեսիական թագավորությունում իր որդիների ճակատագրերը:

«Չէ՞ որ ինձ համար չեմ ուզում խնդրել, այլ իմ սիրելի երեխաների համար»,– Հիսուսին մոտենալով՝ հանգստացնում էր իրեն Սաղոմեն: Բայց երբ նա խոնարհվեց Նրան և արդեն ուզում էր խոսել, այնպես հուզվեց ու վախեցավ, որ սկսեց անհասկանալի ու կցկտուր բաներ ասել, ի վերջո՝ շփոթմունքից բոլորովին լռելով: Տերն, ինչպես սրտագետ, արդեն գիտեր, թե նա ինչ է ուզում խնդրել, բայց որպեսզի դա մյուսներն էլ կարողանան լսել, նորից հարցրեց.

– Ի՞նչ ես ուզում:

Համարձակություն հավաքելով ու Քրիստոսի հարցնելուց քաջալերվելով՝ նա ասաց.

— Ասա՛, որ սրանք՝ իմ երկու որդիները, նստեն քո արքայության մեջ, մեկը՝ քո աջ կողմում և մյուսը՝ ձախ կողմում:

— Չգիտեք, թե ինչ եք խնդրում,— առանց բարկության նշույլի, ինչ-որ տեղ նույնիսկ տխուր, պատասխանեց Տերը,— կարո՞ղ եք խմել այն բաժակը, որը Ես խմելու եմ, կամ՝ մկրտվել այն մկրտությամբ, որով Ես մկրտվելու եմ:

Կանցնի ոչ շատ ժամանակ ու Սաղոմեն կրմբռնի Փրկիչի այս խոսքերի ողջ դառնությունը: Մի անգամ չէ, որ կցնցվեն այդ բարի կնոջ հոգին ու սիրտը, երբ նա Գողգոթայում կանգնած կլինի Խաչի տակ, որի վրա խաչված կլինի Աստվածային Ուսուցիչը, ու կհիշի Նրա մարգարեական խոսքերը: Այդ խոսքերի իմաստը Սաղոմեի համար հասկանալի կդառնան արդեն Քրիստոսին դատելու ժամանակ: Եվ հասկանալով, թե ինչ բաժակի մասին էր խոսում Տերը, նա այլևս հետ չի կանգնի այդ բաժակը Քրիստոսի հետ խմելու իր խոստումներից: Նա իր Ուսուցչի հետ կգնա Գողգոթա: Կգնա, չնայած բռնվելու ու Նրա հետ մահապատիժի ենթարկվելու վախին: Կգնա, քանի որ այդ կնոջ սերն իր զավակների հանդեպ նրա մեջ արդեն անբաժանելի է Քրիստոսի հանդեպ սիրուց: Բայց այդ բոլորը պիտի լինի հետո, իսկ հիմա,

դեռևս չհասկանալով Քրիստոսի խորհրդավոր խոսքերը, պարզասիրտ կինը պատասխանեց.

— Կարող ենք:

— Իմ բաժակը կխմեք,— ասաց նրան Քրիստոսը,— և այն մկրտությամբ, որով Ես մկրտվելու եմ, կմկրտվեք, բայց նստեցնել Իմ աջ ու ձախ կողմերում կախված չէ Ինձանից , այլ՝ ում համար որ նախատեսված է Իմ Հորից:

Աշակերտները լսեցին Քրիստոսի այս զրույցը Սաղոմեի ու նրա որդիների հետ ու վրդովվեցին, որ ինչ-որ մեկն առանց իրենց արդեն սկսում է բաժանել գալիք Թագավորության իշխանությունը: Նրանք կշտամբում էին Հովհաննեսին ու Հակոբոսին, ասելով նրանց, որ միայն նրա՛նք չեն արժանի Դավթի դահին Մեսիայի Թագավորելու ժամանակ պատվավոր պաշտոններ զբաղեցնելու: Նրանց մեջ սկսված վեճին, թե իրենցից ով ինչ տեղ է զբաղեցնելու գալիք Թագավորությունում, միացավ նաև Հուդա Իսկարիովտացին: Նա ասաց, որ չի հավակնում առաջատար տեղերի ու պատրաստ է նոր Թագավորությունում զբաղվել նրանով, ինչով զբաղվում է և հիմա, այսինքն՝ զրամ հավաքել պետական գանձարանի համար: Լսելով Իր աշակերտների վեճերն իշխանության մասին՝ Հիսուսը նրանց կանչեց ու ասաց.

— Գիտեք, որ ազգերի իշխանավորները տիրում են ազգերի վրա, և մեծամեծները իշխում են նրանց վրա: Ձեր մեջ ևս չպետք է այդպես լինի. այլ ձեզնից ով կկամենա մեծը լինել, ձեր ծառան պիտի լինի. և ձեզնից ով կկամենա առաջինը լինել, ձեր ծառան պիտի լինի, ինչպես որ Մարդու Որդին ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն:

Աշակերտներն ասես սթափվեցին իշխանության համար վեճերից, որով տարվել էին, ու ամաչելով իրենց եսասիրությունից, այլևս այդ թեմայով չխոսեցին:

ԳԼՈՒԽ 27

Անցնելով Հորդանանը՝ Հիսուսն ու նրան ուղեկցող աշակերտները մտան հինավուրց Երիքով քաղաքը: Այնտեղ Տերն այցելեց մաքսատուհու Զաքեոսի տուն: Երիքովում հանգստանալով՝ Հիսուսն իր աշակերտների հետ նորից շարունակեց ճանապարհը դեպի Երուսաղեմ: Ճանապարհը թեթև չէր, քանի որ ամբողջ ժամանակ հարկ էր լինում սարը բարձրանալ: Բայց ահա երևացին Ձիթենյաց լեռան ծանոթ ուրվագծերն, ու ճամփորդները, թեթևացած և ուրախությամբ, նրա կանաչ լանջին տեսան հյուրընկալ Բեթանիան: Նորից ուրախալի հանդիպում հարություն առած Ղազարոսի տանը: Այս անգամ շատ ժողովուրդ հավաքված լինելու պատճառով Քրիստոսին և նրա աշակերտներին ընդունեցին բորոտ Սիմոնի տանը: Ընթրիքին բարեհաճ զրույց էր տեղի ունենում մի քանի անվանի հրեաների հետ, ովքեր եկել էին անձամբ համոզվելու, որ Ղազարոսի հետ իրոք կատարվել է այդ հրաշքը: Այնտեղ, իր Ուսուց-

չի հետ սեղան նստած, բազմել էր Քրիստոսով հարություն առած Ղազարոսը: Մարթան սպասարկում էր սեղանը:

Երբ հացկերույթն սկսվեց, կատարվեց մի բան, որ մի քիչ շփոթեցրեց հավաքված հյուրերին ու տանտերերին: Ոչ մեծ սափորը ձեռքին՝ վերնասենյակ մտավ Ղազարոսի քույր Մարիամը: Զասելով ոչ մի խոսք, նա գնաց ուղիղ Քրիստոսի մոտ ու նրա առջև խոնարհելով՝ բացեց անոթն ու սկսեց օծել Ուսուցչի ոտքերը: Վերնասրահով մեկ տարածվեց թանկարժեք յուղի անուշ բուրմունքը: Այդ միջոցին Մարիամն իր մազերով սրբեց Քրիստոսի ոտքերն ու հետո սկսեց նրա գլխին յուղ լցնել: Համընդհանուր լռությունն ընդհատեց Հիսուսի աշակերտ Հուդա Իսկարիովտացին.

— Ինչի՞ համար է յուղի այս անիմաստ ծախսը,— վրդովված ասաց նա,— այն կարելի էր վաճառել ավելի քան երեք հարյուր դահեկանով ու բաժանել աղքատներին:

Ներկաներից շատերը, հավանություն տալով, գլխով արեցին ու հանդիմանանքով նայեցին Մարիամին:

Բայց Հիսուսը, որ մինչ այդ լռել էր, վճռականորեն առարկեց.

— Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը, նա Իմ հանդեպ մի բարի գործ կատարեց, աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք, բայց ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա Իմ թաղվելը կանխանշեց: Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաև ինչ որ դա արեց:

Հիսուսի այս պատասխանից հետո ինչ որ բան փոխվեց Հուդա Իսկարիովտացու գիտակցության մեջ: Թանկարժեք յուղի անիմաստ ծախսի հարուցած վրդովմունքն ուղղվեց Ուսուցչի դեմ. «Ինչի՞ մասին է Նա խոսում,— դրդռված մտածում էր Հուդան,— ի՞նչ թաղման մասին: Սպասիր, չէ որ վերջերս այդ մասին Նա արդեն շատ անգամ է ասել: Իսկ եթե Ուսուցիչն իսկապես չի պատրաստվում վերցնելու իշխանությունն Իսրայելո՞ւմ, եթե ես իզուր եմ արդեն երկու տարուց ավելի հետևում Նրան ու ամեն տեսակ տանջանքներ կրո՞ւմ: Հիմա ի՞նչ է ստացվում, Նա չի էլ պատրաստվում հաստատելու Իր Թագավորությունը: Էլ ինչո՞ւ է Նա մեր գլուխը տանում: Ես չեմ պատրաստվում կեղծ խոստումներով խաբված լինել: Ինչ հիմարն եմ ես, որ հավատացի: Նա, որին ի վերուստ շնորհ է տրված հրամայել հողմերին ու

կենդանացնել մեռածներին, բուժել բորոտներին, հինգ հացով կերակրել հազարավորներին՝ պարզապես պատրաստվում է մեռնելու: Եթե ես ունենայի նման ընդունակություններ, ես դեպի իշխանություն տանող իմ ճանապարհին կմաքրեի ամեն ինչ: Ես ոտքի կհանեի դազազած խաժամուժի լեգեոններն ու իմ թագավորության համար նրանց մարտի կնետեի: Իսկ հիմա՞: Եթե Հիսուսն ավելի վճռական լիներ՝ ես Նրա թագավորությունում կգրավեի գլխավոր հարկահավաքի պաշտոնը: Ես ողջամտորեն կտնօրինեի ողջ գանձարանը, չէ՞ որ այդ բոլորը Նրան հետաքրքիր չէ: Քանի՛ մարդու ես կարող էի բարերարություն անել, և դրա համար նրանք ինձ կփառաբանեին: Ես կլինեի արդարացի: Իսկ հիմա՝ ի՞նչ: Միայն նվիրատվությունների այս խղճուկ արկղը, դե դա էլ Նրա մահից հետո կխլեն: Չէ, ես չեմ պատրաստվում մեռնել Նրա հետ: Նշանակում է՝ պետք է գործել»:

Բորոտ Սիմոնի տանը սեղանի շուրջ Քրիստոսի գրույցը հյուրերի համար անհետևանք չանցավ. մի քանի անվանի հրեաներ հավատացին Հիսուսին իբրև Քրիստոսի: Այդ լուրերը հասան ատյան ու քահանայապետերին հասցրին մոլեգին կատաղության: Ատյանի անդամները որոշեցին, որ Քրիստոսի հետ մեկտեղ անհրաժեշտ է սպանել նաև Ղազարոսին՝ իրենց համար ստելի Գալիլիացու հրաշագործության անհերքելի վկային: Հիսուս Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ վախեցրեց նրանց ու ավելի հաստատեց Նրան սպանելու մտադրությունը: Այժմ Քրիստոսի դեմ էին ատյանի նույնիսկ այն անդամները, որոնք մինչ այդ կասկածում էին: Բայց ինչպե՞ս բռնել Նրան, եթե ամբողջ ժամանակ Նա շրջապատված է երկրպագուների խանդավառված ամբոխով: Նրանք կարող են խռովություն բարձրացնել: Այդ ժամանակ նաև ատյանի բանը բուրդ կլինի. հռոմեական իշխանությունները նրանցից հաշիվ կպահանջեն տոների ժամանակ եղած անկարգությունների համար: Լավ կլիներ այդ Գալիլիացուն բռնել գիշերը, առանց ավելորդ աղմուկի: Բայց ամեն անգամ Նա նոր տեղում է գիշերում: Ու հնարավոր չէ այդ տեղը գտնել: Ա՛յ, եթե Նրա աշակերտներից գտնվեր մեկը, որ ցանկանար մեզ օգնել:

Ի ուրախություն ատյանի՝ այդ աշակերտը գտնվեց: Հուդա Իսկարիովտացու գալուց ուրախացան ու համաձայնվեցին նրա բոլոր պայմաններին: Տաճարի գանձարանից տվեցին երեսուն արծաթադրամ: Վերցնելով փողերը՝ Հուդան մտածեց. «Ուսուցիչը շատ էլ չոայլ

չէ գնահատված: Այդ փողերը կհերիքեն միայն մի ստրուկ գնելուն: Շատ չէժանացրի՞: Փողը նրանք հաճույքով տվեցին, հարկավոր էր ավելի շատ խնդել: Եվ մի՞թե միայն փողի մեջ է բանը: Իսկ եթե Ուսուցչի ձերբակալությունը վճռականություն տա Նրան ու ծառայի ապստամբության մղելո՞ւն: Այդ ժամանակ, միևնույնն է, ես էլի շահում եմ, չէ որ աշակերտներից ոչ ոք չգիտի իմ դավաճանության մասին: Ապստամբություն կսկսվի, ես կմասնակցեմ»: Այսպես մտածելով՝ Հուդան քթի տակ չար քմծիծաղ տվեց ու սկսեց թափառել ժողովրդով լեցուն Երուսաղեմի փողոցներում:

ԳԼՈՒԽ 28

Ի սան ամսի 14-երորդ օրվա առավոտյան Հիսուսի աշակերտ Սիմոն Պետրոսը հաղորդեց Ուսուցչի հանձնարարությունը Զատիկի ընթրիքի տեղ պատրաստելու մասին: Սեղանը պատրաստում էին Սիմոն Պետրոսի ազգական Հովհաննես Մարկոսի ընդարձակ տանը: Մարկոսի մայրը՝ Մարիամը, շատ գոհ, որ Ուսուցիչը տոնի համար հատկապես իր տունն էր ընտրել, ուրախ ու հուզված տրամադրության մեջ էր: Իր որդի Մարկոսին, որին ոչ վաղուց Քրիստոսն ընտրել էր Իր յոթանասուն աշակերտների թվում, նա հանձնարարել էր դառ գնել: Տանը նրան օգնում էին Ուսուցչի հետ եկած կանայք. Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամն ու Շուշանը: Նրանք ավլեցին, լվացին վերնատունը, հատակին մաքուր, սպիտակ փսիաթ փռեցին: Մարիամը՝ Հիսուսի մայրը, նույնպես և Մարիամ Կղեովպասը, Մարիամ Մագդաղենացու հետ միասին, ինչպես միշտ, կանգ էին առել Զեբեդեոսի կնոջ՝ Հիսուսի եր-

կու աշակերտների մայր Սաղոմեի տանը: Դեռ երկու օր առաջ Հովհաննան գնացել էր Հերովդես Անտիպասի Ջիթենյաց լեռան պալատը, քանի որ նրա ամուսին Քուզան վերադարձել էր Հռոմից:

Երուսաղեմի փողոցները վաղ առավոտից լեփ-լեցուն էին կրպակներից դուրս չեկող ու տոնական սեղանի համար բոլոր անհրաժեշտ ապրանքներն առնող ժողովրդով: Առանձնապես գառների մեծ պահանջարկ կար, և այդ օրը նահանգի տարբեր ծայրերից տասնյակ հազարներով գառներ էին քաղաք բերում: Վեցերորդ ժամից[1] հետո արհեստավորներն ու առևտրականներն շտապում էին ավարտել իրենց գործերը, որպեսզի մինչև երեկոյան մթնշաղը հասնեին տուն՝ Զատիկի սեղանին: Տներում արդեն սափորների մեջ գինին լցված էր ու սեղաններին դարսված էին անթթխմոր հացի՝ բաղարջի մեծ բլիթներ: Դրանից հետո, երբ իններորդ ժամին[2] տաճարում կատարվում էր երեկոյան զոհաբերությունը, բոլոր տներում սկսում էին պատրաստել Զատիկի իրենց գառը: Տան գլխավորն, աղոթքն ասելուց հետո, կորում էր հացն

[1] Վեցերորդ ժամը համապատասխանում է այսօրվա ցերեկվա ժամը 3-ին:

[2] Իններորդ ժամը համապատասխանում է այսօրվա երեկոյան ժամը 6-ին:

ու բաժանում տնեցիներին, այնուհետև, գոհություն հայտնելով Աստծուն ու գինի լցնելով գավաթները՝ տալիս շրջանով խմելու:

Մարկոսի տան սեղանին հավաքվել էին միայն Քրիստոսի ամենամտերիմ տասներկու աշակերտները: Երուսաղեմի դատարկված նեղ փողոցներում տարածվում էին սիտորի սուր հոտն ու ածուխների վրա խորոված ոչխարի մսի ախորժալուր բուրմունքը: Ամեն մի ուղղափառ հրեայի տանը հիշում էին, թե ինչպես, շատ դարեր առաջ, Մովսեսն Իսրայելի ժողովրդին դուրս բերեց եգիպտական գերությունից ու Աստծո հետ ուխտ կնքեց: Ողջ Իսրայելում միայն մի տուն կար, որտեղ գավաթը բարձրացնում էին ոչ թե Մովսեսի միջոցով ստացած Հին Ուխտը հիշելու, այլ՝ իբրև Աստծո հետ Քրիստոսով ստացած Նոր Ուխտի խորհրդանիշ:

Ինչի մասին էր խոսում Հիսուսն Իր աշակերտների հետ՝ հետևի սենյակում սեղան նստած Մարիամ Կղեոփասն ու Շուշանը չէին կարող լսել, բայց գիշերն իջնելուն պես նրանք տեսան վերնատնից դուրս եկող առաքյալներին: Բոլորի դեմքին տագնապ կար: Ուսուցչի հետ նրանք գնացին դեպի Երուսաղեմի հարավային դարպասներն, ու կանայք կռահեցին,

որ առաքյալները գնում են Գեթսեմանի: Ոչ միայն կանայք տեսան, թե ուր են գնում առաքյալներն իրենց Ուսուցչի հետ. նրանց հետևից մթության քողի տակ գնում էր նաև Հուդան: Պարզելով, թե նրանք որ կողմ են գնում, նա անկյունից վճռականորեն թեքից ճանապարհն ու գնաց տաճարի լեռան կողմը:

Այդ ընթացքում, դուրս գալով քաղաքի պարիսպներից, առաքյալներն իջան ցամաքած Կեդրոն գետի ձորակն ու նրանով գնացին Գեթսեմանիի այգին[1]: Լուսնի լույսը փայլփլուն շողերով անցնում էր նոր բացված ձիթենու նուրբ տերևների միջով: Երգելով «Տերն իմ կյանքի ապավենն է, ումի՞ց ես դողամ» սաղմոսը[2]՝ նրանք խորանում էին այգում: Այգում խաղաղ էր ու հանգիստ: Նույնիսկ թռչունները, որ թաքնված էին ձիթենու փարթամ ճյուղերի մեջ, չէին խախտում այդ հանդիսավոր լռությունը: Ուսուցիչն այնտեղ, այգում, բոլորին հանձնարարեց տեղավորվել գիշերակացի համար ու իր հետ վերցնելով Պետրոսին, Հովհաննեսին ու Հակոբոսին՝ նրանց հետ հեռացավ այգու խորքերը: Առջևում, այգու ցանկապատից այն

[1] Գեթսեմանի բառը նշանակում է ձիթապտղից յուղ քամելու մամլիչ:
[2] Սաղմ. ԻԶ. 1:

կողմ, Ձիթենյաց լեռան լանջն էր սկսվում, որի գագաթը նրանց հայացքից ծածկում էր Բեթանիան, որտեղ Ղազարոսի բարետու տունն էր: Աշակերտները նայեցին Երուսաղեմին: Նրանց հայացքի դեմ հառնում էր Մորիա լեռը՝ դեպի տաճարի վեհաշուք գավիթը տանող իր արհեստական դարավանդներով:

Շուտով աշակերտները քնեցին ու չնկատեցին, թե ինչպես քաղաքի դարբասներից դուրս եկավ զինված մարդկանց մի ոչ մեծ ջոկատ և շարժվեց դեպի Գեթսեմանիի այգին: Զարգույժ ցոլցլում էին ջահերի բոցերը: Թախիծը քարացել էր քնած առաքյալների դեմքերին:

ԳԼՈՒԽ 29

Հիսուսի կալանավորման լուրն առաջինն իմացան կանայք՝ Մարկոսի տանը: Մարկոսը տուն վազեց համարյա մերկ, միայն ազդրածածկոցով, ու հայտնեց, որ քահանայապետի ծառաները Գեթսեմանիում բռնել են Ուսուցչին: Մարկոսը պատմեց, որ մյուս աշակերտների կողքին, իր հետ վերցրած սավանով փաթաթված՝ քնել էր ծառերի տակ, հետո ճիչերից արթնացավ ու ջահերի լույսի տակ տեսավ, թե ինչպես է Պետրոսը կատաղի թափահարում թուրը: Բայց Հիսուսը հորդորեց Պետրոսին թուրը հետ քաշել ու ձեռքի հպումով բուժեց ծառայի արնածորող ականջը, որ նա կտրել էր: Այդ ժամանակ աշակերտները փախան այդուց: Հիսուսին տարան Երուսաղեմ, քահանայապետի մոտ, հեռվից հետևում՝ Պետրոսն ու Հովհաննեսը հետևեցին նրանց:

— Իսկ ես գնում էի նրանց կողքով,— պատմում էր Մարկոսը,— քանի դեռ ինձ վրա ուշադրություն չէր դարձրել տաճարի պահնորդներից մեկը: Նա բռնեց իմ ծածկոցից: Վախեցա, որ ինձ էլ կբռնեն ու ծածկոցն այդ պահնորդի ձեռքում թողնելով՝ փախա:

Այդ սարսափելի լուրն առնելով՝ Հակոբոսի մայր Մարիամն ու Շուշանը, գիշերով անմիջապես վազեցին Զեբեդեոսի տուն: Այնտեղ ամեն ինչ գիտեին: Տանը լսվում էր կանանց լացուկոծը: Բոլորը մեծ շփոթմունքի մեջ էին: Մարիամ Մագդալենացին առաջարկեց գնալ քահանայապետի տուն ու անձամբ ամեն ինչ իմանալ: Բոլորն անմիջապես հավաքվեցին:

Անընդհատ շուրջը նայելով, ասես մեկը հետևում էր իրենց, վախվորած երամիկով, կանայք մի փողոցից մյուսն էին անցնում, մինչև որ հասան քահանայապետի տուն: Նրանք չհամարձակվեցին ավելի առաջ գնալ ու սպասեցին, որ ինչ որ դեպքից ամեն ինչ կպարզվի: Գիշերը ցուրտ էր, կանայք կիպ սեղմվել էին միմյանց ու վախով ու հույսով նայում էին քահանայապետի տան բակի կամարին: Հարկ եղավ երկար սպասել: Մոտիկ ինչ որ տեղ կանչեց աքաղաղը: Բռունցքներով սրբելով արցունքները՝ քահանայապետի տան բակի կամարից դուրս եկավ Պետրոսը: Կանայք փորձեցին ձայն տալ նրան, բայց նա նույնիսկ հետ չնայեց, այլ միայն դառնացած ձեռքը թափ տվեց ու քայ-

լերն արագացնելով՝ ծածկվեց խավարում: Երբ բակի կամարում հայտնվեց Հովհաննեսը, կանայք խեղճացած կանչեցին նրան: Նա անմիջապես մոտեցավ:

— Մեր Ուսուցչին սկզբում տարան քահանայապետներից Աննայի մոտ, իսկ հետո Կայիափայի[1],— ասաց Հովհաննեսը կանանց,— այժմ Նրան տանելու են կուսակալ Պիղատոսի մոտ ու մահապատիժ պահանջեն:

Այս խոսքերին կանայք դառը հեկեկացին: Այդ ժամանակ, տաճարի պահնորդները Հիսուսին շրջապատած, դուրս եկան կամարից ու Նրան տարան Անտոնիոսի ամրոցը, որտեղ գտնվում էր հռոմեական կուսակալի նստավայրը: Կանայք միայն հեռվից էին նայում իրենց Ուսուցչին:

Որպեսզի փոքր ինչ տաքանան, նրանք տուն գնացին, բայց այնտեղ երկար չմնալով՝ նորից շտապեցին Պիղատոսի նստավայրը: Այնտեղ նրանց պատմեցին, թե երբ Պիղատոսն իմացավ,

[1] Հռոմեական իշխանությունների կողմից Աննան հեռացվել էր քահանայապետի պաշտոնից: Նա նենգ մարդ էր, ու երբ քահանայապետ դարձավ նրա փեսա Հովսեփ Կայիափան, դաժան, բայց թուլակամ մի մարդ, Աննան ամրապնդեց իր ազդեցությունը ապրանքում: Փաստորեն նրա փեսան խորամանկ աներոջ ձեռքին խաղալիք դարձավ: Ահա թե ինչու ավետարանիչները քահանայապետերի մասին հոգնակի թվով են խոսում:

որ Հիսուսը ծնունդով Գալիլիայից է, Նրան ուղարկեց չորրորդապետ Անտիպասի մոտ: Կանայք վերադարձան տուն ու սկսեցին տագնապով սպասել հետագա դեպքերին: Շուտով, արցունքն աչքերին, վազելով Զեբեդեոսի տուն եկավ Հովհաննան ու ընկերուհիներին հայտնեց, որ Ուսուցչին հենց նոր Անտիպասի պալատում է տեսել:

— Նրան բերեցին պահնորդների հսկողությամբ ու կանգնեցրին Հերովդես թագավորի առջև,— արցունքն աչքերին պատմում էր Հովհաննան,— Անտիպասն սկսեց հարցնել Ուսուցչին, թե ի՞նչ է Նա ուսուցանում և չի՞ կարող արդյոք իրեն ցույց տալ Իր հրաշքներից մեկը, բայց Հիսուսը ոչինչ չպատասխանեց: Այդ ժամանակ Անտիպասը հրամայեց Ուսուցչին սպիտակ հագուստ հագցնել ու ծաղրելով՝ նորից ուղարկեց Պիղատոսի մոտ:

Այդ ժամանակ Զեբեդեոսի տուն եկան Ղազարոսի վշտից ցնցված քույրերը: Նրանք ասում էին, որ Քրիստոսին ձերբակալելու սարսափելի լուրերը հենց իրենց հասան, անմիջապես շտապեցին Երուսաղեմ, իսկ Ղազարոսը գործերով գտնվում է Երիքովում ու դեռևս ոչինչ չգիտի:

Իմանալով, որ Հիսուսին նորից Պիղատոսի մոտ են տարել, կանայք հավաքվեցին ու գնա-

ցին Անտոնիոսի ամրոցը: Երբ նրանք հասան ամրոցի բակը, այնտեղ արդեն ժողովրդի մեծ բազմություն էր հավաքվել: Բոլորն սպասում էին ինչ որ բանի: Հուդայի կուսակալը վերջապես բարձրացավ Քարահատակ[1] կոչված տեղը, իսկ հետո դուրս բերեցին Հիսուսին ու էլի մի մարդու: Մարիամ Մագդաղենացին նկատեց, որ քահանայապետի ծառաներն ամբոխի մեջ դեսուդեն են ընկնում ու ինչ որ բան են ասում մարդկանց: Նրանցից մեկն անցավ Մարիամի կողքով ու կիսաձայն ասաց.

— Ավանդույթի համաձայն հիմա կառաջարկեն ազատել նրանցից մեկին,— նա դեպի քարահատակը գլխով արեց,— կինդրեք ազատել Բարաբբային, նա հռոմեացի զինվորի է սպանել: Նա պայքարում է Իսրայելի ազատության համար:

Մարդն արագ թաքնվեց ամբոխի մեջ: Մարիամը շվոթված նայում էր նրա հետևից ու վատ նախազգացումից նրան դող դիպավ: Այդ ժամանակ Պիղատոսը դիմեց ժողովրդին.

— Զատիկի տոնին մի հանցագործ ազատելու լավ սովորույթ կա մեզ մոտ: Ո՞ւմ կուզեք, որ ազատեմ,— Քրիստոս կոչվող Հիսուսի՞ն, թե՝ Բարաբբային:

Ամբոխը գոռաց.

— Բարաբբային, ազատի՛ր Բարաբբային:

Արցունքների միջից Մարիամ Մագդաղենացին ճչաց.

— Հիսուսի՛ն, ազատեք Հիսուսի՛ն,— բայց նրա թույլ ճիչը խլացավ գրգռված ամբոխի ընդհանուր ժխորում:

Ինչ որ մարդ չարացած շշնջաց Մարիամին.

— Հենց հիմա վե՛րջ տուր, թե չէ ես քեզ կսպանեմ:

— Սպանի՛ր,— դեպի նա շրջվեց Մարիամն ու նրա աչքերը փայլատակեցին զայրույթից,— միևնույնն է, ես ճչալու եմ:

— Խելագար,— վախեցած հետ քաշվելով ասաց մարդն ու թաքնվեց ամբոխի մեջ:

Երբ ամբոխը փոքր ինչ լռեց՝ Պիղատոսը նորից դիմեց նրան.

— Իսկ ես ի՞նչ անեմ Քրիստոս կոչված Հիսուսին:

Եվ նորից ամբոխը բարձրաձայն վայնասուն կապեց.

— Թող խաչվի՛:

— Ի՞նչ չար բան է արել նա,— ամբոխի նման չարությունից զայրմացած՝ նորից հարցրեց Պի-

[1] Քարահատակ կամ Կապպաթա (եբր.) (Հովհ. 19.13) - բարձրադիր տեղ պալատի մուտքի առջև: Հեղինակը օգտագործում է հուն. *լիթոստրոտոն* ձևը, որը *կապպաթա*-ի թարգմանությունն է:

դատոսը:

— Թող խաչվի՛,— նորից թնդաց ամբոխը:

Ամբոխի ցնծության տակ ազատեցին Բարաբբային, իսկ մյուս կալանավորներին Պիղատոսը հրամայեց տանել: Ժողովուրդը հրապարակից չէր հեռանում: Թեև նրանք չէին տեսնում, թե ինչպես են Քրիստոսին Պիղատոսի հրամանով կուսակալի ապարանքի բակում մտրակահարում, բայց սպասում էին վերջնական դատավճռին: Որոշ ժամանակ անց արդեն դուրս բերեցին միայն Հիսուսին: Նրա տեսքը ցնցեց Մարիամ Մագդաղենացուն: Ամբողջ դեմքին արյան շիթեր էին: Գլխին փշերից հյուսված պսակ էին դրել, որի սուր փշերը խրվել էին գլխին ու Հիսուսի դեմքով արյան շիթեր էին հոսում: Ուսուցչի ուսերին զինվորական կարմիր թիկնոց էր գցված:

— Ահա Մարդը,— այն հույսով, որ ամբոխը չի պահանջի Նրան խաչել ու կբավարարվի դաժան պատժով, Հիսուսին ցույց տալով՝ ասաց Պիղատոսը:

Բայց ամբոխն ասես արյուն տեսնելուց ցնորված՝ սկսեց բղավել.

— Խաչի՛ր, խաչի՛ր Դրան, դրա արյունը մեր վրա ու մեր որդիների վրա է:

Մարիամը համարձակ գործի դրեց արմունկ-

ները՝ ամբոխը ճեղքելով մոտենալով Ուսուցչին: Պիղատոսը ձեռքով նշան տվեց, ու ծառան արծաթե գավաթով ջուր բերեց: Կուսակալը ցուցադրաբար, բոլորի աչքի առջև, իբրև մահապատիժ պահանջող հրեաների հետ իր անհամաձայնության նշան, լվաց ձեռքերն ու հայտարարեց հարյուրապետին.

— Խա՛չ հանեք:

Եվ արդեն հեռանալու համար շրջվելով՝ ուսի վրայից ասաց.

— Նազարեթցու հետ Բարաբբայի ավազակախմբից կալանված երկուսին էլ կախեք:

ԳԼՈՒԽ 30

Ապարանքի դարպասից դուրս եկավ խաչելությամբ մահվան դատապարտվածների վշտահար թափորը: Ամեն մեկն իր ուսերին տանում էր յայնակի իրար ամրացված ծանր գերանները: Կանայք տեսան, թե ինչպես, խաչի ծանրության տակ կորանալով ու մի կողմից մյուսն օրորվելով, Հիսուսը դուրս եկավ, փորձեց գնալ, բայց անմիջապես սայթաքեց ու ընկավ:

— Այսպես մենք մինչև իրիկուն տեղ չենք հասնի,— զայրացած փնթփնթաց հարյուրապետը:— Հէ՛յ, տղե՛րք, գտե՛ք որևէ մեկին:

Պահնորդը շուրջը նայեց ու տեսավ մի գյուղացի, որ կանգնել ու հետաքրքրասիրությամբ նայում էր թափորին:

— Հե՛յ, դո՛ւ, ով ես, ինչ ես,— կանչեց նրան պահնորդը,— այստեղ արի՛:

Գյուղացին վախից գունատվեց, բայց մոտեցավ:

— Հապա կանգնի՛ր, կտանե՛ս խաչը:

— Ես ոչինչ չեմ արել,— սկսեց նա վախեցած

արդարանալ,— ես Սիմոն Կյուրենացին եմ, տեղացի հողագործ եմ, եկել եմ քաղաք առևտուր անելու:

— Այ քեզ բութ էշ,— հայհոյեց հարյուրապետը,— մենք քեզ բաց կթողնենք, դու միայն պիտի օգնես տանելու խաչը:

— Շա՛տ լավ, շա՛տ լավ,— անմիջապես համաձայնվեց գյուղացին, ու Հիսուսի խաչը նրա ուսակը տվին:

Նա կռնչաց խաչի ծանրությունից, բայց տարավ առանց իրեն զոռ տալու: Երթն արագ էր գնում: Քաղաքային դարպասներն անցնելով՝ երթն ուղղվեց դեպի մերկ ու գառիվեր Գողգոթա բլուրը. ինչպես ժողովուրդն էր այլ կերպ ասում «գանգի տեղ՝ կառափնատեղի», քանի որ այն մարդու գանգ էր հիշեցնում: Այնտեղ միշտ մահապատիժներ էին իրականացվում:

Քանի դեռ դատապարտվածներին մեխում էին խաչերին՝ կանայք սարսափից ականջները փակած մի կողմ էին քաշվել, որ չլսեն մուրճերի մանրահաճախ թխկոցները: Խաչերը բարձրացրին ու կանգնացրին քարքարոտ տեղում՝ նախօրոք փորած փոսերում: Գողգոթայի շուրջ իրարանցում սկսվեց: Պահակազորը հետաքրքրասերներին հեռու էր քշում մահապատժի տեղից: Կանանց էլ էին հետ քշում: Նրանք բոլորը

միասին, ոչ մեծ խմբով կանգնել ու արցունքների միջից հեռվից նայում էին Գողգոթային. մինչև այսօրվա կիզիչ արևին հստակ առանձնանում էին խաչերի ու նրանց վրա կախված մարդկանց ուրվագծերը: Խաչը, որին Հիսուսն էր խաչված, կանգնեցրել էին անմիջապես երկու խաչված ավազակների միջև: Ոչ մեկի խաչին մոտենալ թույլ չտվող զինվորների շղթան շրջափակել էր Գողգոթան: Հիսուսի մայրը՝ Կույս Մարիամը, Մարիամ Կղեոփասի ու Զեբեդեոսի որդի Հովհաննեսի օգնությամբ մոտեցավ պահակազորին: Հովհաննեսը խնդրեց հարյուրապետին.

— Ողորմած պարոն, թույլ տվեք Հիսուսի մորը նրա կողքին լինի:

Հարյուրապետը խեթ նայեց երկու կնոջ հետ մոտեցած պատանուն ու հրամայեց.

— Բա՛ց թողեք սրանց:

Իր քույրացու Մարիամ Կղեոփասի ու Հիսուսի սիրելի աշակերտ Հովհաննեսի հետ Կույս Մարիամը մոտեցավ ու կանգնեց ուղիղ խաչի մոտ: Հիսուսը խղճահարությամբ ու կարեկցանքով նայեց Մորն ու նորից հոգնածությամբ փակեց աչքերը:

Մարիամ Մագդալենացին, մյուս բոլոր կանանց հետ, մի կողմ էր կանգնած: Նրա հետ էին

Հովհաննան, Սալոմեն, Շուշանը, Ղազարոսի երկու քույրն ու էլի մի քանի կին Գալիլիայից: Այդ ամենը նրանց անիրական էր թվում, ասես մղձավանջային երազ, որից որքան հնարավոր է՝ հարկավոր է շուտ ուշքի գալ: Եվ երբ, այնուամենայնիվ, այդ ամենի անարտահայտելի իսկությունը հասավ նրանց գիտակցությանը, նրանց սրտերը այնպիսի ցավով ու թախիծով սեղմվեց, որ միայն մեռնելն էր ցանկալի: Նրանցից ոչ հեռու երկու փարիսեցիներ էին կանգնած: Նրանք գլխով արեցին Հիսուսի կողմը, իսկ մեկը չարախնդաց.

— Ուրիշներին փրկում էր, իսկ Ինքն Իրեն չի կարողանում փրկել. եթե Նա Իսրայելի Թագավորն է, թող հիմա իջնի խաչից ու մենք Նրան անվերապահորեն կհավատանք:

— Աստծուն էր ապավինում. դե թող ազատի, եթե հաճո է Նրան,— ծիծաղեց երկրորդ փարիսեցին,— չէ՞ որ Նա Ինքն էր ասում. «Ես Աստծո Որդին եմ»:

Այդ փարիսեցիները Հովհաննային ծանոթ թվացին: Նա հանկարծ հիշեց, որ հենց նրանք էին, որ եկել էին տեսնելու Հովհաննես մարգարեին, իսկ նա զայրացած չշպռեց: Հովհաննան տարակուսանքով նայեց Իսրայելի ուսուցիչներին ու արհամարհանքով շրջվեց:

Մարիամ Մագդաղենացին ոչ ոքի չէր նկատում, նրա հայացքը հառված էր խաչված Հիսուսին: «Օ՜, եթե միայն ինձ թույլ տային մեռնելու Ուսուցչի փոխարեն, ի՜նչ հաճույքով ես դա կանեի»: Այս մտածելով՝ Մարիամն ակամա քայլեց դեպի Գողգոթա: Նա ինքն էլ չէր նկատում, թե ինչպես է ավելի ու ավելի մոտենում Գողգոթային, մինչև որ կուրծքը դեմ առավ նիզակի սայրին:

— Ո՞ւր ես գնում, կի՛ն: Չի՛ կարելի, հե՛տ,— սպառնալով ասաց նրա ճանապարհը փակող զինվորը:

Մարիամն աղերսող հայացքը շրջեց դեպի հարյուրապետը: Նա ձեռքը թափ տվեց.

— Թող գնա:

Զինվորը փնթփնթալով բաց թողեց Մարիամին.

— Անցած անգամ նման տասը մարդ էր հավաքվել ու փորձում էին իրենց ազգականի խաչը հանեն: Իսկ դրա համար մենք ենք պատասխանատու:

Մարիամ Մագդաղենացին մոտեցավ խաչի մոտ կանգնած Հիսուսի Մորն ու Մարիամ Կղեոփասին: Այդ ժամանակ Քրիստոսը բարձրացրեց գլուխը: Տառապանքներից խամրած Նրա հայացքը մի պահ պարզվեց: Նա նայեց Իր Մորը: Զորացած շուրթերը բացվեցին ու Հիսուսը կամաց ասաց.

— Ո՛վ կին, ահա Քո որդին,— ու աչքերով ցույց տվեց Հովհաննեսին:

Շարունակելով իր սիրելի աշակերտին նայել՝ Հիսուսը շշնջաց.

— Ահա քո Մայրը:

Մագդաղենացին տեսնում էր, թե ինչ դժվարությամբ էր Ուսուցչը կարողանում արտահայտել այդ բառերը: Ասելուց հետո, ուժասպառված, Նա մեկեն կախեց գլուխը:

— Ծարավ եմ,— հանկարծ ձայն տվեց Հիսուսը:

Զինվորներից մեկն սպուգն անմիջապես ամրացնելով նիզակին՝ թրջեց քացախած գինու մեջ ու մոտեցրեց Նրա շուրթերին:

Մի կաթիլ կում անելով՝ Հիսուսը հայացքը բարձրացրեց դեպի երկինք ու բարձրաձայն աղաղակեց.

— Հա՛յր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին:

Այնուհետև, նայելով խաչի մոտ կանգնածներին, ասաց.

— Ամեն ինչ կատարված է,— այս ասելուց հետո՝ Հիսուսի գլուխն անկենդան թեքվեց կրծքին: Նա մահացավ:

ԳԼՈՒԽ 31

Գալիք շաբաթ՝ զատկական Մեծ օրվան նախապատրաստվելու ընթացքը փողոցի ավարաների հիշողությունից դուրս մղեց նորերս տեսած արյունալի տեսարանը: Քաղաքի կյանքը մտնում էր իր սովորական հունի մեջ, բայց շուտով նորից ընդհատվեց: Տաճարի կոչնակները հագիվ էին ազդարարել վեցերորդ ժամը, երբ օրը ցերեկով, սև ամպերը ծածկեցին արևի երեսը, և Երուսաղեմը օրը ցերեկով ընկղմվեց աղջամուղջի մեջ: Քաղաքը թեթևացած անձրևի էր սպասում, սակայն դեռ ոչ մի կաթիլ չէր ընկել ցերեկային շոգից տաքացած փողոցների սալահատակին, իսկ մութն ավելի ու ավելի էր թանձրանում խառնվելով սխտորի և արևելյան մյուս համեմունքների սուրկպչուն հոտերի հետ: Մութը քաղաք էր սողոսկում ինչպես աղետի չարագույժ նախանշան: Առաջինն այդ զգացին կենդանիները: Տխուր ու երկար ոռնում էին շները: Տաճարի զոհարան բերված ոչխարները, փոքր հոտ դարձած, վախեցած դեսուդեն էին ընկնում: Տգնապած

բառաչում էին հորթերը: Անասուններից տագնապն անցավ մարդկանց: Երբ ոտքերի տակ դետինը ցնցվեց, շատերին այնպիսի վախ ու հոգեկան խռովք պատեց, որ նրանք ծնկի իջան փողոցում թողության համար աղոթելով ահեղ Եահվեին: Հոգևորականները սարսափով նայում էին, թե Սողոմոնի տաճարի քարե սյուներից մեկն ինչպես երերաց ու հսկայական փայտե հեծանը, որից կախված էր Սրբությունների Սրբությունը ծածկող վարագույրը՝ ճրթճրթոցով կոտրվեց ու ընկավ: Վարագույրի բեհեզյա ծանր կտորը չոր ճայթոցով վերից վար ճղվեց ու հրեաների աչքի առաջ բացեց տաճարի ամենախորհրդավոր հարկաբաժինը՝ Սրբությունների Սրբությունը:

Ե՛վ արևի խավարումը, և՛ երկրաշարժը չընդհատեցին ատյանի նիստերը: Քահանայապետ Կայիափան, տեսնելով, թե ինչպես է պալատի դահլիճն օրը ցերեկով թաղվում խավարում, զայրացած ձայն տվեց ծառաներին. «Ի՞նչ եք հեթանոսական կուռքերի պես քարացել: Կրակ բերեք»:

Ծառաներն սկսեցին շտապ-շտապ վառել ջահերը: Ձեթի կանթեղների թրթռուն բոցերը մեռելային լույսով էին լուսավորում ատյանի անդամների մռայլ դեմքերը: Ի՞նչն էր նրանց

այնտեղ պահում՝ դա բացատրել ոչ ոք չէր կարող, բայց բոլորն զգում էին, որ գործը չի ավարտվել:

Հարկավոր էր սպասել ուղարկված տաճարի պահակազորի պետի տեղեկությանը: Նրան Պիղատոսի մոտ ուղարկել էին հանձնարարելով էր խնդրել կուսակալին՝ հանցագործների մահապատիժն ավարտել որքան հնարավոր է շուտ. լավ չէ զատկական շաբաթի օրը մարմինները թողնել խաչերի վրա: Իսկ առայժմ նստել ու որոշում էին. թե ինչ անեն փողերի հետ, որ վերադարձրել էր Մահապատժի ենթարկվածի աշակերտը՝ Հուդա Իսկարիովտացին:

Նրա գալը բոլորի համար բոլորովին անսպասելի էր եղել. իրեն պահել էր խանգարվածի նման, ճչացել էր, որ ծախել է Անմեղի արյունը, այնուհետև, փողերը շպրտելով քահանայապետերի ոտքերի առջև, փախել էր պալատից: Գումարն այնքան էլ մեծ չի, մտածեցին ատյանի անդամները, բայց դրանով գնված է Իսրայելի ժողովրդի հանգստությունը, որը գայթակղվում է իրեն Մեսիա հռչակող մե՛կ այս, մե՛կ մի ուրիշ ինքնակոչով: Հիմա վերջ է դրված շատ հրեաների մտքերը խառնած Նազարեթցի Քարոզիչին, բայց այդ փողերը չի կարելի վերադարձնել տաճարի գանձարանը, քանի որ դրանք կապ են ունեցել արյունոտ գործի հետ: Ի՞նչ անել:

Ոչ երկար վեճերից հետո վճռեցին Հուդայի վերադարձրած արծաթով ոչ մեծ հողակտոր գնել անոք օտարականների թաղման համար:

Այդ ժամանակ տաճարից վազելով եկավ լրաբերն ու հայտնեց Սրբությունների Սրբության վարագույրի պատռվելու մասին: Լուրն անհանգստացրեց ատյանի անդամներին, ու վախի ու անվստահության զգացումը սառն օձի պես սողոսկեց նրանց հոգին:

Վերջապես եկավ Պիղատոսի մոտ գնացած լրաբերը: Նա պատմեց, որ կուսակալը հաճույքով համաձայնվեց մահապատիժն արագացնել ու զինվորներին կախվածների[1] սրունքները ջարդելու հրաման ուղարկեց: Լրաբերը հայտնեց նաև, որ Հիսուս Նազովրեցին այդ ժամանակ արդեն իսկ Իր մահով մեռել էր, ու զինվորները ջարդել էին միայն մնացած երկու հանցագործի սրունքները: Սինեդրիոնի բոլոր անդամները թեթևացած շունչ քաշեցին ու պատրաստվեցին

[1] Խաչին գամվածը կախվում էր երեքից մինչև հինգ-վեց օր, նրա ոտքերը հենվում էին հատուկ շինած պատվանդանին, և այդպիսով պահպանվում էր արյան շրջանառությունը: Նա մարմնի ծանրությունը ձեռքերից փոխանցում էր ոտքերը: Երբ ջարդում էին սրունքները, խաչվածն այլևս չէր կարողանում հենվել ոտքերի վրա, կախվում էր ձեռքերից ու շուտով մահանում թոքերի այտուցումից:

գնալու տուն: Հանկարծ ձայնեց քահանայապետ Աննան՝ Կայիափայի անները: Ժողովի ժամանակ նա նստել, լուռ հետևում էր մյուսներին ու երբեմն քմծիծաղում, բայց շարունակում էր ստվերում մնալ, թեև լավ գիտեր, որ իր կարծիքը, եթե որոշեր այն արտահայտել, ավելի մեծ նշանակություն կունենար, քան իր փեսայի կարծիքը: Նա թեև նախկին քահանայապետ էր, բայց կառավարման սանձը, ո՛չ երևակայականը, այլ իսկականը, շարունակում էր իր թեև ծերունական, բայց դեռևս ամուր ձեռքերում պահել: Ահա հիմա էլ, բավական էր նա խոսի, ու բոլորը պապանձվեցին ու նրան հառեցին սպասողական հայացքները:

— Անմիտներ, դուք կարծում եք գործն ավարտվա՞ծ է: Չէ՛ մի: Ասվածը ասողից երկար է տևում: Մի՞թե մոռացել եք, որ Նազարեթցին ասում էր, թե երրորդ օրը հարություն կառնի մեռելներից: Կամ գուցե դուք նշանակություն չե՞ք տվել Նրա խոսքերին: Իսկ եթե Նրա աշակերտներն իրենց Ուսուցչի մարմինը գողանան ու հետո ասեն, թե Նա հարություն է առե՞լ: Ի՞նչ կլինի այնժամ: Դուք չե՞ք մտածել: Իսկ ես ձեզ ասում եմ. դա մեզ համար շատ ավելի վատ կլինի, քան էր Նրա կենդանության օրը:

Աննայի խոսքի սկզբում տոյանի շշմած անդամները տարակուսանքով նայում էին նրան, բայց հետո, երբ այդ պարզ, բայց անվիճելի միտքը հասավ նրանց գիտակցությանը, նրանք բոլորը միաժամանակ սկսեցին խոսել՝ տարբեր կերպ կրկնելով Աննայի արտահայտածը:

— Ի՞նչ կարող ես դու մեզ առաջարկել,— վերջապես, երբ տոյանի անդամները փոքր ինչ հանդստացան, անհրաժեշտ դիմեց Կայիափան:

— Շատ հասարակ,— ինքնագոհ պատասխանեց Աննան,— հարկավոր է գերեզմանի մոտ երեք օր պահնորդներ կարգել, այդ դեպքում աշակերտները չեն կարող Հիսուսի մարմինը գողանալ ու հաստատել, որ Նա հարություն է առել:

Տոյանի անդամները ցրվեցին տները: Ժողովարանից դուրս եկավ նաև Հովսեփ Արիմաթիացին: Նա մտածմունքների մեջ որոշ ժամանակ կանգնեց, իսկ հետո վճռական քայլեց դեպի Անտոնիոսի ամրոցը: Ու երբ գնաց Պիղատոսի մոտ մահապատժի ենթարկված Հիսուսի մարմինը վերցնելու խնդրանքով, կուսակալը որոշ ժամանակ մտքերի մեջ ընկավ: Որքան էլ այդ Գալիլիացի քարոզիչը նրան տարօրինակ թվար, իր վարքով Քրիստոսը կուսակալի մոտ ակամա հարգանք էր առաջացնում: «Եթե ես

Նրան թաղեմ հանցագործների հետ մի ընդհանուր փոսում,– մտածում էր Պիղատոսը,– դա ինձ որպես աղնվական հռոմեացու պատիվ չի բերի»: Նա անմիջապես իր զինվորական սպասյակին ուղարկեց Հովսեփի հետ՝ մահապատժի ենթարկված Հիսուս Նազովրեցու մարմինը տալու: Հիսուսի ծպտյալ աշակերտ Նիկոդիմոսն արդեն Գողգոթայում էր: Կանայք նայում էին, թե ինչպես Հովհաննեսի օգնությամբ երկու իսրայելցի տղամարդ Ուսուցչի մարմինն իջեցրին խաչից, հետո Նիկոդիմոսի բերած կտավը յուղով թաթախելով՝ փաթաթեցին նրա մեջ: Տեսնելով ինչ աճապարանքով են թաղում իր սիրելի Ուսուցչին՝ Հովհաննան չչնջաց Շուշաննային.

– Սիրտս կտոր– կտոր է լինում նրանից, որ չի կարելի պահպանել թաղմանն անհրաժեշտ բոլոր ծեսերը: Քանի դեռ խանութները չեն փակվել՝ գնանք քաղաք ու թանկարժեք յուղ գնենք:

Գալիլիացի ուրիշ կանանց հետ նրանք արագ ճանապարհ ընկան Երուսաղեմ: Հովհաննան վազեց ճանապարհին պատահած առաջին խանութը: Խանութպանն արդեն ուզում էր այն փակել: Իմանալով, թե ինչ է հարկավոր կանանց, նա փնթփնթաց, որ ուշ են եկել, բայց յուղ վաճառեց: Վերցնելով մի չիշ յուղ՝ կանայք գնացին Մարկոսի տուն, որպեսզի այնտեղ սպասեն շաբաթվա առաջին օրվա առավոտին:

Հիսուսի Մայր Կույս Մարիամն Իր Որդու մարմինն ուղեկցեց մինչև Հովսեփ Արիմաթիացու այգու քարայրը: Հովսեփն ինքն իր համար թաղման անձավը վաղուց չէ, որ սարքել էր, և հիմա տխուր մտածում էր, որ այդ բոլորը պատրաստել էր Նրա համար, Ում շատ չէր մնացել, որ ճանաչեր իբրև Մեսիա, բայց, չնայած դրան, իր սրտում խոր հարգանք էր տածում Հիսուս Նազովրեցու հանդեպ և ուրախ էր, որ կարող է արժանապատվորեն թաղել Սրբակյաց Մարդուն: Հենց որ Հիսուսին դրեցին գերեզման՝ Հովհաննան, Մարիամ Կղեոպասն ու Սաղոմեն Հիսուսի մորն ուղեկցեցին տուն:

Գերեզմանի մոտ նստած մնացին միայն Մարիամ Մագդաղենացին ու Հակոբոսի մայր Մարիամը: Հովսեփի այգում, որ Գողգոթային շատ մոտիկ էր, մութը թանձրանում էր, բայց նրանք լավ տեսնում էին, թե ինչպես են Հովսեփն ու Նիկոդիմոսը քարե գերեզմանի մուտքի մոտ ներս ու դուրս անում: Ահա, նրանք մեծ քար են գլորում ու նրանով փակում քարանձավի մուտքը:

— Վերջ,— կամաց ասում է Մարիամ Մագդալենացին:

Հակոբոսի մայր Մարիամը շրջվեց ու հարցական նայեց իր ընկերուհուն. Մագդալենացին նստած էր անշարժ, իսկ նրա խոշոր, սև աչքերը լրիվ չոր էին ու մի կետի հառված՝ կարծես ոչինչ չէին տեսնում: Հակոբոսի մայր Մարիամը կուացավ դեպի Մագդալենացին ու նայեց նրա աչքերի մեջ: Այդ աչքերի խորքում նա այնպիսի ցավ ու հուսահատություն տեսավ, որ ինքն իրեն վատ զգաց: Մարիամը վախեցավ, որ ընկերուհու մոտ նորից կսկսվեն խելացնորության նոպաները, որ ինչ որ ժամանակ բուժել էր Ուսուցիչը: Նա թեթևակի ցնցեց Մարիամի ուսը: Մագդալենացին, ոչ միանգամից, բայց այնուամենայնիվ սթափվելով՝ շրջվեց ու նրա աչքերում նորից կենդանի արտահայտություն հայտնվեց:

— Գիտե՞ս, Մարիամ,— ջերմորեն շշնջաց նա,— մեր ուսուցիչը չպետք է մեռներ, այստեղ ինչ որ բան այնպես չէ: Դու ինձ հասկանո՞ւմ ես: Չէր կարող, և՝ չպետք է մեռներ: Չէ որ նա իսկական Մեսիա էր, իսկ Մեսիան չպետք է մեռնի:

— Մագդալենացի, ի՞նչ ես ասում: Դու ինքդ ես ամեն ինչ տեսել:

— Հա, ճիշտ է, ես տեսել եմ այն, ինչը չպետք է և չպիտի լիներ երբեք: Բայց, մեկ է...

Մագդալենացին շրջվեց Հակոբոսի մայր Մարիամից ու նրա հայացքը նորից սառեց խոր վշտի մեջ:

Հակոբոսի մայր Մարիամն անհանգիստ հայացքով երկար ու կարեկցաբար նայեց ընկերուհուն ու նորից ցնցելով նրա ուսը՝ ասաց.

— Մագդալենացի, գնանք, շաբաթն արդեն սկսվել է:

Ձեռք-ձեռքի տված, ասես որբացած, նրանք դանդաղ քայլեցին դեպի Երուսաղեմի պարիսպները: Սկսվում էր շաբաթը՝ մեծ հանգստի օրը:

ԳԼՈՒԽ 32

Շաբաթ օրը անվերջ երկար էր ձգվում: Կանանց սկսել էր թվալ, որ հանգստի այդ օրը երբեք չի վերջանալու: Բայց ահա վառեցին առաջին կանթեղներն[1] ու Հիսուսի Մայրը լուռ վերկացավ ու մոտեցավ նրքին: Բոլորը գիտեին, որ նա գնում է Հովսեփ Արիմաթիացու այգին՝ այդ գիշերն Իր Որդու գերեզմանի մոտ անցկացնելու: Կանայք հասկանում էին, որ Նրան անհրաժեշտ է մնալ մենակ ու աղոթել: Մարիամ Մագդաղենացին նույնպես վեր կացավ ու գնաց Կույս Մարիամի հետևից՝ Նրան մինչև Հիսուսի թաղման վայրն ուղեկցելու, ու շուտով վերադարձավ.

— Այնտեղ, գերեզմանի մոտ, պահնորդ խումբ է կարգված,— ասաց նա կանանց,— ես հարցուփորձ արեցի նրանց ու ինձ ասացին, որ տեղա-

[1] Հրեական ավանդույթի համաձայն հաջորդ օրն սկսվում էր երեկոյից, երբ որ փաճարում վառում էին կանթեղները: Այսինքն՝ շաբաթ երեկոյան սկսվում էր շաբաթվա առաջին օրը (այժմյան կիրակին) և վերջանում էր հանգստի օրը (շաբաթը):



Հերովդես Արքեղայոս
(23 թ. ՔԱ - 18 թ. ՔՀ)
ՔՀ 4 - 6 թթ. Սամարիայի,
Հրեաստանի էթնարք,





Հերովդես Մեծի գերեզմանը



Մաքերոնի ամրոցը



Հերովդեսի պալատի
ավերակները

Հովհաննես Մկրտիչն անապատում
(Էլ-Գրեկո, 1600-1605 թթ.)

Հովհաննես Մկրտիչ
(բյուզանդական սրբապատկեր)

Սողոմե
(Կրանախ Լուկաս, XV դ.)

Հերոդիադա
(Պոլ Դելարոշ, XIX դ.)

Սողոմեի պարը Հերոդեսի ինջույքին
(Բենոզզո Գոզզոլի, 1461 թ.)



Հովհաննես Մկրտչի գլխատումը
(Միսեն-Անջեռո Կառավաջո, 1610 թ.)



Սոզոմե
(Վ. Սուրենյանց, 1907 թ.)

Սոզոմե
(Վենետոր, XV դ.)



Քրիստոս Հայտնվում է ժողովրդին

(Ա. Ա. նկարում 1836-1857 թթ.)

Սոզոմե
(Ջիովանի Բատիստելո, XV դ.)

Հերովդեսի խնջույքը և Հովհաննես Մկրտչի գլխատումը

Քրիստոս Մարթայի և Մարիամի հետ
(Վերմեր վան Դելֆտ, XVII դ.)

Մարթա և Մարիամ քույրերը
(Միքել-Անջելո Կարավաջո, XVII դ.)

Մարիամ Մագդալենացին յուղի սափորը ձեռքին

Հիսուս և սամարացի կինը Հակոբի ջրհորի մոտ



Ղազարոսի հարությունը
(Դուչիո դի Բուոնինսենիա, XIII դ.)

Ղազարոսի հարությունը
(Ջոտտո, XIV դ.)

Ղազարոսի Հարութիւնը
(Կիլիկյան դպրոց, XIII դ.)

Ղազարոսի Հարութիւնը
(Բյուզանդական դպրոց, XII դ.)

Մարիամ Մագդաղենացի
(Կառլո Կրիվելլո, XV դ.)

Յուղաբեր կանայք
(Վասպուրական, XV դ.)

կայված են սինեդրիոնի կողմից՝ մինչև երրորդ օրը: Գնում եմ բուրավետ նյութեր գնելու:

– Մենք էլ կգանք քեզ հետ,– ասաց Սաղոմեն: Նրանց միացավ Հակոբոսի մայր Մարիամը, և երեք կանանցով գնացին մոտակա խանութը:

Երեկոն իջնելուց հետո, երբ շաբաթ օրը փոխարինվում էր շաբաթվա առաջին օրով, Հովհաննան, Շուշանը ու Ղազարոսի քույրերը գնացին Զեբեդեոսի տուն՝ իրենց ընկերուհիներին այցի:

Նրանք բոլորը միասին նստել էին կանթեղի թրթռացող թույլ լույսի տակ: Պապանձված, վշտից վհատված ութ կին: Քրիստոսի ութ հավատարիմ աշակերտուհիները. Մարիամ Մագդալենացին, Սաղոմեն, Մարիամ Կղեովպասը, Հակոբոսի մայր Մարիամը, Հովհաննան, Շուշանն ու Ղազարոսի քույրերը՝ Մարթան ու Մարիամը: Նրանց վիշտն այնքան ծանր էր, որ անհնար էր մենակ կրել: Թվում էր, թե ահա կարտաշնչես ու ներշնչելու բան չի մնա: Վիշտը կանանց էր մոտեցրել ավելի, քան այն ժամանակ՝ ուրախությունը, երբ նրանք երջանիկ գնում էին Հիսուսի հետևից, նախանձախնդրորեն մեկը մեկից առաջ անցնելով շտապում էին ծառայել Նրան ու Նրա աշակերտների ոչ մեծ խմբին:

Վաղը կգա շաբաթվա առաջին օրն, ու կյանքը բոլորի համար կհոսի իր սովորական հունով, բայց ոչ նրանց համար: Ի՞նչ է լինելու այսօրվանից հետո: Դրա մասին նրանք հիմա չեն մտածում: Նրանց համար կյանքն ավարտվեց այնժամ, երբ Նիկոդիմոսն ու Հովսեփն Ուսուցչի դեռևս չսառած մարմինը գերեզման դրեցին ու այն մի մեծ քարով փակեցին: Այնտեղ, ծանր քարից այն կողմ, անշունչ պառկած է Նա, Ով բոլորովին վերջերս ասում էր. «Ես եմ կյանքը»: Նրանք հավատում էին Նրան, քանի որ Նրա՝ իրենց անձնական կյանքի մեջ մտնելով՝ այն փոխվեց: Փոխվեց այնպես, կարծես իրոք Երկնային Թագավորությունն իջել էր երկիր ու բնակվել իրենց մեջ: Նա մահացել էր, բայց իրենց սրտերում երբեմնի վառված սերը շարունակում էր վառվել նախկին կրակով, մի տարբերությամբ, որ այդ սերն այլևս չէր ջերմացնում, այլ վառում էր անդառնալի կորստի կրակով: Այդ կրակը կամաց– կամաց կայրի ամեն ինչ, իսկ մխացող մոխիրների տակ կմնան միայն տանջալից հիշողությունները:

Ահա այդպես, միասին նստելով, չասելով համարյա ոչ մի բառ, նրանք բաժանվեցին, պայմանավորվելով առավոտյան հանդիպել գերեզմանի մոտ:

Քիչ էր մնացել. թող որ լուսաբացը փոքր ինչ առկայծի, ու նրանք կգնան իրենց Ուսուցչի մոտ, նրա կողքին լինելու: Սա ամենակուլ ցանկություն էր. նրանց ուրիշ ոչինչ չէր մնացել, միայն անշունչ մարմինը Նրա, Ով Ինքն էր դեռ վերջերս շունչ հաղորդում անշունչ մարմիններին: Նրանք չկարողացան Նրան ոչնչով օգնել, երբ տառապելով մեռնում էր խաչի վրա, իսկ այժմ, ծայրահեղ դեպքում, կարող էին իրենց վերջին պարտքը կատարել Նրա առաջ: Կարող էին Նրան մատուցել թաղման բոլոր պատիվները, որ այդպես էլ մինչև վերջ չիրականացվեցին այն ուրբաթ երեկոյան՝ իրենց կյանքի ամենասարսափելի օրը:

Կույս Մարիամը նստել էր այգում, ծառի տակ, ուղիղ գերեզմանի դիմաց: Աստյանի կարգած տաճարի պահնորդները նիզակները գերեզմանի մուտքը փակող քարին հենած՝ խաղաղ քնել էին: Արցունքները մունջ հոսում էին Ամենասուրբ Կույսի աչքերից, իսկ շրթունքները Դավթի սաղմոսն էին շշնջում.

– Աստվա՛ծ, Աստվա՛ծ իմ, ես առավոտից քեզ եմ դիմում. հոգիս ծարավ է քեզ, առավել ևս մարմինն իմ, ինչպես մի անապատ ու անջուր երկիր, ուր ճամփա չկա: Այդպես էլ պիտի երևամ քո սրբարանում՝ տեսնելու փառքդ և

զորությունդ, քանզի ինձ համար քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքս, և շրթունքներն իմ պիտի գովեն քեզ: Այսպես իմ կյանքում քեզ պիտի օրհնեմ և քո անունով ձեռքս բարձրացնեմ[1]:

Բացի ճպուռների ճռճռոցից՝ ոչինչ չէր խախտում այգու լռությունը: Բայց շուտով նրանք էլ լռեցին: Իջած լռության մեջ լսվում էր միայն քնած պահնորդների ֆսֆսոցը: Հանկարծ գետինը տարուբերվեց: Պահնորդները վախեցած արթնացան ու առնելով նիզակներն՝ սկսեցին իրենց շուրջը նայել: Երկնքից, ձյունահերմակ հանդերձով, մի մարդ էր իջնում, ուղիղ դեպի նրանց մոտ: Նրանից այնպիսի կուրացուցիչ լույս էր ճառագում, որ պահնորդները կկոցեցին աչքերը: Մարդը մոտենում էր: Աներևակայելի սարսափ պատեց պահնորդներին ու նրանք, գիտակցությունը կորցրած, ընկան գետին: Կույս Մարիամն այդ ամենը տեսավ, բայց ոչ թե սարսափը պատեց Նրան, այլ՝ ակնածալից հիացմունքի անմեկնելի զգացմունքը: Փայլփլող հանդերձով Հրեշտակը մոտեցավ գերեզմանին ու քարն, ասես փետուրիկ, թեթևությամբ մի կողմ հրեց: Գերեզմանից, նույնպես շողարձակ հանդերձով, դուրս եկավ Իր Աստվածային

[1] Սաղմ. ԿԲ, 2-5

Որդին ու Իր անարատ ձեռքերը մեկնեց անչափ երջանիկ Իր Մորը:

Ուշքի եկած պահնորդները տեսան, որ քարը տեղաշարժված է ու գերեզմանը՝ դատարկ: Իրար մեջ գոնե մի բառ չփոխանակելով՝ նրանք սարսափահար դիմեցին փախուստի: Փախչելիս միայն մի միտք էր հետապնդում նրանց. «Արա՛գ, արա՛գ՝ այս սարսափելի վայրից»:

Քրիստոսի Մայրը մտավ տուն ու լուռ գնաց իր սենյակը: Կանայք տեսան, որ Նա զարմանալիորեն հանգիստ էր: Նրանց նույնիսկ թվաց, որ Աստվածամոր շուրթերին երանելի ժպիտ է խաղում: Նրանք զարմացել ու նույնիսկ անհանգստացել էին Նրա այդ վիճակից, քանի որ չէին կարող այն բացատրել: Բայց Կույս Մարիամը չդիմեց նրանց ու նրանք էլ ոչինչ չհամարձակվեցին հարցնել:

ԳԼՈՒԽ 33

Մարիամ Մագդաղենացին զգաց, որ այլևս ուժ չունի նստելու տանն ու սպասելու արևի առաջին շողերին: Նա որոշեց գերեզման գնալ մինչև լույսի բացվելն ու այնտեղ սպասել մյուսներին: Լուռ վեր կենալով տեղից՝ նա դուրս սահեց դռնից ու արագ քայլով շարժվեց դեպի Գողգոթա: Ասես հոգնած ամբողջ մի գիշեր տևած արթնությունից՝ Լիալուսինը նստեց Հորիզոնի գծին: Նրա մեռելային-գունատ լույսի տակ Մարիամ Մագդաղենացին տեսավ գերեզմանի մի կողմ գլորած քարն ու արագացրեց քայլերը: Քիչ էր մնում գետնին նետված նիզակի վրա սայթաքեր: Մագդաղենացու սիրտը մոլեգնաբար տրոփում էր անորոշ տագնապից: Գերեզմանի մոտ պահնորդություն չկար: Մի րոպե տատանվելուց հետո, լցվելով հանդուգն վճռականությամբ, նա գերեզման մտավ:

Մարիամն, ինչքան ուժ ուներ, գերեզմանից հետ վազեց քաղաք: Արդեն քաղաքի պարիսպների հետևում նա թեքվեց Մարկոսի տան կողմը: Կանանց նա տանն արդեն չհանդիպեց, նրանք հենց նոր էին գնացել գերեզման: Բայց Մարիամին նրա՛նք չէին պետք: Նա կանչեց Սիմոն Պետրոսին ու վաղքից շնչակտուր լինելով՝ հուզված ասաց.

— Տիրոջը վերցրել են գերեզմանից ու չգիտենք որտեղ են դրել:

— Ի՞նչ ես խոսում, կի՛ն,— զարմացած հարցրեց Պետրոսը:

— Ես ինքս եմ տեսել, քարը մի կողմ էր գլորած, իսկ գերեզմանը՝ դատարկ էր:

— Վազի՛ր, Մարիա՛մ, կանչի՛ր Հովհաննեսին:

Մարիամը վազեց Զեբեդեոսի տուն:

Շուտով վազելով եկավ լուրից հուզված Հովհաննեսն ու Պետրոսի հետ միասին գնացին Արիմաթացու այգին:

Այն ժամանակ, երբ Մարիամ Մագդաղենացին վազում էր Պետրոսին ու Հովհաննեսին հայտնելու Ուսուցչի մարմնի անհետանալու մասին, գալիլիացի կանայք՝ Հովհաննան, Շուշանն ու նրանց միացած Ղազարոսի քույրերը, գնում էին գերեզման: Լուսաբացը հազիվ էր նշմարվում: Կանայք տանում էին շաբաթվա նախօրյակին գնած բուրավետ յուղերը: Նրանք անցան այգու ծառերի միջով ու տարակուսած կանգ առան: Քարը գերեզմանից մի կող

էր գլորած: Լցված վախով ու անվճռականությամբ՝ նրանք, այնուամենայնիվ, իրենց մեջ արիություն գտան մոտենալու դերեզմանին ու ներսը նայելու: Այն դատարկ էր: Կանայք շփոթմունքի մեջ կանգնել էին գերեզմանի մոտ ու չգիտեին ինչ անել: Այդ ժամանակ նրանք տեսան, թե ինչպես են իրենց մոտենում շողարձակ հանդերձներով երկու այր: Բոլոր կանայք այդ անսովոր այրերի առջև ծնկի եկան:

— Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում,— դիմեց նրանց այրերից մեկը,— Նա այստեղ չէ, այլ՝ հարություն առավ:

— Հիշեցե՛ք,— ասաց մյուս այրը,— ինչպես էր դեռ Գալիլիայում Նա ձեզ ասում,— թե պետք է, որ Մարդու Որդին մատնվի մեղավոր մարդկանց ձեռքը, խաչվի ու երրորդ օրը հարություն առնի:

Շողարձակ հանդերձներով այրերն անհետացան այնպես հանկարծակի, ինչպես որ հայտնվել էին: Ծնկաչոք կանայք ելան և ուրախացած հետ շտապեցին տուն, որպեսզի այս անսովոր երևույթի մասին իմացնեն Քրիստոսի աշակերտներին: Ճանապարհին բոլորը միասին խոսում էին.

— Դրանք Աստծո ուղարկած հրեշտակներ էին,— ասաց Հովհաննան:

— Մեր Ուսուցիչը հարություն է առել,— ուրախ նրան կրկնեց Շուշանը:

— Հիմա ես հիշում եմ Հիսուսի խոսքերը, ինչպես էր խոսում Իր գալիք հարության մասին, իսկ մենք այն ժամանակ չէինք հասկանում Նրա խոսքերը,— հիացած ասում էր Մարթան:

Իսկ Պետրոսն ու Հովհաննեսը, Մարիամի պատմածից տագնապած՝ վազում էին դեպի դերեզման: Մագդալենացին հագիվ էր հասցնում նրանց հետևից: Նրանք ընտրեցին ամենակարճ ճանապարհն ու չհանդիպեցին գերեզմանից հետ եկող գալիլիացի կանանց:

Արդեն քաղաքի պարիսպներից այն կողմ Հովհաննեսն առաջ անցավ Պետրոսից ու գերեզմանին հասավ առաջինը: Նա մուտքի մոտ անվճռական կանգ առավ: Նրա հետևից հասած Պետրոսը վճռականորեն մի կողմ հրեց Հովհաննեսին ու առաջինն ինքը մտավ անձավ: Այնտեղ, ուր պիտի դրված լիներ Հիսուսի Մարմինը, միայն կտավներն էին, որոնցով գլխից մինչև կրունկն ամբողջ մարմինը ծածկող պատանքի վրայից փաթաթել էին հանգուցյալին: Պետրոսը տարակուսած դուրս եկավ գերեզմանից: Գլուխը կռացնելով՝ գերեզման մտավ Հովհաննեսը, որպեսզի անձամբ համոզվի, որ Հիսուսի մարմինն այնտեղ չէ: Երկու աշակերտ-

ները հետ վերադարձան իրոր մտածմունքի մեջ: Ի՞նչ կարող էր պատահել: Մի՞թե թշնամիները չեն ցանկանում Հիսուսին նույնիսկ գերեզմանում հանգիստ տալ: Մի՞թե նրանք որոշել են Ուսուցչի մարմինը անարգել նույնիսկ Նրա մահից հետո: Անգոր կատաղությունից Պետրոսը սեղմեց բռունցքները: Հովհաննեսն ակնածանքով տանում էր պատանքը, որ հեռանալիս վերցրել էր գերեզմանից:

Մագդաղենացին գերեզմանի մոտ մնաց մենակ: Հանկարծ նրան պատեց մենակության մի այնպիսի սարսափելի զգացում, ինչպիսին նրան պատել էր հոր մեռնելու ժամանակ: Ուսուցչի Անապական Մարմնի մասին թաղման վերջին հոգսը քաշելու պարտքը բթացել էր անդառնալի կորստի զգացումի սրությունը, որ նա զգացել էր Ուսուցչի թաղմանը: Իսկ այժմ նրանից այդ վերջին մխիթարիչ հոգսն էլ էին վերցրել ու նրա հոգում թաքնված կորուստի ողջ դառնությունը սեղմում էր կոկորդը: Շնչահեղձ լինելով, նա արդեն համարյա կորցնում էր գիտակցությունը, երբ անսպասելիորեն այդ դառնությունը տաք արցունքների հոսքով դուրս հորդեց: Այլևս ուժ չունենալով ոտքի վրա մնալու, նա ծնկի իջավ ու թեքվեց դեպի գերեզմանի մուտքը: Արցունքների միջից

նա տեսավ սպիտակ հագուստներով երկու պատանու: Նրանցից մեկը նստած էր Հիսուսի մի ժամանակ այնտեղ դրված մարմի գլխի, մյուսը՝ ոտքերի մոտ: Բայց սեփական վշտի ապրումներն այնքան ուժեղ էին, որ նա իրեն նույնիսկ հարց չտվեց. ովքե՞ր են այդ մարդիկ: Եվ երբ նրանք հարցրին. «Ով, կին, ինչո՞ւ ես լալիս»,— նա միայն այդ ժամանակ սթափվեց, զգալով այդ պատանիների կարեկցանքն իր վշտին:

— Վերցրել են իմ Տիրոջն ու չգիտեմ, թե ուր են դրել,— բացականչեց նա հուսահատ:

Այդ ժամանակ անբացատրելի զգացումն ստիպեց Մագդաղենացուն հետ շրջվել: Նրան թվաց, թե ինչ որ մեկը մոտենում է գերեզմանին: Իսկապես, այգու ծառերի միջով քայլում էր Մարդը: Մարիամն արցունքների միջից չէր կարող ճանաչել Նրան ու որոշեց, որ այդ այգեպանն է գալիս:

— Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս: Ու՞մ ես փնտրում,— հարցրեց Նա նրան:

Խեղճ կնոջ գլխում մի մխիթարիչ միտք առկայծեց. «Իսկ եթե այս պարտիզպանը դիտի, թե որտեղ են դրել իմ Ուսուցչի՞ն»:

— Տի՛ր,— աղերսելով դիմեց նրան,— եթե դու ես դուրս տարել Նրան, ասա ինձ, որտե՞ղ ես դրել Նրան, ու ես կվերցնեմ Նրան:

— Մարիա՛մ,— մեղմ ձայնով դիմեց նրան Մարգը, որին նա պարտիզպանի տեղն էր դրել:

Մագդաղենացին ցնցվեց: Ուրախությունը ողողեց նրա ամբողջ հոգին ու սիրտը: Այդպես իր անունը կարող էր արտասանել միայն Նա:

— Ուսուցիչ, հրճվանքով բացականչեց կինն ու ընկավ Քրիստոսի ոտքերը:

Մարիամի աչքերից նորից թափվեցին արցունքները, բայց դրանք արդեն ուրախության արցունքներ էին:

— Մի դիպչի՛ր Ինձ,— սիրալիր նրան ասաց Քրիստոսը,— քանի որ ես դեռ չեմ բարձրացել Իմ Հոր մոտ, այլ գնա Իմ եղբայրների մոտ ու ասա նրանց. «Բարձրանալու եմ Իմ Հոր ու ձեր Հոր, Իմ Աստծո ու ձեր Աստծո մոտ»:

Մարիամ Մագդաղենացին տուն թռավ ասես թև առած: Ուրախությունից, որով լեփլեցուն էր սիրտը, նա ամեն հանդիպողի ուզում էր ողջունել բացականչությամբ. «Քրիստոսը հարություն է առել»: Բայց այդ ուրախ լուրը, ըստ իր Աստվածային Ուսուցչի, պիտի ստանային Նրա մոտիկ աշակերտները՝ Քրիստոսի առաքյալները: Նրանց համար էլ նա տանում էր այդ ուրախությունը:

Մինչ այդմ լուսաբացն ավելի էր մտնում իր իրավունքների մեջ: Սաղոմեն, Մարիամ Կղեոպասն ու Հակոբոսի մայր Մարիամը, չսպասելով Մարիամ Մագդաղենացուն, գնացին դերեզման:

— Ո՞վ մեզ համար մի կողմ կտանի դերեզմանի մուտքի քարը,— ընկճված հոգոց էին հանում կանայք:

Բայց այնտեղ նրանք տեսան, որ քարը մի կողմ է տարված:

— Երևի մեզանից ինչ որ մեկն արդեն եկել է,— ենթադրեց Մարիամ Կղեոպասը:

Կանայք մոտեցան դերեզմանին ու ներս նայեցին: Այնտեղ, ուր պետք է դրված լիներ Հիսուսի մարմինը, նրանք տեսան աջ կողմը նստած մի պատանու՝ սպիտակ հագուստով զգեստավորված: Ուսուցչի թաղված տեղում նստած անծանոթի տեսքից կանայք մեծ շփոթության մեջ ընկան: Նրանք ուզում էին ինչ որ բան հարցնել նրան, բայց պատանին առաջ ընկավ նրանց հարցից.

— Մի՛ վախեցեք, ես գիտեմ, որ դուք փնտրում եք խաչված Հիսուս Նազովրեցուն: Նա հարություն առավ: Նա այստեղ չէ: Տեսեք ինքներդ, ահա տեղը, որտեղ Նա դրված էր: Դե՛, շտապ գնացե՛ք ու ասացե՛ք Նրա աշակերտներին ու Պետրոսին, որ Նա հարություն առավ մեռելներից ու կսպասի իրենց Գալիլիայում: Այնտեղ կտեսնեք Նրան, ինչպես ասաց ձեզ:

Լսելով այս խոսքերն ու հասկանալով, որ իրենց հետ խոսում է Աստծո Հրեշտակը, Սաղոմեն ու Մարիամ Կղեոփասը վախով ու մեծ ուրախությամբ տուն վազեցին, որ այդ լուրն ավետեն Հիսուսի բոլոր աշակերտներին: Հակոբոսի մայր Մարիամը, նույնպես համակված հուզմունքով ու սարսափով, գնաց Մարկոսի տուն, որ ամեն ինչ պատմի Պետրոսին: Ճանապարհին նրանք հուզված քննարկում էին Հրեշտակից լսածը, այնպես որ անմիջապես չնկատեցին իրենց ընդառաջ եկող Մարդուն: Իսկ երբ նկատեցին, ուրախ կանխազգացումից նրանց սիրտը թփրտաց, քանի որ ընդառաջ եկողը շատ նման էր Հիսուսին: Երբ Նա մոտեցավ նրանց ու ասաց. ուրախացե՛ք, հուզված կանայք, ապշանքի սարսուռով, նետվեցին նրա ոտքերը:

– Մի՛ վախեցեք,– ասաց նրանց Հիսուսը,– գնացե՛ք ու ավետեցե՛ք Իմ եղբայրներին, որ նրանք գնան Գալիլիա ու այնտեղ կտեսնեն Ինձ:

Մինչ այդ Հովհաննան, Շուշանն ու Ղազարոսի քույրերը եկան Մարկոսի տուն ու ավետեցին աշակերտներին Հրեշտակների հայտնվելու մասին: «Խեղճ կանայք,– գլուխներն էին օրորում ընկճված առաքյալները,– վշտից նրանց աչքին արդեն Հրեշտակներ են երևում»: Շուտով եկավ Մագդաղենացին, իսկ նրա հետևից հայտնվեց Հակոբոսի մայր Մարիամը, որ իսկապես վախեցած էր:

Մագդաղենացու ծայրաստիճան հուզված տեսքը միայն հաստատում էր առաքյալների ենթադրությունները, որ կանայք վշտից խելքը թռցրել ու ադատություն են տվել իրենց երևակայությանը՝ ընդունելով ցանկալին իբրև իրականություն: Մարիամ Մագդաղենացին, լսելով մյուս կանանց պատմությունները՝ չսկսեց բացեիբաց բոլորի մոտ պատմել Փրկիչի հետ իր անձնական հանդիպման մասին: Նա որոշեց. քանի որ Ուսուցիչն իրեն հանձնարարեց միայն տասնմեկ աշակերտներին ասել, որ Ինքը նրանց կհանդիպի Գալիլիայում, ուրեմն պետք է սպասել, մինչև կմնան միայն Նրա ամենամոտ աշակերտները:

Այդպիսի որոշման հանգեց նաև Հակոբոսի մայր Մարիամը: Բայց արդեն այն, ինչ պատմեցին կանայք Հրեշտակների մասին, մտահոգեց Պետրոսին ու նա որոշեց ստուգել. թե ինչը կարող էր այդպես հուզել նրանց: Պետրոսը նորից վազեց գերեզման ու ներս մտնելով՝ այնտեղ ոչինչ չտեսավ, բացի կտավներից: Նա դուրս եկավ գերեզմանից՝ ինքն իր մեջ նորից զարմանալով կատարվածից:

Երբ Պետրոսը վերադարձավ, Մագդաղենացին խնդրեց նրան հավաքել Հիսուսի ամենամոտիկ տասնմեկ աշակերտներին:

— Նորից Հրեշտակների հայտնվելու մասի՞ն պիտի խոսես,— խոժոռված հարցրեց Պետրոսը:

— Ոչ, ես ձեզ համար ավելի կարևոր բան ունեմ:

Պետրոսը կասկածանքով օրորեց գլուխը: Բայց շուտով բոլոր տասնմեկն էլ հավաքվեցին վերնատանը, որտեղ դեռ չորս օր առաջ իրենց Ուսուցչի հետ վերջին ընթրիքն էին վայելում, և ուղարկեցին Մագդաղենացուն կանչելու: Նա մտավ վերնասրահ, հանդիսավոր հայացք նետեց առաքյալների խոժոռ, չփոթահար ու արտասվաթոր դեմքերին ու հռչակեց.

— Ես տեսել եմ Տիրոջը:

Առաքյալների տարակուսած հայացքները շրջվեցին դեպի նա, իսկ Մագդաղենացին, ավելի շատ ոգևորվելով, շարունակում էր պատմել, թե ինչպես իրեն երևաց հարություն առած Ուսուցիչն ու իրեն ի՞նչ հանձնարարից փոխանցելու աշակերտներին: Առաքյալները լսում էին՝ գլուխները խոնարհած, նրանց համար անհարմար էր նայել խեղճ կնոջ աչքերին, որն, իրենց կարծիքով, վերջնականապես խելքը թռցրել էր:

Մարիամը նորից հայացքը դցեց Հիսուսի աշակերտներին ու հասկացավ, որ նրանք իրեն չեն հավատում:

— Դուք ինձ չե՞ք հավատում: Բայց ես արդեն պատմել եմ այն ամենն, ինչ տեսել եմ ու ոչինչ ավելացնել չեմ կարող:

Այս ասելով Մարիամն արտասվեց վիրավորանքից, որ առաքյալները չեն կարողանում հավատալ իր խոսքերին:

— Մարիամ,— խոժոռված ասաց Հովհաննեսը,— մենք չենք մտածում, որ դու մեզ խաբում ես: Մենք գիտենք, որ դու ազնիվ կին ես: Բայց այդ ամենը կարող էր քեզ թվալ:

— Ոչ,— բացականչեց Մարիամը,— ես տեսա Հիսուսին այնպես, ինչպես հիմա ձեզ եմ տեսնում:

Ափսոսանքով նայելով առաքյալներին՝ նա դուրս եկավ վերնատնից:

Կանանց վշտացրել էր առաքյալների չհավատալը Հիսուսի հարությանը: Բայց նույնիսկ այդ հանգամանքը չէր կարող խլել այն ուրախությունը, որ Հիսուսը ողջ է ու իրենցից ոմանք տեսել են Նրան:

— Մի՛ վշտացիր, Մագդաղենացի՛,— հանդստացնում էր նրան Մարիամ Կղեոփասը,— որ առաքյալները քեզ չհավատացին, իսկ ինձ չհավատաց իմ սեփական ամուսինը: Ահա թե

ով պիտի վշտանա: Եվ այդպես էլ, ասելով, որ այդ ամենն իմ աչքին թվացել է, Ղուկասի հետ գնաց Էմմավուս:

Քրիստոսի Մայրը նայում էր կանանց ուրախ ու հուզված դեմքերին ու ժպտում երեխաների երջանկության համար ժպտացող մայրական ժպիտով: Այդ ամբողջ առավոտը նա անցկացրեց իր սենյակում՝ այդ գիշեր իր ապրած ուրախության համար երախտագիտությամբ աղոթելով Աստծուն: Նա դեռ որոշ ժամանակ ոչ մեկի չէր բացում իր գաղտնիքը, քանի որ այդ մասին չկար Իր Աստվածային Որդու հրահանգը, իսկ Աստվածամայրը երբեք ոչինչ չէր անում իր հայեցողությամբ:

Բայց արդեն երեկոյան կանայք տեսան հրճվող առաքյալներին, որոնց հայտնվել էր հարություն առած Փրկիչը: Առաքյալները պատմում էին, թե Ուսուցիչն իրենց հանդիմանեց, որ իրենք չէին հավատացել կանանց: Պատկառելի տղամարդիկ հնազանդորեն ներում էին խնդրել: Հատկապես ուրախացել ու Աստծուն երախտապարտություն էր հայտնում Մարիամ Կղեովպասը, որ Նա հատուկ սիրալիր էր եղել իր ամուսնու հանդեպ: Էմմավուսի ճանապարհին Քրիստոսի հայտնվելու մասին Կղեովպասն արդեն հարյուրերորդ անգամն էր պատմում:

Դեռ քառասուն օր Փրկիչը երևաց իր աշակերտներին: Եվ այդ ամբողջ ժամանակ ուրախությունը չէր հեռանում առաքյալներից ու կանանցից: Բայց երբ քառասուներորդ օրը Քրիստոսը տարավ նրանց Ձիթենյաց լեռն ու սկսեց հրաժեշտ տալ, բոլորը տխրեցին: Այդ տխրությունը հուսահատություն չէր դառնում, քանի որ Տերը նրանց սրտերին հույս էր տվել, ասելով, որ շուտով նրանց ուրիշ Մխիթարիչ կուղարկի, որ նրանց հետ կլինի մինչև ժամանակների վախճանը:

ԳԼՈՒԽ 54

Քրիստոսի հանձնարարությամբ Նրա աշակերտները բոլորը միասին մնացին Երուսաղեմում սպասելով Տիրոջ խոստացածին: Երբ Զատիկի հիսուներորդ օրը Սուրբ Հոգին իջավ աշակերտների վրա, Մարիամ Մագդաղենացին ասաց.

– Ինձ այստեղ այլևս ոչինչ չի պահում: Ես պետք է գնամ ու կատարեմ իմ Ուսուցիչ ու Տեր Հիսուս Քրիստոսի հրամանը: Ես կգնամ, ինչպես ինքն ասաց, մինչև աշխարհի ծայրն ու կտանեմ Նրա հարության ավետիսը:

Նա ջերմորեն հրաժեշտ տվեց բոլորին ու գնաց Պտողեմայիդա: Այնտեղ նա նավ նստեց, որ Հռոմ էր գնում: Նրա գլխում կայսր Տիբերիոսին հասնելու ու նրան հարություն առած Քրիստոսի մասին պատմելու հանդուգն միտք էր ծագել: Մագդաղենացուն թվում էր, որ եթե հնարավոր լինի այդպիսի հզոր տիրակալի Քրիստոսի հավատին բերել, ապա նրա օգնությամբ հեշտ կլինի քրիստոնեական ուսմունքը

տարածել ամբողջ աշխարհում: Բայց Հռոմում կնոջը հիասթափություն էր սպասում: Պարզվեց, որ կայսրը վաղուց իր մայրաքաղաքում չի ապրում, տեղափոխվել է Կապրի կղզի: Իսկ այնտեղ, Հռոմում, բոլորին կառավարում է ամենազոր Սեյանոսը[1], որի մոտ ընդունելության ընկնելը բարդ էր ոչ միայն իր, հասարակ կնոջ համար, այլ նույնիսկ կայսրության անվանի մագիստրոսի: Մագդաղենացին տեղավորվեց հրեական թաղամասում: Հռոմի հրեական գաղութում Քրիստոսի մասին քարոզելուց ոչինչ չստացվեց: Կնոջը ժողովարանում Գրքերը կարդալ ու մեկնել չէր կարելի: Մագդաղենացին փորձեց ժողովից դուրս եկող հրեաների հետ փողոցում խոսել, բայց նրանից փախչում էին ինչպես խելագարից: Կանայք էլ էին անծանոթուհուց հեռու քաշվում: Հեթանոսները, որոնց հետ նրան հաջողվեց շփվել, պատմություններն լսում էին ինչպես լավ ավարտով սարսափելի հեքիաթներ: Բայց երբ նա ասում էր, որ հեթանոսական աստվածները կեղծ են, նրանք մռայլ տարուբերում էին գլուխները.

– Մենք չենք պարսավում քո Աստծուն, և դու էլ չպիտի պարսավես մեր աստվածներին:

[1] Լուկիոս Սեյանոս (21 ՔԱ - 31 ՔՀ) - պրետորիական գնդի հրամանատար, Հռոմի կառավարիչ - ծնթ. խմբ.:

Հռոմեացին միայն այն ժամանակ է լավ քաղաքացի, երբ պաշտում է հայրենական աստվածներին: Չէ՞ որ դու հռոմեուհի չես, և քեզ թույլատրելի է պաշտել միայն քո Աստծուն:

Այդ ամենից կարելի էր հուսահատության մեջ ընկնել: Նրա համար մեծ ուրախություն էր Քրիստոսի հավատն ընդունած երուսաղեմցի հրեա Մաքսիմինը: Կալիդոնիայի հետ նա Հռոմ էր եկել գործերով: Ի զարմանս և հուրախություն իրեն, Մարիամը, հանձին նրա, ճանաչեց այն կույրին, որին բուժել էր Քրիստոսը: Մաքսիմինը պատմեց Մարիամին, որ Կալիդոնիային ինքն ավելի շուտ է ճանաչել, երբ նա դեռ ողորմություն էր խնդրում և ինքը մի անգամ չէ, որ խեղճին փող էր տվել: Ու երբ տեսել էր աչքերը բացված Կալիդոնիային, ծայրաստիճան զարմացել էր այդ երևույթից ու հետևելով նախկին կույրին, սկսել էր հարցուփորձ անել այդ հրաշքի մասին: Վերջիվերջո նրան հաջողվել էր իմանալ, որ կույրին բուժել էր Հիսուս Նազովրեցին: Ինքն էլ ցանկացել էր տեսնել այդ անսովոր Մարդուն: Բայց Զատիկին Երուսաղեմում չէր եղել: Այդպես էլ չհանդիպելով Քրիստոսին՝ Մաքսիմինը նույնիսկ չգիտեր էլ Նրա խաչվելու մասին:Նա Երուսաղեմ այցելել էր միայն Պենտեկոստեի տոնին ու այնտեղ տեսել ինչ որ հռետորի ունկնդրող մարդկանց մեծ ամբոխ: «Երբ ես մոտեցա,– պատմում էր Մաքսիմինը Մագդալենացուն,– լսեցի հետևյալ խոսքերը. «Իսրայելի այրե՛ր: Լսեցե՛ք խոսքն իմ. Հիսուս Նազովրեցուս, զորություններով ու հրաշքներով ու նշաններով, Աստծուց ձեզ վկայված Այրիս, որոնք Իմ միջոցով իրագործեց Աստված, ինչպես և դուք ինքներդ գիտեք...»: Լսելով Հիսուս Նազովրեցու անունը, ես քիչ էր մնում ճչայի. այո՛, ես գիտեմ Նրա հրաշքները: Ես զսպեցի ինձ ու լսում էի հռետորին՝ ջանալով բաց չթողնել ոչ մի բառ: Երբ ես լսեցի, թե Հիսուսին խաչել են, քիչ էր մնում արտասվեի, բայց արդեն Նրա հարության մասին հաջորդ բառերը հարություն տվեցին նաև իմ հավատին:

Երբ վերջացավ ճառը, ես ձայն տվեցի. մենք ի՞նչ անենք: Շուրջը բոլորն սկսեցին հարցնել.մենք ի՞նչ անենք, եղբայր այրեր: Եվ, ինչպես հիմա գիտեմ, Պետրոս կոչված մարդն ասաց. «Ապաշխարեցե՛ք, և թող ձեզանից ամեն մեկը մեղքերի թողության համար մկրտվի՛ հանուն Հիսուս Քրիստոսի և ստացե՛ք Սուրբ Հոգու շնորհը...»: Ես հենց նույն օրը, ինչպես և ուրիշ շատերը, մկրտվեցի հանուն Քրիստոսի: Հետո ես փնտրեցի Կալիդոնիային, նա նույն-

պես կնքվեց: Այժմ մենք հարազատ եղբայրների պես չենք բաժանվում:

Մարիամն ուրախությամբ լսեց Մաքսիմինի պատմությունն իրեն ծանոթ Պենտեկոստեի դեպքերի մասին ու շնորհակալություն հայտնեց Աստծուն՝ Սուրբ Հոգու շնորհի պտուղների մասին լսելու իրեն պարգևած ողորմածության համար: Նա Մաքսիմինից լսեց Անտիոքում քարոզչության հաջողության մասին: Նրա գալով Հռոմի հրեաների մեջ քարոզելու գործը տեղից շարժվեց: Մաքսիմինը գնաց ժողովարան ու կարդալով Գրքերը, սկսեց մեկնել դրանք ու խոսել Քրիստոսի մասին. ժողովից հետո մի քանի մարդ գնացին նրա հետևից: Նրանցից մեկը հրեա էր, իսկ երկուսը՝ Հռոմի կրոնափոխ քաղաքացի: Երբ նրանք գնացին հռոմեացիներից մեկի տուն, եկավ Մարիամ Մագդաղենացու խոսելու հերթը: Մաքսիմինը նրան ներկայացրեց իբրև Քրիստոսի մերձավորագույն աշակերտուհու: Մարիամի պատմությունը լսողների վրա այնպիսի տպավորություն թողեց, որ նրանք անմիջապես ցանկացան կնքվել:

ԳԼՈՒԽ 35

Շուտով Մաքսիմինը պատրաստվեց տուն՝ Հրեաստան վերադառնալու, իսկ Մարիամը որոշեց նավարկել նրա հետ: Նա մի ոչ մեծ նավ վարձեց: Առհասարակ, ձմռանը նավերը համարյա չէին լողում, տարվա այդ եղանակին ծովում փոթորիկները հաճախ էին լինում, բայց նավի նավապետը համարձակ մարդ դուրս եկավ ու համաձայնվեց նրանց տանել Փիլիպեի Կեսարիա նավահանգիստը:

Չէին հասցրել նրանք դուրս գալ նավահանգստից՝ փոթորիկ բարձրացավ: Նավի տերն արդեն ոչ թե ուղղությունը պահելու մասին էր մտածում, այլ միայն, որ նավը չխորտակվի: Տարերքի կամքին հանձնված նավը շուտով կղզի հասավ: Նավապետին հաջողվեց նավը բարեհաջող անցկացնել խութերի միջով ու հասցնել ոչ մեծ մի ծովախորշ: Ինչպես պարզվեց, դա Կապրի կղզին էր: Մարիամ Մագդաղենացին դրանում տեսավ Աստծո նախախնամությունն ու հայտարարեց, որ գնալու է կայ-

սեր մոտ: Նավապետը զարմացած աչքերը չռեց Մագդաղենացու վրա, իսկ հետո սկսեց հռհռալ.

— Իսկ դու նրան ի՞նչ ընծա ես տանելու,— ծիծաղից խեղդվելով ասաց նավապետը,— չէ՞ որ կայսեր մոտ առանց ընծաների գնալն ընդունված չէ:

— Ինչ եմ տանելո՞ւ,— շուրջը նայելով՝ հարցը կրկնեց Մագդաղենացին:

Նրա հայացքն ընկավ ծղոտի մեջ հավի հենց նոր ածած ձվին: Նավի նավապետը սիրում էր թարմ ձու և նավարկելիս միշտ մի քանի ածան հավ էր հետը տանում:

— Այ, սա՛,— ձեռքը վերցնելով ձուն՝ ասաց Մագդաղենացին:

— Կայսերը հասարակ ձու ընծայե՞լ,— շարունակում էր ծիծաղել նավատերը,— այդպիսի բան դեռ չէի լսել:

— Ինչո՞ւ է հասարակ, առարկեց Մագդաղենացին,— իսկ ես այն կներկեմ, որ համապատասխանի իր բարձր նշանակությանը:

Երբ Տիբերիոսին զեկուցեցին, որ Հրեաստանից ինչ որ կին համառորեն ընդունելության է ձգտում ու ցանկանում է կայսրին կարևոր բան հաղորդել, նա, ի զարմանս քարտուղարի, հրամայում է այդ կնոջն իր մոտ բերել: Մարիամ Մագդաղենացին հաճելիորեն զարմացավ կայսեր սենյակի պարզ իրավիճակից: Նրա առջև բազկաթոռին նստել էր տարեց ու նիհար մի մարդ՝ անպարդ, պարզ տունիկայով: Մագդաղենացին նույնիսկ կասկածեց. կա՞յսր է արդյոք իր առջև: Նկատելով նրա շփոթմունքը՝ Տիբերիոսը քաջալերեց նրան.

— Ասա, ի՞նչ գործ է քեզ ինձ մոտ բերել: Թե մտածում ես, քանի որ ծերուկը մեկուսացել է, ուրեմն անելու բան չունի,— այս ասելիս կայսրը ծերունաբար ծիծաղեց,— հի՛-հի՛-հի՛:

— Օ՜, աշխարհի արժանավորագույն կառավարիչ,— ես, Գալիլիայի Մագդաղենայից Մարիամս, մտքովս էլ չեմ անցկացնի, որ դու անգործության մեջ ես: Աստված վստահել է քեզ այսքան լայնարձակ հողերի կառավարումը, որը հասարակ մարդու ուժի բան չէր լինի:

Ժպիտ հիշեցնող ինչ որ բան պատկերվեց Տիբերիոսի բարակ, ամուր սեղմված շուրթերին: Զգիտես ինչու նրան դուր եկավ այդ խոշոր ու սև աչքերով խելացի կինը:

— Ինչ որ բան նաև իմ սենատն է անում,— ասաց նա,— իսկ ես, այնուամենայնիվ, կգերադասեի քեզ լսել առանց ավելորդ ներածականի:

— Ես եկել եմ պատմելու քեզ այն ամենի մասին, ինչ կատարվեց վերջերս քո իշխանության ներքո գտնվող Հրեաստանում: Քո կուսակալ

Պոնտացի Պիղատոսը, մեր ավագանու մեղադրանքով, խաչելով ամոթալի մահվան մատնեց Հիսուս Նազովրեցուն, Ով մեզ Աստվածային ուսմունք բերեց բոլոր մարդկանց լուսավորելու համար:

Կայսրը դժգոհ կնճռոտվեց:

— Դու եկել ես դանդատվելու իմ հրամանով Հրեաստանի կուսակալի պաշտոնը կատարող հեծյալ Պոնտացի Պիղատոսի՞ց:

— Ոչ, տիրակալ: Քրիստոս կոչեցյալ Հիսուսին, որին անարդարացիորեն դատապարտեց Պիղատոսը, երրորդ օրը Աստված հարություն տվեց: Գլխավորն այս է, ինչ ես ուզում էի տեղեկացնել քեզ: Ընդունի՛ր իմ ընծան, քանի որ Քրիստոսը հարություն առավ:

Այս ասելով՝ Մարիամը հանեց կարմիր ներկած ձուն ու տվեց կայսրին: Նա տարակուսած նայեց Մագդաղենացուն:

— Դու ուզում ես ասել, որ ձեզ մոտ, Հրեաստանում, ինչ որ մեկը լուրեր է տարածում, որ մահապատժի ենթարկվածը նորից կենդանացե՞լ է,— հարցրեց Տիբերիոսը՝ քմծիծաղով ձեռքում խաղացնելով ձուն:

— Այո, մեծ կայսր, միայն թե ես խոսում եմ ոչ թե լուրերի, այլ այն մասին, որ տեսել եմ իմ աչքերով: Ես ինքս վկա եմ եղել Նրա մահվանը

խաչի վրա: Իսկ երրորդ օրը Հիսուսը երևաց ինձ, և նրա ոտքերին ու ձեռքերին գամերի վերքեր կային:

Երբ Մագդաղենացին ասում էր սա՝ կայսրն իր խամրած աչքերի հայացքը բարձրացրեց նրա վրա ու նրանցում հետաքրքրություն երևաց:

— Լսի՛ր ինձ, կի՛ն, եթե մի ինչ որ բանով դու ինձ զարմացրեցիր էլ, ապա ոչ թե քո հարություն առած Քրիստոսով, այլ նրանով, որ դու ինքդ ես հավատում Նրան, ինչ ինձ ասում ես: Եթե Նա, ում մասին խոսում ես, իսկապես Աստված է, այդ արդեն ոչինչ չի փոխի իմ կյանքում: Կորցնելով հավատն իմ աստվածների նկատմամբ, ես չեմ կարող հավատալ ուրիշներին: Ես արդեն ամփոփել եմ իմ կյանքի արդյունքներն ու գիտեմ, որ ոմանց համար ես հավերժ կմնամ չարագործ, իսկ ուրիշները պիտի փառաբանեն իմ հանճարը: Բայց բանջարանոցում իմ ձեռքերով աճեցրած կաղամբն ինձ ավելի է ուրախացնում, քան մարդկային ամբոխի փառքը կամ կշտամբանքը: Աստվածների մասին ես բոլորովին դադարել եմ մտածել: Ոչ, ես նրանց չեմ հերքում, ինչպես որոշ թերահավատներ: Պարզապես՝ աստվածներն իրենց համար, ես՝ ինձ համար:

Կայսրի մոտից Մարիամ Մագդաղենացին դուրս եկավ մի քիչ հիասթափված ու մտահոգ: Նա հանկարծ գիտակցեց, որ հավատի համար միայն իմացությունը մարդուն բավական չէ, անհրաժեշտ է, որ նա սրտով կարոտ ունենա Երկնային Արքայության ու Աստծո ճշմարտության: Միայն այդպիսի ծարավի հոգին է ընդունակ ընկալելու Քրիստոսի հարության քարոզը, քանի որ Նրա մասին խոսքը կարոտը փոխարինում է խինդով, իսկ Աստծո ճշմարտության հետ շփումը սնունդ է տալիս նման մարդու մտքին ու սրտին: Տիբերիոսի մեջ նա միայն մշտապես աննկարագրելի երկրային թագավորության կարոտ տեսավ ու փախուստ այդ անհաջողություններից՝ դեպի բանջարանոցի կաղամբի մարդը:

ԳԼՈՒԽ 36

Ծովը շուտով հանդարտվեց, ու նավապետը որոշեց շարունակել նավարկությունը: Լավ եղանակը պահպանվեց միայն կես օր: Երեկոյան կողմ փչեց ուժեղ հանդիպակաց քամի: Քամին այնպիսի ուժ ուներ, որ նավն, ասես վրան թևեր էին աճել, ուղղակի թռչում էր արևմուտք: Նավապետը, չփորձելով էլ դիմադրել քամուն, աղոթում էր բոլոր աստվածներին, որ մթան մեջ չդարնվեն խութերին: Գիշերն ալեկոծությունը մոլեգնեց: Հարկ եղավ հավաքել առագաստը, որ նավը չքշվի քամուց: Առավոտյան կողմ փոթորիկը չհանդարտվեց, այլ ընդհակառակը, ավելի սաստկացավ:

— Օ՜, Պոսեյդոն, ինչո՞ւ ես դու մեզ վրա գայրանում,— փորձելով նավախելի ղեկաթիով նավին ինչ որ կերպ ուղղություն տալ՝ աղաղակում էր նավատերը:

Նրան օգնում էին իր վարձած երկու մարդիկ՝ մի պատանի ու մի տարեց նավաստի: Կոտրված կայմը ճրթճրթյունով փլվեց ու ընկավ պատա-

նու գլխին: Նա կիսամեռ փովեց տախտակամածին ու անշարժացավ:

— Խեղճ Լիպպի, նա մեռավ,— բացականչեց տարեց նավաստին,— ի՞նչ պիտի ասեմ ես նրա մորը, սա նրա միակ զավակն էր:

Մարիամ Մագդալենացին ծունկ չոքեց ու սկսեց ջերմեռանդ աղոթել Աստծուն: Շուտով Լիպպին հառաչեց ու բացեց աչքերը: Այդ ժամանակ նավի ստացած ուժեղ հարվածից պատանին դուրս շպրտվեց նավից: Սարսափելի թխկոց լսվեց. նավը խութերի վրա էր ընկել: Մարիամ Մագդալինացին, առանց մտածելու, պատանու հետևից ջուրը նետվեց: Սուզվելով խորքը՝ նա բացեց աչքերն ու փոթորկի պղտորած ջրի մեջ հազիվ տարբերեց ծովանդունդը սուզվող պատանու մարմինը: Նա լողալով մոտեցավ Լիպպիին ու նրան, մազերից բռնելով, իր հետևից քաշեց ծովի երեսը: Պատանին անգիտակից էր: Որպեսի դեմքը լինի ջրի երեսին՝ Մագդալենացին ձախ ձեռքով բռնեց նրա գլուխը, իսկ աջով սկսեց թափահարել: Նրա ուժերն արդեն սպառվում էին: Մարիամն զգում էր, որ էլի մի քիչ, ու նա իր փրկած պատանու հետ կսուզվի հատակը:

— Տեր Հիսուս Քրիստոս, օգնի՛ր ինձ:

Հազիվ էր հասցրել ասել այդ խոսքերը, որ

սկսեց սուզվել ավելի խորը, բայց այդտեղ ուժեղ ձեռքեր բռնեցին նրան ու դուրս հանեցին ջրից: Մարիամը շուրջը նայեց: Նա գտնվում էր նավի լողացող բեկորի վրա, որն լաստի պես մի բան էր հիշեցնում: Տարեց նավաստին զբաղված էր պատանիով, որ չափից դուրս ծովի ջուր էր կուլ տվել: Վերջապես Լիպպին հազաց ու ջուրը դուրս թափելով՝ սկսեց ազատ շնչել: Նավապետը լաստի վրա չէր, տարեց նավաստին տեսել էր, թե ինչպես նա ջրի տակն անցավ ու այլևս չերևաց:

Մաքսիմինն ու Կալիդոնին հրաշքով փրկվեցին: Փոթորիկն սկսել էր հանդարտվել: Շուտով նավաստուն հաջողվեց նավի մի բեկոր էլ բարձրացնել ու թոկերի միջոցով լրացուցիչ ամրացնել լաստը: Առավոտը ծագած արևն սկսեց անխնա այրել: Վերջնականապես ուժասպառված ճանապարհորդները պառկել էին արևի տակ, լաստին: Ծարավը տանջում էր նրանց բոլորին, հատկապես բավական շատ աղի ջուր կուլ տված պատանուն: Երեկոյան կողմ շոգը թուլացավ, բայց ծարավն ավելի ուժեղացավ: Հազիվ հաջողվեց Կալիդոնիային ծովի ջուր խմելուց հետ պահել: Հաջորդ օրը նայելով, թե ինչպես է տառապում Լիպպին՝ նավաստին ասաց.

— Կին, արժե՞ր արդյոք, որ դու փրկեիր այս դժբախտին, որպեսզի նա հիմա մեռնի ծարավից: Եթե Աստված, Ում մասին դու ամբողջ ժամանակ պատմում ես, կարող է թեկուզ ինչ որ բանով օգնել, խնդրի՛ր Նրան, որպեսզի Նա այս ջրերը խմելու համար պիտանի դարձնի: Եթե այդ հրաշքը տեղի ունենա, ես կհավատամ Նրան:

Մագդաղենացին սկսեց աղոթել: Քամին ուժգնանում էր, բայց փոթորիկի չէր վերածվում: Մինչև երեկո Մագդաղենացին ծնկաչոք աղոթում էր: Դրանից հետո էլ, երբ բոլորն արդեն քնել էին, առանց ոտքի կենալու շարունակում էր աղոթել: Առավոտյան քաղցից ու ծարավից վատ քնած նավաստին արթնացավ ու հարցրեց.

— Դե ի՛նչ, կի՛ն, քո Աստվածը չի՞ կարող հրաշք գործել:

— Վերցրո՛ւ ու խմի՛ր,— հանդիստ ասաց Մարիամը:

Նավաստին կասկածանքով քմծիծաղ տվեց, ձեռքի ափով ջուրը քաշելով հոտոտեց, լեզվով լիզեց, ապա հանկարծ շուրթերը հպելով՝ ամբողջը միանգամից ներս քաշեց ու լաստից ջրին խոնարհվելով՝ սկսեց ագահորեն խմել: Հետո ուրախ բացականչելով՝ նա ափերի մեջ ջուր

առավ ու տարավ լաստին ուժասպառ պարկած պատանուն:

— Խմի՛ր, Լիպպի՛, սա իսկական ջուր է:

Մաքսիմինն ու Կալիդոնին նույնպես ուրախությամբ ջրին վրա ընկան: Վաղ առավոտ էր, արևը նոր սկսում էր բարձրանալ արևելքում: Արևմուտքում թանձր մշուշից ոչինչ չէր երևում: Արևն ավելի ու ավելի ուժեղ էր տաքացնում, ու մշուշն սկսեց ցրվել: Զարմացած ճանապարհորդների աչքերի դեմ ցամաքն էր տարածվում: Լաստը կանգնած էր մեծ գետի գետաբերանին.

— Է՛,— հիասթափված ձգեց նավաստին,— այնպես է ստացվում, որ հրաշք չկա, այս ջուրը գետի է:

— Հիմար մարդ ես դու,— ասաց Մաքսիմինը,— Հիսուս Քրիստոսը, մեր Աստվածը, Մարիամ Մագդաղենացու աղոթքներով ոչ միայն մեզ քաղցրահամ ջուր խմացրեց, այլ նաև մեր լաստը բերեց փրկարար ափ:

Որպեսզի լաստը մոտեցնեն ափին՝ ճանապարհորդները փորձեցին թիավարել ձեռքերով: Բայց գետի ջրի հոսանքը նրանց ողջ ջանքերն ի չիք էր դարձնում: Շուտով նրանք վերջնականապես ուժասպառվեցին: Մինչև ափը հեռու չէր, ու Մարիամն առաջարկեց լողալով անցնել:

Բայց պարզվեց, որ Մաքսիմինն ու Կալիգոնին լողալ չգիտեն: Մարիամ Մագդաղենացին, տարեց նավաստին ու պատանին մտան ջուրն ու ոտքերով աշխատելով՝ սկսեցին լաստը դեպի ափն առաջ հրել: Վերջապես ուժասպառված, նրանք ցամաք ելան ու չկարողանալով սովից ու հոգնածությունից առաջ գնալ՝ անմիջապես պառկեցին ափին:

Փոքր ինչ հանգստանալով՝ քարշ գալով նրանք հասան մոտակա մի տուն:

— Ո՞ր երկիրն է Աստված մեզ բերել,— հարցրեց Մարիամ Մագդաղենացին տանտերերին:

— Սա Գալլիայի Մասսալիան[1] է,— պատասխանեց զրուցասեր տանտերը,— այստեղ հռոմեական կայազոր կա տեղակայված, իսկ քաղաքը կառավարում է Հռոմի պրեֆեկտը: Բացի տեղացի բնակիչներից՝ գալլերից, այստեղ նաև հույներ ու հռոմեացիներ են ապրում:

— Իսկ այստեղ հրեաներ չե՞ն ապրում:

— Իսկ նրանք որտե՞ղ չկան,— նույնիսկ զարմացավ տանտերը,— իհարկե, ապրում են: Նրանք նույնիսկ տեղ ունեն, ուր հավաքվում են իրենց Աստծո մասին խոսելու:

[1] Մասսալիա - Ֆրանսիայի միջերկրածովյան ափի այժմյան Մարսել քաղաքն է. Գալլիան՝ ժամանակակից Ֆրանսիայի հարավային մասը I դարում հռոմեական նահանգ էր:

— Հիանալի է,— բացականչեց Մաքսիմինը,— այստեղ նույնիսկ ժողովարան կա: Վաղը շաբաթ է, ու մենք կգնանք այնտեղ, որ տանենք Քրիստոսի մասին լուրը:

— Դուք էլ եք հրեանե՞ր,— հետաքրքրվեց տանտերը:

— Այո,— պատասխանեց Մաքսիմինը:

Այդ ժամանակ տանտերը սկսեց նրան հարցուփորձ անել, թե ո՞ր Քրիստոսի մասին է պատրաստվում լուր տանել իր ազգակիցներին: Մարիամը կանգնեց ու ասաց.

— Իմ Աստված Հիսուս Քրիստոս, երախտապարտ եմ քեզ, որ ինձ ցույց տվեցիր Քեզ ծառայելու իմ վայրը:

ԳԼՈՒԽ 37

Հերովդիայի կյանքն անուրախ էր անցնում: Պալատները, իշխանությունն ու հարստությունը չբերեցին նրան այն երջանկությունը, որը նա երազում էր այն ժամանակ, երբ ինքն այդ ամենը չուներ: Հովհաննես մարգարեի սպանությունից հետո վատ կանխազգացումը արդեն երբեք չէր լքում չորրորդապետի կնոջը: Նրա անհանգստությունը փոխանցվեց նաև Անտիպասին: Երբ նա լսեց Նազովրեցի Հիսուսի մասին, որ հրաշքներ էր գործում, նրա գլխում մի միտք առկայծեց. արդյո՞ք նա վերակենդանացած Հովհաննես Մկրտիչը չէ: Հետո, երբ Պիղատոսը նրա մոտ ուղարկեց կալանավորված Հիսուսին, նույնիսկ ուրախացավ, որ անձա՛մբ կարող է համոզվել, թե այդ մարդն իրո՞ք կարող է հրաշքներ կատարել: Բայց նրա մոտ բերված Նազովրեցին ոչ մի խոսք չասաց, որով հիասթափեցրեց չորրորդապետին: Երբ Երուսաղեմում սկսեցին լուրեր տարածվել մեռելներից Հիսուսի հարություն առնելու մասին, քահանայապետ Կայիափան հավատացրեց

չորրորդապետին, որ աշակերտներն իրենք են դողացել իրենց Ուսուցչի մարմինն ու հայտարարել Նրա հարության մասին: Լսելով սա՝ Անտիպասը ծիծաղեց ու մոռացավ իր համար կյանքի այդ աննշան դրվագի մասին: Բայց, այ, Հովհաննես Մկրտիչի մասին չէր կարողանում մոռանալ ու ամեն անգամ, երբ սեղանին նրան կերակուր էին մատուցում, նա ցնցվում էր: Հերովդիային Երուսաղեմում կատարվող ոչ մի իրադարձություն չէր հետաքրքրում: Շուտով նրա մոտ իր հոգսերն առաջացան: Մահացավ Սաղոմեի ամուսինը՝ Պանաիդայի ու Բատանեի չորրորդապետ Փիլիպպոսը: Հարկավոր էր հոգալ սիրելի դստեր մասին: Երիտասարդ այրու համար այստեղ՝ Հրեաստանում, արժանավոր փեսացու գտնելը դժվար էր, և թեկնածու որոնելու համար Հերովդիան սկսեց հռոմեական ազնվականության մեջ աչք ածել:

Մինչ այդ Արետասի դեմ Անտիպասի բողոքները վերջապես ազդեցություն ունեցան: Տիբերիոսը հրամայեց պատժել կամակոր արաբական իշխանիկին: Սիրիայի փոխարքա Վիտելլին, երկու լեգիոնի գլուխ անցած, Հրեաստանով շարժվեց դեպի Բերեա, որպեսզի ռազմական գործողություններ սկսի արաբական իշխանության տարածքում: Նա առանց շտապելու էր

շարժվում ու հասնելով Երուսաղեմ՝ չորրորդապետ Հերովդեսի հետ իր ապագա հաղթանակի պատվին քեֆ էր անում: Իսկ չորրորդ օրը լուր եկավ, որ Տիբերիոսը մեռել է ու կայսր է ընտրվել Գայոս Կալիգուլան: Վիտելին իր զորքերը հետ ուղարկեց ձմեռային բնակատեղիները: Ծանրաբեռնված չորրորդապետից ստացած շռայլ նվերներով՝ Վիտելին վերադարձավ Սիրիա, ավելի հաստատ մնալով այն կարծիքն, թե կռվում, ինչպես և ուրիշ գործերում, շտապել պետք չէ:

Հերովդիայի կրտսեր եղբայր Ագրիպպասը Հռոմից Երուսաղեմ ժամանեց ինչպես հաղթող: Կալիգուլան նրան արդեն տվել էր մահացած Փիլիպպոսի չորրորդապետությունը, ընդ որում, Ագրիպպասի տարածքներին ավելացրել էր Լյուսանիայի չորրորդապետությունը: Նման հսկայական տարածքներ Ագրիպպասի կառավարմանը հանձնելով՝ կայսրն անձամբ ինքն էր նրա գլխին թագավորական պսակ դրել: Եվ ահա այժմ Ագրիպպասը պարծենում էր թագավորական պսակով ու իր պատվին շռայլ խնջույքներ էր տալիս: Հերովդիան խորապես վիրավորված էր իր ու իր ամուսին Անտիպասի համեմատ կրտսեր եղբոր այդպիսի, ինչպես իրեն էր թվում, անարդարացի բարձրացումով: Իր

ողջ կարողությունը Հռոմում խնջույքներում վատնելով, Ագրիպպասը վերջերս պարտատերերից փախել էր Հրեաստան ու հուսահատության մեջ ցանկանում էր վերջ տալ կյանքին: Ինքը՛, քո՛ւյրը փրկեց իր անառակ եղբորը: Նրան հաջողվեց համոզել ամուսնուն, որ փող տա Ագրիպպասին ու հովանավորի անբախտ եղբորը՝ թույլ տալով անհոգ ապրելու Տիբերիայի պալատում: Բայց «անբախտը», չգոհանալով քրոջ օգնությամբ, հանկարծ վեճ սարքեց նրա ամուսնու հետ ու նորից գնաց Հռոմ, որպեսզի քեֆ քաշի այլասերված երիտասարդ պատրիկ Գայոս Կալիգուլայի հետ: Այն ժամանակ ո՞վ կարող էր իմանալ, որ եղբոր բաժակկիցը կդառնա կայսր: Իսկ հիմա Ագրիպպասը, ամբարտավան ու դոռոզ, փառքով ու թագավորական պատիվներով, հայտնվում է Երուսաղեմում ու ծաղրում նեղության մեջ եղած ժամանակ իրեն ապաստանած քրոջ ամուսնուն: Հերովդիայի համար նման ստորացում տանելը դժվար էր: Բախտը փորձելու ցանկությունը նրա մեջ մի նոր ուժով բորբոքվեց: Նա իր վրայից դեն նետեց մելամաղձոտությունն ու անմիջապես, կարծես երիտասարդանալով, լցվեց իր ամուսնու համար թագ ձեռք բերելու վճռականությամբ: «Իսկ նրա համար թագ ձեռք բերե-

լը նշանակում է, որ ինքս էլ կլինեմ թագուհի, ոչ թե՝ չորրորդապետի կին»: Բայց Անտիպասն արդեն կորցրել էր իր նախկին վստահությունն ու նրան չէին հրապուրում նախկին համարձակ ձեռնարկումները: Հերովդիան հարկադրված եղավ գործադրել համոզելու իր ողջ արվեստը: Ներգործելով ամուսնու ինքնասիրության վրա, նա վերջիվերջո հասավ իր ուզածին: Անտիպասը, թեև մեծ չկամությամբ, բայց համաձայնվեց գնալ Հռոմ:

Կաշառքների ու խնջույքների համար մեծ փողեր են հավաքված: Ամեն ինչ բեռնված է նավին, խարիսխը՝ բարձրացված: Ուղղությունը՝ դեպի արևմուտք: Հերովդիան արյան հոսքից կարմրած դեմքը պահում է քամուն: Լայն բացելով ռունգերը՝ ներշնչում է ծովային լայնարձակության թարմ օդը: Անտիպասը զարմանքով նայում է իր կնոջը: «Նա մինչև հիմա դեղեցիկ է»,– նկատում է ինքն իրեն:

Հաջորդ օրն այդ նավահանգստից դուրս եկավ երկրորդ նավը՝ որով Հռոմ էր գնում Ագրիպպասի հավատարիմ մարդը՝ ազատ արձակված Ֆորտունատը. նա կայսերն ուղղված նամակ էր տանում: Այդ նամակում Ագրիպպասը մեղադրում էր Անտիպասին Տիբերիոս կայսեր դեմ Սեյանի հետ դավադրություն նյութելու և

հենց իր՝ Կալիգուլայի դեմ Պարթևական թագավոր Արտաբանի հետ խարդավանքներ լարելու համար: Նա չէր պատրաստվում թույլ տալ, որ իշխանության համար մրցավազքում քույրը շրջանցի իրեն: Լավ, եթե միայն քույրը լիներ, կարելի էր հաշտվել: Բայց իշխանությունը տալ Անտիպասին, որը վիրավորել էր իրեն, անվանելով իր հաշվին ապրող աղքատ ու մուրացիկ, Ագրիպպասը դա իր փեսային ներել չէր կարող:

Անտիպասն ու Հերովդիան Կալիգուլային Հռոմում չգտան: Երիտասարդ կայսրը զվարճանում էր Կապանի Բայի քաղաքի իր առանձնատներում: Հերովդիան ու ամուսինը դնացին ամբողջովին հռոմեական ազնվականության առանձնատներով կառուցապատված այդ գողտրիկ քաղաքը: Ընդ որում, ամեն կայսր այդ պալատները կառուցելիս ջանում էր գերազանցել իր նախորդին: Անտիպասին Կալիգուլան ընդունեց վաղ առավոտից: Կայսրը սիրալիր զրուցում էր նրա ու Հերովդիայի հետ, որին, իբրև իր ընկերոջ քրոջը, հատուկ առավելություն էր տալիս: Ֆորտունատը Բայի հասավ հենց նույն օրն ու կայսրին հանձնեց Ագրիպպասի նամակը: Այդ նամակում ամեն ինչ անապացույց էր, բայց որպեսզի սուտը ճշմարտության նմանվի, Ագրիպպասը որոշել էր նրան

ավելացնել անվիճելի փաստեր: Իբրև ապացույց բերված մեղադրանքներին՝ Ագրիպպասը հայտնում էր, որ Անտիպասի զինանոցներում յոթանասուն հազար զինվորի համար զենք է պաշարված: Երբ ինչ որ նամակ բերեցին կայսերը, Հերովդիան տագնապեց: Ներքին ձայնը հուշում էր նրան. այդ նամակում ինչ որ ոչ բարի բան կա հատկապես իրենց համար: Եվ երբ կայսրը Անտիպասին հարց տվեց, թե ճի՞շտ է, որ նրա մոտ յոթանասուն հազար մարդու համար սպառազինություն կա, Հերովդիան ցանկություն ունեցավ ճչալու. «Ճիշտը մի՛ ասա»: Բայց ոչինչ չկասկածող Անտիպասը պարզասրտորեն պատասխանեց.

– Այո, իմ զինանոցներում ճիշտ այդքան սպառազինություն կա:

Անտիպասին ու Հերովդիային հրավիրելով տասն օրից իրեն այցելելու՝ կայսրն անմիջապես ավարտեց ընդունելությունը:

– Օ՛,– հառաչեց Հերովդիան, երբ նրանք մնացին մենակ,– սիրտս զգում է, որ այս եղբորս խարդավանքներն են: Դու չպետք է զինանոցի մասին պատասխաներիր:

– Իսկ ինչո՞ւ,– զարմացավ Անտիպասը,– չէ՞ որ զինանոցը նախապատրաստած է վաղուց և ոչ Կալիգուլայի դեմ:

Բայց կնոջ անհանգստությունը փոխանցվեց

նաև Անտիպասին: Ինչպես կլիներ ցանկացած կասկածամիտ մարդու հետ, նա որքան երկար էր այդ մասին մտածում, այնքան ուժեղ էր տագնապը պատում:

Այդ տասն օրերի ընթացքում կնոջ խորհրդով Անտիպասը որոշեց գործել: Ամեն օր նա փայլուն խնջույքներ էր սարքում սենատորների ու կայսերը մոտիկ մարդկանց համար: Շռայլորեն թանկարժեք ընծաներ էր բաժանում: Այդ խնջույքների մասին, որոնց համար անչափ շատ փողեր էին ծախսվում, խոսվում էր ողջ Հռոմում: Բայց համեղ ու ամենատարբեր կերակուրներով ծանրաբեռնված սեղանների, ծաղիկների ու հրավառությամբ զարդարված դահլիճների չքեղության մեջ Հերովդես Անտիպասի հետ սկսեցին տարօրինակ բաներ կատարվել: Հենց նայում էր այդ համեղ կերակուրներից որևէ մեկին, ամանի վրա, ողջ սարսափելիությամբ, նրան պատկերանում էր Հովհաննեսի կտրած գլուխը, իսկ ականջներում հնչում էր մարգարեի ձայնը. «Քո եղբոր կնոջը քեզ կին առնելը օրինավոր չէ»: Խնջույքավորները նկատում էին չորրորդապետին անսպասելիորեն պատող ու աչքերում սառչող սարսափը, բայց բացատրություն չէին գտնում: Հերովդեսն անմիջապես դառնում էր լուռ ու մռայլ: Հերովդիան, անհանգստացած ամուսնու

նման վարմունքով՝ արդեն ուրախ չէր Հռոմի ուղևորությունը ձեռնարկելու համար, բայց հետ կանգնելու համար արդեն ուշ էր:

Երբ Կալիգուլան նորից ընդունեց Անտիպասին ու Հերովդիային, նա արդեն հասցրել էր ամեն ինչ կշռադատել: Հերովդիայի հետ, իբրև իր ընկերոջ հարազատ քրոջ, կայսրը որոշել էր ողորմած լինել:

Հենց որ Անտիպասն ու Հերովդիան մտան դահլիճ, Կալիգուլան առանց ավելորդ ձևակերպությունների անմիջապես հրամայեց կարդալ իր հրամանը: Հրամանում նշվում էին Անտիպասի բոլոր մեղքերը: Կայսեր դատավճռով չորրորդապետության բոլոր հողերն Անտիպասից անցնում էին Ագրիպպասին: Նրան էին տրվում նաև չորրորդապետության բոլոր դրամական միջոցները: Ինքը՝ Հերովդես Անտիպասը, աքսորվում էր Գալլիայի Լուգդունում քաղաքը՝ ցմահ բնակության: Նրա կնոջ Հերովդիայի միջոցները մնում էին նրա լիակատար տնօրինության տակ, իսկ նրա շահերի պաշտպանը դառնում էր նրա եղբայր Ագրիպպասը: Մինչ կարդում էին կայսեր հրամանը՝ Անտիպասը կանգնել էր դունատ ու գլուխը կորցրած: Հերովդիան հասկացավ, որ դա վերջն է, և որոշեց այն ընդունել արժանապատվորեն: Նա լսում էր՝ գլուխը հպարտորեն

բարձրացրած: Զայրույթից դեմքը կարմրել էր: Կայսրն ակամա զմայլվում էր այդ կնոջով: Նա մտածեց, թե ուրախացրեց նրան իր ողորմածությամբ և հպարտ էր իր մեծահոգության համար: Երբ վերջացրին հրամանի ընթերցումը՝ Հերովդիան մի քայլ առաջ եկավ ու դիմելով Կալիգուլային, ասաց.

— Տեր, մեծահոգաբար ու ողորմածաբար դու ինձ շնորհ արեցիր, բայց օգտվել քո գթասրտությունից ինձ խանգարում է իմ նվիրվածությունն իմ ամուսնուն. ես, ամեն ինչ բաժանելով նրա հետ, երբ նա երջանիկ էր, այժմ ինձ իրավացի չեմ համարի թողնելու նրան ճակատագիրը փոխվելիս:

Նա խոնարհվեց կայսերն ու հետ քաշվեց իր ամուսնու թիկունքը: Այդ ճառը Կալիգուլան ընդունեց իբրև անձնական վիրավորանք: Կայսրը ոտքի ելավ ու, ջանալով պահպանել արժանապատվությունը, և դիմելով ոչ թե Հերովդիային, այլ իր քարտուղարին, ասաց.

— Գրեք հրաման՝ Հերովդես Անտիպասի կնոջն իր ողջ ունեցվածքից եղբոր օգտին զրկելու և ամուսնու հետ աքսոր մեկնելու մասին:

ԳԼՈՒԽ 38

Ա՛ի շաբաթ անց Դիկիարխեա նավահանգստից Գալլիա մեկնեց մի նավ, որ աքսորի էր տանում Գալիլիայի ու Բերեայի նախկին չորրորդապետ Հերովդես Անտիպասին ու նրա կին Հերովդիային: Ժամանելով Լուգդունում՝ նրանք տեղավորվեցին քաղաքի ծայրամասում, գետակից ոչ հեռու, մի փոքրիկ տնակում: Գետի մյուս ափին, անմիջապես ջրից, բարձրանում էին հռոմեական բերդի պարսպի աշտարակները: Երկու ամիս անց նրանց աքսորավայր եկավ Սաղոմեն: Կալիգուլան որոշեց Հերովդիային ցավ պատճառել նրանով, որ աղջկան էլ աքսորեց: Ագրիպպասը չբողոքեց, այլ նույնիսկ ուրախացավ, վախենալով, որ մոր վրեժն առնելու համար Սաղոմեն կսկսի իր դեմ խարդավանքներ սարքել: Եթե կայսրը ցանկացել էր ցավ պատճառել Հերովդային, ապա դա նրան հաջողվել էր. իր աղջկան տեսնելիս՝ կնոջ աչքերից վիրավորանքի արցունքներ էին թափվում:

Ղազարոսի գերեզմանի մուտքը

Մարիամ Մագդաղենացին յուղի սափորով և կարմիր ձուն ձեռքին

Մարիամ Մագդաղենացին յուղի սափորով
(Ֆ. Սենդիս, 1860 թ.)

Աղոթք Գեթսեմանիում բաժակի համար
(Զիովանի Բելլինի, XV դ.)

Զինվորները ծաղրում են Քրիստոսին. Սիմոն Կյուրենացին տանում է խաչը
(Կիլիկիա, XIII դ.)

Հուդայի համբույրը
(Ցոտտո, XIV դ.)

Ղազարոսի գերեզմանը

Գեթսեմանի այգին

Պիղատոսը լվանում է ձեռքերը (Դուչիո դի Բուոնինսենիա, XIII դ.)



Հիսուս Հերովդեսի առաջ
(Դուչիո դի Բուոնինսենիա, XIII դ.)

Ահա մարդը (Մասսեյս Քվինտին, XVI դ.)

Հիսուսին մահվան են դատապարտում
(Մասսեյս Քվինտին, XVI դ.)

Դեպի Գողգոթա
(Ռաֆայել, XV դ.)



Խաչելություն
(Լուսն ոչ մեծ մեռնել, XV դ.)



Ս. Խաչի մոտ
(Ռաֆայել, XV դ.)



Քրիստոսի Հարությունը և յուղաբեր կանայք
(Կասպուրական, 1357 թ.)

Մարիամ Մագդաղենացին յուղի սափորով
(Վան դեր Վեյդեն, XV դ.)



Մարիամ Մագդաղենացին Հանդիպում է Հարուցյալ Հիսուսին
(Հանս Մեմլինգ, XV դ.)



Մարիամ Մագդաղենացին Հանդիպում է Հարուցյալ Հիսուսին
(Տիցիան, XV դ.)

Հրեշտակն ավետում է յուզաբեր կանանց
(Դուչիո դի Բուոնինսենիա, XIII դ.)



Մարիամ Մագդաղենացին 12 առաքյալներին պատմում է Քրիստոսի հետ հանդիպման մասին
(XII դ.)

Յուղաբեր կանայք Քրիստոսի գերեզմանի մոտ
(Կիլիկիա, XIII դ.)

Գեթսեմանի այգու ութ հին ձիթենիներից մեկը



Քրիստոսի Հարությունը և յուղաբեր կանայք
(Մեյստեր Վան Յոհենտուրթ, XIV դ.)



Ս. Մարիամ Մագդալենացի եկեղեցին Գեթսեմանիում

– Ինչպես կարողացավ Ագրիպպասն այդպես վարվել,– ինքն իրեն վշտահար տրտնջում էր Հերովդիան,– չխնայեց հարազատ աղգականուհուն:

Հերովդիան հիշեց, թե ինչպես հեռավոր մանկության տարիներին փորձեց թաքցնել սիրելի եղբորը թվացյալ մարդասպաններից, թե ինչպես լաց լինելիս գրկեց նրան: Այս հիշողություններից նա ավելի էր վշտանում:

Անտիպասն օրերով կորչում էր տեղի մի փոքրիկ պանդոկում: Նստում էր զինվորների ու տեղացի արհեստավորների հետ, գալլիական թթու գինի էր խմում ու լուռ լսում տարեց զինվորների պատմությունները գերմանացիների ու գալլերի դեմ արշավանքների մասին: Երբեմն նա ինքն էր պատմում, թե ինչպես էր կռվել արաբների հետ: Աքսորում Անտիպասը երկար չապրեց, ընդամենը կես տարի: Մեռնելիս, գիտակցությունը կորցնելով, պահանջում էր, որ իր մոտ բերեն Հովհաննես մարգարեին:

Աքսորի հատկապես երրորդ ձմեռը շատ խիստ եղավ: Հերովդիան ամբողջ օրերով նստում էր կրակի մոտ՝ շուռումուռ տալով տաք խանձողները: Ամբողջ ժամանակ սառչում էին ոտքերն ու ձեռքերը: «Մերությունն է եկել»,– ինքն իրեն խոսում էր Հերովդիան:

Աղջիկը մշտապես կորչում էր մյուս ափին, բերդում: Հերովդիան գիտեր, որ Սաղոմեն մի հարյուրապետի հետ ժամադրության է գնում:

— Դու, արքայազարմ կին, ո՞ւմ հետ ես կապվել, հասարա՜կ զինվորի,— տրտնջում էր Հերովդիան, հասկանալով, որ այժմ ոչնչով չի կարող փոխել դստեր ճակատագիրը:

Հերովդիային լուրեր էին հասնում, որ զինվորների խնջույքներին իր աղջիկը պարում է նրանց առջև: Այդտեղ էլ նա ոչինչ անել չէր կարող. հիշում էր, թե ինչպես էր ինքը մի ժամանակ դստերը մղել անօրինական պարի:

Հարյուրապետը սովորաբար թիավարներով նավակ էր ուղարկում Սաղոմեի հետևից, բայց այդ խիստ ձմռանը գետը ծածկվել էր սառույցով, որն այդ կողմերում հազվադեպ էր պատահում: Այժմ Սաղոմեն մյուս կողմը վազում էր սառույցի վրայով: Ջերմացումն սկսվեց անսպասելի, ու սառույցն սկսեց հալվել:

— Այսօր ամրոց մի՛ գնա,— խնդրեց մայրը,— ես լսեցի, թե ինչպես էր ճաք տալիս գետի սառույցը:

— Իսկ ի՞նչ անեմ այստեղ: Այստեղ կարելի է ձանձրույթից մեռնել: Բան չի պատահի, ես թեթև եմ:

Հերովդիան ոչինչ չպատասխանեց, միայն

ծանր հոգոց հանեց ու շարունակեց կրակի մեջ շուռումուռ տալ ածուխը:

Ասես ստուգելով ամրությունը՝ Սաղոմեն մի ոտքը դրեց սառույցին: Հետո դրեց մյուս ոտքն ու գնաց՝ թեթև սղղալով ողորկ սառույցի վրայով: Արդեն գետի մեջտեղին մոտիկ լսեց սառույցի ճռթոցն ու տեսավ ոտքի տակ փախչող ճաքերը: Սիրտը սառեց ահից: «Հետ չդառնա՞մ»,— հարցրեց նա ինքն իրեն, իսկ հետո, ձեռքը թափ տալով, սահեց առաջ: Ճռթաց ավելի ուժեղ: Սաղոմեն հետ նայեց ու տեսավ, որ իրենից հետո, ափի մոտ, արդեն սառույց չկա, միայն ջրի հոսանքն է: Զինվորները դուրս թափվեցին բերդի պարիսպների վրա, իսկ հարյուրապետը երկու լեգեոնների հետ դարպասներից դուրս վազեց նրան օգնելու: Հակառակ ափին նույնպես ջուր էր: Սառույցը երերաց ու տեղից պոկվեց: Նրա վրայով մի ուրիշ սառույց անցավ: Սաղոմեն իսկապես վախեցավ: Նա չփոթմունքի մեջ գլուխը մեկ մի, մեկ մյուս կողմ էր պտտում:

— Ես այստեղից դուրս չեմ պրծնի,— անցավ նրա մտքով,— ես զոհվեցի: Ինչո՞ւ չմնացի տանը,— տխուր մտածեց Սաղոմեն ու նայեց բերդի պարիսպներին:

Հարյուրից ոչ պակաս մարդ նայում էր նրան,

որը հետաքրքրությամբ, որը կարեկցելով, որն էլ՝ չարախնդությամբ: «Նայում են, թե ես ինչպես եմ զոհվում,— վշտով մտածեց Սաղոմեն,— տեսնել, թե ինչպես է մեռնում մարդը՝ միշտ էլ հետաքրքիր է»: Նրան հանկարծ պատեց վրդովմունքը. «Մեռնել կարելի է տարբեր կերպ»: Եվ Հերովդես Մեծի ծոռնուհին վճռեց գեղեցիկ մեռնել: Նա ուղղվեց, բարձրացրեց ձեռքերն ու թեթև պտտվեց, և այդ պտույտներին սառույցի վրա մեկ մի, մեկ մյուս կողմ սահել: Մատերով ճթթացրեց ու ճթթոցների տակտի տակ սկսեց ոտքերով պարել: Պարի պտույտների մեջ նա արդեն չէր մտածում վտանգի մասին. այն միտքը, որ ինքն ուշադրության կենտրոնում է, ալեկոծում էր արյունը: Նրան նայում են: Նրանով հիանում են: Բերդի պարիսպներին կանգնած զինվորներն արժանիորեն գնահատեցին կնոջ արարքն ու սկսեցին ծափ տալ: Խոժոռ լեգեոներները ծափ էին զարկում, ու մահվան ու արյան սարսափներին սովոր նրանց աչքերը խոնավանում էին: Ծափերի ռիթմը պարին հինավուրց զոհաբերության ինչ որ մոգական նրբերանգ էր տալիս: Պարը երկար չեղավ: Սառույցը երկու կեսի տրոհվեց: Պարուհին դեռ հասցրեց թեթևությամբ թռչել մեծ բեկորի վրա: Ցանկացավ շարունակել իր մահվան պարը, բայց սառույցը երերաց ու սկսեց թեքվել: Սաղոմեն ընկավ ու հասցնելով ճչալ՝ սառույցի վրայով սղղալով ընկավ ջուրը, անմիջապես ընկղմվելով մինչև գլուխը: Հետո մի պահ նրա գլուխը երևաց ջրի վրա: Այդ պահը բավական եղավ. հսկայական սառցակտորը, սրված ինչպես սակր, թեք հարթությամբ սրնթաց ընկավ դժբախտի վրա ու կտրեց նրա գլուխը: Հոսանքը պարուհու մարմինը ջրի տակ քաշեց, իսկ գլուխը մնաց սառույցին դրված:

Հերովդիան նստել էր կրակի մոտ ու ածուխներ էր շուռումուռ տալիս: Դուռը բացվեց, բայց կինը նույնիսկ չշրջվեց: Լուռ ներս մտան լեգեոներն ու երկու հարևանները: Զինվորը սեղանին դրեց կապոցը.

— Կարեկից եմ ձեր ցավին, տիկին:

Հերովդան ոչինչ չպատասխանեց: Նույնիսկ գլուխը չթեքեց դեպի լեգիոները: Նա ոտքերով թփթփացրեց ու գնաց դեպի ելքը, հարևանները հետևեցին նրան:

Հերովդիան մոտ նստեց սեղանին ու բացեց կապոցը: Նա երկար ու լուռ նայեց դստեր գլխին, հետո մեկնեց իր նիհար ձեռքն ու շոյեց նրա մազերը: Ածուխները կրակի մեջ սկսեցին հանգչել, բայց Հերովդիան, ուշադրություն չդարձնելով դրա վրա, շարունակում էր մտազ-

բաղ հայացքով նայել դստեր մեռելային գունատ դեմքին: Նայում էր, առանց կտրվելու, չոր, անարցունք աչքերով:

Հարևաններն առավոտյան տեսնելով, որ Հերոդդայի տանից ծուխ չի ելնում, գնացին նրան տեսնելու: Նա այդպես էլ նստած մնացել էր այն դիրքով, որով տեսել էին երեկ: Հայացքը նախկինի պես հառած էր դստեր գլխին, բայց ինքը, Հերոդդիան, արդեն մեռած էր:

ԳԼՈՒԽ 39

Շատ տարիներ Մարիամ Մագդաղենացին քարոզում էր Քրիստոսին Գալիլիայի Մասսալինայում: Նա համարեց իր խնդիրն ավարտված, քանի որ այնտեղ արդեն առանց իրեն էլ կտարածեին Աստծո խոսքը:

Կյանքի մայրամուտին ցանկություն ունեցավ նորից գնալ Հայրենի վայրերը. Գալիլիա, որտեղ ինքը հանդիպեց իր տեր Հիսուս Քրիստոսին. լինել այնտեղ, որտեղ վկա եղավ նրա փառավոր հարությանը: Եվ ավելի շատ ցանկանում էր, որ իր ոսկորները հանգստանային այնտեղ, որտեղ դիպել էր Փրկիչի ոտքը: Սկզբում նա Մասսալինայից գնաց Հռոմ: Մագդաղենացին այնտեղ, ի ուրախություն իրեն, հանդիպեց արդեն մեծ ու ամուր քրիստոնական համայնքի, բայց որն արդեն մի քանի սարսափելի հալածանքներ էր կրել:

Նա Հռոմի քրիստոնյաներից իմացավ, որ Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսը վերադարձել է Պատմոս կղզուց, որտեղ նա

աքսորված էր, և հիմա գտնվում է Եփեսոսում: Եվ Մագդաղենացին որոշեց Գալիլիայի ճանապարհին անպայման հանդիպել Հովհաննեսին: Հռոմից նա գնաց դարձի եկած ազատարձակ Կատիլլայի հետ: Կատիլլան լավ գիտեր Եփեսոսն ու պատրաստակամություն հայտնեց ուղեկցելու Մարիամին:

Նավը, որով լողում էր Մագդաղենացին, շրջանցեց Սամոս կղզին, ու ճանապարհորդների հայացքի դեմ բացվեց փոքրասիական ափի գեղատեսիլ համայնապատկերը: Ափի եզրագծի լեռնիկաշարքերն աստիճանաբար դառնում էին զառիկող բլուրներ, որոնց ստորոտում տարածվում էր իր ջրերն Էգեյան ծով տանող գետի հունով բաժանված արգավանդ դաշտավայրը: Ամբողջ տարածությունն, սկսած բլուրներից ընդհուպ մինչև գետափը, անընդմեջ կառուցապատված էր տաճարներով ու պալատներով: Դա հարուստ առևտրական քաղաք էր, Հռոմի փոքրասիական նահանգի մայրաքաղաք Եփեսոսը:

Ողջ Փոքր Ասիայից ու Արևելքից ապրանքներ էին հոսում Եփեսոս: Այդ պատճառով էլ նավը, որով լողում էր Մարիամ Մագդաղենացին, դժվարությամբ էր խուսանավում ողջ մարդաշխարհից եկած հարյուրավոր նավերի միջև:

Վերջապես նավի անձնակազմը տեղ գտավ նավամատույցում:

Քաղաքով անցնելիս Մագդաղենացին ուշադրություն դարձրեց բազմաթիվ սյուներով մի վեհաշուք տաճարի: Կատիլլան բացատրեց, որ դա պտղաբերության ու պտղավետության աստվածուհի Եփեսոսյան Արտեմիսի տաճարն է: Տեղի բնակիչներն այդ աստվածուհուն համարում էին քաղաքի հովանավորը, և երկրպագության ու զոհաբերության համար ողջ կայսրությունից ժողովուրդը հոսում էր այնտեղ: Իսկապես, տաճարի մոտ շատ մարդ կար: Բազմաթիվ կրպակներում ոսկի, արծաթե ու բրոնզե մեդալներ էին վաճառում Արտեմիսի ու նրա տաճարի պատկերով: Առևտուրը շատ աշխույժ էր ընթանում: Կատիլլան պատմեց, որ այդ իրերը պատրաստում են տեղացի բազմաթիվ արհեստավորներ: Դա նրանց միակ վաստակն է, այդ պատճառով էլ, երբ Պողոս առաքյալը քարոզում էր այստեղ, քիչ էր մնում նրան սպանեին նրա համար, որ շատերին հետ պահեց կռապաշտությունից: Մարիամը Հռոմում արդեն շատ էր լսել Պողոս առաքյալի մասին ու նույնիսկ կարդացել էր նրա ուղերձները Հռոմի քրիստոնյաներին: Նրան պատմել էին առաքյալի նահատակության մասին. Ներոնի օրոք

քրիստոնյաների հալածանքների մասին նա դեռ Գալիլիայում էր լսել: Լսել էր նաև Պետրոս առաքյալի խաչելության մասին: Քրիստոսի բոլոր աշակերտներից մնացել էր միայն Զեբեդեոսի որդի Հովհաննեսը: Մյուս առաքյալներն իրենց հավատը վկայել էին նահատակությամբ:

Մագդաղենացին քայլում էր ամբողջովին խորասուզված իր մտքերի մեջ ու Կատիլլային արդեն համարյա չէր լսում: Վերջապես նրանք կանգ առան քաղաքի ծայրամասում գտնվող մի ոչ մեծ, համեստ տան մոտ: Կատիլլան թակեց ու դուռը բացեց մի ոչ բարձրահասակ մարդ: Դա Հովհաննես Աստվածաբանի քարտուղար Պրոխորոնն էր: Նա անմիջապես ճանաչեց Կատիլլային ու եկվորներին տուն ուղեկցեց: Սենյակը, որտեղ Պրոխորոնը թողել էր Մագդաղենացուն, մի ճերմակահեր ծերունի մտավ: Նա, կկոցելով աչքերը, նայեց Մագդաղենացուն:

— Դժվար է, Մագդաղենացի, քո մեջ ճանաչել նրան, ով գնում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետևից:

— Հովհաննե՛ս,— ուրախությամբ բացականչեց Մագդաղենացին ու նրան ընդառաջ գնաց:

Նրանք ձեռք ձեքի տված երկար նայեցին միմյանց, ասես ցանկանալով գտնել գծերն այն

հեռավոր պատանեկության, որը երջանկացել էր Քրիստոսի հետ շփվելով: Վերջապես Հովհաննեսը իրեն սեղմեց Մագդաղենացուն ու համբուրեց ճակատը:

— Թող օրհնվի՛ Տիրոջ անունը քեզ հետ հանդիպելու ուրախության համար, բարի Մարիամ:

Երբ նրանք նստեցին, Հովհաննեսը, քնքշանքով նայելով Մարիամին, ասաց.

— Ինչ լավ է, որ դու եկար ինձ մոտ: Այդ Սուրբ Հոգին ուղարկեց քեզ: Դու հարկավոր ես ինձ: Ես հիմա նկարագրում եմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքն ու Նրա ուսմունքը: Ես ուզում եմ լսել քո պատմությունը Քրիստոսի Իր փառավոր հարությունից հետո Նրա՝ քեզ երևալու մասին: Եվ, առհասարակ, ամեն ինչի մասին, ինչ դու այն ժամանակ տեսել ես: Դու հիշո՞ւմ ես այն կնոջը, ում հետ մեր Ուսուցիչը զրուցում էր Հակոբի ջրհորի մոտ,— Հովհաննեսը ժպտաց,— այն ժամանակ մենք նույնիսկ զարմացանք, որ Տերը բարեհաճեց զրուցել սամարացի կնոջ հետ: Հետո Հռոմում ես հանդիպեցի այդ կնոջը: Նա քրիստոնյա էր դարձել, ընդունելով Փոտինե[1] անունն, ու համարձակորեն քարոզում էր հեթանոսներին: Ներոնի օրոք

[1] Սամարուհու դարձի մասին տես *Մ. արք. Օրմանյան*, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, § 38 (*ծկթ. խմբ.*):

նահատակի պսակ ընդունեց: Երբ մենք հանդիպեցինք, ես հարձուփորձ արեցի նրան, թե ինչ էին Ուսուցչի հետ զրուցում, ու նա ամեն ինչ ինձ պատմեց: Հետո ես գրի առա: Նիկոդիմոսի հետ հանդիպեցի դեռ Երուսաղեմում և Ուսուցչի հետ նրա զրույցը նույնպես գրի առա: Կցանկանայի քեզանից էլ, Մարիամ, լսել հարություն առած Ուսուցչի ձեզ՝ կանանց հայտնվելու մասին: Բայց դրա մասին մենք հետո կխոսենք, իսկ հիմա ավելի լավ է պատմիր ինձ, որտեղ ես ջանացել Քրիստոսի ավետիսը տալու համար:

Մարիամն սկսեց Հովհաննեսին պատմել Գալլիայի մասին: Հովհաննեսն ուշադիր լսում էր: Պատմության վերջում, հանկարծ հիշելով, Մարիամն ավելացրեց.

— Գալլիայում ես լսել եմ Կալիգուլայի հրամանով այնտեղ աքսորված Հերոդես Անտիպասի, Հերոդիայի ու նրանց դուստր Սաղոմեի ճակատագրի մասին:

Ու Մագդաղենացին պատմեց Սաղոմեի սարսափելի կորստյան ու նրա մոր մահվան մասին:

— Տեսնո՞ւմ ես, Հովհաննես, Աստված լիովին հատուցեց նրանց կատարած չարիքի համար: Հովհաննես Մկրտիչի վրեժը լուծված է,— այս խոսքերով ավարտեց նա իր պատմությունը:

Հովհաննեսը տխուր օրորեց գլուխը.

— Դու իրավացի չե՛ս, Մարիա՛մ, Աստված մեզանից՝ մեղավորներիցս, վրեժ չի առնում: Մեզանից վրեժ առնում է չարիքը, որը մենք ցանում ենք: Նա մահացու ծիլեր է տալիս: Սատանան ձրի ոչինչ չի անում: Երբ Հերոդիան խնդրել է Հովհաննես Մկրտիչի գլուխը, նա չգիտակցելով՝ դրա դիմաց փրկագին է տվել սատանային՝ իր դստեր գլուխը: Աստված Սեր է: Նա չի պատժում, մարդիկ իրենք են իրենց ենթարկում պատժի: Մարդն իր կամքով է մեղքի մահացու թույնն ընդունում իր հոգու մեջ: Ես հիշում եմ, թե ինչպես էինք Ուսուցչի հետ Սամարիայի բնակավայրերով գնում Երուսաղեմ: Գնում էինք հոգնած, քաղցած ու որոշեցինք այդ բնակավայրերից մեկում հանգստանալ, բայց բնակիչները մեզ դուրս քշեցին: Այն ժամանակ ես ու իմ եղբայր Հակոբոսը խիստ բարկացանք: Ոչ այնքան մեզ համար, որքան՝ մեր Ուսուցչի, ու այդ բնակավայրերի վրա երկնքից կրակ իջեցնելու ու նրանց կրակի մատնելու թույլտվություն խնդրեցինք Նրանից: Իսկ Տերը մեզ ասաց. «Չգիտեք, թե ինչ ոգուց եք»: Եվ իսկապես մենք չգիտեինք:

Այս ասելով՝ Հովհաննեսը լռեց, սանդղավանդից, որտեղ նրանք նստած էին, մտքերի մեջ

ընկած նայելով սարերին, որոնցից այն կողմ, ինչ որ տեղ հեռվում, արևելքում, իր Հայրենի Կափառնայումն էր: Մարիամն էլ էր լռել՝ քննելով Հովհաննեսի խոսքերն ու գալով այն մտքին, որ նա իրավացի է: Աստված մարդուց վրեժ չի առնում: Աստված մարդուն, քանի դեռ նա ապրում է երկրի վրա, ապաշխարության է կանչում: Հովհաննեսը հանկարծ խզեց լռությունը.

— Հիմա ո՞ւր ես ուզում գնալ, Մարիամ:

Մարիամը հոգոց քաշեց.

— Որոշել եմ հարազատ վայրիս վերադառնամ: Այնտեղ ամեն ինչ ինձ Քրիստոսին կհիշեցնի:

Հովհաննեսը ժպտաց:

— Հիմա դու ինձ հիշեցրիր, թե ինչպես սամարացի կինը, Քրիստոսի հետ Ջրհորի մոտ զրուցելիս, հարցրեց. «Որտե՞ղ է Աստծուն երկրպագելու ճշմարիտ տեղը»: Եվ ահա, մեր Տեր Հիսուս Քրիստոսը պատասխանեց, որ «կգա ժամանակը, երբ ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը հոգով և ճշմարտությամբ»: Դրա համար էլ ասում եմ քեզ, Մարիամ. հիմա Աստված միանման մոտիկ է բոլոր հավատացյալներից: Տերը երկինք համբարձվեց ողջ մարդկային ցեղի համար, ողջ երկրից են

աղոթում Նրան, և Նա բոլորին միանման լսում է: Մնա՛ այստեղ, Մարիամ, այստեղ դու Տիրոջն ավելի ես հարկավոր: Հեթանոսներին կվկայես Քրիստոսի հարության մասին: Ես զգում եմ, որ Տերը շուտով քեզ Իր մոտ կկանչի, ու դու կհանդիպես Տիրոջը ոչ թե Երուսաղեմի փլատակներում, այլ Իր Երկնային Թագավորությունում:

— Լավ,— նույնպես ժպիտով պատասխանեց Մագդալենացին,— բայց ես կցանկանայի իմանալ կանանց ճակատագիրը, որոնց հետ միասին գնացել ենք մեր Տիրոջ հետևից:

— Իմ մայր Սաղոմեն Աստծուն ներկայացավ լուռ ու խաղաղ՝ Աստվածածնի վերափոխումից շատ չանցած,— իր պատմությունն սկսեց Հովհաննեսը,— Մարիամ Կղեովպասն ու նրա ամուսինը՝ Կղեովպաս առաքյալը, երկար ժամանակ Գալիլիայում քարոզեցին Քրիստոսին: Առաքյալների դասին դասված նրանց որդի Սիմոնը այժմ գլխավորում է Երուսաղեմի եկեղեցին: Ինչ եղավ Հակոբոսի մայր Մարիամի ու Շուշանի հետ՝ ես չգիտեմ: Ղազարոսի քույրերը՝ Մարիամն ու Մարթան, գնացին իրենց եղբոր մոտ, Կրետե կղզի, որտեղ նա քրիստոնեական եկեղեցի է հիմնադրել: Համարյա երեսուն տարի նրանք նրան օգնեցին քարոզելու Քրիստո-

սին ու այնտեղ էլ, Կրետեում, խաղաղ հանգան ի Տեր: Իսկ ահա քո ընկերուհին, Հերովդեսի վերակացու Քուզայի կին Հովհաննան, որքան որ լսել եմ, մինչև այժմ կենդանի է: Նրա ամուսինը կնքվել էր, ու Տերը նրանց երկու որդու ու երեք աղջկա ծնունդ էր պարգևել: Հերովդես Անտիպասի աքսորվելուց հետո նրանք հրաժարվեցին ծառայել Ագրիպպաս թագավորին ու Երուսաղեմից գնացին իրենց ծննդավայրը: Այնտեղ, Գալիլիայի ծովի ափին, նրանք տուն ունեն, որտեղ հաց կիսելու և աղոթելու համար հավաքվում են քրիստոնյաներ: Նրանց երկու որդին դարձել են եկեղեցու քահանաներ, իսկ աղջիկներն ամուսնացել են ու իրենց ամուսինների հետ միասին նույնպես ծառայում են Տիրոջը: Հովհաննան դայակություն է անում իր բազմաթիվ թոռներին ու նրանց հավատի ու բարեպաշտության մղում: Ահա այն ամենն, ինչ ես գիտեմ քո ընկերուհիների մասին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մագդաղենացին մի քանի տարի ապրեց Եփեսոսում՝ Հովհաննես Աստվածաբանին օգնելով ավետելու Քրիստոսին: Այդ օրը Հովհաննեսի տանը կայացած հաղորդության հավաքույթից հետո Մագդաղենացին անմիջապես գնաց ծովափ: Ինչը նրան մղեց այդ վաղ ժամին, բոլորովին մենակ գնալ զբոսնելու, ինքն էլ իրեն չէր կարող բացատրել:

Պարզապես հանկարծ շարժվել ուզեց: Լույսը դեռ չէր բացվել, ու նա հիշեց, թե ինչպես գիշերվա այդ նույն ժամին ինքը գնաց Փրկիչի գերեզմանը: Սիրտը դողաց ուրախ նախազգացումից: Նա արագացրեց քայլերն ու հասավ ծովածոց:

Էգեյան ծովն իր ալիքները մեղմորեն դեպի ափ էր նետում ու խճաքարերը խշշացնելով նորից հետ քաշում:

Մագդաղենացին նստեց մի մեծ գլաքարի ու նայեց դեպի հեռուն: Ծովը շատ չէր նման իր

մանկության ու պատանեկության լճին, բայց նա ցավ զգալու աստիճան ցանկանում էր երևակայել, որ այն հենց իր հարազատ Գենեսարեթի լիճն էր: Գլխաշորի տակից մտախոհ ուղղեց մազերի սպիտակ խոպոպն ու նայեց տխուր ժպիտով: Ոչ, ինքը չի հոգնել ապրելուց, իր կյանքը՝ դա ծառայություն է Տիրոջը, ուղղակի գիշերը, երբ Հովհաննես Աստվածաբանը հաղորդության ժամանակ Հացը կտրեց ու տվեց իրեն, հանկարծ պարզ գիտակցեց, որ հաջորդ անգամ Տերն Ինքը պիտի Իր Աստվածային ձեռքով իրեն հաղորդություն տա կենաց Հացից:

Եկել էր նրա ժամանակն, ու նա սպասում էր դրան:

Երկինքն աստիճանաբար լուսավորվում էր: Էգեյան ծովի ջրերն արծաթին էին տալիս: Մագդաղենացին շրջվեց դեպի արևելք: Լեռան հետևից դանդաղ ելնում էր արեգակի պայծառ սկավառակը: Նա նորից շրջվեց դեպի ծովածոցը: Ոտքերի տակ հարթ խճաքար էր փռված: Մագդաղենացու գլխում հանկարծ մի չարաճճի միտք ծագեց. ինչպես մանուկությանը՝ վերցնել խճաքարերն ու նետել ջրի վրայով: Նա կռացավ քար վերցնելու ու զգաց, թե ինչպես ցավի կծկումից սեղմվեց սիրտը: Մի պահ աչքերը մթնեցին: «Դե, ահա,– անցավ նրա մտքով,– պառավը որոշել է չարություն անել, բայց մոռացել է, որ վաղուց անցել է ութերորդ տասնամյակը»:

Մագդաղենացին նորից ուղղվեց: Ցավը թողեց, ու նա իրեն անսովոր թեթև զգաց: Թեթև ու ազատ: Նա նորից նայեց խճաքարին, այն փայլում էր ասես ինչպես իսկական չափյուղա: Մարիամը կռացավ, վերցրեց չափյուղան ու շպրտեց ջրի վրայով:

Շափյուղան ուրախ թռչկոտում էր ծովածոցի պսպղացող արծաթավուն հարթության վրա: Քարը թռչում էր ու թռչում, թեթևորեն հետ թռչելով ջրից, իսկ նրանից հեռացող օղակները չէին մարում, նրանք վերածվում էին հրաշալի նախշերի: Անսովոր գեղեցիկ էր: Նա տեսավ, որ իր կողքին, ափին, մի կին էր պառկած ու, հավանաբար քնած էր: Կինը նրան շատ ծանոթ թվաց, ասես ինքը նրան գիտեր ամբողջ կյանքում, ասես այդ կինը նրան հարազատ ու մոտիկ էր եղել:

– Բայց սա հո ես եմ,– զարմանքով բացականչեց Մագդաղենացին:

Քարին, որին դեռ քիչ առաջ նստած էր Մագդաղենացին, այժմ մի պատանի էր նստած՝ շողարձակ շորերով:

Պատանին նույնպես նրան ծանոթ թվաց: Նա նրան արդեն տեսել էր. «Այո, ես նրան տեսել եմ,– հանկարծ հիշեց Մագդաղենացին,– այնտեղ, Արիմաթացու այգում»: Պատանին սիրալիր ժպտաց Մարիամին.

– Քո մարմինը, Մարիամ, պիտի արթնանա Հրեշտակապետի փողի ձայնից,– ցույց տալով պառկած ծեր կնոջը՝ ասաց պատանին,– իսկ քո հոգին թող գնա քո Տիրոջ մոտ:

Մարիամն իրեն զգաց այնպես երիտասարդ, ինչպես այն ժամանակ, երբ գնաց Քրիստոսի հետևից: Նա ձեռքով արեց Հրեշտակին ու գնաց: Գնաց ուղիղ աներևակայելի կապույտով փայլատակող ծովի ջրերի վրայով: Իսկ ծովն ասես շուռ էր եկել ու երկինք դարձել: Մարիամը թեթև քայլվածքով շարունակում էր ընդառաջ գնալ իր Ուսուցչին: Նա դեռ Նրան չէր տեսնում, բայց գիտեր, որ դեպի Նա է գնում: Երևացին շատ քաղաքներ: Նրա հայացքի դեմ բացվեց Հայրենի Գալիլիայի ծովը: Նա ափին տեսավ երեխաներով շրջապատված Հովհաննային: Հովհաննան հեռու էր նրանից, բայց միևնույնն է՝ Մագդաղենացին ամեն ինչ լսում էր:

– Ողջունում եմ քեզ, Հովհաննա,– ձայն տվեց նրան Մագդաղենացին ու ջրերի վրայով ճախրեց ավելի հեռու:

Հովհաննան ցնցվեց ու բարձրացրեց գլուխը:

Մագդաղենացին թռչում էր ու արդեն տեսնում էր իրեն ընդառաջ եկող հորն ու մորը: Նրանք գրկեցին դստերն ու նրա հետ միասին գնացին Քրիստոսի մոտ:

Հովհաննան դեռ նայում էր երկնքին, իսկ երեխաները քաշում էին նրա փեշից:

– Տատիկ, դու այնտեղ ի՞նչ տեսար:

– Ոչինչ, դա միայն ինձ թվաց:

– Տատի՛կ, դե պատմի՛ր, թե հետո ինչ եղավ:

– Ահա մենք գնում ենք, արտասվում, իսկ Քրիստոսը մեզ ընդառաջ է գալիս,– իր պատմությունը շարունակեց Հովհաննան:

– Կենդանի՞,– զմայլվում է տատիկի ծնկներին նստած փոքրիկ աղջնակը:

– Իհարկե կենդանի,– ասաց մոտ ինը տարեկան տղան, որ արդեն գիտեր ողջ պատմությունը,– չէ՞ որ նա Աստված է ու դրա համար էլ հարություն առավ:

– Ճիշտ է, թոռնիկս,– շրջվելով դեպի տղան՝ ասաց Հովհաննան:

— Իսկ ի՞նչ ասաց ձեզ Քրիստոսը, երբ դուք հանդիպեցիք Նրան,— հարցրեց աղջնակը:

Հովհաննան ժպիտով շոյեց աղջկա գլուխն ու, ինչ որ տեղ, դեպի հեռուն նայելով, ասաց.

— Քրիստոսը մեզ ասաց.

«ՈՒՐԱԽԱՅԵՔ»:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ովքե՞ր են յուդաբեր կանայք, և քանի՞սն են նրանք

Քրիստոսի հետևից գնացող կանայք ծնվել ու մեծացել են աշխարհի ամենագեղեցիկ անկյուններից մեկում՝ Գալիլիայում: Գեննեսարեթի լճի արևմտյան ափին, Կափառնայում քաղաքից հարավ, ստվերախիտ պտղատու ծառերի ու խաղողի այգիների մեջ, այն ժամանակներում տեղավորված էր Մագդալիա քաղաքը: Այնտեղ, ինչպես և Գալիլիայի ծովի մյուս առափնյա քաղաքներում, ապրում էին արհեստավորներ, ձկնորսներ, հովիվներ ու հողագործներ: Այդ քաղաքը հռչակված էր իրրև զոհ մատուցվող աղավնիների ամենախոշոր մատակարար: Մագդալիան ողջ երկրին հայտնի էր նաև իր բրդյա գործվածքներով ու ներկարաններով: Բազմաթիվ կռիվներն ու ժողովուրդների գաղթերը Մագդալիայի բնակիչների հիշողությունից սրբեցին հինավուրց ավանդությունները: Միայն մի որևէ դպիր կա-

րող էր նրանց հիշեցնել, որ Մագդալիան[1] եղել է վիճակահանությամբ Նեփթալիմի (Հեսու ԺԸ, 38) որդիների իսրայելյան սերնդին հանձնելու համար Հեսու Նավեի թվարկած տասնինը քաղաքների ցուցակում: Բայց ո՛չ զոհաբերության աղավնիները, ո՛չ բրդյա գործվածքներն ու ներկարանները, ո՛չ նույնիսկ քաղաքի հիշատակումը Հեսու Նավեի գրքում նրան աշխարհին հայտնի չդարձրին: Մագդալիան փառաբանվեց նրանով, որ այնտեղ է ծնվել ամենահայտնի կանանցից մեկը՝ Մարիամը, անվանված՝ Մագդալենացի: Եվ երկու յուղաբեր կանանց ծննդավարը կարելի է որոշել մեծ հավանականությամբ՝ համարելով Նազարեթը. դրանք են արդարակյաց Հովսեփ Նշանածի դուստրեր Սաղոմեն ու Մարիամը, որն ամուսնականով անվանվում է Կղեովպաս: Քուզայի կինը՝ Հովհաննան, Շուշանն ու Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամը ամենից հավանականն է, որ գալիլիացի կանայք են: Եվ միայն Ղազարոսի քույրեր Մարթան ու Մարիամն են ծնվել Հրեաստանում, Երուսաղեմի մոտ:

Յուղաբեր կանանց մասին առաջին հիշատակությունը մենք գտնում ենք Ղուկասի Ավետարանում. «Դրանից հետո Հիսուսը շրջում էր քաղաքներում և գյուղերում, քարոզում էր և ավետարանում Աստծու արքայությունը: Եվ նրա հետ էին Տասներկուսը և մի քանի կանայք, որոնք բժշկվել էին չար ոգիներից ու հիվանդություններից. Մարիամը, որ կոչվում էր Մագդալենացի, և որից յոթը դև էր դուրս եկել, Հովհաննան՝ Հերովդեսի վերակացուի՝ Քուզայի կինը, և Շուշանն ու շատ ուրիշներ, որոնք իրենց ունեցվածքից մատակարարում էին նրան» (Ղուկ. Ը, 1-3): Այսպիսով, սուրբ ավետարանիչ Ղուկասը հիշատակում է երեք անուն ու վերապահություն է անում, որ դեռ «շատ ուրիշները» կային:

Ավետարանի այդ տեքստից մենք կարող ենք հետևություն անել, որ Քրիստոսին հետևող կանայք եղել են ոչ պարզապես «ժողովրդի բազմության», ամբոխի մասը, որ հրաշք բուժման ծարավից շրջապատում ու նեղում էր Քրիստոսին: Ոչ, այդ կանայք եղել են, ինչպես ավետարանիչն է ասում՝ «ոմանք», որ հետևում էին Քրիստոսին ու ծառայում Նրան: Այսինքն նրանք ոչ միայն լսում էին Քրիստոսի խրատները, այլ նաև ծառայում էին Նրան: Ավետարանիչ Ղուկասի նշումը, որ յուղաբեր կանայք ծառայում էին Քրիստոսին «իրենց ստացվածքով», խոսում է այն մասին, որ այդ կանայք ունևոր ընտանիքներից են եղել: Այսինքն, ըստ

[1] Մագդալ-ն՝ եբրայերեն նշանակում է «Ապիր աշտարակ»:

էության, յուղաբեր կանայք իրենց դրամը նվիրաբերում էին առաքելական համայնքը պահելու համար:

Բացի վերը թվարկած յուղաբեր կանանց երեք անունից, Ավետարանում մենք հանդիպում ենք նաև ուրիշ անունների. Սաղոմե, Մարիամ Կղեովպաս, Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամ: Մեկնիչներից ոմանք վերջին երկուսին նույն անձն են համարում (տես ստորև): Բնական է, յուղաբեր կանայք ավելի շատ են եղել, քան մեզ հասած անունները: Այդ մասին խոսում են ավետարանիչները՝ հիշատակելով շատ ուրիշ կանանց մասին[1]:

Առաքելապատիվ Մարիամ Մագդաղենացի

Առաքելապատիվ Մարիամ Մագդաղենացին միակ յուղաբեր կինն է, որի վարքը կա Հայս-

[1] Հայոց եկեղեցական օրացույցում յուղաբեր կանայք հիշատակվում են երկու անգամ. Վերափոխման 2-րդ կիրակիին հաջորդող երեքշաբթի և Ս. Խաչի 6-րդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրերին: Ընդ որում անուններով հիշվում են միայն Ղազարոսի քույրեր Մարիամն ու Մարթան: Մեր Հայսմավուրքներում հուլիսի 22-ին հիշվում է Մարիամ Մագդաղենացին, իսկ փետրվարի 10-ին Ղազարոսի քույրերը՝ Մարիամն ու Մարթան (*ծնթ. խմբ.*):

մավուրքում: Ու թեև եկեղեցական ավանդությունն, ի տարբերություն մյուս կանանց, ավետարանական դեպքերից հետո միայն նրա հետագա ճակատագրի մասին է պատմում, բայց այդ տեղեկությունները բավականին կցկտուր են: Ծնունդով Մարիամը եղել է Կափառնայումի ու Տիբերիայի միջև, Գենեսարեթի լճի արևմտյան ափին տեղավորված Մագդալիա ոչ մեծ քաղաքից: Նրա ծնողները՝ Սիրը և Եվխարիստիան[1], ունևոր մարդիկ են եղել, քանի որ նրանց դուստրը հետագայում կարողացել էր «իր ստացվածքով» ծառայել Քրիստոսին: Մարիամը տառապում էր անհայտ, ծանր հիվանդությամբ[2], որից նրան բուժել էր Քրիստոսը, այնուհետև նա միշտ, մինչև Գողգոթա հետևել է Նրան ու եղել է առաջինը, ում հայտնվել է հարություն առած Քրիստոսը: Պենտեկոստեից հետո Մարիամ Մագդաղենացին գնաց արևմուտք՝ Քրիստոսին քարոզելու: Նա գնաց Տիբերիոս կայսեր պալատն ու, «Քրիստոս հարյավ» ասելով, նրան կարմիր ներկած ձու ընծայեց:

[1] Святая Мария Магдалина / Библиотека ревнителей безмолвия/ - М., 2007, стр. 24.

[2] «Յոթ դևեր ելան» պատկերավոր արտահայտությունը ցույց է տալիս, որ Մագդաղենացին տառապել է ծանր հիվանդությամբ, քանի որ սուրբգրային լեզվով յոթը ամբողջականության, լրիվության խորհրդանիշն է համարվում:

ծայեց: Դրանից հետո Զատիկին ներկած ձվեր նվիրելը դարձավ սովորույթ: Թողնելով Հռոմը, նա, ըստ որոշ ավանդությունների, գնում է Գալլիա ու այնտեղ քարոզում Քրիստոսին: Հետո գնում է Եփեսոս, որտեղ մնում է մինչև իր մահը, Հովհաննես առաքյալի հետ մասնակցելով նրա քարոզչական գործունեությանը: Հովհաննես առաքյալը նրա պատմածով է գրել իր Ավետարանի 20-րդ գլուխը: Իր երանելի վախճանից հետո առաքելապատիվ Մարիամը թաղվել է Եփեսոսում:

Մարիամ Մագդաղենացու մասին արևելյան ուղղափառ ավանդությունը տարբերվում է ամեն տեսակի ոչ ճշմարտանման, երևակայական պատմություններով առատ արևմտյան կաթոլիկականից: Կաթոլիկական ավանդությունը Մարիամ Մագդաղենացուն նույնացնում է Ղազարոսի քույր Մարիամի հետ, որ Բեթանիայում թանկարժեք յուղով լվաց Քրիստոսի ոտքերը, ինչպես նաև ավետարանական անառակ կնոջ հետ, որ Քրիստոսի ոտքերը լվաց արցունքներով: Այստեղից նրանց մոտ ծնվել է մեղքը խոստովանող անառակ Մարիամ Մագդաղենացու կերպարը, որը հետագայում Արևմուտքում ծնունդ տվեց ոչ քիչ սրբապիղծ գրականության: «Քրիստոսի վերջին գայթակղությունը» ֆիլմն ու «Դա Վինչիի կոդը» գիրքը Մարիամ Մագդաղենացու արևմտյան աղավաղված կերպարի ուղիղ հետևանքներն են: Ուղղափառությունը մերժում է այդպիսի ինքնակամ ու անհիմն մեկնությունները: Արևելյան ավանդության մեջ ակնարկ անգամ չկա սուրբ Մարիամ Մագդաղենացու նման անցյալի մասին[1]:

[1] Մարիամ Մագդաղենացու մասին՝ Հայոց Հայսմավուրքների պատմումները գրեթե համապատասխանում են Արևելյան ուղղափառ եկեղեցու վերոհիշյալ պատմություններին:

Նշենք նաև, որ Մագդաղենացու անբարո անցյալ ունենալու գեսակետին համաձայն չեն ո՛չ Արևելյան Եկեղեցիների, որոնց թվում և Հայոց Եկեղեցու ավանդությունը, ո՛չ էլ Կաթոլիկ Եկեղեցու վաղ շրջանի հայրերի տեսակետները: Արևելյան և Հայոց Եկեղեցիների ավանդությամբ՝ Մագդաղենացի Մարիամը չի նույնացվում ոչ պոռնիկ կնոջ հետ, ով մազերով սրբեց Տիրոջ ոտքերը, քանի որ Ավետարանն էլ նման բան չի ասում, ոչ էլ Ղազարոսի քույր Մարիամի (Օգոստինոսը, սակայն, նույնացնում է Ղազարոսի քրոջն ու Մատթեոսի Ավետարանի այս հատվածում հիշված կնոջը): Հովհ. Ծործորեցին, իր «Մեկնություն Մատթեոսի ավետարանի» Մարիամ Մագդաղենացուն համարելով թե՛ Ղուկասի Ավետարանում հիշված մեղավոր կինը և թե՛ Մատթեոսի սույն հատվածում հիշվածը, հետևում է այս մասին առավել ուշ շրջանի կաթոլիկ ավանդությանը, որն այժմ Կաթոլիկ Եկեղեցում ևս շատ տարածում չունի, ինչպես նախկինում (տես **Հովհ. Ծործորեցի**, Մեկնություն Մատթեոսի ավետարանի, պրակ Բ, Ս. Էջմիածին, 2010, էջ 292, նաև ***Մ. ադբ. Օրմանյան***, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, § 70, 71, 204) (*ծնթ. խմբ.*):

Հերովդեսի վերակացու Քուզայի կին Հովհաննա

Եթե եկեղեցական ավանդությունը տեղեկություններ է պահպանել ավետարանական դեպքերից հետո Մարիամ Մագդաղենացու ապրած կյանքի մասին, ապա Հովհաննայի մասին ավանդությունն, ընդհակառակը, նրա կյանքի էջերը բացում է մինչև նրա՝ Քրիստոսին հետևելը:

Ավետարանական դեպքերից հետո նրա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ: Հովհաննայի մասին Հայսմավուրքը հիշատակում է Հովհաննես Մկրտիչի Գլխատման պատմության մեջ (օգոստոսի 29): Այնտեղ էլ պատմվում է, որ Հերովդես Անտիպասի տան վերակացուի կինը՝ Հովհաննան, իմանալով, որ Հովհաննես Մկրտիչի Գլուխը Հերովդիան թաղել է անմաքուր տեղում, սրբությունը գաղտնի հանում է հողից ու նորից թաղում մի ուրիշ տեղում, Ձիթենյաց լեռան վրա:

Երբ Հերովդիան, տանջվելով սարսափներից, որոշում է այրել (այսինքն բոլորովին ոչնչացնել) Մկրտիչի գլուխը, նա այն չի գտնում: Այսպիսով՝ Հովհաննան փրկել է քրիստոնեական մեծագույն սրբությունն ու չի թողել, որ մեծ մարգարեի մասունքները անարգվեն[1]*:*

Սաղոմե

Կույս Մարիամի նշանած արդար Հովսեփի դուստրն է: Ամուսնացած էր Գենեսարեթի լճում ձկնորսություն անող Զեբեդեոսի հետ: Նրա երկու որդիները, Հակոբոսն ու Հովհաննեսը, Քրիստոսի կողմից առաքելական ծառայության կանչվածներից առաջիններից էին: Իր որդիներին հետևելով՝ Սաղոմեն նույնպես գնաց Փրկիչին ծառայելու:

Մարիամ Կղեովպաս

Մարիամ Կղեովպասը Հովսեփ արդարի կրտսեր դուստրն է, նշանակում է՝ Սաղոմեի հարազատ քույրը: Նա դեռ օրիորդ էր, երբ Ամենասուրբ Կույսը բնակվեց նրանց տանը, և նրանք ապրեցին ինչպես հարազատ քույրեր:

[1] Հայոց Հայսմավուրքներում Հովհաննես Մկրտչի գլխապման պատմությունը նույնպես օգոստոսի 29-ի հատվածում է: Սակայն հայ խմբագրություններում պատմության վերջին մասը՝ Հովհաննայի մասին, բացակայում է (*ծնթ. խմբ.*):

Երբ Հովսեփը Կույս Մարիամի ու մանուկ Հիսուսի հետ Եգիպտոսից վերադարձավ Նազարեթ, նա իր կրտսեր դուստր Մարիամին ամուսնացրեց իր կրտսեր եղբայր Կղեովպասի հետ: Այդ փաստը հաստատում են այնպիսի հեղինակավոր եկեղեցական պատմագիրներ, ինչպիսիք են Եվսեբիոս Կեսարացին, Գեորգիոս Կեդրինը և Նիկիփոր Կալլիստրատոսը[1]: Այն ժամանակներում մոտիկ ազգականների ամուսնություններն այնքան էլ եզակի չէին ու լիովին բնական էին համարվում: Այդ ամուսնությունից ծնվեց Սիմոն որդին, ապագա 70-առաքյալներից մեկը և Երուսաղեմի եկեղեցու երկրորդ եպիսկոպոսը: Մարիամի ամուսին Կղեովպասը Քրիստոսին անվերապահ հավատաց դեռ Նրա կենդանության օրոք ու 70 աշակերտների թվում կոչվեց առաքելական ծառայության: Հարություն առած Քրիստոսին հենց այդ Կղեովպասը հանդիպեց Էմմավուսի ճանապարհին, ուր նա գնում էր Ղուկաս առաքյալի հետ: Նա Քրիստոսի հետ հոգու կսկիծով է զրուցում Երուսաղեմում կատարված վերջին տխուր դեպքերի մասին ու չի ճանաչում իր Աստվածային

[1] Գեորգիոս Կեդրին - XI-XII դդ. բյուզանդացի պատմիչ, Նիկիփոր Կալլիստրատոս - XIV դ. բյուզանդացի պատմիչ, հայտնի է որպես Հայսմավուրքների խմբագիր (*ծնթ. խմբ.*):

Ուսուցչին: Նա արդեն չի հավատում Հիսուս Քրիստոսի մեսիա լինելուն, անվանելով Նրան թեկուզ և «գործով ու խոսքով ուժեղ Աստծո ու ժողովրդի առջև», բայց միայն մարգարե, և ոչ Նա, «Ով պիտի ազատի Իսրայելը»: Տարօրինակ բան. կինն ամուսնուն վկայում է, որ իրեն և ուրիշ կանանց Հրեշտակներ են հայտնվել և ավետել Քրիստոսի հարությունը, բայց նա դրան չի հավատում: Եվ միայն հացը կտրելուց հետո, «երբ բացվեցին նրանց աչքերն» ու Տերը դարձավ անտեսանելի, Կղեովպասն ու իր ուղեկիցը հուզմունքով հիշում են, թե ինչպես էր ճմլվում իրենց սիրտը Քրիստոսի հետ զրուցելիս (Ղուկ. ԻԴ, 13-35): Իսկ նրա կնոջ սիրտը միշտ էր վառվում, առանց դադարի: Եվ Աստված Իր փառքը Մարիամ Կղեովպասին ավելի շուտ հայտնեց, քան նրա ամուսնուն:

Շուշան

Շուշանի կյանքի մասին ոչ մի եկեղեցական պատմություն չկա: Այդ կնոջ անունը միայն մի անգամ Ղուկասի Ավետարանն է հիշատակում (Ղուկ. Ը, 3): Բայց իմանալով նրա միայն անունը, մենք կարող են մեր աղոթքները հղել նրան

ու նրա պատվին անուն տալ մեր դուստրերին, իսկ դա արդեն քիչ չէ:

Սուրբ, երանելի Շուշան, մեզ համար աղոթի՛ր Աստծուն:

Հակոբոս կրտսերի ու Հովսեի մայր Մարիամ

Թեև այս յուղաբեր կնոջ մասին հիշատակում են երեք ավետարաններ՝ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի, բայց նրա կյանքի մասին մենք որևէ տեղեկություն չունենք:

Որոշ մեկնիչներ Մարիամ Կղեովպասին ու Հակոբոս կրտսերի ու Հովսեի մայր Մարիամին նույն անձն են համարել: Բայց դա հակասում է եկեղեցական ավանդությանը, որը պարզ նշում է, որ նա Հովսեփ արդարի կրտսեր դուստրն է ու Հովսեփ արդարի կրտսեր եղբոր՝ 70 առաքյալների մեջ դասված Կղեովպասի կինը: Մարիամն ու Կղեովպասը մի որդի են ունեցել՝ Սիմոնը, նույնպես առաքյալ դարձած, հետագայում Երուսաղեմի եպիսկոպոս: Իսկ երկրորդ Մարիամը ավետարանիչների մոտ կոչվում է Հակոբոսի ու Հովսեի մայր:

Ի՞նչ փաստարկեր են առաջ բերում նրանք, ովքեր Մարիամ Կղեովպասին ու Հակոբոս կրտսերի ու Հովսեի մայր Մարիամին նույն անձն են համարում: Այդ ենթադրությունը հիմնվում է ավետարանական տեքստի վերլուծության վրա: Համաձայն առաքյալ ու ավետարանիչ Հովհաննես Աստվածաբանի. «Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը, և Նրա մորաքույրը Մարիամ Կղեովպասը, և Մարիամ Մագդաղենացին» (Հովհ ԺԹ, 25): Ավետարանիչ Մատթեոսը խոսում է երեք կնոջ մասին. Մարիամ Մագդաղենացու, Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամի ու Զեբեդեոսի որդիների մոր (Մատթ. ԻԷ, 56): Մարկոսը թվարկում է նույն կանանց, միայն Զեբեդեոսի որդիների մորը նա անվանում է անունով՝ Սաղոմե (Մարկ. ԺԵ, 40): Ստացվում է, որ բոլոր երեք ավետարանիչների մոտ հիշատակվում է Մարիամ Մագդաղենացին: Բայց Հովհաննեսի մոտ հիշատակում չկա իր սեփական մոր մասին, այնինչ Մատթեոսի ու Մարկոսի մոտ Սաղոմեն ներկա է: Այդ նույն ժամանակ Հովհաննեսի մոտ խոսվում է Մարիամ Կղեովպասի մասին, իսկ Մարկոսի մոտ՝ Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամի: Այս դժվարությունները փորձում են հարթել հետևյալ կերպ. որոշ հետազոտողներ համարում են, որ Հովհաննես Աստվածաբանը խոսում է

Սաղոմեի ներկայության մասին՝ չհիշատակելով նրա անունը, այլ միայն անվանելով Հիսուսի մորաքույր: Եվ դա նրանց թվում է հավանական, քանզի անբնական կլիներ ենթադրել, որ ավետարանիչը կկոչեր Սուրբ Աստվածածնի քրոջը անունով, երբ որ անունով չի կոչում Քրիստոսի մորը: Ըստ այդ վարկածի՝ ավելի քան հավանական է ենթադրել, որ Հովհաննես Աստվածաբանը հիշատակում է չորս կանանց՝ երկու խմբում զույգերով կանգնած, որոնցից առաջին երկուսին անունով չի կոչում (դրանով էլ բացատրվում է «և» մասնիկի կրկնակի օգտագործումը).

1–ին խումբ. Նրա՝ (Քրիստոսի) մայրը և մորաքույրը:

2–րդ խումբ. Մարիամ Կղեովպասը և Մարիամ Մագդաղենացին:

Այս դասավորությամբ իսկապես ստացվում է, որ բոլոր երեք ավետարանիչները խոսում են Խաչի մոտի երեք յուղաբեր կանանց մասին, և այդ դեպքում չեն համընկնում միայն երկու Մարիամները՝ Կղեովպան ու Հակոբոսի ու Հովսեի մայրը: Ուստի, ինքնաբերաբար այն եզրակացությունն է հետևում, որ Հովհաննես ու Մատթեոս ավետարանիչները Մարկոսի հետ ի նկատի են ունեցել միևնույն Մարիամին: Բայց այդ վարկածը կարելի է ընդունել միայն մեծ վերապահությամբ:

Իմ խորին համոզմամբ, հենվելով ավետարանական տեքստի ու դեպքերի տրամաբանության վրա, կարելի է ուրիշ հիմնավորում բերել ավետարանիչների մոտ անունների տարբերության այլ տեսակետի օգտին: Նախ և առաջ պետք է նկատել, որ ավետարանիչներ Մատթեոսն ու Մարկոսը խոսում են ոչ թե Խաչի մոտ, այլ հեռվում կանգնած կանանց խմբի մասին: «Այնտեղ կային ու հեռվից նայում էին նաև շատ ուրիշ կանայք, որոնք Հիսուսին հետևել էին դեռ Գալիլիայից՝ ծառայելով Նրան. նրանց միջև եղել էին Մարիամ Մագդաղենացին ու Հակոբոսի ու Հովսեի մայր Մարիամը, և Զեբեդեոսի որդիների մայրը» (Մատթ ԻԷ, 55-56): Նույնը գտնում ենք նաև Մարկոսի մոտ: Եվ նա, ինչպես և Մատթեոսը, նշում է, որ կանանց այդ խումբը «նայում էր հեռվից» (Մարկ. ԺԵ, 40): Նկատենք, որ ո՛չ Մարկոսը, ո՛չ Մատթեոսը մի կողմ կանգնած կանանց խմբի մեջ Կույս Մարիամին չեն հիշատակում, քանի որ Հիսուս Քրիստոսի Մայրը, Հովհաննես Աստվածաբանի հետ միասին, գտնվում էր անմիջապես Խաչի մոտ (Հովհ.

ԺԹ, 25): Պահնորդները խաչի վրա խաչվածներին միշտ հսկում էին մինչև նրանց մահը, քանզի վտանգ կար, որ հարազատները կարող էին դատապարտվածին ազատելու փորձ անել: Եվ այդպիսի դեպքեր պատմության մեջ եղել էին: Որպեսզի խուսափեն նման անկարգություններից, պահնորդները ժողովրդին մոտ չէին թողնում խաչին: Մահապատժին կարող էին հետևել միայն հեռվից: Բայց ամենամոտիկների ոչ մեծ խմբի համար կարող էին բացառություն անել: Այդ պատճառով էլ Խաչի մոտ կանգնած էր միայն Աստվածամայրը, իսկ նրան սատարում էին նրա ամենամոտ մարդիկ՝ Քրիստոսի սիրելի աշակերտն ու Մարիամ Կղեոփայասը, որն ավանդության համաձայն կոչվում էր Աստվածածնի քույր: Մարիամ Կղեոփայասը, Հովսեփ արդարի կրտսեր դուստրը, դեռ ամուսնացած չէր, երբ նրանց տանը բնակվեց Ամենասուրբ Կույսը, և նրանց հարաբերությունները քույրական սիրով էին: Այս կապվածության հիման վրա է Հովհաննես ավետարանիչը Մարիամ Կղեոփայասին անվանում Հիսուսի մորաքույր[1]: Երբ Կույս Մարիամը գնաց Հովսեփի տուն, այդ ժամանակ Սաղոմեն արդեն ամուսնացած էր

[1] Жизнь и Труды святых славных и всехвальных Апостолов / Лиственица. - М., 2006, стр. 361.

ձկնորս Զեբեդեոսի հետ ու ապրում էր Գենեսարեթի լճի մոտ գտնվող նրա տանը: Այժմ մեզ մնում է բացատրել, թե ինչու սուրբ Մատթեոս ու Մարկոս ավետարանիչների մոտ Մարիամ Մագդաղենացին ուրիշ կանանց հետ մի կողմ է կանգնած, իսկ Հովհաննեսի մոտ՝ Խաչի մոտ, Աստվածամոր կողքին: Դրանում ես բարդություն չեմ տեսնում: Սկզբում կանանց խմբերն այսպես էին դասավորված. խաչի մոտ կանգնած են Աստվածամայրը, Մարիամ Կղեոփայասն ու Հովհաննես Աստվածաբանը, իսկ հեռվում Մարիամ Մագդաղենացին, կրտսեր Հակոբոսի ու Հովսեի մայրը՝ Մարիամը, Սաղոմեն և ուրիշ կանայք: Բայց ժամանակի ընթացքում իրավիճակը Գողգոթայում կարող էր փոփոխվել, և հնարավորություն կամ, ավելի շուտ, անհրաժեշտություն առաջացավ, որ Մարիամ Մագդաղենացին էլ մոտենա Խաչին: Նրան կարող էին կանչել այն բանից առաջ, երբ Տերը, նախազգալով մոտեցող մահը, Իր Մոր խնամքը հանձնարարեց սիրելի աշակերտին ու նրա միջոցով իր բոլոր հետևորդներին որդեգրեց Աստվածամորը: «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»,– դիմում է Քրիստոսն Իր Ամենասուրբ Մորը: Հետո դիմում է Իր սիրելի աշակերտին. «Ահա՛ քո մայրը»: Ավետարանի էջերում, անմիջապես

Խաչի մոտ կանգնածներին թվարկելուց հետո, Հովհաննեսը հավերժացնում է Աստվածային սիրո ու գթասրտության այդ գործողությունը: Որդեգրումն ինչ որ չափով նաև իրավաբանական ակտ է և ավետարանիչի համար կարևոր են պատմական այդ մեծ գործողության երկու վկաները: Եվ հենց Մարիամ Կղեովպասն ու Մարիամ Մագդաղենացին են որդեգրման վկաները, քանի, որ ինչպես ասված է Գրքում. «երկու կամ երեք վկաների շուրթերով կհաստատվի ամեն խոսք»[1]: Կարելի է բերել ևս մի փաստարկ: Երբ Հովսեփը Նիկոդեմոսի հետ, Քրիստոսին թաղելուց հետո, քարը գլորելով դեմ են անում գերեզմանին , միայն երկու կին են մինչև վերջ գերեզմանի դիմաց նստած այդ պահը դիտում. Մարիամ Մագդաղենացին ու Հովսեի մայր Մարիամը (տես. Մատթ. ԻԷ, 61; Մարկ. ԺԵ, 47): Աստվածամայրն արդեն չկա, ո՞վ է Նրան տուն ուղեկցել, եթե ոչ Մարիամ Կղեովպասն ու Հովհաննես Աստվածաբանը: Այս ամենն ինձ համոզում է այն եկեղեցիական ավանդույթի ճշմարտության մեջ, որ Մարիամ Կղեովպասն ու Հակոբոս կրտսերի ու Հովսեի մայր Մարիամը միևնույն անձը չեն, այլ երկու տարբեր կանայք են:

[1] Մատթ. ԺԸ, 16, տես նաև Բ Օր. ԺԹ,15:

Մարթա ու Մարիամ, չորսօրյա Ղազարոսի քույրեր

Թեև ավետարանիչները Մարթային ու Մարիամին չեն հիշատակում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի տառապանքների ժամանակ, բայց, անկասկած, մյուս յուղաբեր կանանց հետ քույրերը Գողգոթայում են եղել: Իսկ հետո եղել են Քրիստոսի հրաշափառ Հարության վկաները: Անհնար է պատկերացնել, որ նրանց սիրելի Ուսուցչին կալանավորում են, իսկ Մարթան ու Մարիամն անտարբեր նստում մնում են Երուսաղեմին այդքան մոտիկ, քայլելով կես ժամում անցնելիք հեռավորության վրա:

Եկեղեցական ավանդույթից հայտնի է, որ Մարթան ու Մարիամը միսիոներական ուղևորություններ են կատարել Հռոմեական կայսրությունում, այնուհետև իրենց եղբոր մոտ անցել են Կիպրոս կղզի: Ղազարոսը մոտ տասներեք տարի Կիպրոսի եպիսկոպոսն էր ու քույրերը նրան նախանձախնդրությամբ օգնում էին Քրիստոսին քարոզելու հեթանոսների մեջ, և քրիստոնեական հավատի մեջ ամրապնդելու դարձի եկածներին[1]:

[1] Համաձայն հայոց Հայսմավուրքների Մարիամն ու Մարթան

Հարության գիշեր

Հարության գիշերվա իրադարձությունների հաջորդականությունը, համաձայն չորս ավետարանների տեքստերի վերլուծության: Վերականգնել է Միխայիլ (Գրիբանովսկի) եպիսկոպոսը[1]:

Հարության օրվա ավետարանական դեպքերի նկարագրությանը նետված թեթևակի հայացքը բերում է այն մտքին, որ ավետարանիչների պատմությունները բավականին տարբեր են: Միխայիլը (Գրիբանովսկի) եպիսկոպոսը նախաձեռնեց Քրիստոսի Հարության մասին պատմող ավետարանական տեքստերի մանրազնին ուսումնասիրությունը և եկավ այն եզրակացության, որ Հարության գիշերվա պատմություններն ավետարանիչներին հասել են դեպքերի անմիջական ականատես տարբեր կանայից:

Ահա նրա եզրակացությունները՝ հանգամանորեն կատարված հետազոտությունից հետո.

նահատակվել են Լիկարիոն կրոնավորի հետ՝ դատավորի հրամանով (Համաբարբառ Հայսմավուրք, Բ, փետրվար 10, Ս. Էջմիածին, 2009, - *ձնթ. խմբ.*):

[1] Михаил (Грибановский), епископ. Над Евангелием. - М., Православный Свято-Тихоновский Богословский институт., 2001, стр. 320.

Առաքյալ ավետարանիչ Հովհաննես Աստվածաբանը գրել է Մարիամ Մագդաղենացու խոսքերից.

Առաքյալ ավետարանիչ Մատթեոսը գրել է Ամենասուրբ Աստվածածնի խոսքերից.

Առաքյալ ավետարանիչ Մարկոսը գրել է Հակոբոսի մայր Մարիամի խոսքերից.

Առաքյալ ավետարանիչ Ղուկասը գրել է Քուզայի կին Հովհաննայի խոսքերից:

Ուսումնասիրելով Ավետարանի տեքստը՝ Միխայիլ եպիսկոպոսը վերականգնել է այդ գիշերվա բոլոր դեպքերի հերթականությունը: Յուղաբեր կանայք ապրում էին Երուսաղեմում, տարբեր տներում. իբրև մոտիկ ազգականներ՝ Սաղոմեն ու Մարիամ Կղեովպասն Աստվածամոր հետ ապրում էին Հովհաննես Աստվածաբանի տանը: Նրանց հետ ապրում էր նաև Մարիամ Մագդաղենացին: Մյուս՝ Մարկոս առաքյալին պատկանող տանը, ապրում էին Հովհաննան ու դալիլիացի մյուս կանայք: Առաքյալների հետ այդ նույն տանն էր ապրում նաև Պետրոսը:

1) Շաբաթ օրվա երեկոյան, երբ սկսեց շողալ շաբաթվա առաջին օրը (այսինքն՝ երբ տաճարում վառեցին ջահերը, իսկ դա համարվում էր հաջորդ օրվա սկիզբը), Մարիամ Մագդաղենացին

ու մյուս Մարիամը (շատ մեկնիչներ «մյուս Մարիամ» ասելով հասկանում են Աստվածամորը) եկան գերեզմանը տեսնելու (տես Մատթ. ԻԸ, 1):

2) Տեսնելով ու իմանալով, թե ինչ է հարկավոր, Մարիամ Մագդաղենացին հետ վերադարձավ, և քանի որ շաբաթն արդեն անցել էր, նա, Հակոբոսի մայր Մարիամն ու Սաղոմեն գնացին խնկի պատրաստություն տեսնելու, որպեսզի գան և օծեն Նրա մարմինը (տես Մարկ. ԺԸ, 1): (Հովհաննան ու մյուս կանայք խունկ գնել էին դեռ շաբաթ օրվա սկզբին, երեկոյան, Գողգոթայում կանգնելուց հետո):

3) Մինչ այդ «մյուս» Մարիամը, այսինքն՝ Աստվածամայրը, գիշերը գերեզմանի մոտ աղոթում էր: Եվ ահա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ Հրեշտակը երկնքից իջնելով՝ մոտեցավ, գերեզմանի դռնից վեմը մի կողմ գլորեց ու վրան նստեց: Նրա տեսքը փայլակի էր նման, ինչ նրա զգեստը՝ սպիտակ, ինչպես ձյուն: Նրա ահից պահապանները խռովվեցին ու մեռելների պես եղան (տե՛ս Մատթ. ԻԸ, 2–4):

4) Մարիամ Մագդաղենացին, խունկ առնելուց հետո, թողնելով իր ընկերուհիներին, նոր ից շտապեց գերեզման:Առաջ անցնելով այնտեղ գնացող գալիլիացի կանանցից, նա գերեզմանին հասնում է շաբաթվա առաջին օրվա վաղ առավոտյան, երբ դեռ մութ էր, ու տեսնում է վեմը գերեզմանից մի կողմ գլորված: Այդ տպավորության տակ նա վազում ու գալիս է Սիմոն Պետրոսի ու այն մյուս աշակերտի մոտ, որին սիրում էր Հիսուսը, ու նրանց ասում. «Տիրոջը վերցրել են գերեզմանից և չգիտենք, թե ուր են դրել Նրան»: Այս լսելով՝ Պետրոսը, ինչպես և մյուս աշակերտը, ելան ու գնացին գերեզման (տե՛ս Հովհ. Ի, 1-3):

5) Այդ ժամանակ, երբ Մարիամ Մագդաղենացին վազեց Պետրոսի ու Հովհաննեսի մոտ, գալիլիացի կանայք, որ գնում էին նրա հետևից, բերելով իրենց պատրաստած խունկերը, մոտեցան գերեզմանին: Նոր էր ծագում շաբաթվա առաջին օրվա լուսաբացը: Եվ քարը գերեզմանից գլորած գտան ու ներս մտնելով՝ Տեր Հիսուսի մարմինը չգտան: Եվ մինչ նրանք զարմացած էին այդ բանից, ահա լուսավոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մոտ: Եվ երբ կանայք զարհուրեցին ու իրենց երեսը գետնին խոնարհեցին, մարդիկ ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ՝ հարություն առավ: Հիշեցե՛ք, ինչպես խոսեց նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր. ասում էր, թե պետք է, որ Մարդու Որդին մեղավոր մարդ-

կանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը հարություն առնի»: Եվ նրանք հիշեցին Նրա խոսքերը: Եվ վերադարձան ու պատմեցին այս ամենը Տասնմեկին և բոլոր մյուսներին (Ղուկ. ԻԴ, 1-9):

6) Այդ ընթացքում Պետրոսն ու Հովհաննեսը Մարիամ Մագդաղենացու հետ գերեզման էին շտապում: Երկուսով միասին էին վազում, բայց մյուս աշակերտն առաջ անցավ Պետրոսից և ավելի շուտ վազեց ու առաջինը գերեզման հասավ: Եվ կռանալով՝ տեսավ, որ կտավներն այնտեղ էին, բայց ներս չմտավ: Եկավ նաև Սիմոն Պետրոսը, որ նրա հետևից էր գալիս. մտավ գերեզմանը և տեսավ, որ կտավներն այնտեղ էին, և վարշամակը, որ նրա գլխին էր, մյուս կտավների հետ չէր, այլ առանձին ծալված՝ մի կողմ էր դրված: Այդ ժամանակ մտավ և մյուս աշակերտը, որ ավելի առաջ էր հասել գերեզման. տեսավ ու հավատաց. քանի որ դեռ չէին հասկացել գրվածքը, թե՝ մեռելներից պետք է հարություն առնի: Աշակերտները, վերադառնալով, գնացին իրենց տեղերը (Հովհ. Ի, 3-10):

7) Բայց Մարիամը (Մագդաղենացին) կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում, և մինչդեռ լաց էր լինում, կռացավ դեպի գերեզմանը և տեսավ երկու հրեշտակներ՝ սպիտակների մեջ, այնուհետև նրան հայտնվեց Ինքը՝ Փրկիչը, ու ասաց, որ հայտնի աշակերտներին Իր Հարության մասին (Հովհ. Ի, 11-18):

8) Իսկ առաջին օրվա վաղ առավոտն ավելի էր լուսանում ու արդեն ծագում էր արևը: Մարիամ Մագդաղենացին ու նրա ընկերուհիները խունկ առած շտապում են դեպի գերեզման: Նրանց հայտնվում է Հրեշտակն ու ասում, որ առաքյալներին հայտնեն Քրիստոսի հարության մասին: Հակոբոսի մայր Մարիամը, հուզված ու սարսափած, առանձին գնում է ուղիղ Պետրոսի մոտ (Մարկ. ԺԶ, 1-8; Մատթ. ԻԸ, 5-8): Երբ կանայք գնում էին, նրանց հանդիպեց Քրիստոսը (Մատթ. ԻԸ, 9-10):

9) Այդ ժամանակ, գերեզմանից վերադառնալով, գալիլիացի կանայք առաքյալներին պատմեցին Հրեշտակի՝ իրենց հայտնվելու մասին: Առաքյալները չհավատացին: Սակայն Պետրոսը նորից վազեց գերեզման, նայեց ու տեսավ, որ այնտեղ միայն կտավներն էին: Եվ գնաց՝ մտքում զարմացած, թե ինչ էր եղել (Ղուկ. ԻԴ, 9-12):

10) Մարիամ Մագդալինացին ու Հակոբոսի մայր Մարիամը, բոլոր հավաքվածների առջև, ընդհանուր անվստահության մեջ, հաստատե-

լով գալիլիացի կանանց վկայությունը, ոչ մի կերպ չէին համարձակվում դրան ավելացնել այն, ինչ որ իրենք անձամբ էին տեսել ու լսել: Նրանք սպասում էին այն պահին, երբ կմնան միայն ամենամոտիկ աշակերտները՝ Տասնմեկ առաքյալները (Մարկ. ԺԶ, 8):

11) Եվ ահա, երբ գալիս է այդ պահը, Մարիամ Մագդալենացին նրանց բոլորին, «որ Հիսուսի հետ էին» և դեռ սգում ու լաց էին լինում, հայտնում է, որ տեսել է Ցիրոջն ու հաղորդում է այն խոսքերը, որոնք Նա ասաց իրեն: Բայց նրանք լսելով, որ Նա կենդանի է և Մարիամը տեսել է Նրան, չհավատացին (Մարկ. ԺԶ, 9-11):

«Այսպիսին է եղել Հարության գիշերը,– գրում է Միխայիլ (Գրիբանովսկի) եպիսկոպոսը,– այդպես են կատարվել յուղաբեր կանանց բազմապիսի գործողությունները, նրանք այդպես են ստացել մեկը մյուսից տարբեր և առանձնահատուկ տպավորությունները, և այդպես է ստեղծվել նյութը նրանց՝ մեկը մյուսից տարբեր պատմությունների համար, որոնք հաղորդում են ավետարանիչները»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության կողմից 5

Հեղինակի կողմից 7

Գլուխ 1 13
Գլուխ 2 24
Գլուխ 3 30
Գլուխ 4 38
Գլուխ 5 42
Գլուխ 6 49
Գլուխ 7 52
Գլուխ 8 55
Գլուխ 9 60
Գլուխ 10 63
Գլուխ 11 65
Գլուխ 12 71
Գլուխ 13 75
Գլուխ 14 84
Գլուխ 15 93
Գլուխ 16 103
Գլուխ 17 115

Գլուխ 18 125
Գլուխ 19 128
Գլուխ 20 134
Գլուխ 21 145
Գլուխ 22 150
Գլուխ 23 159
Գլուխ 24 166
Գլուխ 25 173
Գլուխ 26 180
Գլուխ 27 189
Գլուխ 28 195
Գլուխ 29 200
Գլուխ 30 208
Գլուխ 31 214
Գլուխ 32 224
Գլուխ 33 230
Գլուխ 34 244
Գլուխ 35 249
Գլուխ 36 255
Գլուխ 37 267
Գլուխ 38 272
Գլուխ 39 279
Վերջաբան 289

ՀԱՎԵԼՎԱԾ

Ովքե՞ր են յուղաբեր կանայք,
և քանի՞սն են նրանք 295
Առաքելապատիվ Մարիամ
Մագդալենացի 298
Հերովդեսի վերակացու Քուզայի կին
Հովհաննա 302
Սաղոմե 302
Մարիամ Կղեոփայաս 302
Շուշան 305
Հակոբոս կրտսերի ու
Հովսեի մայր Մարիամ 306
Մարթա ու Մարիամ,
Լազարոսի քույրեր 313
Հարության գիշեր 314

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - ԺԲ

ՆԻԿՈԼԱՅ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱԳԱՖՈՆՈՎ

ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

Թարգմանություններ ռուսերենից՝
Վալերի Պարոնյանի

Հրատարակչության
տնօրեն՝ Տ. Եղնիկ արք. Պետրոսյան

Խմբագիրներ՝ Ղևոնդ քահանա Մայիլյան
Յու. Հովհաննիսյան

Էջադրումը՝ Արտակ Տիգրանյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

Չափը՝ 70x100 1/32, թուղթը՝ 80 գ., տեքստը՝ 2 գույն, կազմը՝
կոշտ, 4 գույն, ծավալը՝ 324 էջ,
տպաքանակը՝ 1000:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

Սիկոն[illegible] Ագաֆոնգի այն պատմակա[illegible] վեպը պատմում է հեզ ու համեստ կանանց սխրանքի մասին, ովքե[illegible] Քրիստոսի հետևո[illegible]

Հեղինակն ընթերցո[illegible] առջև բացում է սուրբ կանանց այն խորին ձգտումներն ու ապրումները, որոնք արտացոլվել են եկեղեցական Ավանդության ժլատ տողերում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին